

ԱՐԱՔՍ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԵՍ

1889

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԳԻՐԺ Բ


ԴԵԿՏԵՄԲԵՐ



Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻ
ՏՊԱՐԱՆ Ի. Ն. ՍԿՐԻՆՈՎԻՉԻ
1890.

Дозволено цензурою. С.-Петербургъ, 20 января 1890 года.

Типографія И. Н. Скороходова (Надеждинская, 39).





ՆՈՐԻՆ ՄԵԹՈԻԹԻՒՆ ՆԱՍԻ-ԷՂԴԻՆ ՇԱՀ ՊԱՐՍԻՑ

ՎԵՐՋԻՆ ՃԱՆԱԳԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ ԸՌԻԹՈՎ

Հրատ. Սարգստ. Հանգիսի:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ԿՈՎԱՍՍԵԱՆ ԱՐԴԻԻՆԱՅԱՆԴԷՍ

1889 թուի սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներում Թիֆլիսում տեղի ունեցած Սովկասեան անդրանիկ արդիւնահանդէսը, անկասկած, պէտք է համարել Սովկասի տնտեսական կեանքի համար նշանակութիւն ունեցող ամենամեծ երևոյթներից մէկը: Արդիւնահանդէսը, չնայած շատերի թերահաւատութեան և կասկածանքներին նորա իրագործման կամ յաջողութեան վերաբերմամբ, իսկապէս արդէն կատարուած իրողութիւն է և, իբրև առաջին փորձ, շատ յաջող: Մենք, ի հարկէ, կ'սպասենք կառավարիչյան ձևաժողովի մանրամասը հաշիւներին, որոնցից կարող լինենք աւելի ճիշտ և պարզ գաղափար կադմել արդիւնահանդիսի տուած օգտի և նորա կատարելութեան մասին: Մեր կողմից, մենք մեր պարտքն ենք համարում «Արաքսի» էջերումը նշանակել այդ երևոյթը, իբրև մի շոշափելի զարկ մեր տնտեսական զարգացման, որը մենք համարում ենք մեր ամենահարազատ հարցերից մէկը: Մեր յօդուածի նպատակն է մի թիթև հայեացք ձգել դէպի յեա և տեսնել թէ տուեց մեզ, արդե՞օք, արդիւնահանդէսը այն, ինչ որ մենք իրաւունք ունէինք պահանջել կամ սպասել նորանից:

Արդիւնահանդէսները առհասարակ ունեն մի քանի նպատակներ, որոնց աւելի կամ պակաս համապատասխանելոցն է կախուած նոցա յաջողութեան աստիճանը: Արդիւնահանդիսի գլխաւոր նպատակն է ցոյց տալ, թէ մի յայտնի արդիւնաբերութիւն ի՞նչ վիճակի մէջ է այն երկրում, նահանգում, կամ դաւառում, որտեղ նա բացուած է: Աւ որքան որ ցուցահանդէսը աւելի հարուստ լինի այն բոլոր իրերով և տեղեկութիւններով, որոնք նկարում են երկրի իսկական դրութիւնը, այնքան նա այս տեսակէտից աւելի յաջողուած է լինի, որով-

Հետև միայն այն ժամանակ կարելի է հասկանալ մի երկրի կարիքները այս կամ այն հարցի վերաբերմամբ, երբ մենք խմանանք նորա ներկայ իրական դրութիւնը, անկարելի է մասնացոյց անել, օրինակ, Վանձակի զինեզործութեան պահասութիւնների վերայ, կամ միջոցների առաջարկել նորան բարձրացնելու և կատարելագործելու համար, եթէ մենք չիմանանք թէ իսկապէս Վանձակի գաւառը որքան ուշադրութեան արժանի է այդ տեսակէտից, եթէ չիմանանք նորա խաղողի և գինու յատկութիւնները, զինու պատրաստելու և պահպանելու ձևերը և այլն... այս բոլորի հետ կարելի է ծանօթանալ միայն տեղային հետազոտութիւններից: Բայց ամեն մարդ չէ կարող ամեն տեղ ճանապարհորդել և ամեն հետազոտութիւն կարդալ և ուսումնասիրել գրականութեան միջոցով հետաքրքրող հարցը: Այս դէպքում ցուցահանդէսը միջոց է տալիս թէ ուսումնականին, թէ վաճառականին և թէ անգրագէտ գիւղացուն միահաւասար իրաւունքով դնալ և իւր սեպհական աչքով տեսնել և ծանօթանալ այն բոլորի հետ, ինչ որ վերաբերում է իւր երկրի արդիւնաբերութեանը: Սա ամենակարևոր և միևնոյն ժամանակ ամենադժուար իրագործելի մասն է արդիւնահանդիսի կազմելու մէջ:

Արդիւնահանդէսների մի ուրիշ նպատակն էլ այն է, որ երկրի ամեն կողմերից ժողովուած բնակիչներին ցոյց տալ թէ ամեն արդիւնաբերութեան մէջ ի՞նչ տեսակ կատարելագործութիւնների է կարօտ երկիրը և այդ կատարելագործուած արդիւնաբերութիւնների կամ արհեստների օրինակների հետ նոցա ծանօթացնէ: Այս նպատակով արդիւնահանդիսի կառավարութիւնը հրաւիրում է զանազան օրինակելի գործարանների, ընկերութիւնների, կալուածների ներկայացուցիչներին էլ մասնակցելու, նոցա գրաւելու և ևս առաւել խրախուսելու համար նշանակելով մրցանակ և գերազանցողներին պարգևաբաշխութիւն: Մասնագէտները, որոնք պէտք է լինեն զլիսաւոր կարգադրիչները, պէտք է միևնոյն ժամանակ լաւ ուսումնասիրեն իրենց յանձնուած բաժինները և աշխատեն եղած իրերը յայտնի կարգի և սիստեմայի բերել ու այդ կերպով աւելի մատչելի և հասկանալի դարձնեն ժողովրդի համար: Մասնագէտների բացատրութիւնները անկասկած մեծ նշանակու-

Թիւն ունեն, նոքա են, որ առարկայի հետ լաւ ծանօթ լինելով, կարող են և ժողովուած նիւթից պատշաճ գործածութիւնն անել, օգտուելով նորանից երկրի տնտեսական և այլ հարցերը աւելի լաւ պարզաբանելու համար. մասնագէտները արդիւնահանգիստում ուսուցչի դեր պէտք է խաղան մասամբ: Միւսին չնայած, չափ անգամ հրաւիրում են նոյնպէս, և օտարազգի գործարանատէրերին արդիւնահանգիստում մասնակցելու իրենց գեղեցիկ մեքենաներով, նոյա գործածութեան ձևերի և նշանակութեան հետ ծանօթացնելով պոյեկտներին: Այդպիսով արդիւնահանգէսը մի կողմից ցոյց տալով երկրի երկրագործական, արհեստագիտական և առհասարակ տնտեսական և կրթական դրութիւնը, միւս կողմից, աշխատում է ցոյց տալ, թէ ինչ ձևերով պէտք է յառաջագիմել իւրաքանչիւր մասնագիտութեան մէջ, իբրև օրինակներ հանգէս բերելով ամենալաւ տնտեսների և մասնագէտների արդիւնքները:

Ահա սոքա են արդիւնահանգէտների զլխաւոր նպատակները: Այն երկներում, ուր ցուցահանգէտները սովորական բան են, նոյա նշանակութիւնն էլ աւելի լայնանում է, օրինակ նոքա տարեց տարի ցոյց են տալիս թէ ինչ չափով է յառաջագիմում երկիրը, բայց այդ և դրա նման ուրիշ կողմերը կարող են վերոյիշեալ երկու դասակարգերին վերաբերել:

Աովկասեան արդիւնահանգէսը լինելով առաջինը մեր երկրում, կարող էր միայն այդ երկու զլխաւոր նպատակները աչքի առաջ ունենալ առ այժմ: Առ մի կողմից պէտք է մեզ ծանօթացնէր մեր հայրենի երկրի և նորա հարստութիւնների հետ, իսկ միւս կողմից պարզելով նորա կարիքները և պիտոյքները յառաջագիմութեան միջոցները ցոյց տալ:

Բնդհանրապէս խօսելով մենք պէտք է ասենք, որ արդիւնահանգէսը պէտք է յաջողուած համարենք, թէ իւր հարստութիւնով, թէ գեղեցիկութիւնով և թէ ներքին բովանդակութիւնով. իբրև առաջին փորձ լաւ էր և մինչև անգամ մեր սպասածից աւելի: Արդիւնահանգիստում ներկայացրած իրերի ցուցակը, որ մօտ 500 երեսից մեծ գիրքով մի գիրք է կազմում, լաւ ապացոյց է, որ հարստութեան և մասնակցողների պակասութիւն չ'կար: Ի հարկէ բոլոր բաժանմունքները միակերպ հարուստ չէին, բայց իւրաքանչիւրն ունէր իւր առանձ-

նայատկութիւնները և արժանաւորութիւնները: Բաժանմունքները Հետեւեալներն էին I. Երկրագործութիւն II. Այգեգործութիւն և Բանջարանոց III. Պէնեգործութիւն IV. Շէրամապահութիւն, Բեղմնապահութիւն V. Կաշնային փնփնութիւն և Կապարապահութեան արդէնքներ VI. Անգամաւորութիւն VII. Ձմեռութիւն VIII. Երկրագործական Գործիքներ և Բեռնակներ X. Տնային արդիւնքներութիւն և արհեստագործութիւն XI. Հանքահանքի XI. Մանրագործական XII. Գործարանական արդէնքներութիւն և այլն...

Երկրագործութիւնը իբրեւ արհեստ Սովկասում պատիւ չունէ, թէև ժողովրդի գլխաւոր պարտաւորութիւնն է: Արդիւնահանողէսը աշխատելով ներկայացնել մեր երկրի երկրագործութիւնը, մեզ ցոյց տուաւ մի մեծ ժողովածու ամենատեսակ հացաբոյսերի, խոտերի, սերմերի զանազան տեսակներից բաղկացած: Այս բաժնում ժողոված իրերի թիւը հազարից աւելի էր: Սովկասի երկրագործութիւնը շատ հին ժամանակներից սկսած է զարգանալ, ամբողջ զաւառներ, որոնք պատմական ժամանակների յայտնի են եղել իբրեւ բերրի և առատ երկիրներ, դարերի ընթացքում մշակուելով այժմ ուժասպառ են եղել: Հողի ոյժը պակասելուն պէս, պէտք էր ակամայ մշակման ձևերը փոխուէին, կատարելագործուէին, որ ուժասպառ եղած հողի վերայ էլ մարդիկ կարողանային առատ հաց ունենալ և հացի կարօտութիւն չկրէին: Միևնոյն երկրորդ այսօր մենք դեռ տեսնում ենք, այսինքն հողերը տարեց տարի պակասացնում են իրենց ոյժը: Արդիւնահանողէսը մեզ ցոյց տուեց, թէ դեռ որքան մեծ հարստութիւններ ունենք մենք. նա մեզ ապացուցեց նորից, որ Սովկասի բնութիւնը դեռ այնքան հարուստ է, հողը այնքան պտղաբեր է, որ կարող է այնքան կերակուր մատակարարել բոյսերին և այնպէս լաւ աճեցնել նոցա, ինչպէս շատ քիչ երկիրներ կարող են անել: Պատուական տեսակի ցորեններ, բրինձ, զարի, եղիպտացորեան և այլն ապացոյց էին դորան: Բայց զարմանալի չէ, արդե՞օք, որ չնայած դորան, մեր երկիրը իբրեւ երկրագործական երկիր ամենայեւին տեղերից մէկն է բռնում: Սովկասեան արդիւնահանողիսում մեզ ներկայացան միայն մի քանի կալուածատէրեր, որոնք լըժապէս ուշադրութիւն են դարձրած այդ ճիւղի վերայ: Ուսանելի բաներ այս բաժնում շատ կային, բայց ափսոս, որ քի-

չերն էին օգտվում նոցանով: Պատճառն այն էր, որ բաւական չէր տեսնել բոյսերի և սերմերի անվերջ տեսակները, պէտք էր և իմանալ նոցա որ գաւառին կամ գիւղին պատկանելը, հողի, ջրի և ուրիշ պայմանների, օրինակ մշակութեան ձեւերի և առանձնայատկութիւնների մասին տեղեկութիւններով լուսաբանուած: Բայց հասարակութիւնը այդ տեղեկութիւնները չէր կարող ստանալ, որովհետեւ ոչ տպուած ցուցակ կար այդ իրերի համար և ոչ մասնագէտներ, որոնք դոնէ ժամանակ առ ժամանակ բացատրութիւններ տային հասարակութեանն այդ բաժնի մասին:

Այդին և Բանջարանոցը մեր ղիւղացու կեանքում մեծ դեր են խաղում և բնականաբար այս բաժինը արդիւնահանդիսում հետաքրքրելիներից մէկը պէտք է լինէր: Բանջարանոցի արդիւնքներով հարուստ չէր այս բաժինը և առհասարակ Աովկասում բանջարանոցը այն նշանակութիւնը չունէ, ինչ որ Եւրոպայում: Մեզանում գլխաւորապէս մշակվում են զանազան կանաչեղէն, որոնք մեծ գործածութիւն ունեն. ինչ վերաբերում է դեմնախնձորին, կաղամբին, շաղգամին և ուրիշ արմտեղէնի, նոցա մշակութեան ձեւերը այնքան էլ լաւ յայտնի չեն մեր ժողովրդին, թէ և նոցա գործածութիւնը տարեց տարի աճում է: Մինչդեռ Եւրոպայ իւրաքանչիւր քաղաք շրջապատուած է լինում ահագին բանջարանոցներով, որոնք քաղաքին մատակարարում են մեծ քանակութեամբ և մատչելի դնով բանջարանոցի ամեն տեսակ արդիւնքներ, մեր քաղաքները զուրկ են նոցանից և մեծ մասամբ բանջարեղէնի և արմտեղէնի պակասութիւն են զգում, յաճախ ստիպուած լինելով թանդ դնով հեռու տեղերից բերել տալու, ինչպէս օրինակ Բաղուն Աստրախանից, Լենքօրանից և այլն... այն տեղերում, ուր ջրի պակասութիւն չէ զգացվում, բանջարանոցները կարող էին առատ պտուղներ տալ, որոնց արտահանութիւնը Աովկասի քաղաքները երկաթուղիների միջոցով հեշտացրած լինելով մեծ արդիւնք կ'երեւին: Դժբաղդաբար այդ տեսակ փորձերի թիւը շատ քիչ էր արդիւնահանդիսում, բայց և այդ քիչերը ցոյց էին տալիս, որ դժուար չէ աշխատելով և լաւ հետեւանքների դալ: Ինչ վերաբերում է այդեպանութեան արդիւնքներին, նորանք գուցէ լիովին չէին ներկայացրած ար-

զիւնահանդիսում, բայց այս դէպքում աւելի հետաքրքրելին ուրիշ բան էր: Մենք լաւ գիտէնք, որ Սովկասը ունէ ահա-դին տարածութիւններ այգիներով ծածկուած, և արդիւնա-հանդիսում ներկայացրած մրդերի տեսակները պատիւ էին բերում մեր հինաւուրց պահած պահպանած այգեգործու-թիւնը, որը կարողացել է ստեղծել զանազան նուրբ մրդերի տասնեակ և հարիւրաւոր տեսակներ: Բայց կան երկու ուրիշ հանգամանքներ: Առաջինը, այն, ինչ որ կարող էր լաւ և կա-տարեալ համարուիլ առաջ, երբ եւրոպական այգեգործութիւնը այնքան բարձր էր, երբ թէ թարմ և թէ չոր մրդեր ընտրե-լու և արտահանելու ձևերը ուրիշ երկրներում այնքան կա-տարեալ չէին, միւսինքն այժմ արդէն ներկայանում է իբր ան-կանոն մի արդիւնաբերութիւն, որը չ'ունէ իւր որոշ նպատակ-ները և ուղղութիւնը: Եւրոպական այգեգործութիւնը աշխա-տում է զանազան միջոցներով, պատուաստելով, ուրիշ երկր-ներից մրդերի լաւ տեսակները բերել տալով, բարձրացնել տե-ղային մրդերի յատկութիւնները, տալով նոցա թէ գեղեցիկ արտաքին տեսք, որ արտահանութեան համար մեծ նշանա-կութիւն ունէ, թէ նուրբ և ակտիւ չ'ունէ համ ու հոտ: Մեր այգեգործները հնուց ունենալով մրդերի պատուական տեսակ-ներ, այժմ պէտք էր ծանօթանային միայն այն միջոցների և կանոնների հետ, որոնց հետեւում են եւրոպացիք իրենց մրդե-րին յայտնի յատկութիւններ տալու համար: Միւս հանգա-մանքը աւելի նշանաւորն, արտահանութեան միջոցներն են: Մրդերի տեսակները կատարեալագործելու կարիքը մեր այգե-պանները մինչև այն ժամանակ չէն ըմբռնիլ, մինչև որ լաւ մրդերի պահանջ չ'երևայ, այսինքն մինչև որ նոցա աշխատու-թիւնից մնացած աւելորդ արդիւնքերը չ'արտահանուին: Աւ-գուցէ դորանից պէտք է սկսել իսկապէս, երբ արտահանու-թիւնը հիշատանայ, այն ժամանակ արդիւնաբերողները իրենք ուշադրութիւն կ'դարձնեն իրենց արուեստը կատարեալագոր-ծելու վերայ: Մինչև այժմ մեր արտահանութեան միակ մի-ջոցն էր զօրացնել մրդեղէնը, բայց արդիւնահանդիսի այցելու-ները դէպք ունեցան ակներե տեսնելու թէ ինչ ահագին զա-նազանութիւն կայ մեր և եւրոպական ձևերով չորացրած մրդեղէնի մէջ: Մինչդեռ մեր միւրդը չորանալուց կոշտանում

է, զոյնը փչացնում է, կարմրում մինչև անդամ սեանում, եւրոպական ձևով չորացրածը պահպանում է վարմանալի լաւ, սպիտակ գոյն, մնում է փափուկ և կանոնաւոր և զեղեցիկ կտորած լինելով արտաքին ձևով բոլորովին զանազանվում է մեր հասարակ չոր մրգերից: Միրգ չորացնելու, ինչպէս և մաքրելու, կտորելու, կեղևը հանելու համար յարմարեցրած մեքենաները արժանացան հասարակութեան ջերմ ուշադրութեան. միրգ չորացնելը և նորա մասին տուած պ. Չերնիակի բացատրութիւնները արդիւնահանդիսի ամենահետաքրքրիկ և կենդանի մասերից մէկն էր: Մեծ բաւականութեամբ մենք պէտք է ասենք, որ մի քանի երիտասարդներ ուշադրութեամբ ուսումնասիրում էին այդ գործը արդիւնահանդիսում, կեանքի մէջ իրականացնելու նպատակով: Միրգը արտահանութեան նիւթ դարձնելու մի ուրիշ ձևն, նորանից քաղցրաւենիներ, կօմպօսներ, շաքարեղէններ շինելն է. այս կարգի արդիւնաբերութիւնը մեզանում շատ թոյլ է և ցուցահանդիսում էլ աղքատ էր ներկայացրած:

Մենք իրաւունք ունէինք պահանջել զինեզործական բաժնից աւելի, քան ինչ որ ներկայացրած էր: Առաջինը այստեղ ներկայ չէին մինչև անգամ այնպիսի մեծ Ֆիրմաներ, ինչպէս Բադրատիօն Մուխրանսկունն է, որի զինները վաղուց յայտնի են թէ Աովկաս, թէ ամբողջ Ռուսաստան և մինչև անգամ արտասահման: Նրկորդ. մի քանի տեղերի զինները շատ քիչ քանակութեամբ և թոյլ էին ներկայացրած արդիւնահանդիսում, օրինակ մեր Պանձակի զինեզործները ինչպէս ամեն հասարակական խնդիրներում, ինչպէս իրենց քաղաքային հարցերում թոյլ են վարվում, այնպէս էլ անհոգ էին մնացել և այս դէպքում, չ'նայելով, որ այնպէս մօտիկ են Թիֆլիսից և երկաթուղու մօտիկութիւնը նոցա համար մեծ յարմարութիւն է ներկայացնում: Մեր տեղային զինները հետադատողը կ'տեսնէ, որ բացի մի քանի մեծ Ֆիրմաներից, մնացած զինեզործները դեռ շատ քիչ հմտութիւն ունեն զինեզործութեան և զլիսաւորը զինի պահպանելու մէջ: Մեր զինները, ինչպէս յայտնի է, լաւ են միայն երբ հեռու տեղեր չեն արտահանվում: Արտահանութիւնը մեծ դժուարութիւններ է ներկայացնում, զինին շուտով սկսում է հոռլ և փչանալ: Բացի այդ՝ ար-

գիւնահանդիսում ներկայացրած գինիները դեռ չհնացած մի կամ երկու տարեկան գինիներ էին. մեղանում գինի պահել, հնացնել և այդպիսով աւելի թանկագին ապրանք պատրաստել չ'գիտէին: Վէտք է խոստովանած, որ այս դէպքում բայի գիտութեան պակասութիւնը, նաև մեծ նշանակութիւն ունէ և գումարի պակասութիւնը: Վերջինս կարելի էր լրացնել ի հարկէ ընկերական ոյժերով: Մենք գիտենք, որ մի այդպէս միտք ծաղած է եղել Վանձակի գինեգործների շրջանում, բայց թէ ինչու մինչև այսօր չէ իրագործուած այդ պատուական դադափարը, մենք չ'գիտենք: Սարող ենք միայն ափսոսալ և ցանկանալ, որ մեծ ընկերութիւններ կազմելով և հմուտ մասնագէտներ հրաւիրելով մեր գինեգործները վերջապէս արժանի գործածութիւն անէին իրենց ապրանքից:

Երամապահութեան և մեղմաբանութեան բաժինը ամենաշքեղն էր իւր գեղեցկութիւնով: Այստեղ ներկայ էին շատերին վաղուց յայտնի շերամապահները, որոնք իրենց մասնագիտութեան մէջ արդէն մի որոշ կատարելագործութեան են հասած: Այստեղ կային բաւական ուսանելի ժողովածուներ թէ թթնու, նորա մշակման և հիւանդութեանց վերաբերեալ և թէ շերամի որդնի և թիթեռի զարգացման, աճման և հիւանդութիւններին վերաբերեալ: Միւս կողմից ներկայացրած էին զանազան գործիքներ և շերամը պահելու ձևեր, որոնք գործ են ածվում Սովկասում և զանազան երկիրներում: Այդ բոլորը բոժոժի և մետաքսի տեսակների հա միացրած շատ ուսանելի և հետաքրքրական էին դարձնում այս բաժինը, բայց դժբաղդաբար պէտք է կրկնել որ հասարակութիւնը անկարող եղաւ ամբողջովին օգտուել նոցանով: Մշտական և կանոնաւոր բացատրութիւնների պակասութիւնը շատ զգալի էր: Ճշմարիտ է, բաժնի կարգադրիչ Շափրովը մի քանի դասախոսութիւններ կարդաց շերամապահութեան մասին, բայց այդ մատչելի էր հասարակութեան մի շատ փոքր մասին: Սովկասի մեղուապահութիւնը դեռ կարօտ է շատ նորմուծութիւնների. կային այնտեղ և կատարելագործուած փեթակներ և լաւ պահուած մեղը, բայց նոքա այնքան աննշան էին համեմատաբար այն հարստութեան, որը ունէ Սովկասը: Մեղրի վաճառահանութիւնը մինչև անգամ օտար երկիրներում, Օուլիցերիայում բա-

ւական մեծ տեղ է բռնում: Մի՞թէ մեր մեղքը և մոմը չէին կարող կանոնաւոր վաճառահանութեան նիւթ դառնալ:

Եթէ վերոյիշեալ բաժինը ամենազեղեցիկ և շքեղն էր, կախարհաբանական բաժինը գուցէ տգեղ, բայց միւսնոյն ժամանակ ամենահետաքրքրելին էր ամբողջ արդիւնահանողիսում: Այս բաժինը մենք պէտք է բաժանենք երկու մասի. մի մասը ներկայացնում էր պանրի, իւղի զանազան տեսակները, խնոցիներ և այլն, որոնք ժողովուած էին Աովկասի զանազան տեղերից կաթնասնտեսութեան և մասամբ անասնապահութեան ժամանակակից դրութիւնը նկարելու համար: Այս մասը մեր կարծիքով պէտք էր համարել չ'աջողուած. Աովկասի պանրի հարիւրաւոր տեսակներից շատերը բացակայ էին այստեղից, բացի այդ ներկայացրածն էլ շատ լաւերիցը չէր, բայց և այնու ամենայնիւ կովկասեցւոյ համար այստեղ շատ ուսանելի բաներ կային. օրինակ մենք տեսանք արդիւնահանողիսում վերին աստիճանի լաւ շվէյցարական պանիրներ. Աովկասում պատրաստած, որոնք պարզ ապացուցանում էին, թէ մեր երկիրը իւր բնութիւնով, հողով, և բուսականութեամբ այնքան նման է շվէյցարականին, որ մենք ամենայն համարձակութեամբ կարող ենք պատրաստել այդ տեսակի պանիրները և գուցէ մեծ վաճառահանութեան առարկայ դարձնել: Աովկասի կաթնասնտեսութիւնը աւելի մեծ ապագայ է խոստանում, որը կ'սխառի այն ժամանակից, երբ մենք լուրջ ուշադրութիւն կ'դարձնենք մեր տեղային պանիրների տեսակները բարւոքելուն վերայ, մոցընելով մեր պանրագործութեան մէջ այն կանոնաւորութիւնը և հմտութիւնը, որը անհրաժեշտ է համարվում եւրոպական պանիրներ պատրաստելու համար: Այստեղ նոյնպէս Աովկասի Էրբէրը յայտնի տեսակների և կարգերի բաժանելու առաջին փորձն էր արուած: Այս բաժնի երկրորդ մասը, որը զլիսաւորապէս զրաւում էր հասարակութեան ուշադրութիւնը և հետաքրքրութիւնը, դա նորա կենդանի, շարժուն և ուսանելի մասն էր: Այստեղ կովկասեցին առաջին անգամը տեսնում էր, թէ ինչպէս են զանազան մեքենաներով կաթի սէրը քաշում, նորանից իւղ և պանիր պատրաստում, ինչպէս ճանաչում կաթի մէջ ջուր խառնելը կամ կեղծելու ուրիշ ձևերը: Եւ այս բոլորը կատարվում էր առանց բացառութեան ամեն օր

առաւօտեանից մինչև երեկոյ: Այստեղ ցանկացողը կարող էր մինչև անգամ աշակերտ մտնել և սովորել իւր և պանիր շէնելու ձևերը: Եթէ աւելացնենք սորա վերայ և այն, որ բաժնի կարգադրիչները ամեն օր ներկայ գտնուելով, անգաղար բացատրում էին հասարակութեանն ամեն բան, ինչ որ կարող էր ում և իցէ հետաքրքրել, միւսնոյն բանը իւրաքանչիւրի համար նորից կրկնելով, այն ժամանակ հասկանալի կ'լինի, թէ ի՞նչ էր պատճառը, որ այս արտաքին տեսքով անշուք բաժինը այնքան կենդանի հետաքրքրութիւն էր շարժում հասարակութեան մէջ: Բացի ամենօրեայ բացատրութիւնները, պ. պ. Քալանթարները կարգացին հինգ հրապարակական դասախօսութիւն:

Անարատագոհական բաժինը ունէր շատ հարուստ, գեղեցիկ և լաւ կարգաւորած բոլսաբանական ժողովածուներ: Այս բաժնում մենք տեսանք ընկոյզի և ուրիշ փայտերի թերթեր պատրաստելու Սովկասեան գործարանի արդիւնքները (фанерное дело): Այս արդիւնաբերութիւնը բացուելով Սովկասում, մէկին երկու և աւելի աժանացրել է Փանկրնիւրի գինը, մինչդեռ դորանից առաջ ընկոյզի փայտը չնչին գներով արտասահման էին ուղարկում ու այնտեղից նորից բերել տալիս մեր փայտից պատրաստած Փաներ: Չէ կարելի չ'ցանկանալ պ. Նդիազարեանցին յաջողութիւն այդ օգտաւէտ գործում: Մեր անտառները ունեն շատ ուրիշ հարստութիւններ, որոնք մեզանում աննկատելի են մնում, բայց եւրոպացու ձեռքում մեծ արդիւնքներ կ'բերեն:

Ձմարաական բաժինը մի առանձին բան չէր ներկայացնում, որ կարելի լինէր նորա մասին մանրամասն խօսել: Այստեղ կային ամեն տեսակի ձկնեղէն և խավեար, որոնք վաղուց արդէն վաճառահանութեան նիւթ են կաղմում: Բայց ինչպէս յայտնի է մեր ձկնորսական արհեստը կարօտ է շատ նորմուծութիւնների և գլխաւորապէս կանոնաւորութեան և մաքրապահութեան տեսակետից:

Ներհարթական մեքենաները և գործիքները ներկայացրած էին արդիւնահանողիսում այնպէս, որ այցելողը տեսնում էր մի կողմից մեր կոպիտ և երբեմն չափազանց ծանր գուլթանները, իսկ միւս կողմից արտասահմանից և Ռուսաստանից

եկած զործարանատէրերի պատրաստած եւրոպական գութանները, որոնք անհամեմատ աւելի յարմար և թեթեւն քան մերերը: Պիւղատնտեսները սաստիկ հետաքրքրուած էին այդ զործիքներով և մեքենաներով: Մեծ քանակութեամբ ծախվում էին գլխաւորապէս գութաններ և նմանապէս կաշեկրու և քամի տալու մեքենաներ: Արդիւնահանողի միջոցով մեր երկրագործներին եւրոպական մեքենաների և զործիքների հետ ծանօթացնելը մեծ ծառայութիւն պէտք է համարել Պովկասեան գիւղատնտեսութեան համար: Պովկասում էլ այժմ ինչպէս լսում ենք երկրագործական զործիքներ և մի քանի հասարակ մեքենաներ շինելու փորձեր են անվում: Հերկելու զործիքները փորձվում էին քննող յանձնաժողովի անդամների հսկողութեան տակ և հետաքրքրուող հասարակութեան ներկայութեամբ:

Իրերի քանակութեամբ ամենաառաջին տեղը բռնում էր պիւլսին արդիւնաբերութեան բաժինը մի քանի հազար կտորներից բաղկացած: Այս բաժինը մեծ ուշադրութեան արժանի էր իւր բազմազան արդիւնաբերութիւններով: Պատուական մետաքսեայ և բրդէ հիւսուածներ և զործուածներ, հիւսնալի զորգեր և կարպետներ, շքեղ արծաթէ և ոսկէ մանր զարդեր, և գեղեցիկ ամաններ, փայտից և ուրիշ նիւթերից պատրաստած իրեր, և այլն և այլն. այս բոլորը այնքան մեծ քանակութեամբ էին և այնքան տեղ էին պահանջում, որ նոցա համար նշանակուած տարածութիւնը մէկին երկու կարելի էր ընդարձակել: Տնային արդիւնաբերութիւնը Պովկասում մեծ յառաջադիմութիւններ է արել, կամ աւելի ճիշտն ասած, վաղուց նա շատ բարձր է եղել: Այստեղ մենք նոյնպէս տեսանք և նոր ժամանակների յառաջադիմութիւններ և կատարելագործութիւն, ծանօթանալով մեր մանր արհեստաւորների հնարագիտութեանց հետ. նոր բաներ հնարել և կատարելագործել առաւել սիրում են մեր աղքատագրոպօլցի հայերը: Այս բաժնում այցելուները կարող էին նոյնպէս ծանօթանալ մեր ժողովրդի գեղարուեստական ճաշակի հետ, որը իհարկէ արևելեան տեսակէտից, բաւական զարգացած է. մենք տեսնում էինք այստեղ և եւրոպական ճաշակով պատրաստած պատուական իրեր: Ձեռք կարող այստեղ չփշել մի օտարօտի բան, այսինքն այս

բաժնի կարգադրիչների հայեացքը իրենց բաժնի վերայ: Այդ հայեացքը մօտաւորապէս զուգէ կարելի լինէր այսպէս արտայայտել, թէ այդ բոլոր իրերը կիսավայրենի ժողովրդի ձեռքերից զուրա եկած բաներ են և հազիւ թէ արժանի են մեծ ուշադրութեան: Մինչդեռ ուրիշ երկրներում առաւել Ռուսաստան առանձին ուշադրութիւն են դարձնում տնային արդիւնաբերութեան վերայ, աշխատելով նորան բարձրացնել և զարդացնել, մենք առանց յարգանքի ենք վերաբերվում դէպինա:

Արհեստագիտական բաժինը տնային արդիւնաբերութեան հետ էր կցած և զուգէ դա շատ էլ անհիմն չէր: Աւ իսկապէս Սովկասը մինչև այժմ դեռ չ'ունէ մեծ արհեստանոցներ և գործարաններ, այլ գլխաւորապէս տարածվում են մանր արհեստանոցներ: Մեծ գործարանների մէջ առաջին տեղն է բռնում Րենկվիստի թուջի գործարանը, որը արդիւնահանգիստում ունէր իւր առանձին գեղեցիկ պավիլիօնը: Արհեստագիտութիւնը և գլխաւորապէս մեքենայագործութիւնը շատ բաների է կարօտ և ամեն մի փորձ, ամեն մի նորութիւն այս գործում յարպելի է: Այս տեսակէտից Թիֆլիսի արհեստագիտական ուսումնարանը, որը մասնակցում էր արդիւնահանգիստում իւր աշակերտների աշխատութիւններով, հետաքրքրական էր: Բայց ի՞նչու էին այնքան թանգ գներ նշանակուած աշակերտների շինած իրերի համար, մենք չենք հասկանում: Մեր կարծիքով պէտք է սովորեցնել աշակերտներին որքան կարելի է լաւ գործել, աշխատելով միւսնոյն ժամանակ որքան կարելի է աժան շինել: Յանկալի էր, որ Սովկասի միւս կողմերում էլ այդ տեսակ օգտակար ուսումնարաններ բացուէին, առաւել այն տեղերում, ուր մեծ արհեստանոցներ ամենեւին չ'կան, օրինակ Նրեւանայ նահանգում:

Հանգանակաւ բաժնում այցելողները կարող էին ծանօթանալ Սովկասի հանքային ահագին հարստութիւնների հետ, որոնց թիւը տարէջ տարի աւելի ու աւելի մեծանում է: Այդպէս է օրինակ կօբալտի թանկագին հանքը, որը քանի տարիներ շարունակ ծածուկ կերպով, կարծեմ պղնձի անոռնով, արտահանվում է եղել Նւրուպայ: Այս բաժնին է պատկանում և Բագուի նաւթային գործարանատէրերի առանձին շինութիւնը: Վժուար է որոշել թէ ինչ չափի է հասնում նաւթի

քանակութիւնը ամբողջ Սովկասում, ուր նաւթի հանքերը ոչ թէ միայն Սասպից ծովի ափերումն են գտնվում, այլ նաև Շամախու, Պանձակի, Բաթումի և Համարիա ամբողջ սև ծովի արևելեան ափերում: Յայտնի է, որ առատ հանքեր գտնվում են նոյնպէս Տրապիզոնի, Սանի և Թիւրքահայաստանի զանազան կողմերում:

Մանկավարժական բաժինը բաւական հետաքրքրական, բայց ոչ հարուստ բաժին էր, որը կազմուած էր Սովկասի զանազան քաղաքների ուսումնարանների աշակերտների աշխատութիւններից: Այս բաժինը առաւել հետաքրքրելի էր ի հարկէ մանկավարժների և ուսուցիչների համար: Մենք այստեղ կարեւոր ենք համարում մի նկատողութիւն անել: Սովկասեան առաջին արդիւնահանողէսը այնքան մի մեծ երևոյթ էր մեր կիսանքի մէջ, որ պէտք է ազդէ մեր հասարակական բոլոր գասակարգերի գործունէութեան վերայ: Ի միջի այլոց նորան այցելելը մեծ օգուտ պէտք է ունենար մեր ուսուցիչների համար, որոնք բոլորովին զուրկ էին դորանից: Մենք կարծում եմք որ հոգեւոր իշխանութիւնը այդ հանգամանքի վերայ պէտք է ուշադրութիւն դարձրած լինէր, թոյլ տալով գոնէ մի շաբաթ ժամանակով հեռանալ ուսուցիչներին իրենց պաշտօնատեղից արդիւնահանողէսը տեսնելու, որը նոցա աշխարհահայեացքը շատ կ'ընթացնէր: Այժմ իհարկէ արդէն ուշ է:

Պորժարանական արդիւնաբերութեան բաժինը բաղկացած էր բաւական խառն արդիւնաբերութիւններից, որոնք պատկանում են թէ Սովկասին և թէ Ռուսաստանին: Սովկասի արդիւնաբերութիւնների մէջ նկատելի են իւր հանելը, գարեջրի կաշուի, օղիի, ալիւրի և ծխախոտի պատրաստելը: Պարեջուրը Սովկասում սկսում է սաստիկ տարածուել, չ'նայած որ զինին այնպէս աժան է. արդեօք սա ինչե՞ նշան է. հասարակութեան ճաշակն է փոխվում, թէ մեր զինիները չեն կարողանում բաւականութիւն տալ զործածողին: Պուցէ երկուսն էլ միաժամանակ զոյութիւն ունեն: Պորժարանական արդիւնաբերութիւնը Սովկասում անշուշտ մօտիկ ապագայում մեծ քայլեր պէտք է անէ, առաւել որ երկաթուղիներ անցկացնելուց յետոյ հաղորդակցութիւնը այնպէս հեշտացել է, որ ոչ միայն երկրի մէջ, այլ արտասահման կարելի է արտահանել արդիւնք-

ները: Չարմանալի է, որ Աովկասը, ուր շաքարը միշտ թանկ է լինում, մինչև այսօր մի հատ շաքարի զործարան չ'ունէ: Արդիւնահանդէսը անկասկած շատ նոր հարցեր պէտք է զարթեցնէր և մենք հաւատացած ենք, որ առաջին արդիւնահանդիսի այցելունները, երկրորդում պէտք է շատ նոր արդիւնաբերութիւններ տեսնեն, որոնք անշուշտ կերևան իբրև առաջին ցուցահանդիսի ազդեցութեան հետեանք: Մենք վերը մի քանի անգամ կրկնեցինք, որ չ'նայած արդիւնահանդիսի հարստութեան, շատ դէպքերում հասարակութիւնը չէր օգտւում նորանից: Մենք այստեղ աշխատենք մատնացոյց անել մի քանի ամենագլխաւոր կէտեր, որոնք պատճառ էին այդ մեծ պակասութեան: Հասարակութիւնը արդիւնահանդիսում շրջում էր այնպէս, ինչպէս կ'ըջէր մի գեղեցիկ կահաւորած տան մէջ, որտեղ նորա ուշադրութիւնը գրավում է միայն այն, ինչ որ արտաքին գեղեցկութիւն ունէ: Իրերի նշանակութիւնը և նոցա զստաւորութեան իմաստը յաճախ, բոլորովին անհասկանալի էին մնում այցելուների համար: Չէր կարելի բաւականաւ միայն հազարաւոր կտոր-բաներ ժողովելով և կարգաւորելով, պէտք էր զործ դնել և այն բոլոր միջոցները, որոնք որ հարկաւոր են նոցա նշանակութիւնը այցելուներին պարզելու համար: Այդ միջոցները բազմաառասկ են: Ամենից առաջ արդիւնահանդէսների կարգադրիչները հոգ են տանում, որ բոլոր իրերի մանրամասն ցուցակը կազմուի և իթէ կարելի է, դեռ ցուցահանդէսը չ'բացուած այդ ցուցակը տպուի այցելուներին ծախելու համար: Բայց որքան մեծ անկարգութիւն էր տիրում մեր Աովկասեան արդիւնահանդիսում, դորան վկայ էին բոլոր այցելողները, որոնք ոչ թէ սկզբում անկարող էին ձեռք բերել ցուցակը, այլ և մինչև արդիւնահանդիսի կիսուելը հազիւ հազ տեսան միայն մի քանի բաժինների ցուցակները: Իսկ ամբողջ, լիակատար ցուցակը դուրս եկաւ միայն արդիւնահանդիսի վերջանալու մի քանի օրերը, չ'նայած որ ամիս ու կէս ժամանակ կար դուրս համար:

Առանց բացատրութեան արդիւնահանդէսը մի մեռած խտտուրդ է, որից շատ դժուար է մի բան հասկանալ: Պորա համար են նշանակվում կարգադրիչները, այն էլ իւրաքանչիւր բաժնի համար համապատասխան մասնագէտներից, որ նոքա

լինին թարգման հասարակութեան և անխօս առարկաների մէջ: Բայց մեր արդիւնահանգէսը, շատ փոքր բացառութեամբ, բոլորովին զուրկ էր այդ թարգմաններից: Արտեղ որ կենդանի խօսք կար, այնտեղ միշտ հասարակութիւնը խմբերով ժողովուած մեծ ուշադրութիւնով ականջ էր դնում և տակաւին հետաքրքրվում էին մինչև անգամ այնպիսիները, որոնց մասնագիտութիւնը կամ շահերը ոչինչ կապ չ'ունէին այդ բացատրութիւնների հետ: Այդ նպատակով արդիւնահանգիստներում շատ անգամ փոքրով մասնագէտներ են վարձում, որոնց պարտաւորութիւնն է լինում հասարակութեանը հարկաւոր բացատրութիւններ տալ:


Այցելուները իրենք չեն կարող ամեն բանի մէջ դատաւոր լինել և հասկանալ թէ մի յայտնի բաժնում դրուած իրերից որն է ամենալաւը կամ վատը: Այդ բանը մի կողմից կարող էին հասկացնել վերև յիշուած բացատրողները: Բայց շատ օգտակար է որ հասարակութիւնը ինքը իւր աչքով տեսնէ այն իրերը, որոնք ամենալաւ պարզեւներն են ստացել: Այդ նպատակաւ արտասահմանում աշխատում են եթէ ոչ բացուելուց առաջ, գոնէ արդիւնահանգիսի առաջին օրերում իսկ վերջացնել իրերի քննութիւնը, պարզեւները նշանակել և մինչև անգամ այս վերջինների կամ առաջին յուցակը տալել, կամ թէ իրերի վերայ տոմսակներ են կայնում, որոնց վերայ նշանակում են պարզեւի անունը: Մեր արդիւնահանգէսը այդ դէպքում էլ շատ դանդաղ էր վարվում: Վնասութիւնները հազիւ հազ կարողացան արդիւնահանգէսը փակուելուց մի շաբաթ առաջ վերջանալ, իսկ պարզեւաբաշխութեան հետեանքները հասարակութեան յայտարարեցին փակուելուց երկու շաբաթ ուշ: Բացի այդ կան շուտ փչացուող առարկաներ, ինչպէս, օրինակ թարմ մրգեղէնը, իւղ և պանիրը, մսեղէնը և այլն, որոնց շատ ժամանակ չէ կարելի պահել, այլ պէտք է քննել, որքան կարելի է շուտով: Այս հանգամանքի վերայ ամենևին ուշադրութիւն չէր դարձուած:


Արդիւնահանգիսի պատճառաւ երկրի զանազան մասերից մարդիկ ժողովվում են մի տեղ և այն էլ մի կարճ ժամանակամիջոցում: Այդ դէպքից առհասարակ ուրիշ երկրներում օգուտն քաղում թէ արդիւնահանգիսի յանձնաժողովը, թէ զանա-

զան ընկերութիւնները հասարակութիւնը մի կողմից ուսուցանելու հրապարակական դասախօսութիւնների միջոցով, միւս կողմից ժողովներ կազմելով զանազան զեկուցումներ լսելու և կարծիքներ փոխարինելու նպատակով: Աստախօսութիւններ ձշմարիտ է եղան, բայց նոքա մի կողմից կանոնաւորապէս կազմակերպուած չէին և նոցա համար պատշաճ սենեակ չէր նշանակուած, երկրորդը, համարեա թէ նոքա իրենց դասախօսների ինիցիատիվայի հետեանքներ էին: Ինչ վերաբերում է ժողովների բացակայութեանը Աովկասեան զիւղատնտեսական ընկերութեան մեղքն էր զա և նորան աններելի է, որ ամիս ու ու կէսուայ ժամանակամիջոցում նա չ'կարողացաւ և ոչ մի ժողով կազմել: Մենք իհարկէ չենք հաշվում այն պաշտօնական հանդիսաւոր ժողովը, որը կազմուած էր նախարարի ներկայութեան պատճառով: Նոյն խի զիւղատնտեսական ընկերութեան, կամ արդիւնահանդիսի յանձնաժողովի համար որքան հետաքրքրիկ կ'լինէին այդպիսի ժողովներ, որոնց մէջ կարդացուած զեկուցումները և վեճաբանութիւնները շատ կ'օգնէին և կ'հշտացնէին նոցա աշխատութիւնը արդիւնահանդիսի օգտի և հետեանքների մասին գաղափար և հաշիւ տալու համար:

Այս մի քանի նկատողութիւններով առայժմ բաւականաւորում ենք, աւելացնելով, որ արդիւնահանդիսի շատ պակասութիւնները մի կողմից ներվում էին, իբրև առաջին փորձի անհրաժեշտ սխալներ, միւս կողմից մոռացվում այն մեծ հետաքրքրութեան ազդեցութեան տակ, որը նա անկասկած զարթեցնում էր ամեն մի մարդու մէջ, ով սիրում է իւր երկիրը և ցանկանում է նորան ճանաչել: Պուցէ աւելորդ չ'լինի վերջում կրկնել այն, ինչ որ արդէն քանի անգամ յիշուած էր Աովկասի լրագրերում: Արդիւնահանդիսին մասնակցողների և նորան նշանակութիւն տուողների մեծամասնութիւնը հայեր էին: Բացի այդ, նոցա ներկայացրածներն էլ իրենց լաւ յատկութիւններով առաջին տեղն էին բռնում: Սա անկասկած մխիթարեցուցիչ է, որովհետեւ ապացոյց է, որ մենք, կուլտուրական յառաջադիմութեան զինը սկսել ենք հասկանալ և յուսանք, որ այդ ճանապարհի վերայ միշտ կ'մնանք առանց շեղուելու:

Ա.





ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎԵԱՆՅԻ ՏՈՒՆԸ ՔԱՆԱՔԵՌ ԳԻՒՂՈՒՄ



THE BUREAU OF THE ARMY, WASHINGTON, D. C.

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ՏԵՂԱԳՐՈՐ ԵՂԵՍԻՈՅ ԵՒ ՎԻՃԱԿԱՅ ՆՈՐԻՆ

Պէրք և Կառավարութիւն: Եղեւիոյ դիրքն է դաշտային, բայց յարեմտից և կիսովին ի հարաւոյ կը պաշարին զայն մօտաւոր լեռինք, իսկ միւս կողմանքն շրջապատեալ են պարտիզօք և դաշտօրէիւք. քաղաքի շէնքն քարուկիր է:

Եղեւիա մի-բիւսարիքի մէջ, որոյ իշխանութեան տակ կ'գտնուի երեք գայմագամութիւն և եօթը գիւղախումբ. գայմագամութիւններն են Սուրուճ, Պիրէճիկ և Ռումգալէ (Հոռմկլայ), իսկ գիւղախումբերն (բացի գաղաներու գիւղախումբէն) Խառան, Տիւկէրլի, Թիւրքմէն-Շուլապի, Պողապատ, (Սմաղաճ, Չայգուլու և Գապահայտար, որք կպարունակեն 1273 շէն գիւղեր:

Բնակիչք և ազգութիւնք: Բուն Եղեւիոյ մէջ գտնուած ազգերն ըստ նոր պաշտօնական մարդահամարի հետեւեալ թիւերը կկազմեն:

Խալամ.		10,700	արու.	9,087	էգ.
Լուսաւորչական հայ*)		3,781	»	2,880	»
Սիւրեանի.		593	»	458	»
Բողոքական հայ.		371	»	316	»
Հայ ասորի և լատին կաթողիկ.		215	»	226	»
Հրէայ.		171	»	144	»

15,831 արու. 13,111 էգ.

*) Մեր Ազգային առաջնորդարանի տօմարներուն մէջ հայերը հետեւեալ թիւերը կը կազմեն. Ա. բուն Եղեւիոյ մէջ արու 5,150, էգ 4,591: Գարմուշ գիւղի մէջ 701 արու և 650 էգ: Պիրէճիկի մէջ 373 արու և 265 էգ: Նիզիպի մէջ 80 արու և 63 էգ: Բումգալէյի մէջ 400 արու, 345 էգ: Սուրուճի մէջ 116 արու և 102 էգ, որոցմով ամբողջ լի վայրին մէջ կունենամք 12,834 լուսաւորչական հայ անհատներ:

Հետեւագէս այս թիւը ինչ առաւելութիւն որ ունի կառավարական տօմարի թուէն, միևնոյն առաւելութիւնը կրնայ ունենալ միւս թիւերն ալ, որք ի հարկէ քանի մ'դիտուեալներով պակաս ցոյց տրուած են կառավարութեան տօմարներուն մէջ:

Պիրէճիկի գայմագամութեան ներքին և արտաքին բնակչաց թիւն է 17,856 երկու սեռը խառն ըլլալով: Այսպէս ալ Ռումգալէյի բնակչաց թիւն է 18,948 և Սուրուճի, որոյ մարդահամարի գործողութիւնը տակաւին լրացած չէ, հաւանական հաշուով կրնայ լինիլ 17,500:

Վալով գիւղախմբերու բնակչաց, Տիւկէրլի ունի 4,930 և Պօղապատ 8,022, իսկ միւս հինգ գիւղախմբերն, որք տակաւին գրի առնուած չեն, պէտք է ունենան առնուազն 25,000 բնակիչ, և այս հաշուով Արեւիոյ ամբողջ քանակը կը լինի 121,176 անհատ:

Լեզու և սովորոյթ: Արեւիոյ բնակչաց տարբեր թիւերէն, Արեւիոյ և իւր վեճակին մէջ պարունակուած տարբեր ազգերն արդէն կրնան ճանչցուել, սակայն հարկ է յայտնել թէ գիւղօրէից բնակիչները մեծաւ մասամբ, արաբ և քիւրտ ցեղերէն կ'ընդկանան, և որք կ'իսսին քիւրտէրէն և արաբէրէն, ինչպէս նաև Արեւիոյ քաղաքին կամ Գաղանթըն մէջ խօսուած լեզուներն են միմիայն տաճկերէն, արաբերէն, քիւրտէրէն և հայերէն:

Արեւիոյ արևելեան հարաւային կողման վրայ տարածեալ այն նահապետական երկրի (այսինքն Խառանայ *) բնակիչք, որք մեծաւ մասամբ արաբ ցեղը կ'կազմեն, ճիշտ նահապետական սովորութիւններ ունին, իրենց մեծերուն կամ շէյխերուն հնազանդ, իրենք կ'ըսուին՝ իրենք կը ներին, եթէ սպանիչ մը ինքզինք սպանեալին տիրոջ գլուխէն յանձնէ, այլ ևս նոյն սպանիչն ազատ է իւր յանցանքէն, իրարու վրայ մեծ վստահութիւն ունին, նամէհը-մե-նէ-ն չունին. հազուատնին, ընդհանրապէս կտաւէ երկար շապիկ մը և գլուխին ակալ ըսուած կապ մը և վարչամակ մը կը կրէ: Վիւրտերը աններող և քիչ բացառութեամբ անհաւատարիմ են, վանմունքնին կոշտ, սակայն աշխատասէր և դործօն ժողովուրդ մ'են: Այս երկու ցեղին մէջ ևս կան երկրագործներ,

*) Խառան և իւր շրջակայ նահայէնները կ'պարունակին խիստ ընդարձակ դաշտեր արգաւանդ հողեր, և շատ մը աւերակ և ամացի գիւղեր և տեղեր, որոց մէջ եթէ նոր բնակիչներ գետեղուին և երկիրը հաղորդակցութեան մէջ դրուելով երկրագործութեան նոր մղում տրուի, առանց սխալելու կրնամք ըսել թէ Եգիպտոս երկրորդ Եգիպտոս մը կրնայ դառնալ մանաւանդ այն տուն երբ փոխանակ նեղօտի, Եգիպտոսը ողողէ յիշեալ անհուն երկիրները, և որոյ գործագրութեան համար, երկու տարի առաջ գերմանացի երկրաչափ մը կէս միլիօն ոսկի ծախս կանխադաժ էր:

ոչխար կով կամ ուղտ սնուցանելով ապրողներ, որոց ուտեստը առաջ կուգայ այս չորս բաներէն: Վաղաքացիք զանազան սովորութիւններ ունին և գրեթէ համանման են Վիլիկիոյ մի քանի մասերուն, ինչպէս նաև ապրուստով հագուստով, և առևտրով:

Բերք և առևտուր: Երկրի բերքերն են, ագնիւ ձի, ուղտ, ոչխար և այլ զանազան կենդանիք. բուրգ, բամպակ, ցորեան, գարի, շուշմա, կանեփ, բոկլա, սեսեռն, ոսպ, խաղող, զանազան կանանչեղէններ և մրգեղէններ և մասնաւորապէս քաղցր ու թթուաշ լաւ տեսակ նունք:

Երկրի առևտուրը առաջ կուգայ այս բերքերու վաճառումէն և դուրսէն եկած ասիական կամ եւրոպական ապրանքներու գնում և սպառումէն: Եւելորդ չէ յայտնել թէ տեղական պիտոյից ծառայող զանազան արհեստներ կան Եդեսիոյ մէջ, և արհեստաւորաց մեծագոյն մասը կ'կազմէ հայ տարրը:

Ալիսայ, Զոք, լիլի: Երկրի կլիման բարեխառն է, ամառը ոչ սաստիկ տաքութիւն և ոչ ձմեռը անտանելի ցուրտ, չոր չոր և առողջարար է: Արսուի թէ՛ երկրի հարաւային կողմը այսինքն Խառանու ներսերը երեք չորս օր հեռի եղող անապատներուն մէջ սաստիկ տաքութիւն կը լինի և կրնայ նարինջ և այս տեսակ պտուղներ հասցնել եթէ խնամող գտնուի:

Երկրի ջուրը ընդհանրապէս անուշ թեթեւ է: Թէև երբեմն ջրհորներ աղի ջրեր կունենան, սակայն հանքային ջուր երբեք չկայ Եդեսիոյ սահմանին մէջ:

Հայր Բերահամ և Բնդլիսա անուն աղբիւրներ, որք լճակի և կամ ըստ Հնորհալույն ծովակի ձև ունին, և քաղաքի արևմտեան պարսպին և հարաւային կողմէն բարձրացող զղեկին տակ կ'ծածանին. ասոնք Եդեսիոյ մէջ եղած և քաղաքին արևելեան կողմի դուրսի պարտէզները կուռգին, և շատ մը բաղանիքներ տուններ կամ ճամփանք ասկէ ջուր կառնուն: Եսոնցմէ ի զատ Գէհ-լիլ անուն աղբիւր մ'էս կայ, որ քաղաքին հիւսիսային կողմէն մուտ կը գործէ քաղաքին մէջ և կը բաժնուի շատ մը տուններու, բաղնիքներու ևն: Հարկ է ըսել թէ՛ այս ջուրը միւս ջրերէն աւելի անուշ և մարսողական յատկութիւն մ'ունի:

Եդեսիա չունի նշանաւոր լեռներ, և միմիայն իւր հարաւային արևմտեան կողէն կը բարձրանայ լեռանց փոքրիկ շղթայ մը կամ կոյտ մը, որոց մէջ կը գտնուին հալարաւոր քարայրներ, և որոց

շատերը կ'պարունակին իրենց մէջ շատ մը եղծուած արձանագրութիւններ, արձաններ և այլն. Եդեսիոյ շէնքերուն համար գործածուած քարերն այս լեռներէն կը կտրուին և այս քարերը ձերմակ գոյն և տոկուն յատկութիւն ունին, գտնուած է նաև կարմիր կամ ձերմակ մարմարիօնի հանքեր:

Հիւս-Նի-նի, Բերդ, շիւս-Նի-նի: Եդեսիոյ գրէթէ կեդրոնավայրը՝ մզկիթի մը դաւթին մէջ, կը գտնուի հինաւուրց հսկայ զանգակատուն մը, որոյ շրջակայք կ'տեսնուին հին նշանաւոր շէնուածոց հետքեր, ըստ աւանդութեան եկեղեցւոյն սրբոց քառասնից:

Ղոյնպէս հին զանգակատուն մը կ'գտնուի Եդեսիոյ արեւմտեան հարաւային անկիւնն եղած «Հայր Լբրահամ» անուն ծովակին մօտ:

Եդեսիոյ հարաւային արեւմտեան պարսպին վրայ, այժմ կ'կենայ վիմափոր խրամներով շրջապատեալ կիսաւեր բերդ մը երկու աշտարակներով: ԼՅԵ բերդ կանուանի («Բերդ Վերբովդայ»):

Եդեսիոյ հարաւային պարսպէն կէս ժամ հեռաւորութեամբ կը գտնուի ս. Ղաստառակի ուխտատեղին:

Արեւմտեան պարսպէն քառորդ ժամ հեռի, կայ հայոց ս. Սարգսի վանքը, յորում կը գտնուի Եփրեմ Խուրիի շիրիմը:

Եդեսիոյ արեւմտեան հիւսիսային անկիւնէն կէս ժամ հեռանալով կը գտնեմք անդ լճանման աղբիւր մը, որ ըստ աւանդութեան մկրտարան եղած է (Թադէոսի Լուսեղոյն յԵդեսիա քարոզութեանցն ատեն):

Արեւմտեան դէպ հարաւ տարածեալ լերանց մէջ կայ քարայր մը, որ ըստ աւանդութեան իբր գերեզմանատեղի Լբգար Թագաւորին, ուխտատեղի է հասարակաց: ԼՅԵ ուխտատեղիէն դէպ հարաւ լերանց մէջէն $1\frac{1}{2}$ ժամ հեռանալով լերանց գագաթը կը գտնեմք Սժբնայ Յակոբ հայրապետի ընդարձակ վանոց աւերակներն, ուր կը գտնուի նաև զանգակատուն մը:

Եդեսիոյ հարաւային պարսպէն դէպ ի լեռնային շրջապատն երթալով՝ կը գտնեմք անդ նահատակման տեղին Ղուրիասայ, Սամանասայ ևն, որ ուխտատեղի է հասարակաց:

Քաղաքէս երկու ժամ հեռի արեւելեան հիւսիսային կողմն լերանց ստորոտը կ'գտնուի «Սարմուշ» հայկական գիւղը 250 տուն բնակչօք և մէկ եկեղեցեալ:

Ագապին լիճակ: Հայոց նիւթական և բարոյական վիճակն չէ

նախանձելի: Հայոց դպրոցաց թիւն է հինգ, որոյ 3-ն արական, 2-ն
իգական: Իբրեւ կրթական ընկերութիւն միայն կ'գտնուի Ոսկերիւնեան
ընկերութիւնը, որոյ խնամոց տակ է արական դպրոցաց մին՝ Ոսկերի-
ւեան վարժարանը: Եղեւիոյ Ազգային վարչութիւնն է սահմանա-
դրական և ըստ ազգային բաժանման Եղեւիոյ, որ առաջնորդա-
նիստ վիճակագրութիւն է թեմերն են. Պիրէճիկ, Վեղիպ, Լնհէշ,
Շ'իպին*), Սուրուճ, Կարմուշ և Սեւրէկ:

Եր. Հագ.



ՆՄՈՒՇՆԵՐ

ՍԱՐԱԾԻ ԲԱՐԲԱՌԻՆ

Չը գիտեմք թէ ո՞ր ատենէ կսկսի թրքախօսութիւնն, սա-
չալին որոշէ թէ մարաշցին տուն ուրեք շուկայի մէջ կը խօսի
այն լեզուն, որ իւր ամէն թերութեամբ հանգերձ սիրելի է և
պաշտելի: Արական սեռն ընդհանրապէս թուրքերէն կը խօսի,
իսկ իգական սեռն որ մեր սովորութիւններու, լեզուի, աւանդա-
պահն եղած է, կը խօսի հայերէն, անշուշտ կարելի է հասկնալ
թէ գաւառաբարբառ մ'է, մի քիչ նմանութիւն ունի Օւէյթիւնի
բարբառոյն, բայց ոչ յար և նման: Հայ մամիկներ երբ կը տես-
նեն մի գործ արժան վարձատրութեան, ի՞նչ կարեն ընել, մարդ
իւր ունեցածն կրնայ միայն տալ, կը բանայ իւր օրհնեալ բերան
և կսկսի կենդանի բարբառով ըսել այն օրհնութիւններն, որ
մարաշցի կին մը միայն կրնայ լաւ հնչել և հեշտալուր ընել
ականջի:

Օրհնութիւն:— Ըստվո՞ծ խելք տոյ. — Խտ¹ էօրըդ² պարա³ ի
գոյ⁴.— Պօնիդ կիորձըտ ըրօստ ի գոյ⁵.— Խիող⁶ տէյու ճանկօ՞ճըդ
խկի⁷ թօննոյ⁸.— Ս'իածինը հիտըդ ըննօ.— Լչքըդ պացուա.—

*) Եհնէշի և Ճիպինի վերայ մենք արդէն տուած ենք ընդարձակ կարևոր տեղեկու-
թիւններ «Արաքսի» ներկայ տարուայ Ա. դրքի 30-36 երեսներում: Խմբ.

¹) Ետի, ²) օր, ³) բարի, ⁴) գայ, ⁵) լաւ լինի, ⁶) հոգ, ⁷)
ոսկի, ⁸) ըլլայ,

Տունըդ շինուա.—Խաբըդ⁹ զագէմլի թօննօ.—Սուխանէտին¹⁰ մէ-
օճթաճ¹¹ չըննօս.—Լստվօժ ծերօց¹² ուտոց¹³ չըցկէ¹⁴.—()ստղոցը¹⁵
կիմի շատնօս.—Վէսիտ¹⁶ մէջը հայր աբրահաման պարաքօթը¹⁷
ըննօ:

Եւ իւրեք կը խոսովի հայ կինն, երբ իրեն նուիրական սե-
պուած մի բանի ընդդէմ տեսնէ ոք որ կը համարձակի խոտելի
ներկայացունել զայն, կամ զրկել զայն, իւր մէկ սիրուն առար-
կայէ, երբ նոյն իսկ անզօր կզգայ զանձն իւր իսկ զաւակ յզգա-
ստութեան հրաւիրել, ջղային իմն ցնցմամբ դուրս կը պոռթկեա-
ցունէ անիծից մախաղն:

Եւ իւրեք.—Պապինիկ¹⁸ էչքիդ.—Պապինիկ իրըսիդ.—Պապինիկ
սիւնիրիսիդ.—Պապընիկ տայրդ¹⁹.—Սէկ պապինիկի քիչ է էօտիւր
հարկու հոտ թօննօ.—Ղահաննօման²⁰ տօքը²¹ ըրթօս.—Չըկանաս
ի գոյ.—Խաբըտ կըտրուա²².—Ղըօն²³ մըտնա մէջըդ.—Սեռոց²⁵
տրպօք²⁶ ըննօս.—Սիւննիւրվէտ²⁷.—()ճօխըտ պաթըլա²⁸.—Պա-
պուս տարօսը հասնաս.—Լստվօժ երկու էչկիդ կիր²⁹ թօ ընէ.—
Օան³⁰ էրկընէ³¹ վիրէտ³².—Լրօք³³ թափա կըլօխըտ.—Տունըտ
ալըա. էօժ³⁴ խէթէ. խըշըմ³⁵ թափա կըլօխըտ.—Լիտէնը մըտ-
նաս.—Լստվօժ հիքէդ³⁶ առնու.—Ղօնկճօնէ էրինիս.—Լիտիւր
կիւաիւր³⁷ ըննօս.—Սուռօս³⁸ ըրկըրա³⁹ մէհտէճ ըննօս.—Պէօյէդ⁴⁰
պէօղ⁴¹ տիրցօն⁴² չափուա:

Եւ իւր մի քիչ հանգստութիւն ունենայ կամ ոչ, բնական իմն
զօրութեամբ կը խրտչի ընել ամենայն, որն իւր ի յուշ մի բարձր
տեղէ գրաւած, նա սորված լինի իւր պառաւ մամիկէն կամ լու-
սահօգի կէսուրէն, ջան ի գործ կը դնէ չը մեղանչել անոնց դէմ.
պահել գլխովին և աւանդել յաջորդաց որպէս զի ընդդէմ այնր
չը գործեն, զի մի գուցէ դժբաղդութեանց հանդիպին, ահա և այն:

⁹) ոտքդ, ¹⁰) թշնամի, կամ վատ մարդ, ¹¹) կարօտ, ¹²) ձեռքէ,
¹³) ոտքէ, ¹⁴) չը ձգէ, ¹⁵) աստղերուն, ¹⁶) քսակ, ¹⁷) առատութիւն,
օրհնութիւն, ¹⁸) մի մահադիւրք վէրք, ¹⁹) կող, ²⁰) դժոխք, ²¹)
տակը, ²²) կտորի, ²³) կտորած, ²⁵) մեղաց, ²⁶) տոպրակ, ²⁷)
վայ քեղ, ²⁸) աւիրի, ²⁹) կոյր, ³⁰) ձիւն, ³¹) արկանել, ³²) վրատ,
³³) կրակ, ³⁴) օձ, ³⁵) աւեր, ³⁶) հոգիդ, ³⁷) կտոր, կտոր, ³⁸) մո-
րաս, ³⁹) ուրիշի, ⁴⁰) հասակէդ, ⁴¹) ճերմակ, ⁴²) գերձան,

Աւելցրիս պաշտօնս ինձ: — Իրկուշաբթի, չիբիքշաբթի, հիւր-
լարթի էօրտէքի⁴³ լաթիր ծրվիլը⁴⁴ ըրընա⁴⁵ պօն չէ, էն էօրը ծրվօղը էն
էօրը պիտէ կարվա⁴⁶, չէ նը տէրը կը մեռնա: Ախօցկան⁴⁷ իլկ⁴⁸ շաբօթը
իւսպլա⁴⁹ շօվրօ⁵⁰ եա քօֆտօ⁵¹ չը պիտէ էնիս, մէջէն իւսկիւր⁵²
կիլլէ: Աստուածածին չը քոծէն⁵³ խայող⁵⁴ ուտիլը շոտ մինծ մեղք
է: Ախշամ նամազը վէն⁵⁵ սօձրօ դրացանին տունը մինձ պըղանձ⁵⁶
մը պիրիսնի արօպ⁵⁷ մը կօպիրիմ պիտէ ըսիս, չըսիսնի մեղք
կէնիս: Եւ յէր նիւր⁵⁸ պուլուզ⁵⁹ մը ըննօ նը կիշիրի ճօրան պինօրը
պօձ⁶⁰ չը պիտէ թօղվա, չիւնքիւ օը կըքօ պօնճուիւր⁶¹ ճօրան մէջը
կը քարէ⁶² պուլուզնէ կը խըխտէ: Ախօցկան իլկ շաբօթը սընտօք,
հացամօն, զահրի⁶³ քուրձ չը պիտէ պացուա, չիւնքի էն էօրիւ
մըկատօն է: Աւրբաթնէօրը ճօհր մանիլը շօրթ⁶⁴ է: Էօց իփիլլի-
քէն իլկ հօցը ուտօղան կընակը կը մեռնոյ: Պըլուզան մը թէզ
քէլիլը ուղիսնի գէքքի⁶⁵ ուրկու էզլա տիւրում տուր, սօձրօ ծեռ-
քէն խըլէ փախչէ: Կիշիրը ծատ⁶⁶ ծամիլը մեռէլտօցը մասը⁶⁷ ծա-
միլ է: Կիշիրը պնէվան⁶⁸ հէյիսնի ղուրպէթ կըրթօս: Թարխան⁶⁹
էնիլլիքէն ճօր⁷⁰ խումիս նի, անծրիվ կարկընէ: Աւօղ չիբիքշաբթի
էօրը խուրօկ շօվրօ կէնին քի պակ պըննօղան սրտան էզը թօղ
հալա: Պըտիկ պուլուզտօցը ծեռքը պապուն քէսին կը խէթին
քի տըրնոխտէքի⁷¹ թափա, Սեռիլան ճօրը շուխցունօղը⁷² հօցը
սօխոխ պիտէ քարէ: Անծրիվը կըտրըլօ համար, դրացանէն աւիլ
մի պիտի կուլնօս: Պուլուզան իւրիւցկիւ⁷³ պարօպ ըննօնը չին
իրի⁷⁴, պուլուզը կի մընէ կըսին: Կընտօցը կէթլացքը⁷⁵ պարօպ
տեղ չը պիտի տարձընիս, տիւրիւլը կուլօիւր կը ցաւա: — Կիւր
տուն մը շինիցինիսնը էչք չի տըպնըլօ համար էչա եա շունա կը-
լօի կը կախին: — Եւ յէր պուլուզա մը էչք տիպնանը էչքը տիպ-
նօղան լաթիրէն քիչ մը պիտի քըրցընիս հէմտէ պիտէ վառիս: —

⁴³) օրերն, ⁴⁴) ձեւել, ⁴⁵) լաւ, ⁴⁶) կարուիլ, ⁴⁷) աղուհացի, ⁴⁸)
նախօրդ, ⁴⁹) ոսպով, ⁵⁰) թանապուր, ⁵¹) միակինդ կամ քիւֆթէ,
⁵²) ոսկր, ⁵³) դեռ չեկած, ⁵⁴) խաղող, ⁵⁵) թըքաց աղօթքը, ⁵⁶)
կաթսայ, ⁵⁷) արապ, ⁵⁸) նոր, ⁵⁹) տղայ, ⁶⁰) բաց, ⁶¹) հլուէ, ⁶²)
նեւեւ, ⁶³) պարէն, ⁶⁴) պայման, ⁶⁵) ձեռքի, ⁶⁶) զատ, ⁶⁷)
միս, ⁶⁸) հայելոյ, ⁶⁹) ձրաւի և մածնոյ չորցած խառնուրդը, ⁷⁰)
ջուր, ⁷¹) եղունգ, ⁷²) տաքցունող, ⁷³) օրօրօցը, ⁷⁴) չեն օրերը,
⁷⁵) կաթ,

Լմսուն տասնը հինկը ընծոնը ծեռքիդ մէկ արծօթ փարօ պիտի առնուս. լուսընկէն նիւր սատանէն շիւղիւր միւղիւր ծէր կացար ծիւղիւր⁷⁶ իկիր տէյի տիւլօ պիտի էնիս:— Կիշիրը խըրամը ընծոյ պուլուղը սալօխանէն⁷⁷ պիտի տանաս տափօրտօցը վիրէն պիտէ պարկըցնիս:— Եւէր մարդու մը մէկ հստակ պըլուզը ընծոնը եօթը թէվիրէն լաթիր պիտի հագցընին:— Լսքօտան հոց տօսնը թիւմ մըտօ ղըսմէթիտ հետը կըրթօ:— Հօց ուտիլլիքէն շուն տիսնանը փիւրըդ չէ կիշտանօ:— Հոնան ի վրէն ճօր թափիսնի էջքիդ խիւց կիւլէ: Ինչ կուտօս ծէռքէվըդ էն կըրթօ քին հիդիդ: Խրօզադ⁷⁸ մէջը թուրք տիսնասնը սուրք է:— Կէնէջը կարմար կուտան կիրիզմօնան ի վրէն ծէթանը⁷⁹ ըրնտ չէ կըսին. Նեքըդ կըծօնը⁸⁰ ղըսմէթ կըքօ:— Սաս ծիծիլլիքէն ծըկտօնը ուտօղ կըքօ:— Հոնը ու լըմը ընծոնը ղրօն կօ կըսին:— Բրպէխէն ճօրը քըրօնը ճուֆտան⁸¹ ըրզօքը⁸² կը շատնօ:— Հօրսը ի վիրի իլլիլլիքէն ձերին կըքարինքի իւտկիւ ղատէմլի թօննօ: Փարօ կը քարին քի հարուստ թօննօ:

Որչափ և այս աւելորդապաշտութիւններն ի կիր արկանէ կամ իւր ի միտ մի բարձր տեղ գրաւէ, հայ կնոջ մտաց մէջ իւր մասնաւոր տեղն ունի նաև այնք, ոյց վերաբերմամբ ոչինչ ունինք ըսել. կարող գրչաց, հասուն մտաց կը թողումք այս բնատիպ առածներէ գոհարներ գուրս հանելն է:

Եւսթէ.— Եւջը էշան խէջը կապիսնը եա արօքը կառնու եա փառօքը:— Խեւը ըսօց խըլանան հալտօց:— Խեւը վէլիլէ⁸³ խըլանան կիցի հէլիլէ. Սուտ սիրիմ էնճուր⁸⁴ պաքնիմ:— Տալիւ⁸⁵ քիզ ըսիմ հարսնուկ տօն հասկըցիր:— Խեւը եա հարսնաքը եա պաղնաքը:— Սօրթ մորդու հօլէն չուտէ իլք իրիկոնէն իժում կը ճըվօ:— Զիւր ծաղիկը վարդարուանը իժումները⁸⁶ կ'արձակվա:

Յանդաւոր խօսքեր և հանելուկներ ևս կան ոյց նկատմամբ ճաշակ մը տալու համար կը գնեմք աստ:

Յանգաւոր քանի:— Կացանք թօխտօ, աղօնք սախօտ: Լնթօպը

⁷⁶) ձիաւոր հեծեալ, ⁷⁷) սպանդարան, ⁷⁸) երաղ, ⁷⁹) ծափիւն, ⁸⁰) խողիւ, ⁸¹) հրէին, ⁸²) ինչք կամ ստացուածքը, ⁸³) վայլեր է, ⁸⁴) չոր, ⁸⁵) տալ կամ առն քոյր, ⁸⁶) եկեղեցի,

կուօղ, անատին խուսօղ: Վնացիլ արթընցիլէ վորդէ ճօրէն մը-
տիլէ: Վէննի ըսիմ քընացընիմ շաքրէվ մէղրէվ կշտացընիմ:

Ղօր ճօր ճօր կընօյ,

Պապանին պէշօր օռ կընօյ,

Տար ճամբօքը համ էրօյ

Պապանին ծծիկդ օռ կընօյ

Հանելուկներ:—Փուխուրուկէն հէյիցիքի մէրս մէկ տաստ տու-
րուշօք խալլըլլամըշ կօն էր.—Փոր կենդանեաց (ղարըն):

Խւտկիւ փէտէ, կլօխը մագէ, իս կը քէշիմ ինք կը վագէ (լօղաճը):
Եւելըցի, իրթիցի⁸⁷, փէտ խաթուենը նստով: Չահրա (չըխըրդ):

ՀԵՐԵԱԹ

ԹԷՐԷՎԻԻՐԱՆ ՀԵՅՐԻՌԹԸ

Վիցիլէ չէ կիցի քաղօք մը թէքէվիւր միւ կիցիլէ. էս քա-
ղօքն է եանղըն¹ շատ կըննօ աղի², էօսիւր համօր թէքէվիւրը
տէլլօլ³ ճուացըցըլէքի⁴ եաթցընէն⁵ սօձօ⁶ մորդ լաս⁷ թող չըվառ է
ամէն կիշիր⁸ մորդ պիլիցըցիլէ⁹: Վիշիր մի վէզիր մի կօ պիլլէ
աղի հէյիլէքի լաս մը կօ ըրվըննօ¹⁰ հէմէն վազըլէ կացիլէքի
էխիւռ¹¹ մի իրիք աղջին¹² լաս վարօծին ճօհր¹³ կօ մանին. էն
մինծը ըսիլէքի. օխ թէքէվիւրը եաս¹⁴ առնէր եէնք¹⁵ չատը¹⁶ մը
կը հիսա քի թիւմ¹⁷ թէքէվիւրան օրտուռ¹⁸ նիրքիվը նստան կէ-
նէ¹⁹ մէկ տահը²⁰ պարոպ կը մընօ, իւնիւր պըտիկնէ ըսիլէքի. օխ
թէքէվիւրիւ եաս առնէր եէնք կարպիտ²¹ մի կը հիսա քի էյէր
վիրէն մէկ օրտուռ նստէր կէնէ մէկ տահը պարոպ կը մընէր. էն
պըտիկ նէ ըսիլէքի. օխ թէքէվիւրիւ եաս առնէր եէնք մէկ
իսկի²² մագիրլա տըղօ մը մէկը արծօթ մագիրլա աղճին մի կի
պիրին, վէզիրի իրիք աղճինան ըսօծնէ տէֆտէրան մէջը կօ կրէ
կօ տանա թէքէվիւրան կօտօ թէքէվիւրն է աղճինտօցը իրիքնէ կօ
առնուռ մէկ քանա ամաս կօ անցնա էօր մի մինծ կընկօնը կօսէքի

⁸⁷) յարգարել: ¹) հրդէհ, ²) եղերէ, ³) միւնէտիկ, ⁴) կանչել տալ,
⁵) թրքաց գիշերոյ առաջին աղօթքը, ⁶) վերջ, ⁷) ճրագ, ⁸) գիշեր, ⁹)
շրջել տալ, ¹⁰) երևնալ, ¹¹) արտու, ¹²) աղջիկ, ¹³) ճախարակ, ¹⁴)
ղիս, ¹⁵) իրեն, ¹⁶) վրան, ¹⁷) ամբողջ, ¹⁸) բանակ, ¹⁹) նորէն, ²⁰)
կողմ, ²¹) կապերտ, ²²) ոսկի,

եօրէ՞ եա չատըըը, էնէ կօսէքի իս թէքէվիւրա մը կընակ ըն-
նամտէ չատըը չիսիմ չօ՞ ծեռքէս մէղք չէ՞, օրթանճըլըվան²³ կօ-
սէնը էն է ինտէն²⁴ կօսէ: Թէքէվիւրը ըրկու կընակնէ ղընտօնը²⁵
կօ քարըցընէ էօսիւնք ղընտօնը մոլշաւարօ էրօծինքի պէպէրը²⁶
ռւսծընինք պըտիկ քիր²⁷ մընաս պուլուզը²⁸ պիրէնը թօ խըխտէ
պուլուզը կօննօ պէպէրը կօ վաղէ կօրթօ պուլուզտէքը կօ առնու
տեղը մէկ շօն էնիքլէ մէկէ փըսկօն²⁹ էնիկ կօ տընա թէքէվիւրան
մօրդ կօրթօ քի կընակիդ մէկ շօն էնիքլէ մէկէ փըսկօն էնիկ
պիրիլէ թէքէվիւրիւ Տըրամօն տըվըլէ՝ քի կընակըս չիւր³⁰ ծածը
կիտէնը խէթըցէք անցնօղ տարնօղ մարդիրը իրիսը թող թըքնան
Տէր Տիւն կըլօխը ամընիծ ճօր թող թափին սօնրօ պէպէրը պու-
լուզտէքը սընտօկա մը մէջ կօ տընա ճօրան մէջ կօ քարէ սըն-
տօկը տէվ մը կօ տիսնա ճօրան մէջ կօ մըտնայ տօրս կօ Տանէ
կօ Տէյէքի իրկու պուլուզ կօ, էօսիւնքէ չուտիմ³¹ թող մինծնօն
իմ՝ պուլուզտէքիս թօննօն կօսէ: Էս պուլուզտէքի տօսը տասնը
Տինգ տարուօն կօնօն էօր³² մը տէվը պիլիլ կօրթօ էս պըլուզտէքի
կօ Տէյին քի էխիւրը խըզըլը իւսկիւն³³ կօ էն իսէ տէվը մար-
դիրը կըսպաննէ կուտէ աղի, կօ վախին կօսինքի թուղուէք ըր-
թօնք էօր մը մըղմիյէ կուտէ էխիւրը մէկ եըղըն քօս կիցիլէ
մանտընգան³⁴ մէջը կօցընան կօրթօն իրիկօնու պապմոռնուէն քա-
ղօքը կօ Տասնան աղիխը կօսէքի ըսօ քորտօցը մէկ Տօտը ոռ էկ-
մէկճիվան տարու պէլքի մէկ Տօց կուտօյ պիր ուտինք պարկինք
տըղան կօտանա էկմէկճինին էս տիսնօծը կիմի Տաղոր լիլի կօ առ-
նու տըղէն միկէլ քօր տէքնէ կօ պիրէ կօ ծախէ մէկ մինծ ղօնօխ³⁵
կօ շինիցինէ սօճրօ տըղէն սալլօխըթան³⁶ էնիլ կօրթօ էն քաղօքնէ
շաթթէ շաթթ ճիրիտ³⁷ խաղել կըրթօն աղի պարպիտը կօսէ քի տունը
մէկ ծայ³⁸ իլէ մէկ է իւտկիւ կըտրօց էշ կօ ոռ³⁹ պեր: Մայան պար-
պիտը կօ Տիծնայ էշանէ տըղան կօ Տիծըցընէ կօրթօն: Շամբօքը
քէօփրիւ միւ կիցիլէ ղընտօննէ Տէօն կիցիլէ մըրքիրնիրը տըղան
տիսօծին պէպէրան մօրդ ճամբօծին քի տըղան իկիլէ ինչ կիզէ
էնէնը թօ էնէ պէպէրը ղօնօխը կացիլէ աղճինան ըսիլէքի տոււն-

²³) երկրորդ, ²⁴) այնպէս, ²⁵) բանտ, ²⁶) մանկաբարձ, ²⁷) քոյր
չուտիմ, ³²) օր, ³³) ոսկր, ³⁴) պարկ, ³⁵) մեծտուն, ³⁶) մսագործի,
²⁸) տղայ, ²⁹) կատու, ³⁰) մինչև, ³¹) աշակերտ, ³⁷) նետ, ³⁸) ձի,
³⁹) առ,

մունաստ շոտ ըրինտէ ամմա վից իւտլա ծայ պէտք է, աղճինը տը-
ղին ըսիլէքի ես վից իւտլա ծայ կուզիմ տըղէն թըրվիրիլէ թըրվ-
թըրիլէ⁴⁰ ամմա պարոպ տեղ տըղէն կացիլէ տէվան խէչը⁴¹ լսի-
լէքի քիրլս վից իւտլա ծայ կովչէ տէվնէ քիւրիւչիւ խէչը տա-
րիլէ իրիկօնը աղիլէնը քիւրիւչը տըղոցը ըսրլէքի իւնիւնց միդ⁴²
վից իւտլա ծայ պէտք է, տըղոց էն մինծը ըսիլէքի ըսօ դուլուն
պուլուտտօցը մէջէն վից իւտլա ծայ մը կօքօ ճօր կօ խոմէ, ու-
լէք նէ վօղը պըրնինք, սապահտան աղիլէ կացօծին տըրնօծին
տըղէն վիրէն հիծիծիցօծին տըղէն դօնօխը իկիլէ էօր միւ կէնէ
տիսօծին պէպէրը կացիլէ էս տապուեէ⁴³ սօղ պէտք է ըսիլէ ախճինը
կէնէ տըղին ըսիլէ տըղէն ծայէն հիծիլէ կացիլէ հէյիլէքի լեւօն մը
տօքը ղօճօ⁴⁴ մը նստիլէ հարցըցիլէ քի էօր կօ քառսուն ծէննլա
սօղը ըսօ լէոնը իտիվը կօ ըսիլէ առնուս առնուս, չառնուս նը
մէջը կը մընօս, կացիլէ առիլէ քիւրիւչը տըրվիլէ էօր մը կէնէ
տիսօծին պէպէրը դօնօխը կացիլէ Սէլվինէ խանըմը պէտք է ըսիլէ
տըղէն կացիլէ ղօճին խէչը հարցըցիլէնը ըսիլէքի ըսօ պաղնաքան⁴⁵
մէջը կօ տըղէն հէյիլէքի մէկ եըղըն քորէ մօրդ կօ էն իսէ թէ-
քէվիւրտէքի առնել իկօծին քոր⁴⁶ աղօծին, տըղէն Սէլվինէ խա-
նըմիւ ըսիլէ տըղին չիւր կըլօխը⁴⁷ քոր աղիլէ, կէնէ ճըվացիլէ
նը մէկ թօս⁴⁸ ճօր մընոց տըրվան ի գում էն ատին ալօյնէ⁴⁹ սաղ-
ցօծին ախճինը ղափըշմըշ աղօծին կիցէք, աթլօղ մը քարիւմ իւր-
մընատ էոնջ պիրէնը էն թող առնու եաս տըղէն առիլէ պիրիլէ
աղճինը ծայան թէրքին առիլէ դօնօխը իկիլէ, թէքէվիւրիւ տա-
վէթ էրօծին թիւմ օրտուվէվ իկիլէ սօղնըըր կօ քիշտիվան քէֆ
ղէվի էնիլէն սօճրօ Սէլվինէն կօղօ պըտիկ սուֆրօ մը կօտընա
էն ղատօր օրտըվան առջիւր կօ պացուա, կըշտանիլէն սօճրօ սուֆ-
րան կօ ծալէ շօր կօ պաճուա թէքէվիւրիւ տըղին կօ հարցընէ
քի ում⁵⁰ պուլուզիս էնէ կօսէքի թէքէվիւրա մը պըրուզիւմ իմ
ըննոց ատինըս մէկ շոն էնիկ կօ տընան իմ տէղս թէքէվիւրիւ
զընտօնը կինօղ կընտոցը կըլօխը կօ կըրտըցընէ տըղին մէրնէ կօ
հանըցընէ կիտնէն եարէտէքի կօ սաղնօ Սէլվինէն է տղին կօ առ-
նուն քառսուն էօր քառսուն կիշիր հարսնակ կօ էնիւ:

Այլիւցի:

⁴⁰) աղաչել, ⁴¹) քովը, ⁴²) մէղ, ⁴³) այս անգամ ալ, ⁴⁴) ծեր,
⁴⁵) բաղնիք, ⁴⁶) քար, ⁴⁷) գլուխ, ⁴⁸) գաւաթ, ⁴⁹) բոլորն ալ,
⁵⁰) որը որու:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՏԿԵՐ

Խորին գիշեր է: Յոգնած, վաստակած
Նրկիրը, որպէս քրտնաջան մշակ,
Քընած է անխռով, ասեա, մոռացած
Յերեկուայ անվերջ հոգսերն ու տանջանք...


* * *

Նւ չի վրդովում ոչ մի արարած
Մայր երկրի այդ մեղմ նինջը անուշիկ.
Անդորրութիւն է չորս կողմը տիրած—
Լուռ է բնութիւն, լուռ է և՛ երկինք:

* * *

Նւ աստեղազարդ պայծառ եթերում
Հանդարտ լողում է նազելի լուսին
Նւ բուռն սիրոյ հուրը աչերում
Օրօր է կարդում քաղցրանինջ կրկին:

Աղ. Ծափառլեան:



ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԱԼՖԱՅԵԱՆ ԱՂՋԿԱՆՑ ՈՐԲԱՆՈՑ

1865-ին երկու երջանկայիշատակ ս. հարց, հոգեւոյս պատ-
րիարք Կերսէս ս. արքեպիսկոպոս Վարժապետեանի և բաղմար-
դիւն հանգ. Կարապետ վարդապետ Շահնաղարեանցի պարսպարան
• քանոյցի մը հաստատման մասին ինձ տուած բարեխրատ խորհուրդ-
ներէն իրախուսեալ, նամանաւանդ նոյն թուականին պատահած
չարաշուք Ժողովոյն պատճառաւ ի հօրէ և ի մօրէ զրկուած բո-
լորովին մերկ և նօթի փողոցներուն մէջ թափառաշրջիկ խումբ
մը որը աղջկանց ո՛չ նուազ ողբալի վիճակէն զգածեալ, սիրելի
ազգիս բարերար ու փրկարար հօր աջակցութեան վստահ, յետ
կանխահոգ նախապատրաստութեանց համարձակեցայ ու յաջողեցայ
հուսկ ուրեմն զ'առաջինն 1866 յունվար 1-ին պարսպարան որ-
քանոյցի մը՝ գթութեան սոյնպիսի յարկի մը հիմնարկութեան ձեռ-
նարկել, առանց սակայն ի հաշիւ առնելու այն անընկճելի հաս-
տատամտութիւնն ու անվհատութիւնն, զ'որս անտարակոյս պարտ
է ունենալ այսպիսի յանդուգն հաստատութեան մը ձեռնարկողն,
յարատւութեան մէջ բաղխած նիւթական դժուարին արգելքներն,
առաթուր կոխելու և ամեն խոչնդոտութեանց դիմագրաւելու հա-
մար աննկուն, անվեհեր:

Ինչպէս ողբացեալ Վարժապետեան Կերսէս սրբազանի նիւ-
թական ու բարոյական քաջալերիչ ձեռնտուութեամբ և իմ նախա-
պէս ունեցած անձնական պահեստի դրամովս կարող եղայ տարի մ'ամ-
բողջ 20-ի մօտ հայկազն անտէրունջ որը աղջկունք խնամել ու դաս-
տիարակել մի մասնաւոր յարկի տակ պատսպարելով զ'անոնք:

1867-ին Երջանկայիշատակ Կերսէս սրբազանի առաջարկու-
թեամբ Հոգեւոյս Պօղոս Պատրիարք զ'Որբանոցս հաստատող և
զ'այն յ'Անուան Ժառանգոր Կոնստանտին Կոնստանտինով Ս. Եպիս-
կոպոս Կոնստանտինով:

Կոստան Սարգիս— յ'էրեց ամաց ընթացման ի Կոստան վաւերացնող
 և այսպիսի որբախնամ հաստատութեան մը համար ամեն բարե-
 պաշտ ազգայնոց անխտիր քաջալերութեան ու ձեռնտուութեան կո-
 չում ընող մի օրհնածիր կոնդակ հաճեցաւ տալ, որով խրախուսեալ
 սկսայ այլ ևս գիմել բարեւէր ազգայնոց սրտաբուլիս աշակցութեանց,
 որոց առատածեռն նպաստիւք երեք ու կէս տարի շարունակելէ
 յետոյ, 1870 մայիս ամսոյ 2-ին ամբողջ որբերովս յ'անուն որ-
 բանոցիս պատսպարելոց հանապազօրեայ հացի և մսի որոշեալ ու-
 ճիկ մը հայցող մի աղերսագիր յաջողեցայ մատուցանել ի Վեա-
 ղըտ-խանէ (Օսմանեան Սեփազօր Տէրութեան հանգուցեալ Կայ-
 սեր՝ բարեշիշատակ սուլթան Ապթի-է-Ապիյի, որ՝ որպէս Պօ-
 ղոս Պատրիարքի, ինք ևս հաստատելէ ու վաւերացնելէ յետոյ
 զ'որբանոցս՝ բարեհաճեցաւ դրամական նուէր մ'ալ ընելէ վերջ
 օրական տասն և հինգ հին օխա (400 տրմ.) հացի և եօթն ու
 կէս օխա մսի ուոճիկ մը շնորհել։—1879-ին ինչպէս ուրիշ ազ-
 գաց հաստատութեանց, մեր Լ.զգ. Հիւանդանոցին նոյնպէս և
 Որբանոցիս շուրջ ինն տարիներէ ի վեր շարունակեալ ուոճիկն ա-
 նակնկալս դադրեցաւ, որ տեւեց մինչ 1882 թ.։—Լ.յս երեքամեայ
 դադարման ժամանակամիջոցին մէջ հակառակ այնքան վաստակա-
 րեկութեանցս և անկուն ջանիցս բաւական պարտուց տակ ընկ-
 ճեցայ, զ'որ բարգելով արդէն որբոցս համար իբր մշտնջենական
 պատսպարան Խասգիւղի մէջ Տակէսեանց տունը 1350 օսմ. ոսկւոյ
 գնելու համար Վ. սեմ. Վարաքէհեայեան Լպրու տիկնոջ փոխա-
 ռութեամբ ունեցած երեք հարիւր (300) օսմ. ոսկւոյ պարտուցս
 գումարին վրայ, համագումարն եղաւ վեց հարիւր (600) օսմ.
 ոսկի։ Եկատելով որ՝ յառաջադրեալ նպատակէս բարւոք պահպան-
 ման և այնքան զոհաբերութեանցս նուիրագործման սպառնացող
 սոյն մեծագումար պարտուցս հետզհետէ բազմապատկութեան հա-
 ւանականութեան և միւս կողմանէ ժամանակիս դրամական հետ-
 ղհետէ անձկութեան պատճառով անհնար կը լինի հաստատութեանս
 բաղձացեալ բարեկարգութիւնը, ուստի կրկին անգամ հանդերձ
 որբերովս գիմեցի ի կայս. պալատ, որբանոցիս իրաց սոյն ցաւալի
 վիճակն նկարագրող և դադարեալ օրական ուոճիկն ըստ առաջնոյն
 շարունակութիւնը խնդրող մի սրտառուչ աղերսագիր մատուցանե-
 լով արդի ողորմասէր Ինքնակալին՝ Վապի Սոլթան Ապթի-է-
 Հաֆի Բ. Ապսէր։—Երբին Լ. Վ. համախառնութիւն՝ Լւր գահա-

կալուածենէ յառաջ արդէն իսկ ճանչնալով զ՝Որբանոցս, իւր ծանօթ ու հռչակեալ գլխաւորութեամբ հաճեցաւ ըստ առաջնոյն այս անգամ իւր անձնական գանձէն յիշեալ սոճկի շարունակութիւնը հրամայել առ որ անկ է *):

Ըստ այս նշան մեծի երախտագիտութեան որբոցն ձեռագործերէն բոլորէ բանուած մի քանակ գորգ, նոյնպէս և մի բարձ շնորհակալութեան ուղերձով մը ներկայացուցի Նորին Կ. Ս. Ե. հափառութեան, որ հաճեցաւ ի փոխարէն երեք հարիւր (300) օսմ. ոսկւոյ բացառիկ գրամական նուէր մ'ընել:— Ըհա այս գումարին հարիւր իննսուն (190) ոսկին ի հաշիւ պարտուցս վճարելով մնացեալ հարիւր և տասն (110) ոսկւով ալ Սեփարապետ Կոչուած ամառնային գրօսավայրն մի փայտաշէն կրպակ գնեցի, զոր քիչ յետոյ քանդել տալով ի հիմանց վերաշինել տուի քարուկիր:

Ըստպէս ահա () ամանեան Բարեխնամ Կառավարութեան () գոստափառ Կայսերաց բացառիկ շնորհներով և սիրելի ազգիս փրկարար ու բարերար անկեղծութեամբ և օտար ազգաց մասնաւոր նուիրատուութեամբ արժանի եղայ քսան և երեք տարիներէ ի վեր արդիւնաւոր ուղղութեամբ և ամենայն նախանձախնդրութեամբ յաւէտ կամ նուազ բարեկարգել հետզհետէ զ'որբանոցս և նուիրել զ'այն ոչ նուազ պարծանօք սիրելի ազգիս ընդհանրութեան:

Հաստատութեանս սոյն 23 տարուայ շրջանին մեջ կարողացայ ի բաւական թուով թոշակաւոր աշակերտութեաց (պաշտպանութեամբ յանձնարարուած) հարիւր քառասուն և հինգ (145) հայկազն որբ և անտէրունջ աղջկունք պատսպարել և խնամել ըստ ամենայնի, որոց 35ը՝ զեռ պատսպարեալ են յ'որբանոցիս և 3ը՝ վախճանած, իսկ 20ը՝ ամուսնացուցած, 17ը՝ որդեգրութեան տուած և 69ը՝ դպրոցական շրջանին լրանալէ յետոյ յանձնած եմ իրենց խիստ մօտաւոր աղջականաց, որք հետզհետէ ամուսնանալով ի մայրաքաղաքիս և ի զանազան դաւառս, ազգ. պաշտօնավարութեամբ՝ վարժուհութեամբ օգտակար հանդիսացած են ազգին:

Ըմուսնացեալ 20 սանուհիներէն 11ը Պոլիս են հաստատուած, 2 Լիֆոն-Վարա՝ խտար, 1 Ուստուկ, 1 Կիկովիդիս, իսկ մնա-

*) Յ'առաջուց ի վեր ամեն ազգի բարենպաստակ հաստատութեանց շնորհուած սոյն սոճիկը ինչպէս որբանոցիս հա մի տիւր է ի Վա գ. ֆէն (Նոքատաց յատուկ Մատուկէն կը տրուէր, ինչպէս որ կը շարունակուի դարձեալ տրուիլ նոյն վագֆէն մեր Ազգ. հիւանդանոցի և ուրիշ ազգաց հաստատութեանց վերաշնորհուած այս կարգի սոճիկ:

ցեալ 5-ն էլ, որոնց անունները մէջ ենք բերում, ամուսնանալով տեղափոխուել են գաւառները վարժուհու պաշտօնով:

Մարիամ Նշանեան սամաթիացի՝ ամուսնաց, ընդ պ. Լսատուր Պէշկէօթիւրեան ի Քարբերդ Օարդարիչ գիւղ, 1876 օգոստ. Վարժուհի Սմբատ. Բնկ. Վարժարանին Քարբերդու:

Լլլալիս Գրիգորեան եալօվացի՝ ամուսնաց, ընդ պ. Մարտիրոս Լճամեան ի Քարբերդ Սէզիրէ-գիւղ, 1878 սեպտ. Վարժուհի նոյն գիւղի ազգ. աղջկանց վարժարանին:

Լճնիւ Սիմօնեան իւսկիւտարցի՝ ամուսնաց, ընդ պ. Համբարձում Վէորգեան յ'Ներզնկա Սթնի գիւղ, 1879 օգոստ. Վարժուհի նոյն գիւղի ազգ. աղջկանց վարժարանին:

Սուլթան Յարութիւնեան նիկոմիդացի՝ ամուսնաց, ընդ պ. Մարտիրոս Պօլիկեան ի Սեբաստիա, 1883 փետր. Վարժուհի տեղւոյն Սինիկ, Բնկերութեան օրիորդաց վարժարանին:

Լուդիսիա Սատթէոսեան Ֆէնէացի՝ ամուսնաց, ընդ պ. Սմբատ Տ. Ղազարեան ի Օէթուհ, 1885 Սեպ. Վարժուհի այժմ Սամսոնի ազգ. օրիորդ. վարժարանին:

Լսյ 20 սանուհիներէն՝ 12-ը Պօլսի զանազան թաղերիցն են, 2 Վարթալցի և մէկ մէկ էլ հետեւեալ տեղերից, Լստաբաղարից, Ֆեներից, Նիկոմիդիայից, Սեբաստիայից, Եալովայից և Ոսոսսոսից:

Պատասպարեալ սանուհեաց թիւն է, ինչպէս վերեւ յիշած ենք 35, որոնցից 21 Պօլսի զանազան թաղերիցն են, 2 Նիկոմիդիայից 2 Բալուեցի և մէկ մէկ էլ հետեւեալ տեղերից, Պանդրմայ, Լստաբաղար, Վան, Կարին, Վարթալ, Բաղէշ, Ոսոսսոս, Բակրեանդ, Լմասիա և Շապին—Վարաշիսար:

Լճա այսքան թուով որբեր ամենայնիւ պատասպարելու և դաստիարակելու և միանգամայն անոնցմէ 20-ն ամուսնացնելու համար 1867 էն մինչ 1887 ~~հասն երկու~~ ~~սարսա~~ մէջ 16,896 օսմ. ոսկի ծախք եղած է (միջին հաշուով տարեկան 768 ոսկի) և ի փոխարէն 16,596 օսմ. ոսկի հասնթ: Լսրդ հասութիւն գումարն ծախուց գումարէն 300 ոսկի նուազ լինելով եղած բացը գոցելու համար մաս մը տոկոսաւոր և մաս մը անտոկոս փոխառութիւններ կնքելու ստիպուած եմ:—(ձ)է և ղ'այդ պարտուցս գումարն վճարելու համար ամէն կարելի ջանք ու խնայողութիւն ի գործ դրած եմ, սակայն ցաւօք կը խոստովանեմ թէ՛ անկարելի եղած է ինձ այդ այս վերջին տարիներուս դրամական տագնապին պատճառաւ:

Հաստութեանս այժմեան տարեկան ծախքն ու հասքն 750—800 օսմ. ոսկի է:

Ահա այսքան համառօտ նկարագիր մ'ընեւէ յետոյ հարկ կը համարիմ Աղգ. պատկառելի կրկին վարչութեանց կողմանէ վաւերացեալ 1876-ին որբանոցին համար գրած կտակագրոյս մէկ օրինակն զնեւ աստ:

ԿՏԱԿԱԳԻՐ ԳԱԼՓԱՅԵԱՆ ՈՐԲԱՆՈՅԻՆ

Յ'ԱՆՈՒՆ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ:

Ես՝ Արքուհի մայրապետ 'Նշանեան Վալֆայեանց, հայկազն լուսաւորչական, ծնեալ ի Վարժալ գեղջ մերձ ի Կ. Պօլիս, 1822, առողջ մտօք և յօժար կամօք գամ այսօր ի նաւահատիս փառաւոր տօնին անդուգական ազգասիրաց սըրբոց Աշարդանանց 1876 ի ետը վար^{12/24} կարգադրել և գրել զայս կտակ, որով լուսաւորչական Ս. Եւթողոյն հարազատ սիրելի ազգին ընդ-



† ՍՐԲՈՒՀԻ ԳԱԼՓԱՅԵԱՆՑ

տարօք և և նուիրօք Բարեկաց ազգայնոց և օտարաց:

Տա՛ն որբոց: Եւս տուն որբոց՝ զոր Տակէսեան բարեյիշատակ գերդաստանէն գնեցի ինն հարիւր յիսուն (950) օսմ. ոսկւոյ *),

հանրութեան նուիրեմ որբ և անտէրունջ աղջիկ տղայոց պարսպապան և Եւթողոյն որբանոցն՝ զոր յաջողեցայ հիմնել ի Կ. Պօլիս յ'ամի 1866, և օժտել և բարեկարգել անհուն ողորմութեամբն Աստուծոյ, և շնորհիւ Աւհ. Ապրիլ-Ապրիլ կայսեր (Օսմանեան և սա-

*) 400 օսմ. ոսկի ալ ծախսած լինելով անմիջական նորոգութեան համար 1350 օսմ. ոսկւոյ արժած է ինձ յիշեալ տուն:

Կ. Պօլտոյ Խասգիւղի արուարձանին Ապրիլ-Սէլաճ թաղի Ռիւրպէ փողոցի մէջ վեց թուահամարաւ կառուցեալ է փայտաշէն, ունեւնալով երկոտասան սենեակ և սրահ, մէկ քարաշէն բաղանիք և շրջապատեալ պարտիզօք ուր աղբիւր մի հաստատեալ է Տակէսեան Տակէս ամիրայէ՝ անուշ և հոսանուտ ջուր մատակարարէ մշտնջենապէս:

Սոյն տան և պարտիզին գետին՝ չորս հազար հինգ հարիւր (4,500) օսմ. կանգ. տարածութեամբ, Սուլթան Պէյապի Լալաքի է, որմէ առնուած է երկու կտոր կալուածագիր «էնէպ»:

Ամարանոց որջոց: Ը. — Ըյս ամարանոց միայրակ շէնք մ'է քարուկիր, հինգ սենեակով և սրահով, զոր Վարթալ գիւղի Սադիք Լիլի փողոցի մէջ կառուցանել յաջողեցայ և որը աղջկանց սեպհականելով յ'Անուշ Սք. Կոստէ Մարթաճո, Պալապանին Որբանոցին Մարթա Պիլի Յովակիմի անուան ճէրաղ ընել տուի: Սոյն ամարանոցի գետինը՝ նուէր է աշնուաշուք Ոսուլ տիկնօջ Փիշմիշեան և մեծապատիւ Խաչիկ Ղազարոսեան: Իսկ շինութիւնը մասնաւոր նպաստ և խնամք ըրած է Ճարտարապետ Վիկորոս Էֆ. Յովասափեան:

† Ը. *) — Ի Սարը-Էսք Ելնի-Մահալլը թաղ ղէֆա փողոց երկու հազար (2000) օսմ. կանգուն տարածութեամբ գետին մը, զոր նուիրեցին աշնուաշուք տիկին հանրմ Շ'առասանեան և մեծապատիւ Յովհաննէս Էֆ. Սերասիէտիւնան՝ ամարանոց հիւղակ մը կառուցանելու որբոց համար, որոց նոյնպէս սեպհականելով յիշեալ գետինը Մարթա Պիլի Յովակիմի անուն արձանագրել տուի զայն, ոյր մէկ կտոր «էնէպ»-ի օրինակն պահուած կայ իմ քով:

Որջոց կալուածքներն: Ը. — Սէկ կըրպակ Ղալաթիա Մօթիանէ փողոցի մէջ, թիւ մէկ, զոր հանգանակութեամբ աղգայնոց յաջողեցայ գնել երեք հարիւր օսմ. ոսկւոյ և որբանոցին կալուած սեփականեցի: Սորա միւս և կէպէլ Վափամաճեան հարուածին էֆէնտի անուանին արձանագրեալ են: Սոյն կըրպակ առ այժմ տարեկան քսան և չորս օսմ. ոսկի հասոյթ կը բերէ:

Ը. — Սէկ կըրպակ (սենեակ) քարաշէն Կ. Պօլիս Պալապի Խանի մէջ վաթսուն և հինգ թուահամարաւ, զոր Վափամաճեան

*) Ըյս և յ'առաջիկայ ամէն խաշանիշեալներն 1876-էն յետոյ տուցուած լինելով թէև վաւերացեալ կտակագրոյս մէջ անցած չ'են դեռ պաշտօնապէս, սակայն պատշաճ դատեցի աստանօր գանոնը ալ նշանակել սոյն համառօտ ծանօթութեամբ:

Ըն. Սաքրիկ և Ըննիկ տիկնայք նուիրած են Որբանոցիս, և թէպէտ կալուածոյս երեկ կտոր «էնէֆն»երն բարեպաշտուհի նուիրատուաց անուանց ճէրալ եղած կը մնան, սակայն սոքա իբր աւանդապահ մուրհակ տուած են նոյն կրպակի Որբանոցին սեպհականութիւն լինելուն: — Սոյն կրպակ առ այժմ տարեկան 556 օսմ. ոսկի հասոյթ կը բերէ:

† Գ.—Ի Խասգիւղ Ապրիլ-Սէլաժ Թաղ Սանճաճի փողոցի մէջ վեց թուահամարաւ, վեց սենեակով և սրահով կառուցեալ փայտաշէն տուն մը, զոր հաստատութեանս գանձապետ՝ Ընուաշուք տիկին Գայեանէ Ըսլանեան բարեսէր ազգայնոց ոմանց նուիրատուութեամբ իննսուն (90) օսմ. ոսկւոյ գնելէ յետոյ սեպհականած է Որբանոցիս իբր հաստատուն կալուած, և զոր Մարիամ Պէնի Յովակիմ անուան արձանագրել տուած եմ, որուն մէկ կտոր «էնէֆն» ալ իմ քով է: — Սոյն տուն առ այժմ տարեկան 12,23 օսմ. ոսկի հասոյթ կը բերէ:

† Գ.—Ի Սելահայապ ապա ճիւ Բէօֆրի-աիի դիմաց տասն և չորս թուահամարաւ, վրան չորս սենեակով և սրահով կառուցեալ քարուկիր մի խանութ, զոր յաջողեցայ գնել հարիւր և տասն (110) օսմ. ոսկւոյ (այս մասին բացատրութիւն դրուած է ի կարգին) և սեփականել Որբանոցիս իբր անշարժ կալուած, զոր նոյնպէս արձանագրել տուած եմ յանուն Մարիամ Պէնի Յովակիմի: — Սոյն խանութ առ այժմ տարեկան 14 օսմ. ոսկի հասոյթ կը բերէ:

† Ե.—Ի Գատը-գիւղ Օսման ապա Թաղ Խիսապէրի օղլու փողոցի մէջ քսան և մէկ թուահամարաւ, չորս սենեակով և սրահով կառուցեալ փայտաշէն մի տուն, արապի մի-ի (անվագը), զոր Քափամաճեան հանգուցեալ բարեյիշատակ Սանուկ էֆ. ի կենդանութեան իւրում Սանչեսթերի բարեսէր ազգայնոց և մաս մ'օտարաց նուիրատուութեամբ հարիւր ութսուն (180) օսմ. ոսկւոյ գնելէ վերջ նուիրած է որբանոցիս իբր հաստատ եկամուտ, և զոր նոյնպէս որբոցս սեփականելով Մարիամ Պէնի Յովակիմի անուան արձանագրել տուած եմ: — Սոյն տուն առ այժմ տարեկան 18 օսմ. ոսկի հասոյթ կը բերէ:

Գանց որբոց: Ը.—Որբանոցս ունի առ այժմ Ը. հարիւր քսանութ օսմանեան, նուէր Գարակէօղեան Երմօնիկ տիկնոջ, որ թէպէտ իւր քով պահած է քսանութներն, սակայն տմեն տարի Որբանոցին կը վճարէ տարեկան շահը:

Բ.— Հարիւր **Ժնսօրիպէ** օսմանեան, նուէր **Եղըճեան Սա-**
րիճայ տիկնոջ, նոյնպէս:

Գ.— **Հինգ** հատ **Բումէլի** **Երկաթ**. Պարգև. **վիճակահանու-**
թեան բաժնետոմս, թիւ՝ 978, 394. 153,095. 61,908. 360,507.
—232,908:

Թողալ որջոյ: Որբանոցս ունի օրական 15 հօխա հաց և 750
հօխա միս՝ թօշակ, զոր իմ և որբոցս աղերսագրերն ընդունելով
վէհ. կայսր **Ապրիլ-Ապրիլ** շնորհեց մշտնջենապէս 1870 մայիս
2-ին և զոր վայելէն որբուհիքս հանապազօր:

ԿԱՐԳ ԵՒ ԿԱՆՈՆ ՈՐԲԱՆՈՅԻ

Յօդ. 1.—Որբանոցը՝ Ս. Եղմիածնի ամենայն Հայոց Հայ-
րապետութեան հովանաւորութեանը տակ գտնուող հայկազուն
որբ և անտէրունջ աղջիկ տղայոց Պարսպարան և Սրբաբան հա-
տատուած է, և կը յանձնանձի Որբասէր ընկերութեաց ձեռօք,
ընդ վերատեսչութեամբ Որբանոցի Սօր:

Յօդ. 2.—Որբանոցի գոյից և հասից տէր են և անոր խնամքը
վայելլու իրաւունք ունին այն որբերը միայն, որ անդ ընդունուած
և պատսպարուած են: Ետնք կը կորուսանեն այն իրաւունքը, երբ
Որբանոցէ կը զատուեն՝ ամուսնութեամբ՝ կամ այլում որդեգրու-
թեամբ և կամ այլուր պաշտօնակալութեամբ:

Յօդ. 3.—Նոյնպէս Որբանոցի գոյից և հասից տէր են որ-
բերուն հետ՝ այն Որբասէր ընկերութիւնք՝ որ զիրենք անոր յան-
ձանձանաց նուիրած են, և ձրիաբար կ'աշխատեն Որբոց խնամար-
կութեան թէ՛ յ'Որբանոցի անդ և թէ՛ վերատեսուչ Սօր յանձ-
նարարութեամբ անկէ գուրս տեղ: Ետնք ալ կը զրկուեն սոյն
իրաւունքէն երբ կ'արտաքուին և կամ կամովին կը զատուին Որ-
բասիրաց ընկերութենէն:

Յօդ. 4. Որբասիրաց ընկերութիւնը կը բաղկանայ Որբասէր ընկե-
րութիւներէ, որ Կոյս կը կոչուեն և որոց Գլխէն է Որբանոցի Սայրը:

Յօդ. 5. Որբասէր ընկեր և քոյր կ'ընդունուեն այն ամէն
օրիորդք և այրի տիկնայք, որ յօժարամիտ ինքզինքնին կը նուի-
րեն որբոց ձրիապէս խնամարկութեան, և կ'ուխտեն կատարեալ
հնազանդութիւն կարգաց և կանոնաց Որբանոցի:

Յօդ. 6. Որբասէր ընկերուհի կ'ընդունուին նաև յ'Որբանոցի պատասպարեալ որբերէն անոնք՝ որ հասակաւ քսան տարին լրացուցած և կրթութիւնն յառաջ տարած ըլլալով, իրենց վարքով ու բարքով արժանաւոր կը հանդիսանան Որբասէր ընկերուհեաց կարգն անցնելու՝ առաջի վերատեսուչ Սօր և իւր խորհրդականաց։ — Ըստնք այն վայրկենէն որբոց դասէն կ'ելլեն և քոյր անունը կ'առնուն և միւսնոյն փոխ կ'ընեն և միւսնոյն պաշտօն և պարտաւորութիւն կ'ստանան՝ ինչ որ դրսէն ընդունուած քոյրերն։

Յօդ. 7.—Որբասէր քորք ազատ են իրենց ուխտը փոխել և ընկերութեան անդամակցութենէ բաժնուիլ, երբ և կամին, բաւական է որ գէթ ամիս մ'առաջ իրենց գիտաւորութիւնը գրով յայտնին Որբանոցի Սօր։ Իսկ եթէ այս պայմանէն զանցառնեն, և չ'անխլարար կամ բացարձակապէս ձգեն երթան Որբանոցէն, այնպիսիք արտաքսեալ կը համարուին ընկերութենէն և այնպէս կը հրատարակուին վերատեսուչ Սօր կողմանէ։

Յօդ. 8.—Ընկերուհիք՝ որք իրենց ուխտը դժեւելով անհնազանդութիւն կ'ընեն կարգաց և կանոնաց Որբանոցի, երկիցս և երկիցս խրատուելէն ետք եթէ յուղղութիւն չի գտն ինչպէս նաև անոնք որ անկարգութեամբ կը վարուին, Հաստատութեանս արատ կը բերեն և յետ յորդորանաց չ'են զգաստանալ, Որբասիրաց ընկերութենէն կ'արտաքսուին Սօր և իւր խորհրդականաց որոշմամբ։

Յօդ. 9.—Որբանոցի Սայրը գլուխ է Որբասիրաց ընկերութեան, Մայր Որբոց և Վերապետու Որբանոցի։

Յօդ. 10.—Որբանոցի Սօր պաշտօնը ց'կեանս կը տեւէ, նաև եթէ հիւանդութեան կամ ծերութեան պատճառաւ անկարող ըլլայ իւր պաշտօնը վարելու։—Սոյնպիսի պարագայից մէջ ընկերուհեաց ընդհանուր ժողովոյ առաջարկութեամբ և Պատրիարքական ընտրութեամբ տեղակալ մը կ'որոշուի ընկերուհեաց մէջէն և նա կը վարէ Սօր պաշտօնը յ'անուն նորա և մինչև ցմահ նորին։

Յօդ. 11.—Սակայն եթէ Որբանոցի Սայրն անհաւատարիմ գտնուի իւր կոչման և ուխտին, և վարքով կամ գործով բարոյապէս կամ նիւթապէս ֆիսան պատճառէ Որբանոցի ամբաստանութեան ներքև կ'ընկնի։

Ընտրատանութիւնը Որբանոցի Խոստովանահօր միջոցաւ առ Պատրիարք կ, Պօլսոյ կ'ուղղուի, և անոր միջոցաւ կը քննուի, և

եթէ ամբաստանեալն ինքզինք չ'կրնայ արդարացնել և միանգամ և երկիցս խրատուելէն ետքը դարձեալ յուղղութիւն չի գայ պաշտօնէն կը ձգուի Պատրիարքի ձեռքը:

Յօդ. 12.—Որ և է պատճառաւ Որբանոցի Մօր տեղը թափուր մնացած ժամանակ՝ Խորհրդական երեք ընկերուհիք անոր պաշտօնը առժամանակեայ ձեռք կ'առնուն, և յաջորդին ընտրութեան համար վաղվաղակի ընդհանուր ժողով կը կազմեն Որբասէր ընկերուհիներէն: Սոյն ժողովի գործողութիւնք վաւերական համարուելու համար պէտքէ անդ ներկայ գտնուեն Որբասէր Վոյրերուն մեծագոյն մասն, առ նուազն կէսէն մէկ աւելին: Որբանոցի Խոստովանահայրը՝ Նախագահ կը կազմի սոյն գումարման ուր նախ Որբանոցի Էիմադրին կրօնը հրապարակաւ կը կարդացուի և ապա իւրաքանչիւր ընկերուհի առանձինն քուէթղթի մը վրայ գաղտնապէս կը գրէ Որբանոցի Մօր պաշտօնին ըստ իւր խղճի ամենէն արժանաւոր ընկերուհւոյ անունը, և քուէն ծալլելով կը ձգէ քուէտուփին մէջ, որ կանխաւ պարապ ըլլալը հրապարակաւ ստուգուած և կնքուած մնայ անդ՝ առաջի նախագահ քահանայի: — Վուէարկութիւնը լմնալէ ետքը քուէհամար կ'ըլլայ յ'ատենի ժողովոյ, և ցուցակի մը մէջ կ'արձանագրուեն բոլոր քուէ առնող ընկերուհեաց անուններն քուէից առաւելութեան կարգաւ:— Եյս ցուցակը կ'ստորագրեն բոլոր ժողովականք և նախագահ քահանայն, ինչպէս նաև քուէարկութեանց բոլոր գործողութեանց ատենագրութիւնը, և նախագահ քահանայն զ'անոնք կ'ներկայացնէ Կ. Պօլսոյ Պատրիարքին: Պատրիարքը յիշեալ ներկայացման ցուցակէն իւրաքանչիւր ընկերուհու իւր ընկերաց քով ունեցած վարկն և վստահութեան աստիճանն հասկանալով, և քուէ ստացող քոյրերուն ամէն մէկին արժանիքն առանձինն ստուգելով վերջապէս երեք օրուան մէջ կ'ընտրէ, առաւելագոյն քուէ ստացողաց մէջէն արժանաւորը՝ Մայր Որբոց և Վերահայրապետ Որբանոցի, և կոնդակաւ կը ծանուցանէ զ'ընտրութիւնն նորա Որբասէր ընկերուհեաց և ընդհանուր ազգին:

Յօդ. 13.—Որբանոցի նորընտիր Մայրը՝ իւր պաշտօնն սկսելէն յառաջ, յ'ատենի ժողովոյ ընկերուհեաց հանդիսաւոր հարկ կ'ընէ հաւատարիմ մնալ իւր կոչման, Մայր ճշմարիտ ըլլալ Որբոց, անոնց իրաւանց պահպանութեան պատկառ կալ, և Որբա-

նոցի կանոնաց ճշտիւ գործադրութեան հսկելով, իւր վարուք ու բարուք օրինակ բարի հանդիսանալ ամենուն:

Յօդ. 14.—Որբանոցի Սօր պաշտօնն է Որբանոցի վերատեսչութիւնը: Ա, կ'ընդունի Որբասէր ընկերութեան անդամ ըլլալ փափաքող քոյրերը, և անոնց ամէն մէկուն պաշտօնն ու պարտաւորութիւնները կը սահմանէ:

Ա, կ'ընդունի յ'Որբանոց պատսպարիլ ուղող որբերը, և անոնց խնամատարութեան ու դատարարակութեան համար պէտք եղած պաշտօնակալները կ'ընտրէ և վարձքերնին կը սահմանէ:

Յօդ. 15.—Որբանոցի բոլոր հասոյթք և նուէրք Սօր ձեռքը կը յանձնուին և նա կը հրամայէ ամեն ծախուց համար պէտք եղած եւքը:

Յօդ. 16.—Սայրը կը հսկէ Որբասէր ընկերուհեաց իւրաքանչիւրում պաշտօնի ըստ օրինի կատարման: Պակասութեան մէջ գտնուողները կը խրատէ, և յետ երկիցս և երկցս յորդորանաց անուղղայ գտնուողները կ'արտաքսէ ընկերութենէ:

Յօդ. 17.—Սայրը խնամք կը տանի և կը հսկէ պատսպարեալ որբոց դատարարակութեան, և ուսմանց ու ձեռագործակոն արուեստից մէջ յառաջագէտ զարգացման հոգ կը տանի, և ամեն մէկուն ապագայն յարգարելով, ամուսնութեամբ, կամ այլլում որդեգրութեամբ, կամ պաշտօնակալութեամբ և կամ Որբասէր ընկերուհեաց կարգն անցուցանելով, որբոց դասը հետըհետէ թեթեւացնելու և նորեկ որբոց տեղ պատրաստելու ջանք կ'ընէ:

Յօդ. 18.—Սայրը՝ իւր պաշտօնը դիւրութեամբ կատարելու համար, Որբասէր ընկերուհեաց մէջէն անձինք կ'ընտրէ իրեն խորհրդակից օգնական, և անոնց հետ մէկ տեղ Որբանոցի վարչական խորհուրդ կազմելով՝ ամենայն ինչ խորհրդակցութեամբ կը տնօրինէ:—Սոյն երեք ընկերուհիք Սօր խորհրդակից—օգնականութիւն ընելէ զատ մասնաւոր՝ պաշտօն կը վարեն, մէկը՝ Սօր փոխանորդ—նիւն ընելով անոր բացակայութեան ժամանակ, երկրորդը՝ ֆանյապետ—նիւն Որբանոցի, և երրորդը՝ Գրադրո—նիւն Որբանոցի վարչութեան ու ասոնց ամենուն պաշտօնը երկու տարի կը տեւէ, սակայն վերընտրելի են և միշտ ազատ պաշտօնէ հրաժարելու:

Յօդ. 19.—Սայրը ամեն տարեգլուի Որբանոցի հաշիւները վարչական խորհրդով կարգադրելով, թէ՛ անցեալին հաշուեցոյցը,

և թէ՛ նոր տարւոյ ծախուց հաշուեկշիւը կ'ստորաստէ և բացատրիչ տեղեկագրով հանդերձ կ'ուղղէ առ Պատրիարք Կ. Պօլսոյ:

Յօդ. 20.—Ս'այրը յիշեալ հաշուեկշիւոյն վրայ Պատրիարքի կողմէն ընդունած հրամանին համեմատ Որբանոցի տարեկան ծախքը կը հոգայ հաստատութեան հասից չափով որբեր խնամելու պայմանաւ, բացէն պարտք ընելէ կ'զգուշանայ և օր աւուր Որբանոցի հասոյթն առատացնելու ամեն ջանք ի գործ կը դնէ:

Յօդ. 21.—Եթէ հարկը պահանջէ որ՝ Որբանոցը տարուան մէջ հաշուեկշիւոյն նախատեսութենէ վրիպած արտաքոյ կարգի ծախք մ'ընել պարտաւորի, Ս'այրը վարչական խորհրդոյ որոշմամբ ունի իրաւունքն նոյն ծախքը տնօրինել եթէ երկու հազար (2000) շրուշէն աւելի չ'է:—Իսկ այն գումարէն աւելի ծախուց համար Ս'այրը պարտաւոր է մասնաւոր տեղեկագրով հրաման խնդրել Պատրիարքէն:

Յօդ. 22.—Որբանոցի շէնքին և կալուածական ստացուածոց և ամենայն ընչից և կարասեաց մանրամասն ցուցակն ընդհանուր Կոմիտէ մը մէջ կ'արձանագրուի:—Սոյն տումարը հանդերձ կալուածական և պաշտօնական գրովք (սէնէր, հէմէլ, ֆէրման ևն) արկել մը մէջ կը փակուի, և բանալին Ս'օր քով կ'մնայ, բայց կղպանքի վրայ Խորհրդականաց կնքով կը կնքուի:

Յօդ. 23.—Որբանոց պատասպարեալ որբուհիք Որբանոցի մէջ կը դաստիարակուին և կ'ուսանեն, Ե.—Հայերէն, ընթերցանութիւն, գիր և քերականութիւն, Բ.—Քրիստոնէական վարդապետութիւն, Գ.—Պատմութիւն, ազգային, սրբազան և արտաքին, Դ.—Համարողութիւն, թուաբանութիւն և երկրաչափական մանր գիտելիք, Ե.—Վեղաբուրութիւն, գծագրութիւն և նկարչութեան վարժութիւն, Զ.—Ընթարհագրութիւն, բնական, քաղաքական և ուսումնական, Է.—Երգեցողութիւն՝ եկեղեցական և ազգային, Ը.—Ընտնին տնտեսագիտութիւն:

Յօդ. 24.—Ս' երոյիշեալ ուսմունք և արուեստք անհրաժեշտ ուսանելիք են բոլոր որբոց: Իսկ զարգացելոց՝ օտար լեզու և դաշնակ ալ կրնայ դաս տրուիլ եթէ Որբանոցի հասքը բաւեն անոնց ծախքերն ալ հոգալու *).

*) Որբանոցիս այժմեան հասքը յաւէտ կամ նուազ ներելուն և նամանականդ ժամանակիս անհրաժեշտ պահանջման համար դաղդիկերէն լեզուն կ'աւանդուի բաւական ատեն է ի վեր ի ձեռն մի կարող ուսուցչի:—Իսկ դաշնակ առանց դաստուրի փափաքող զարգացեալք ազատ են ինքնովին վարժութիւններ ընել:

Յօդ 25.—Որբանոց վարժարանը պատասպարեալ որբոց յատուկ է, դրսէն աշակերտ չ'ընդունուիր ո՛չ գիշերօթիկ և ո՛չ ցերեկուանի համար*):

Յօդ. 26.—Որբոց խնամատարութեան և դաստիարակութեան պէտք եղած բոլոր պաշտօնականները, ինչպէս են՝ տնտես, խոհարար, լուացարար, սպասուհի, կառավարիչ, դաստիարակ, դասատու ևն, Որբասէր ընկերութեաց մէջէն կ'ընտրուեն:—Եւ եթէ ասոնցմէ յարմար անձինք չ'գտնուին, դրսէն ալ կ'ըրնան առնուել, բայց երբէք երիտասարդ մարդիկ չ'ընտրուելու պայմանաւ, և կանայք միշտ նախադաս համարուելով արանց:

Ասոնք են ահաւասիք տասնամեայ վաստակոյս արդիւնքը, զոր Տէր օրհնեց և արժանի ըրաւ զիս այսօր նուիրել Առաւորչական Հայկազնեայց սիրելի ազգիս ընկերութեան:

Խնդրեմ յ'Աստուծոյ շնորհել ինձ տակաւին վաստակել Որբանոցիս համար, յառաջագիմութեան նուիրած իմ կեանքս մինչև ց'յետին վայրկեան:—Եւ խնդրեմ ազգէս որ յետ իմ մահուան, Որբանոցի դրութիւնն անփոփոխ պահելով, նախանձախնդիր ըլլայ անոր օր քան զօր պայծառանալուն:

Ս'ասնաւորապէս սոյն կտակաւ կամիմ և խնդրեմ որ,

Ա.—Որբանոցս երբէք ուրիշ որ և է ազգային հաստատութեան հետ չմիացուի, այլ միշտ անկախ մնայ և ինքնուրոյն կառավարուի հաստատեալ կանոնաց համեմատ:

Բ.—Որբանոցիս կալուածներն, եկամուտներն և հասոյթներն անկորուստ պահուեն և օր աւուր զարգանալուն ամեն ջանք ի գործ դրուի: Եւ ամենայն ինչ յ'անուն Ս'արիամայ (Յովակիմեան՝ Պապայանի) Որբանոցիս պաշտօնապէս արձանագրել տալով, որբոց ապագայն ապահովելու մեծ խնամք տարուի:

Գ.—Որբանոցիս վարչութիւնը միշտ Որբասէր ընկերութեաց ձեռքը մնայ. Ս'այլ որբոց միշտ անոնց միջէն ընտրուի:—Սակայն ազգն հսկող ըլլայ Որբանոցի կանոնաւորապէս խնամարկութեան և նախանձախնտիր՝ կանոնաց ճշտիւ գործադրութեան, որոյ ուսումնական և տնտեսական տրամադրութիւնք միայն ժամանակին ներդաշնակութեամբ կատարելագործուին Որբասիրաց ընկերութեան

*) Սակայն բաւական բարեկեցիք ընտանեաց բուռն թախանձաքներէ ստիպեալ 1877 է ի վեր որոշեալ թուով թօշակաւոր աշակերտուհիներ ալ բացառաբար կ'ընդունուեն:

և Կոստանդնուպօլսոյ Պատրիարքէն համահաճութեամբ, սակայն
հիմունքն անխախտ մնան և սկզբունքն անփոփոխ:

Հաճեսցի Տէր օրհնել Հաստատութեանս վաստակաւորները
մինչև ց'վախճան ժամանակի և արգելուլ այն ամէն գիտաւորու-
թեանց կատարումն՝ որ չարակամութեան կամ անխոհեմութեան
արդիւնք ըլլալով, կրնան հիմն ի վեր տապալել խղճալի որբոց
միակ Պատասպարան և Կրթարան Որբանոցս, զ'որ Լստուածածնի
պաշտպանութեան և ազգիս հոկողութեան յանձնելով կ'ստորագրեմ,

Սրբուհի Ս'այրապետ 'Նշան Վալֆայեան

12/24 փետրվար 1876 Նշ. () ր Վարդանանց Օճաւարաց

Ըրդ, ազգին ի հօրէ և մի մօրէ որբ տարաբաղդ աղջկանց
համար այսպիսի Պատասպարան և Կրթարան Հաստատութեան մը
նկատմամբ ելիւ— Խորհրդապետ— Նշանկալիչապէս Ս. Հարց յիշա-
տակը լիաշուրթն օրհնելէ յետոյ կը հայցեմ յ'Լստուածոց Հաստա-
տութեանս ամէն կարգի կենդանի Բարեկարգ զ'արեւատութիւնն
և գործոց կատարեալ յաջողութիւնն, իսկ հոգւոց հանգիստ և
երկնից արքայութիւն ամէն անոնց՝ որբ արդէն փոխեալ են յ'աշ-
խարհէս:


Քաջայոյս եմ որ, ամէն անոնք, որք՝ ինչպէս այս քսան և
երեք տարիներէ ի վեր չ'զլացան իրենց բարոյական ու նիւթական
հզօր աջակցութիւններն վասն զարդացման ու յառաջադիմութեան
Որբանոցիս, նոյնպէս և յայսմ հետէ չ'պիտի խնայեն իրենց սրտա-
բուղիս բարերար ու փրկարար քաջալերութիւններն գիտութեան
այս Հաստատութեանս արդիւնաւոր պահպանման և անընդհատ
յարատեւութեան ի պատասպարութիւն և ի մխիթարութիւն խղճալի
որբ աղջկանց և միանգամայն ի փառս և ի պարծանս սիրելիս
ազգիս *):

Ում եմ և մնամ յաւէտ երախտ
տապարտ և աղօթող Սրբուհի
Ս'այրապետ 'Նշան Վալֆայեան

1888 հոկտ. 24
Խասգիւղ Կ. Պօլսոյ

Հիմնադիր-Ս'այր Լիւզկանց Որբանոցին

*) Վալֆայեան Որբանոցի այս տեղեկագիրը հանգուցեալ հիմնադիր մայրապետը
մեր խնդրանաց համաձայն ուղարկել էր մեզ տպագրութեան համար դեռ իր կենդա-
նութեան ժամանակ, սակայն «Ներաքսի» Ե. գրքի Բջ տպատ տեղ չ'լինելով, կարող
չեղանք այն ժամանակ տպելու: Խմբ.





ԻՇԽԱՆ ՄՈՎՍԵՍ ԱՐԶՈՒԹԵԱՆ—ԵՐԿԱՅՆԱՐԱԶՈՒԿ

Հրատ. «Արար» Հանդիսի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ


ԻՄ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Ա.

ԻՇԵԱՆ ՄՈՎՍԷՍ ԱՐՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱՁՈՒԿ.

Յունվար ամիսն էր, արիւնահոտ թուականը. արհաւիր-
ները Սերբիացում վերջ էին դրած արդէն, բայց կռուի եռանդը
Բալկանների մէջ դեռ վառ էին պահում Լիւբլիրատիչ, Պէյկո
Պաւլովիչ, Լազար Սոցիչա և մի խումբ լեյտենանտներ (զօրավար-
ներ). նոքա դեռ սուր էին շարժում, իսկ Բօղզան Բիմոնիչ
երէցը, հայոց Ղևոնդի պէս, խրախուսում էր խաչով: Արկ-
զլիեան արծիւը դիտում էր բարձրից, ակներև էր, որ նա
շուտով օդնութեան պիտի հասնէր: Աովկասեան բանակը
պատրաստութեանց մէջն էր. զօրք, ձի, ռազմամթերք այս ու
այն կողմն էին ուղարկվում. ընտանիք ունեցողը զաւակի վրայ
էր մտածում, իսկ չ'ունեցողը՝ կռուի, թէպէտ և երկուսն էլ
սրերն էի սրում... 38-երորդ ումբաձիգ բրիգադը Չերքէզստանի
պահապան զօրաց ումբաձիգ մասը կ'կազմէր: Բարձրագոյն իշ-
խանութիւնը չէր ուզում առանց զօրքի թողնել Ելբրուսի
ըմբոստ որդոց երկիրը, ուստի յիշեալ բրիգադը, որի մէջ դուռն-
վում էի և ես, ինչպէս նորահաս սպայ, տեղից շարժելու հրա-
ման չ'ստացաւ. անհրաժեշտ էլ լինէր սա, բայց խիստ զգալի
էր մեզ. էլ ինչո՞ւ համար է սպան, եթէ կռուի ժամանակ
տեղը նստէ և ըջի ու կաշա ուտէ... բայց ի՞նչ անէինք, ոչինչ
եւք չ'կար: Այս կացութեան մէջ էինք, որ յանկարծ պատե-
րազմի չաստուածը օդնութեան հասաւ, մեզնից մէկին հետե-
ւեալ ներշնչումը տալով. մի քանի հոգի խօսքներս մէկ արինք
այդ օրից անցած կանոնաւորապէս թերանալ մեր ստանձնած
պարտաւորութեանց մէջ բառարկաներում: մերթ հիւանդ
ձեւանալ, մերթ անփոյթ երևալ, մերթ ըմբոստ դանուիլ և այլն:
Բրիգադի ղեւաւորը չ'կարողանալով ամէնքի դէմ զատ զատ

խիստ միջոցներ ձեռք առնելու, ստիպուած պիտի լինի կամ ամէնքին մէկանց զլսից ցանկել կամ գոնէ նոցանից մի երկուսին: Բայց, որ բրիգադն էլ փոխադրէ, որովհետեւ միշտ գործօն բանակի մէջ պիտի գտնուած լինենք, ուստի շահողը յամենայն դէպս մենք պիտի մնանք: Հէնց առաջին փորձերից լաւ նշաններ տեսանք, զնդապետ Սուլիկովսկին մեզնից չդիտեմ որին էր որ ասաց մի անգամ. «Եթէ շարունակէք ձեր այդ ընթացքը, մէկ էլ տեսաք որ ռումբների տակն էք պատերազմի գաշտում»: Սոյրի ուղաձն էլ երկու աչքն է, մենք էլ հէնց այդ էինք փնտռում: Մենք շարունակում էինք մեր հնարը, մէկ էլ մի գեղեցիկ առաւօտ ես հետեւալ թուղթը ստացայ բրիգադի դիւանից «խիստ ստիպողական» վերնագրով. «Հրամանագիրս ստացածին պէս, կ'ստանաք բատարէի զխաւորից այս ինչ գումարը ու անյապաղ ճանապարհ կ'ընկնէք դէպի Պէորզիլսկի, այն տեղի ռազմամթերանոցից երկու միլիոն հրացանի փամփուշտ ստանալու ու շուտով գործօն բանակը հասցնելու»: Ո՛ր, բարեբաղտութիւն, հազիւ մէկ ժամ տևեց, որ ամեն ինչ արդէն պատրաստ էր. սպայի ստացուածքը հօ միշտ վրան է: Տրոյկան եկաւ. սունդուկը մէջը նետեցին ու ձիերը շարժեցան: Յափշտակի՛չ եմ վճռական ըստէները. երեւակայութիւն է, որ կ'գործէ այդ ժամանակ: Սխալօքոսկի, Լսենտուկի, Պետիգորսկի ու Պէորզիլսկի Լերմոնտովի ներշնչմանց պատմական վայրերն են. այդտեղ է երգել նա և այդ տեղ ընկել մայիս Մարտինովի ատրճանակից 27 տարուան ծաղիկ հասակում: Պօզկուսովի գետի լճիկ շրջանը, Բուրգուստան լեռան դռնաշունչ քամին, արձագանք տալով մերձակայ խոռոչներում կարծես թէ Լերմոնտովի սառացած շունչն էր, որ սուլում էր ականջիս... Պնացի գնացի ու շուտով տեղ հասայ. երկու օր հազիւ թէ կանդ առայ Պէորզիլսկում. զնդապետ Սենատորսկին, մթերանոցի կառավարիչը, ամեն ինչ շուտով կարգադրեց. հասայ Վլադիկաւկաս. դիմացի ձիւնապատ բարձրունքը աչքիս տափարակ էին երևում, որի վրայից, թուում էր ինձ թէ թռչելով պիտի անցնեմ, բայց Պարիալն էր առաջս, Թերէկի խորխորատները ու Վազիբէկի սառնամանիքը. մարդկային կորովը առաջին անգամ չէ ընկճուել նոյա առաջ: Սովկասի վեհ լեռները խորխտ աշխարհակալներին անգամ արհամարան-





ԴԱՐԻԱՆԵԱՆ ՆԵՂՈՒՑ. ՆԿԱՐ ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ



ՑԻԽԻՍ-ՉԻՐԻ. ՆԿԱՐ ԱՏԱԽՈՎՍԿՈՒ

Հրատ. «Արար» Հանդիսի:

քով են ընդունած... Փետրուարի վերջն էր. Ղազիբէկի ձիւն-
հիւսները դրցած էին ամեն անցք. հարիւրաւոր մարդիկ բահ-
ու թին ձեռքերին կանգնած էին անդօր. «Բացուեցաւ «ա-
սեցին, բայց նորէն ձիւնհիւս (забавы): Օր օրի, շաբաթ շա-
բաթի հաւիտէն էր անցնում, յանկարծ որոտաց պատերազմի
ձայնը. ապրիլ ամիսն էր, ինչ յուսահատութիւն, լոյն սիրտ
պէտք էր, որ հանգիստ սպասէր. ինչ անէի, դտայ ճարը.
Վամառ-Վաթիպան պայուսակիս մէջն էր, հանեցի նորան,
փակուեցի սենեակիս մէջ ու սկսեցի խօսել. երկու օրից յետ
իմացայ թէ դրացիները խորթ աչքով էին նայում վրաս.
լսելով բարձրաձայն բացականչութիւններ այնպէս են կարծած
թէ խելագարութեան մենախօսութիւններ եմ անում. ո՞ր գնամ,
ո՞րի հետ խօսեմ, որ ինձ հասկանայ... Ո՛, փառք քեզ Աս-
տուած, անցքը բացուեցաւ. մօտ 200 սայլեր փամփուշա-
ներով բարձուած ճանապարհ ընկան, երկու օր յետոյ էլ ինքս
հաւիտէն: Հետո ընկեր էր Ղօպով անունով մի սպայ. սուրհանդակի
անցադիր ունէինք, հողմի պէս վազում էին ձիերը: Բալթայ
իջևանում փոքր ինչ կանդ առանք. կապիտան Լշնալ Վու-
դարովը, օսեաին բարեկամս, օսի դարեջրի, բողայի, հրաւի-
րեց. զաւաթ զաւաթի վրայ պարպելով, աչքներս մթնացան.
մէկ էլ մօտեցաւ մեզ ձերմակ մօրուքով մի պատկառելի ծե-
րունի, որ ուռս կ'երևար:—Վ'ներէք ինձ, ձերդ աղնուութիւն,
ասեց նա աղերսարկու ձեռով, մի բան պիտի աղաչեմ ձեզ. դուք
կարող էք օգնել մի՞ք մերժել կ'աղաչեմ... Նայեցինք տաշա-
բար:—Ձերդ աղնուութիւն, երեք օր է որ կ'առաւպի պստեղ
մի Ֆրանսիացի աղնուական. իր կառավարութիւնից կարեւոր
յանձնարարական ունէ նա նոյն իսկ Մեծ Իշխանին, բայց ա-
նիրաւ «մօպիպելը—իջևանի տեսուչը—ձի չէ տալիս նորան,
կարծեմ որ հարուստ և օտար տեսնելով ուզում է փող քա-
շել. օգնեցէք ի սէ՛ր Աստուծոյ, ձեր ձեռքից այդ կ'գայ. ամօթ է,
եթէ երթայ իր հայրենիքը, նա ի՞նչ կ'մտածէ մեզ վրայ...—
А мнѣ какое дѣло? (իմ ի՞նչ գործն է) մրմնջաց մէկը մեզանից,
բողան պարպելով. Մերունին չ'հեռացաւ, տարօք մարդ էր,
ամօթահարեց վերջապէս. ընկերներիս մէջ Ֆրանսերէն փոքր
ինչ իմացողը իբր թէ ես էի. ճար չ'կար, ելայ տեղիցս ու
գնացի ծերունու հաւիտէն:—Ահա նա է, ասաց ծերունին, մօ-

տենալով իջևանին, շալը կանանչ խոտի վրայ դրած, թէք էր ընկել մի անձնեայ երիտասարդ համակրելի զէմքով. ձեռքին զիրք ունէր, բայց չէր կարգում. մեղամաղձոտ նայում էր բնութեան:

Մօտեցայ նորան. աներողութիւն, պարոն, կարծեմ դուք Ֆրանսիացի էք և այստեղ մի ինչ որ արգելքի էք հանդիպած. կարող եմ արգեօք մի բանով ծառայել ձեզ, ձեր տրամադրութեանն հմ:—«Oh mon Dieu! C'est la Providence qui vous envoie à mon secours. Il y a trois jours que je souffre ici comme un prisonnier et il n'y a personne à qui je puisse avoir recours». Ո, Տէր Աստուած, ինքը՝ Նախախնամութիւնն է ձեզ ուղարկում ինձ օգնութեան. ահա երեք օրէ որ ես կալանաւորի պէս տանջվում եմ այստեղ և ոչ ոք չկայ, որից կարողանայի օգնութիւն ստանալ դարձրեց Ֆրանսիացին, ակնթարթի մէջ ցատկելով տեղից ու հազար և մէկ révérence ներ անելով:—Մ'ներէք եթէ հարցնեմ ձեզ, թէ ո՞ր կ'երթաք և ի՞նչ գործով:—Նա թղթակից եմ, սիրելիդ իմ պարոն, կ'շտապեմ դէպի պատերազմի վայրը: Փարիզի ռուսաց զեապանից յանձնարարական գիր ունեմ Մեծ Եղեանի վերայ, ահա մօտս է, ահա... ասեց նա ձեռքը պայուսակին տանելով, և ահա իմ այցեւորմնս: Այցեւորմնի վրայ զրուած էր՝ Charles de Contouly, correspondant du Temps.—Պատերազմի ժամանակ է, Պարոն Առտուլի, ասեցի, անցուդարձը շատ է, անխուսափելի են այսպիսի արգելքներ. երկաթուղի չէ, ձեպակառքի ճանապարհ է, որը ձեզ համար անսովոր մի բան է. էլ հոգ մի՛ անէք, մեր ձիերը արդէն պատրաստ են, հրամայեցէք միասին երթանք:—Ո, Պարոն, որչափ սիրալիւ էք դուք, բայց... կմկմաց Առտուլին ձեռքերը շփելով: Պարծեցի թէ վճարելիք ունէ իջևանում և հէնց պատրաստվում էի ծառայութիւնս առաջարկելու, որ բացաւ բուն խնդիրը: Յայտնուեց որ պ. Առտուլին Պերմանիայից անցնելիս ծանօթացել է Շէյդվիցի մի ընտանիքի հետ, որի մի աղջիկը նշանուել է Թիֆլիս ապրող մի գերմանացու հետ: Յիշեալ ընտանիքը իմանալով որ պ. Առտուլին Աովկաս կ'երթայ, խնդրած է նորան՝ հետը առնել օրիորդը ու տանել Թիֆլիս ըստ պատկանելոյն յանձնելու: Արեւելք երիտասարդը պատուով կատարած է յանձնարարութիւնը և հասած է օրիորդի հետ մինչև այստեղ, ուստի դժուար կացու-

Թեան մէջ կ'զտնէ հիմայ իրեն ձգել նորան ու մեզ հետ երթալ։—Ո՛ր, շատ լաւ, շատ լաւ, Պարոն Առատուլի, եթէ այդպէս է, ձեր ուղածին պէս կ'աննէք, նախ ձեզ տանող ճակատաքի ձիերը լծել կ'տանք, յետոյ մենք կ'երթանք։ Պէտք էր տեսնել Ֆրանսիացու ձևերը, կ'ցատկէր, կ'երգէր, կ'սրախօսէր։—Եւ ահա մեր օրիորդը, տեսէք ի սէր Աստուծոյ թէ ի՛նչ պաղ բան է, բուն գերմանուհի, ասեց նա, երբ փոքր ինչ մօտեցանք։ Լծել տուանք ճեպակառքը, իջևանի տնօրէնը կ'մրթմրթար որ Առատուլի պէս չաղ կտորը առանց խաչհամբոյրի ձեռքից պիտի թողնէ, նստեցրինք օրիորդին թագուհու տեղը, փաթաթեցինք շալով ու բաշխելով և ճանապարհ դրանք։ Տրոյկան արդէն կ'սպասէր։—Ահա քեզ մի ընկեր, ասեցի Պօպովին, ծանօթացնելով նորան Առատուլիի հետ։—А ужъ ты что-нибудь да натворишь! զիտեց ընկերս, բայց առանց դժգոհութեան մի նշան կերպարանքի վրայ ցոյց տալու։ Բարեկիրթ մի երիտասարդ էր և դպրոցական ընկերս եղած։ Նստեցինք կառքը։ Պօպովը զիմացը անցաւ, իւր տեղը հիւրին տալով, ու շարժուեցանք։ Ֆրանսացին սկսեց marseillaise երգել, ձեռքերը դէպի լեռները շարժելով։—Տեսա՞ր ի՛նչ լաւ ընկեր գտայ քեզ, զիտեցի Պօպովին։ Մարտէլէզից յետոյ սկսեց ուրիշ բան երգել, ոչինչ չէինք հասկանում, մէկ էլ տեսանք Боже царя храни-է երգածը, որ սերտած էր ծայրէ ի ծար աղճատած արտասանութեամբ։ Մի վերստ չ'անցած, ուրիշ բան, մէկանց մէկ տեղը վերուվեր թըռչելով, սկսեց պոռալ Ֆրանսացին մոլեղին կերպով. arrête, arrête, cocher! Չ'իմանալով թէ ի՛նչ կայ, մենք էլ կրկնեցինք շուարած. стой ямщикъ, стой!!! Առաւապանը կանգնեց ապշած, կարծեցինք թէ ճանապարհի վրայ վտանգաւոր խորխորատ է նկատած, ուստի հէնց ձիդէինք անում որ վար իջնէք կառքից, մէկ էլ ի՛նչ զաւեշտական տեսարան, Առատուլին օտի կանգնելով, ձեռքերի բոլոր ուժով սկսեց ծափահարել լեռներին, բացականչելով աչքերը վեր ամբարնած. oh, monts majestueux! je m'incline devant vous! Ղշմարիտ թատրոն... քիչ անցած ուրիշ բան սկսեց, մատիտը և տետրակը ծոցից հանելով, հարցուփորձի կանգնեց։ Dites-moi, qui est Loris-Melikoff, est-ce le grand-Duc lui-même? Ասացէք խնդրեմ, ո՞վ է Լորիս Մելիքովը, չ'լինի թէ հէնց ինքը մեծ իշխանն է, հարցրեց նա ամենայն պարզամտութեամբ։

Բացատրեցի իրան, ինդրելով միանգամայն որ համբերութիւն ունենայ մինչև իջեանը հասնելը, ուր ամեն ինչ կ'պատմեմ հանդստութեամբ։ Աւայրկենապէս ուրիշ բան մտածեց, դիտելով. «բայց դուք, պարոններ, միմեանց ամենեւին չէք նմանում, բացատրեցէք ինձ կ'աչաջեմ»։ Ասեցի թէ ես ազգաւ հայ եմ, իսկ ընկերս ուռաւ։— Հայ, հայ էք դուք, օ, parbleu! Ինչ լաւ հանդիպում։ Աովկաս մանկով նախ և առաջ ես էլ հէնց կ'ուղէի մի հայ տեսնել։ Պարոն Տիկրը յատկապէս յանձնարարած է ինձ որ հայերի վրայ առանձին ուշադրութիւն դարձնեմ, ինչպէս մի ժողովրդի, որ... քանի որ դուք հայ էք, կ'հաճէք փոքր ինչ ծանօթութիւն տալու ինձ ձեր ազգի վրայ, պղպէս չէ, սիրելիք իմ պարոն։ Մեծ ուրախութեամբ, ասեցի, միայն թէ երբ իջեան կ'հասնենք, ապա թէ ոչ ցրտից խօսելու կարողութիւն չ'ունենա՞մ բնաւ։— Ո՛, այո՛, այո՛, ո՛, որչափ բարեազտութիւն, բացականչեց Աուտուլին ուրախութիւնից, չ'իմանալով թէ ինչ անէ։ Բայց շտապը ասեմ՝ խօսելու անկարողութիւնս ոչ այնչափ ցրտիցն էր, որչափ ներքին յուզմունքիցս, սաստիկ զգածուեցայ կեանքիս մէջ առաջին անգամ պատահելով մի օտարականի, որը հայ տեսնելիս ոչ միայն չէր ծովաւորութիւն երեսը, այլ ևս առանձին Բարեբաղդ—Ռի—ն էր զգում. առաջին անգամն էի լսում իմ սեփական ականջով, որ աշխարհիս ամենանշանաւոր մարդկանցից մինը, ինչպէս Տիկրն էր, մասնաւոր հետաքրքրութիւն էր ցոյց տալիս և նաև կարևորութիւն ընծայում հեռու ընկած մի ժողովրդին, որի հարազատ անդամներն իսկ արհամարանքով են վերաբերվում շատ անգամ դէպի նորան... ո՛ լուսաւորութիւն, ո՛ մարդկութիւն, կրկնեցի քանիցս մտքիս մէջ, որչափ վեհ բան ես դու, երբ հասած ես կատարելութեան և որչափ զազեր կերպարանք ունես, երբ դեռ թերի ես և սոսկ երևութական...

Թերեքի պղտոր ալիքների վրայից անցանք Ազգերէկ իջեանը։ Պուղատուրում կանգ առանք։ Իրիկնադէմ էր։ Պրասեղանի մի ծայրին կանգնեց ինքնաեռը, միւս ծայրին նստեց Աուտուլին, դիր, խօսք և ողևորութիւն այնպէս յափշտակեցին մեզ, որ չեմացանք թէ ինչպէս լուսայաւ։ Հայեր, վրացիք, կովկասեան ազգեր, Աովկասի հին և նոր անցքերը, հայ դիւցազներ, Մադաթեան և Արղութեան, Աօրիս-Մելիքով

ու Ղազարեվ, բոլորն էլ զրի առնուեցան, թէպէտ Ղազարեվ
զեռ մոռացութեան մէջ նստած էր Բագու իր աքսորաւայրում:
Նորա անձնաւորութիւնը մօտիկ ճանաչելով, միշտ նորա հիա-
ցողն էի եղած. այդ հիացումն էր երեւի, որ ներշնչեց ինձ
յանդուգն վստահութեամբ թերագրել Քրանսիացի թղթակցին
հետեւեալ տողերը. «Թէպէտ մոռացութեան և արհամարանաց
մէջ զեռ կ'տառապի Ղազարեվ, բայց մարդարէ չ'պիտի լինել
գուշակելու համար, որ Պաղստանի նշանաւոր դիւցազնի ու-
ժերը շուտով պիտի պէտք գան գործող բանակին և նա պիտի
կոչուի վճռողական դէպքերի համար... Այդպէս էլ գրուեցաւ
Temps'ի մէջ մօտ մի ամիս առաջ, նախ քան Ղազարեվի կան-
չուիլը: Այդ զիշեր ստացած տեղեկութիւններէից թէպէտ Սու-
տուլին մօտ տասն և հինգ թղթակցութիւն կազմեց Temps'ի
համար, բայց պէտք էր խոստովանած, որ ամենքից աւելի յա-
ջողը Ղազարեվի մասին գրուածն էր: Նորա մտաին պատմե-
լիս, ոգևորվում էր Սուտուլին, վեր վեր էր թռչում տեղից,
ընդմիջում էր բացականչութիւններով. «ո՛հ, ի՛նչ սոսկական
անձնաւորութիւն. ո՛հ, մեր Բոյեարի պատմութիւն էք անում
դուք. ճիշտ մեր Շանդարնիէն է դա...» զիտում էր նա շա-
րունակ: Նրկու կամ պակաս ամսից յետոյ, երբ Ղազարեվը
կանչուելով եկած էր Թիֆլիս ընտանեացը հետ, գնացի այցե-
լութեան. Սուկիա էին իջած, րէպական ուսումնարանի մօտ:
Հանդուցեալ Աննա Պաւլիզովնան և օրիորդ Նինան պատշգամբի
վրայ տեսածին պէս չ'իմացայ թէ ինչպէս թոյլ դէպի վեր.
միակ կիներ է եղած կեանքումս, որին տեսնելիս միշտ անցել է
մաքովս թէ՛ արգարև կան եղեր անձինք, որոնց մէջ մարմնաւո-
րուած է ինչ որ հրեշտակային է. հաւաստի եմ միանգամայն,
որ իմ մէջ չէ միայն տեղի ունեցած մի այդպիսի մաքի յղա-
ցում: Արաագին կարօտով ձեռքերը համբուրելուց յետոյ, տիկ-
նոջ առաջին հետաքրքրութիւնների մինը եղաւ խմանալու
թէ՛ Temps'ի մէջ ճով է գրած Եվան Պաւլիզովնի համար: Այս
խօսելիս մի կողք կանգնեց պատշգամբի տակը, նայեցինք և ահա՛
ինքը դիւցազն. չ'համբերեցի ծանրաբայլ բարձրանալուն, ընդ
առաջ վաղեցի. կարծում էի թէ նշանադրեստովս մի քիչ բարձր
պիտի երևամ Ղազարեվի առաջ, բայց տեսայ նորէն որ զլուսս
մինչև ուսը հաղել կ'հասնի... Թեւի տակ ինչպէս մի փոքրիկ

երկխոսյ, վեր գնացինք, գերդաստանական սիրազնի տեսարան, որի մէջ անցրած ամէն մի ըրպէն հրատապ երկաթի նման տարիներով տպաւորուած է մնում մարդու մաքի մէջ: Պատմեցի Առտուլին հանդիպելս. «да, свѣтъ не безъ добрыхъ людей» նկատեց Աղալարեվը գործալից տեսքով, երբ գեներալ Պաւլովը ուղարկեց ինձ Փրանսերէն լրագրի այդ թիւը, գիտելով թէ փոխարքան մեծ հաճոյքով է կարգացել իմ վրաս գրուածները, քնացի զարմացած թէ ո՞վ է հղել ինձ յիշող այդ բարի մարդը:— Հապա չ'ասեցի՞ք, Եվան Պաւլովովիչ, որ ձեզ պէս մարդկանց համար անձանօթների մէջ անգամ աշըղներ դուրս կ'գան», դարձրի իրան: Եօսքը փոխուեցաւ ու ներս գնացինք:

Միտստովանեմ որ խիզճս կ'տանջէ ինձ, որ կ'ցաւեցնեմ ընթերցողի գրուելը միջանկեալ պատմութիւններով ըստ որում, պատմութեանցս կէտ նպատակն, ի հարկէ, Արզութեանի վրայ տալիք տեղեկութիւններն են, բայց որովհետեւ այդ տեղեկութիւնները չեմ առած պատրաստ գրքից, այլ միայն կեանքի պատահութիւններից—կենդանի մատեանից—ուստի, բնական ընթացքից շեղուած պիտի լինեմ, եթէ չ'յիշատակեմ յաջորդաբար այն զլիաւոր դէպքերը, որոնց բերմամբ բաղկած եմ այդ պատահութեանց: Արսկանը ոչինչ պատմած չի լինիլ, եթէ չ'ասէ թէ ինչ արկածների է հանգիպած այս ինչ որսը գտնելուց առաջ... Ուստի՝ շտապով անցնենք Թիֆլիսը, ուր հասնելով առաջին հոգսս եղաւ Առտուլին հայ խմբագրաց ներկայացնելը, վախենալով որ օտար յարաբերութեանց մէջ գաղափարները չ'գառնան...

1877 թիւն էր, ապրիլ ամիսը, երբ այս առթիւ հայ գրագիտաց մէջ մտնելով, ճակատագիրը մղեց ինձ դէպի այն ասպարէզը, որին շուտով զոհ գնացին զենուորական ապագայիս ամէն ձգտումներ... Բարեբաղդութիւնս եղաւ այս թէ դժբաղդութիւնս, մինչև այս օր կ'գժուարանամ որոշել, այսչափը կ'ասեմ միայն, որ մտնելով զրական ասպարէզ, մտքիցս բնաւ չէր անցնիլ թէ Եօսքը և գրիչը մեր մէջ այնչափ ապիրատ մարդկանց զործիքը կարող էր լինել...

Պաշտօնական ամէն պարտաւորութիւններս կատարելուց յետոյ Թիֆլիսում, միացայ գնտապետ Բուչիկիւմի բատարէին ու ճանապարհ ընկանք դէպի Աջարստան, ուր սկսած էին

տրդէն թնդանօթի որոտումները և ուր բաւական յառաջացած էր Րիօնի զօրաբանակը: Վճռողական յարձակում էր պատրաստվում Յիխիս-ձիրիի վրայ: Երկաթուղին շուտով հասցրեց մեզ Սամարեղիի կայարանը. ահա և վերաւորեալների մի գնացք. ազահուլթեամբ շրջապատեցինք պատերազմի վկաներին, անփորձ սպաների բնական հետաքրքրութեամբ. արիւնաշաղախ վերքերը մեծ տպաւորութիւն էր արին մեզ վրայ, քանի որ նոցա կրողները դեռ կ'իօսեէին կենդանի. հասանք Չէխաթուր, ուր ընդարձակ ապաստարան էր շինուած ծանր վերաւորեալների համար: Վազեցինք դարձեալ նոցա տեսնելու. այստեղ տպաւորութիւնը տարբեր թուեցաւ. մեռելատիպ մարդիկ երբ խորը կ'հառաչէին ու աղիողորմ կսկիծով մահ կամ փրկութիւն կ'աղաչէին, ուրիշ զգացում կ'ախրէր մարդուն և ականայ յիշել կ'տար լատինական առածի ճշմարտութիւնը. *homo homini lupus* (մարդն է մարդու դայլը)...

Հասանք Օղուրդէթ, հասանք և Մուխա-Լստատէ, որ յարձակմամբ դեռ նոր էր առնուած. սկսեցինք բարձրանալ Յիխիս-ձիրիի ուղղութեամբ. աւերակ և աւերում էր չորս կողմը. այրուած ու ամայացած տներից փախած շները և կատունները անտառների մէջ յուսահատ իրանց տէրերն էին կանչում. գէշ տպաւորութիւն էր գործում այս ամենը. եկանք Խուց-Ուբանի բարձրունքը. առաջապահ գունդերը բանակ էին դրած այստեղ և շինծու թէ բնական ոգևորութեամբ երգեր էին երգում. թշնամու վրանները երեւցան հիւռից. Վերվիշ-փաշան էր հրամայողը. հասանք նոցա հանդէպ վեց հրոձանաձիգ բրիգադով և երկու լեռնային բատարէսյով. 48 ծանր թնդանօթ ունէինք և 8 թեթեւ լեռնային: Յունիս 10, 11 և 12 օրհասական օրերն եղան, որոնց մէջ մի քանի հաղար մենք կորցրինք, մի այդչափ էլ տաճիկները, բայց ոչինչ յաջողութիւն չ'ունեցանք: Օգլոբժիօ զօրապետի յամառութեանն էին վերադրում ամեն ինչ, որի պլանին համաձայնութիւն չէին տուած Վենիբէկով, Սրայեվիչ և Սադեկ: Ախեցինք նահանջել ահուկի տեսարանների միջով: Եկանք դարձեալ Օղուրդէթ ամեն դիրքեր թշնամուն յանձնելով. սպասողական դրութիւն ունէինք, որ շատ ծանր էր անցնում: Օղուրդէթը Վուրխատանի զլխաւոր քաղաքն է, որտեղ բնա-

կութիւն ունեն Գուրիիւն, Գուգունաւօ և ուրիշ իշխաններ. Մամիա և Խասէ Գուրիէլի, Գաթա Գուգունաւօ գուրիական երեք զրուծինա կ'հրամայէին, իսկ Նիկողայ Յուլիկիձէ, Սիմէոն Միքէլաձէ և իշխան Վախվախով չորս ուրիշ զրուծինաներ, որ բաղկացած էին Սախեթի և Խմերէթի բնիկներից. չէր կարելի երեւակայել ոչինչ աւելի քաջ և տեսուք մարդիկ, քան թէ գուրիացիները. ջէյրանների պէս էին խոյանում նոքա լեռների վրայ և առիւծների նման կռւում. կէսից շատ աւելին մնացին պատերազմի դաշտում: Գիւցազնական այդ մարդիկներից շատերի հետ ծանօթացայ այդտեղ, բայց ամենամօտ բարեկամս իշխան Սօլումոն Լիոնիձէն էր, որի տանը հիւր ընդունվեցայ: Երկու օր շարունակ պատերազմական թարմ տպաւորութիւններս զրեցի ու մի քանի զատ զատ նամակներ կաղմելով ուղարկեցի Մշակն. շատ չ'անցաւ, որ մի հայ խանութպան ստացաւ լրագրի թիւերը, որի մէջ թղթակցութեանցս փոխարէն կարդացի հետեւեալ պատասխանը. «Աւղիացուն. Ձեր թղթակցութիւնները վեռ չ'կարդացինք. կ'հրատարակենք, երբ կկարգանք»:—Ե՛հ, մի՞թէ ինձ է մնացել լրագրաց մէջ յօդուած գրելը, երբ բարձր մարդկանց գործն է դա միայն, ասեցի մոքիս մէջ, տեսնելով առաջին փորձիս այդ տխուր վախճանը: Յիրաւի, բնաւ յաւակնութիւն չ'ունէի թէ ես էլ մի օր կարող եմ արժանանալ լրագրաց մէջ յօդուած գրելուն: Վերջը յայտնուեցաւ, որ պ. Արծրունին մեղաւոր չէր բնաւ, այլ տնօրինութիւն անողը ոմն պ. Տէր-Գրիգորեանն է եղել, որը մի ժամանակ շատ գրաւած էր պ. Արծրունու վստահութիւնը:

Իշխան Լիոնիձէն վրաց զարգացած դասին պատկանող այն երիտասարդներիցն էր, որի հետ հայը կարող է շուտով անկեղծ համերաշխութեամբ կապուիլ. մտածող էր նա և լաւ դիտակից երկրի շահերին... Յերեկը միշտ հիւրեր ունենալով, երկուները և զիշերներն էինք մենակ մնում մեր եղբայրական զեղումները միմեանց անելու համար... Յերեկը երգելով և պարերով էինք անցնում, երգեր վրաց զիւցազների և պարեր Գուրիստանի քաջերի: Ո՛րքն էր կազմուեցք, ո՛րքն էր հագուեալ, որ ունեն Գուրիացի կարիճները: Այստեղ միայն համոզուեցի թէ պ. Յիմմերման իրաւունք ունէր յիրաւի աշխարհիս գե-

դեցկութեան տիպար վրային և հայուհին ներկայացնել «Մարտ» վերնադրով իր դրքի մէջ... Այժմ Արղութեանի անունը արձագանք պիտի տայ Պուրիստանի և Աջարստանի մէջ: Նստիտանամութեան անհասանելի խորհուրդ, քանի հազար տարի է անցած վիպական Սողքիսում (Солхид) տեղի ունեցած անցուդարձերից յետ, որչափ աղբեր են եկած-գնացած, բայց հայ ազգը դեռ կանգուն, Արղութեանի պէս զիւցազներ կ'ծնէ՝ հսկայազոր ոռու բանակներ առաջնորդելու համար. Այսպէս քաջարի դուրիացիների խմբի մէջ էր, որ մի օր լսեցի Արղութեանի անունը նոցա հետ ունեցած մի պատմական գործի մասին:

Իսկուհ, իսկ զվինիթա
Պրօ դաւատարօթ լիինիթա
Լօթեթօ նեաւաւի չվենա
Պղես մօզվեցա շվեթա լիսնա
Հարի ալալէ, Թարի ալալէ՝

Պինու դաւաթներով այս ուրախ երգը երգելուց յետ լռութիւն տիրեց յանկարծ. մէկ էլ մինը քաջերից ուրիշ մի երգ սկսեց այսպիսի խօսքերով.

Նումցա գվիրդա միսի չինի
Նումցա միսի զելիս ջվարի
Նումց գվերթմա քմնաս մովլինեբա
Նումց գվիչուլենոս թվալի և այլն:

Մեղամաղձոտ մի ոգևորութիւն երևաց ամենքի վրայ. ոչինչ չէի հասկանում, մէկ էլ լսեցի Արղութեանի անունը հետեւեալ խօսքերի մէջ. «Թուքվինօբ բրձղինվալեբա Արղութ, չամօզվեցալէ նուրքների չուենի ծինամղեզի...» (ո Արղութ, ինչո՞ւ կ'դաս դու մեզ ասպարէզ, կ'աղաչենք քեզ որ դու մէկ կողմ կանգնես). սա էր բառերի ընդհանուր իմաստը: Զհաւատացի ինձ թէ Արղութեանի անունը կ'լսեմ, բայց փոքր ինչ անցած մէկ անգամ էլ լսեցի: Ձեռքից այնպէս եզրակացրի թէ որեւէ առասպելական զիւցազնի անունն է, որի երգը երգելիս որեւէ մենամարտութեան տեսարան կ'նկարագրէ ազգային երգիչը: Զկարողացայ երգի վերջին համբերել, այլ մէկի ականջին կ'առնալով, հարցրի շշուկով թէ ի՞նչ Արղութ է դա:—Հիմայ

կ'ասեմ, պատասխանեց նա, ուշքը երգողների վրայ պահելով: Պատմութիւնից ահա յայտնուեցաւ այն, որ 1839 թուականին սեղի է ունեցած Պուրիստանի մէջ մի մեծ ապստամբութիւն, որին մասնակցած են աջարացիք ևս, Թաւրդերիձէ իշխանների առաջնորդութեամբ: Վրիստոնեայ և մուսուլման վրացիք եղբայրական եղբմամբ ղէնք են առած Սովկասի այն ժամանակուայ փոխարքայ կարծեմ Բարօն Ռօղէնի գէմ: Ստանգաւոր ապստամբութիւնը ղսպելու համար բաղմաթիւ գունդեր յարձակում են արած վրացի լեռնականաց վրայ, բայց յաջողութիւն չեն ունեցած: Այլ է վերջապէս Արղութեանը, բայց սա միշտ հաւատարիմ մնալով իր քաջադնական սկըղբունքներին, չի ուզեցել քրիստոնեայ եղբայրների արիւնը մըտնել, այլ պատգամաւորների միջոցով աղաչել է գուրխացիներին առանց արիւնահեղութեան հպատակել իր կամաց: Աւա ճանաչելով Արղութեանին, գուրխացիք խիստ զգացուել են նորա «աղաչանքին», հասկանալով թէ «աղաչողը» այն Արղութն է, որին գէմ ղենին անհնար է, ուստի գուրխացի քաջերը ևս սկսել են աղաչել, որ Արղութը մի կողմ կանգնէ և թողնէ իրանց որ չափեն ուժերը յարձակվող գունդերի հետ: Բայց Արղութեանը մնացած է անյողգող և սոսկ իր անուան ազգեցութեամբ ստիպած է ղինաթափ լինել ամբողջ մի երկիր, որը նուաճելու համար մի ուրիշը ով ղիտէ թէ որչափ ղոհեր պիտի բերէր: Հնամեայ ղիւցաղնութեանց այդ գործերի նկարագրութիւն էր ահա, որ կ'երգէին հիմայ գուրխացի քաջերը, սիրազեղ ակնածութեամբ յիշելով մեր այս յիշողութեանց գլխաւոր ղիւցաղնին, որի մասին մանրամասնութիւն ուղղուներին կարող ենք ցոյց տալ Վուբրովենի և ուրիշների գրածները Սովկասի մասին, իսկ մենք յիշատակելով սոսկ այն, ինչ յոյեցինք կենդանի վկաներից...

* * *

Արղութեանը յիշելիս Սովկասի արիւնլուայ ժայռերը կ'պատկերանան աչքիս առաջ. որչափ կորով և ղիւցաղնութիւն այդ խրոխտ լեռների մէջ... Ղազի-Մուլա, Համզադ-Բէկ, Շամիլ, Հաջի-Մուրադ, Ղանիէլ-Սուլթան, Արբիթ-Մահմմա, Մա-

Հումէտ-Լճին, Տաշով-ձաջի և այլն և այլն, ինչ հսկայատիպ անձնուորութիւններ, որոնց առաջնորդութեամբ կատարուած զործերը բազմապատիկ աւելի եղան, քան թէ Հոմերի երգածները: Բայց քսան դար առաջ պաշարուող Տրովադայի տակ չ'կար և ոչ մինը այժմեան մեծապարծ ազգերից. նոքա դեռ բարբարոսական բիրտութեան մէջ կ'թաւալէին, երբ Չարմայրի քաջարի գունդերը Մեծին Հայոց դրօշակը դիւցազանց ասպարէզներում կ'վարէին, երբ Լուկուլլոսի և Պոմպէոսի լեզէոնները Հայոց փորձ բանակներից կ'խորտակուէին... Այդ յաղթական դրօշը, որի նշանակը, իբր յատկութիւն ազգային, ոչ մի պատեհութիւն չէ կորցրած դարերի ընթացքում. յայտնուեցաւ ևս Արդուլթեանի պէս մի մեծ զօրավարի անձի մէջ: Պապէհ-Բէն եմ ասում, որովհետեւ ձախորդ պարագաներէ ընկձուիլը դեռ ապացոյց չէ հոգու բարձման... Ուրեմն, էլ ի՞նչ կարևորութիւն թէ այս ինչ մի զօրավարը ծագմամբ Հայ էր կամ օտար... Աւ մի՞թէ նոր Տրովադայի Աքիլլէս Արդուլթը վերջինն է մեր մէջ...

* * *

Մեծութիւնը և վատութիւնը նոյնչափ հեռու են միմեանցից, որչափ արշալոյսը և վերջալոյսը, կէս օրը և կէս գիշերը. միշտ ևս կ'մնայ այն զաւակը, որն ապիրատ է եղած իր հօրը, գերդաստանի, ազգի և իր բնական սուրբ պարտուց դէմ: Այդպիսի մէկը կարող է բարձրանալ, բայց երբէք մեծանալ. օտարի սիրածը, իսկ հարազատի անիծածը երբէք Պէ՞ չի կարող համարուիլ... Այդպէս չէր մինչդեռ իշխան Մովսէս Արդուլթեանը. Չաքար սպասալարի վեհապանձ շառուիղը չէր կարող վատշուեր լինել. նորա երակների մէջ վազած արիւնը մաքուր էր և անապակ. ճշմարիտ զինուորի արիւն... Ուստի, կ'անցնեն կէս, մէկ և շատ դարեր, յետնորդը դուցէ և կ'մոռանան Մօյիսէյ Չախարովիչի զործոց պատմութիւնը, բայց նորա անունը միշտ պատկառանքով կ'ընկնէ և Պովկասեան զօրքերը և բազմազան ազգերը. այսպէս է զօրութիւնը սրտերի մէջ դրուած պատմութեան և ահա՛ սորա մի քանի ապացոյցները:

Յուլիս ամիսն էր, 1878 երջանիկ թուականը. քառասուն հազար զօրաց հրամանը յանձնուած էր Գունիբի, Արաջայի

և Ղարսի զիւցաղնին: Թուրք աշըղները «Նաղարով-փաշան» էին երգում (աշըղ ով չգիտէ). քիւրդ հրոսապետները նորա անունից դողում, իսկ հայ ժողովուրդը մի Սուրբ Ղարաանի վրայ էր երազում: զարերէ հետէ նա դեռ չէր տեսած այդպէս զօրավար. տեսքը յաղթական, խօսքը յաղթական, գործը յաղթական, տենչանքը վեհ և նուիրական... Վաւիթ-Վէկն էր նորա խրեալը, Խորենացին և Նղիշէն նորա ներշնչմանց աղբիւրը. ամեն մի մեծ արարքի օրինակը միշտ այդ զրքերի մէջ ցոյց կ'տար ասելով. «Ա՛աւ կարգա այդ զրքերը, դոցա մէջ ամեն բան կայ»: Հայ էր նա խօսքով և հայ սրտով. հայու հոգն էր նորա սրբատեղին, հայու հոգը նորա մտածմանց նիւթը. և այդպէս մտածելով նա բնաւ չէր դժուամ իր պարտաւորութեանց, որովհետեւ նա ջերմ քրիստոնեայ էր և նեղեալ քրիստոնէից Ազատարարի քաջ զօրավարը:

Ազգարեւիկն էր սպասում հիմայ Լըզրումը:

Լըզրումը իր նահանգով երեք զլիաւոր մարդով կ'կառավարուէր. մէկը նահանգապետն էր, զենեւալ Ռուխովսկոյը, միւսը զինուորական ոստիկանապետն էր, կամ աւելի ճիշտ՝ քաղաքապետը, պարոն Աամսարական, իսկ զաւառապետի պաշտօնը կ'վարէր ոմն պ. Աախանովսկի, կաշառակեր մի անպիտան արարած: Ազգարեւիկի գալստեան լուրը լսելով, այդ պարոնը յանկարծ հիւանդացաւ. չէինք հաւատում. ստուգեցինք տեսանք որ յիրաւի սաստիկ տենդախտի (тѣнь) մէջն է. երեւի թէ տենդախտը երկիւղից էլ կարող է յառաջանալ... Նոս և պարսից իշխանագն ոմն Լմիր-Քեազեմ-Միրզա, Տվերեան զնդի մի երիտասարդ պարուհիկ, Աամսարականի օգնականներն էինք. Աախանովսկիի հիւանդութեան պատճառաւ նորա պաշտօնը ինձ յանձնեց զեն. Ռուխովսկոյը, այդ միջոցին Ազգարեւիկը Ղարսից ելած էր արդէն և շուտով Հասան Ղալայ, պիտի հասնէր: Հարիւր քիւրդ, յիսուն հայ զապտիէ, այդչափ էլ ռուս ժանդարմ, ամէնքն էլ ձիաւոր, քաղաքապետի իշխանութեան տակն էին. այդ խառնատարր այրուձին հետս առած, պիտի գնայի հիմայ Ազգարեւիկն դիմաւորելու դաւառի սահմանագծի վրայ, Սուրուջուկի գիւղում: Պարսից հիւպատոս Միրզա-Ալեկպեր-խանը դրացի էր ինձ. իմանալով ընդ առաջ երթալս. քարտուղարը ուղարկեց ու իւր ձին առաջարկեց,

պարսկական արքուղարդերով. թէպէտ ձիու պէտք չ'ունէի, բայց հրապուրվեցայ նորա առաջարկութեամբ ու ընդունեցի: Բարեկամական հաճոյակատարութիւն կարծեցի պարսիկ պաշտօնեայի ծառայութիւնը, բայց վերջը միայն իմացայ նորա խորամանկ դիտաւորութիւնը. մի ինչ որ է կողոպտուած կարաւանի խնդիր կար նորա ու ռուսական իշխանութեան մէջ, որի վրայ եղած պահանջը մեծաքանակ դումարի կ'հասնէր: Հիւպատոսը կուզէր կանխապէս Ղազարեվի ուշադրութիւնը դրաւել և իր գովեստը անել տալ. այդպէս էլ եղաւ. թուրքական ձիու վրայ հիացած, Ղազարեվը հարցու փորձեր արեց թէպէտ և վերջ ի վերջոյ սա չ'յաջողեցաւ իր նպատակին հասնել, բացորոշ մերժում ստանալով Ղազարեվից իր պահանջին մէջ: Այդ ձիով և վերոյիշեալ ձիաւորներով այնչափ սրընթաց արշաւ ունեցայ, որ Սուրուջուխ հասնելով, լուր առայ թէ հրամանատարը գեռ չէ ելած Հասան-Ղալայից. փոքր ինչ շունչ առնելուց յետոյ, որոշեցի հասնել Ղազարեվին Հասան-Ղալայում, մանաւանդ որ չէի կարողանում կարօտս պահել մի երկու ժամ աւելի: Քիւրդական լըծներով և ռուսական մարշ-մարշով սրացանք դէպի Հասան-Ղալայ: Պարսկական նժոյգը վարազի պէս գլուխն առած, ճեղքում էր թուփեր, զետակներ, որ պատահում էին ճանապարհին: Երբեք քրտինքի մէջ տեղ հասանք, ձիուց ցատկելով վաղեցի դէպի ներս. քովս կանգնած մի երկու սպաներ դիտեցին բարձր ձայնով. Առանց զեկուցանելու ինչ կուզէ այս խնթը հրամանատարի մօտ, սակայն ևս ուշ չի դարձրի ու ներս մտայ:

Ղազարեվը նստած էր. մի զենեւալ դիմացը կանգնած մի ինչ որ է թուղթ կ'կարդար. նշանադգեստը ցոյց կտար որ սպայակոյտի պեան էր նա. զենեւալ Բարանովն, որի հետ ամէնքս Երզրում ծանօթացանք, սզատախօս և խիստ ճարտասան մի անձ էր, որից հիացած էին ամէնքը: Քիչ հեռու նստած էր Հասան Ղալայի գաւառապետ, գնդապետ Պրժեսլաւսկին և Տփերեան գնդի պարուչիկ Վալանթարովը: Թըրկուկոց-չըրլիոցով ու բացականչութեամբ ներս մտնելս փոքր ինչ շփոթեցրեց կանգնած զենեւալին, բայց նկատելով Ղազարեվի սրտազեղ ողջազուրանքը, կերպարանքը պարզուեցաւ և փոքրիկ ընդհատումից յետ, աւարտեց ընթերցումը ու դուրս գնաց,

նորա և տեղից միւս երկու հիւրն էլ բայց Վալանթարովը շուտով յետ եկաւ ու նստեց իր տեղը: Նախ քան որեւէ խօսք անելը, վեր առաւ Ազգարեւմը մի հեռագիր սեղանի վրայից ու տուաւ կարդալու, կարգացի արագութեամբ:—Աւա չեմ արած, հարցրեց ինքնագոհ շեշտով:—Ի՞նչ տսել կ'ուզէ, Իվան Վաւիդովիչ պատասխանեցի, ուրախութեամբ լի:—Ի՞նչ անեմ, տեսայ որ մեր հայի (Աօրիսին ակնարկելով) ասածը հաւանել է թագաւորը. ինչ որ հայեր կան Հայաստան, պիտի վեր կենան քեօջին (գաղթին) Աստուած գիտէ թէ ուր, հէնց որ նշանակեցին ինձ նորա տեղը, շատ երկար խօսեցի այդ մասին Միխայիլ Նիկոլայեւիչին հետ. նա ասեց թէ էլ ուշ է, ոչինչ չի կարելի անել. այն ժամանակ սկսեցի խնդրել որ գոնէ Շիրակայ գաւառը յատկացնեն քեօջող (գաղթող) հայերի համար. գիտե՞ս Շիրակը ո՞րն է. Վարսի հողերն են: Շատ բարեհաջի մարդ է Միխայիլ Նիկոլայեւիչը. Աստուած նորա երկիւյթը պահէ, տեսնելով որ շատ եմ դարդ անում, ասեց թէ փորձեմ մի դակրագ (տեղեկագիր) աւրու իրան, որ թագաւորին ներկայացնի: Ղոջող (կարծիք) Բարանովը մէկ էնպէս տեղեկագիր գրեց, որ քէֆը գայ. տուայ Միխայիլ Նիկոլայեւիչին ու տասն օր անցած չ'անցած այս պատասխանը ստացայ *) Այսչափը հօ եղաւ, բայց պէտք է աշխատեմ, որ հայերը ըսկի (քնաւ) տեղներիցը տիւրիւր չեղան (չ'շարժին). տունքանդութիւն է նրանց արածը...—Վօկ. Ուէյտլիգերի և Վահան վարդապետի ձեռքով ես ձեզ գրեցի թէ ի՞նչ պատճառաւ են նրանք ուղղում դաղթել. վախենում են որ իրանց կոտորեն մեր զօրքերը Արդրումը թողնելուց յետ, ասեցի իրան:—Ո՞վ կարող է նրանց դիպչել. մի՞թէ ես մեռած եմ. ո՞չ ոք չի համարձակիլ մէկ հայի քիթը արիւնացնել. հողիները կ'հանեմ, դարձրեց զիւցազնը իր սովորական խրոխտութեամբ:—Իսկ հիմայ ի՞նչպէս է, հանդստութիւն է նահանգի մէջ, հարցրեց նա:—Այո, թուրքերի կողմից շատ հանգստութիւն, իսկ մեր զօրաց արարքներից շարունակ գլխացաւանք, պատասխանեցի:—Ի՞նչպէս, բացա-

*) Պատասխանը յիշեալ հեռագիրն էր այս բովանդակութեամբ. Государь Императоръ созволилъ одобрить поданный Рами проектъ, дѣйствуйте какъ хотите. Թագաւոր կայսրը բարեհաճեց ընդունել ձեր առաջարկը. նախագիծը, ազատ էք ուղածնիդ պէս գործելու:

կանչեց ահեղ: Մի ըստ միոջէ բացատրեցի թէ ինչպէս մեր զօրքերը, մանաւանդ հեծեալ դուռները դիւղացիների արտերը և արօտատեղիք ձիերի ոտի տակ տալով, ձմերուան պաշարը կ'խլեն ժողովրդի զրատից, որը դեռ ձմեռը չհասած սովից պիտի կոտորուի. թէ ինչպէս մի քանի բարձրաստիճան անձինք կաշառակերութեամբ և այլ զրկանքներով կ'կեղեքեն քրիստոնեայ և իսլամ ազգաբնակութիւնը և այլն և այն:—Օ-օ-օհ, մոռնաց առիւծամարդը, ես կ'գամ ցոյց կ'տամ նրանց. թագաւորի ասըլ (բուն) թշնամիները հէնց այդպէսի շուններն են. թուրքերը մեղք չ'ունենա... Բայց մինչ այս մինչ այն, կ'կարգեմ քեզ *Ֆեդիաթի* (միջնորդ) ժողովրդի կողմից. երբ Երզրում կ'հասնենք, խակոյն կ'երթաս խմացած տեղերդ ու ով որին որչափ ֆեսա է տուած, արդար գատաստանով կ'առնես ու կ'տաս, իսկ ով որ մի գելեգիւղութիւն (խարգախութիւն), արեց, կ'ասես ինձ, կաշիները կ'մաշկեմա... Խեղճ չէ ռահաթը (հասարակ ժողովուրդը). թագաւորը այնչափ փող է տալիս զօրքերին, որ իրանք ուսեն (պաշտօնէին և գնդապետաց վրայ ակնարկելով):

Մտաւ Լազարեվը Երզրում, բայց ի՞նչպէս. ինչպէս չէին տեսած բիւրակնեան բարձրունքը դարերէ հետէ. մտաւ նա և ընդունուեցաւ ինչպէս մի Սիպիոս Չամայի յաղթութիւնից յետ, ինչպէս մի Պատեօմկին, Եղմայիլը կործանելով: Բայց Վաւիթ-բէկի հայրենակիցը ոչ ուրիշ կ'մտնէր և ոչ Պետերբուրգ, այլ Մեծին Հայոց մայրաքաղաքը... 2՝ ձանձրացնեմ ընթերցողը աւելորդ նկարագրութեամբ, յիշեմ միայն այն տեսարանը, որից դիւցազնի աչքերը արտասուաց աղբիւր դարձան. առաջին և վերջին արտասուքն էին, որ կ'թափէր նա յուղմունքից, երբ փոքրիկ մանուկները ձիու ոտքերին փարելով, կ'երկրպագէին նրան, ինչպէս... զինուորներից մինը մտրակը շարժեց երեսաները վանելու. Մի յանդգնիր, անիրաւ. պուռաց Լազարեվը, ձիու քայլերը ծանրացնելով ու այսպէս կամաց կամաց յառաջ գնալով ժողովրդի և զօրաց ալեաց ու կոչումների մէջ... Քսան և չորս ժամից յետ երեք ոճրագործ կախաղան հանուեցան. մէկը եկեղեցի էր սրբապղծած, միւսը մի կոյսի արիւնն էր մտել իսկ երրորդը մեռեալ զինուորը հիւսիս հանելով, շներին էր նետած:

Անող առնենք այստեղ և փնտռենք Երզրութեանի յիշատակը: Լազարեվի ինձ տուած իրաւանց համաձայն, երբ Երզ-

րում հասանք հետեւեալ օրն և եթ ելայ դաւաոր շրջագա-
յութեան. ճանապարհին իջայ Զիֆտիկ գիւղում, Լըզըումից
մի ժամ հեռու. գիւղի երիտասարդները դաւաւ և պաշտ
ածելով պարում էին ու Լազարեւի գալուստը տօնում. կան-
չել տուայ խումբը. Լըզըումցի վաճառական Խաչատրեանների
տանն էի այգտեղ: Մամրայտ փեսացուները քով առքով ղուար-
թագէմ և շնորհալի հարսնացուների հետ. սկսուեց Հայաս-
տանի օղակաձև պարը. չ'դիմացայ, ցատկեցի պարի մէջ ընկայ.
ն, երիտասարդի յափշակութիւն... Այս ժամանակ երեւաց մօ-
տաւոր տնակից, երկար ցուպի վրայ յենվելով մի բարձրա-
հասակ ու պատկառելի ծերունի, մօտ 80 տարեկան: Վիմա-
ւորեցի նորան. դեռաւի բազմութեան ու Եփրատի և Արաքսի
մէջ տեղը ալեղարգ ծերունին կարծես հայր Աբրահամն էր Աւե-
տեաց երկրում: Խաչատրեանների պապն էր նա, տկանաւոր
վկայ 1828 թուականի ոռւս և թուրք պատերազմի արհաւիր-
ների և Հայաստանի աւերման, Մարապետ եպիսկոպոսի առաջ-
նորդութեամբ: Մի կողմիս ծերունին ունենալով, միւս կող-
մում գեռափթիթ բազմութիւնը ներկայացնում էի ինձ ան-
ցիալ ու զուռամ, ապագայ ու ղուարթ հայրինքի պատկերը...
Ծերունու տեսութիւնը զրեթէ սպառաժ էր, բայց բուռն
ոգևորութեամբ և ազգու շնչոտելով անցած-գնացած արկած-
ների պատմութիւնը անելով, նմանում էր նա Միլտոնին
«Վրախտ Սորոսեալի» ողեղայլ յանգերը արտասանելիս...

Այստեղ էր, որ ծերունի Խաչատրեանը խօսեց Իշխան
Մովսէս Արղըութեանի վրայ, երբ նա եկած էր Լըզըում,
1828 թուին, ոռւսաց առաջապահ գունդերով:—Ձեր զօրքերը
երբ Լըզըում կ'գան, ասեց նա, առաջ քաշողը միշտ հայ կ'ըլ-
լայ. այս անգամ Տէր-Ղուկասովն էր, իսկ 28-ին Արղըութեանը:
Նրբ թրքաց լքեալ զօրքերը այն ժամանակ Լըզըում խռովե-
ցան, ոչ ոքի բերնէ Պասկելիչի անուռն չէր լսվէր, այլ ամէնքը
խեղճորոյս «Արղըութ գեղիօր» էին կոչում. ո՞վ էր այս զօրա-
վարը, որոյ անուռն գեռ չէինք լսած, մէյ մնալ փայլակի արա-
գութեամբ տարածուեցաւ քաղաքին մէջ հայոց առաջնորդա-
րանէն, թէ քաջակորով թիւրք զօրքերը ահաբեկ ընողն մի
հայ իշխան է, Մովսէս Արղըութեան հռչակով: Մի օր մի գի-
շեր կրակ էր, որ կ'տեղար մեր զլիտն. լսեցինք որ քաղաքը

անձնատուր պիտ'ըլլայ. սերասկիր փաշան հրաման ըրաւ Արապետ առաջնորդին, որ քաղաքի բանալին աղուհացի հետ ոռւսաց յանձնէ. քանի մը պատուաւոր անձինք հետն առնելով, առաջնորդը զնաց ոռւսաց բանակը. շատ չանցած ձեր զօրքերը ներս մտան, բայց ո՞վ էր կանգնած մեծայաղթ զօրաց զլուխը. հայերէն խօսող և հայերէն աղօթող մի քաջ սպարապետ, միջակ հասակով, ուժեղ կազմուածքով, աչքերը խարտեաշ, հայեացքն ազդու և տիրական: Շատերն դացին նորա մօտ. «որդիքս, ևս ալ ձեր եղբայրն եմ, Առսաւորչի զաւակն», ըսաւ նա. ուրախութեան յուզմունքէ ամէնքն լացան: «Ի՞նչ բարքս, չ'կարծէք թէ մենք պիտի մնանք այստեղ. ո՞չ, շուտով յետ պիտի դնանք. լաւ պահեցէք ձեզ ու լաւ կացէք այլ ազգիների հետ»:—Եթէ դուք երթաք, մենք ալ ձեզի հետ պիտի երթանք, պատասխանեց ժողովուրդն:—«Ո՞չ, ո՞չ, այդ չ'պիտի լինի. ձեր տուն ու տեղեր չ'պիտի աւրէք. թէպէտ ես չեմ այստեղի մեծը, բայց ես ձեզ կ'պատուիրեմ որ ձեր տեղէն չ'շարժիք. լաւ է որ մեռնիք այստեղ, քան թէ այս սիրուն երկիրը աւրէք երթաք. ես իբր հայ կ'խօսիմ, ձեր սիրոյն կ'խօսիմ»...

Այս անունը և այս յիշատակն էր ահա թողած Արդու-թեանը Հայաստանի ժողովրդոց մօքում. անցած է արդէն վեց տասնեակ տարի, բայց բիւրակնեան ծագկազեղ բարձրութեանց վրայ ապրող խաժակն և ոսկեհեր արմենուհիք մինչև հիմայ դեռ հաւատարմաբար կ'աւանդեն իրանց թոթովախօս մանկանց Արդութեանի յիշատակը, ասելով. «մեծցիր, մեծցիր, իմ սիրուն զաւակ, Արդութ իշխանէն ազա գեդէյիդ թողած օրհնանքն թող պահէ քեզ»... Այդ օրհնանքին կ'միանայ անշուշտ Ազարեվի, Շօրիմնիկովի ու նոցա դասակից բոլոր հայ սպաների աղօթքը: Հայրենեաց հողը մեր ընկերաց վրայ այն տպաւորութիւնը դրածեց, այն գիւթական ազդեցութիւնը ունեցաւ, որ ամէնքիս բաղձանքը եղաւ, Արդումը թողնելով, մի օր այդ տեղ թաղուիլ, ուր և՛ հողը, և՛ օդը, և՛ ջուրը հայութեան կորով են ներշնչում մարդուն, մոռացնել տալով ամեն գեղալից աշխարհ, որի անունը չէ Արմենիա...

(Շարունակելի).

Գրիգոր Նիկողոսեան:

ԽՄ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

(ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ *).

ԽԶ.

Թէ՛կ ըստ լատինական առածի՝ մեռածների մասին կամ լաւը պէտք է յիշել կամ ոչինչ, բայց այնուամենայնիւ ես պարտք եմ համարում կանգ առնել իմ մեռած ընկերոջս վերայ և խոստովանիլ միայն ճշմարտութիւնը, որի արտայայտութիւնը գուցէ իմ մահից յետոյ մնայ անյայտ:

Շատ անգամ ես յայտնել եմ այն կարծիքը, որ եթէ Ամերիկեանցը մի ուրիշ առաւել լուսաւոր ազգի սերունդից լինէր, բարձր եւրոպական կրթութիւնով, գուցէ նա դերասանութիւնից առաւել մեծ գործունէութեան ապագայ ունենար:

Ամերիկեանցը մի խելօք, հռանգրոտ և վերին աստիճանի հեռատես անձնաւորութիւն էր:

Վերասանութիւնը նորա համար բացի այն՝ որ գաղափարի նուիրման մի պարապմունք էր, և գործիք էր ապրուստի միջոց և ժողովրդականութիւն ստանալու, և, եթէ այս վերջին նորա երկու ձգտումներին պատահում էին խոչնդոտներ, նա ամեն տեսակ ներելի և թէ աններելի միջոցների դիմելով, աշխատում էր հեռացնել նրանց. և վա՛յ նորան, ով նորա պէս խելքով չէր պատերազմում նորա դէմ, այլ պարզ և առանց հեռատեսութեան էր համարձակում ընդգիմատրիկ նորա այդ ձգտումներին: Այդպէս օրինակ մեր բոլոր համերաշխ գործունէութեան ժամանակ, նա նայում էր ինձ վերայ, իբրև մի անհրաժեշտ գործիքի վերայ, որին և ծառայեցնել էր սալիս իւր անձնական շահերին:

Եթէ պատահում էր որ ես հասկանում էի նորա դիտաւորութիւնը և իմ բնական կոշտ պարզամտութիւնովս, յանդիմանում էի նորան, նա այդ չէր մոռանում և, սկզբում թէ՛կ զիջում էր անում, բայց յետոյ մի այնպիսի անսպասելի հարու-

*) Տես «Արաբսի» ներկայ տարուայ առաջին գիրքը:

ած էր հասցնում, որ ես մնում էի շուարուած և չէի հասկա-
նում թէ ում ձեռով է ուղղուած իմ դէմ այդ հարուածը:

Շատ օրինակներից ես յիշում եմ մէկը, որ երբեք չեմ կա-
րող մոռանալ:

Ինչպէս ասեցի «Արաքսի» առաջին գլխում, Ամերիկեանցը
տուեց իւր վերջին խաղը և այնուհետեւ պիտի հեռանար Պո-
լիս և, կարծելով որ նորա հեռանալով խումբը ևս պիտի դա-
դարի գործելուց, զրկուելով այնպիսի մի զօրեղ ոյժից, ինչ-
պէս էր նա և տեսնելով որ ես մտադիր եմ առանց նրան ևս
շարունակելու մեր խաղերը, նա վճռեց, և հեռանալուց առաջ
նսեմացնել ինձ հասարակութեան առաջ, զինաւորելով իմ
դէմ թատրոնին համակրող անձինքներին, որոնց հետ ես սկսաւ
կապ ունէի և որոնք աջակցում էին մեր գործունէութեանը:

Նա միայն դէպքի էր սպասում որ կարողանայ իրագործել
իւր այդ դիտաւորութիւնը և այդ դէպքը սպասել չը տուեց
նրան:

Այն ժամանակուայ հայ գործունէութեան պարագլուխ
և հայ թատրոնին հովանաւորող Գրիգոր Եղմիրեանցը մի հայ-
կերոյթ տուեց, ուր հրաւիրուած էին այդ ժամանակուայ հայ
թատրոնի բարեկամները՝ «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրու-
նին, իշխան Սիբայէլ Բէհբուդեանցը, Սունդուկեանցը և ու-
րիշ շատերը, որոնց անունները, այժմ ես չեմ յիշում և վեր-
ջապէս Ամերիկեանցը և ես:

Ճաշի ժամանակ կենացներ առաջարկելու միջոցին իշխան
Բէհբուդեանցը, մի տեսակ ակնարկութիւնով, ինչպէս ինձ
թուաց, շոշափեց Ամերիկեանցի իբրեւ դերասան մարդու ար-
ժանաւորութիւնը:

Ամերիկեանցը, որը այդ ժամանակ նստած էր կողքիս, փսփ-
սաց ականջումս.

— Գէորգ, դու պիտի պաշտպանես ընկերոջդ պատիւը:

Ես զոգոռեցի սաստիկ և բողբոջեցի Բէհբուդեանցի
յայտնած կարծիքի դէմ, իմ ընկերոջս վերաբերեալ: Վանի
գնաց՝ մեր խօսակցութիւնը սկսեց տաքանալ, որի միջոցին, Ա-
մերիկեանցը չէր դադարում ինձ զոգուելուց... Հետզհետէ խօ-
սակցութիւնը փոխուեց վիճաբանութեան և հասաւ անձնա-
կանի:

Հետեանքն այն եղաւ, որ ևս ճաշից յետոյ խաղոյն դուրս գնացի, իսկ Ամերիկեանցը մնաց նրանց հետ և միւս օրը այդպիսութիւնով կտրուեց իմ ծանօթութիւնս բոլոր վերոյիշեալ թատրոնի ջերմ բարեկամների հետ:

Յետոյ... տխուր յիշողութիւն... Միւս օրը Ամերիկեանցը դնացել էր ամէն մէկի մօտ այցելութեան, արդարացրել էր իւր զլուխը և մեղադրել էր ինձ իմ կոպիտ վարմունքիս համար: Այնպէս որ Ամերիկեանցը, որի պատճառով ևս զրկուեցայ շատերի բարեկամական յարաբերութիւնից, հեռացաւ Թիֆլիսից, զինաւորելով իմ դէմ ամբողջ, համարեա, հայ հասարակութիւնը:

Նորա շահասիրութեան մոտին, ևս դարձեալ պիտի խոստովանիմ, որ նա ինչքան ընկերակցութեան մէջ առատաձեռն էր փող ունեցած ժամանակ, այնքան վերին աստիճանի շահասէր էր կարօտութեան ժամանակ:

Հատ անցքերից մինը այնքան ծանր տպաւորութիւն է թողել ինձ վերայ, որ ևս յիշելով հիմայ, կարծում եմ անպամ թէ նա զայրացած կարօտութիւնից, անգիտակցաբար էր յանցանք գործում ընկերութեան դէմ, որի անդամներից շատերը, նաև գերասանուհիք, նրանից շատ կարօտութեան մէջ էին:

Ամարային թատրոնում, լաւ չեմ յիշում որ թուականին էր, մենք տալու էինք «Թիֆլիս» դրաման:

Այնպէս պատահեց որ մի քանի օր ներկայացումից առաջ, ևս ստիպուած էի գնալ Պախէթի գիւղերից մէկում հողեր բաժանելու կալուածատէր մի վրաց իշխան Զ...ի և գերմանացի կոլոնիստների մէջ:

Իշխան Զ...ը, որը մի տարօրինակ մարդ էր, բայց միևնոյն ժամանակ շատ հիւրասէր, չը թողեց ինձ դառնալ Թիֆլիս ներկայացման օրուայ համար, այնպէս որ այդ օրը ևս ստիպուած էի մասնակցելու նորա խնձոյքին, իմ ցանկութեան հակառակ:

Բարեբաղաւաբար ներկայացումն ինձանից անկախ պատճառներից յետաձգել էին երկու օրով և ևս կարողացայ իւր ժամանակ գտնուել Թիֆլիս: Առաքից իջնելուն պէս, որ երկկդեան մօտաւորապէս հինգ ժամն էր, ևս գնացի թատրոն: Բոլոր գերասանները և գերասանուհիք իւրեանց տեղն էին: Ամերի-

կիանցը, որին յանձնուած էր տոմսակների կարգադրութիւնը, զխնաւորեց ինձ յայտնելով, որ թէև մնւտքը յաջող է, բայց թատրոնի վարչութիւնը չի թող տալի ոչ դահլիճը լուսաւորելու և ոչ վարագոյրը բարձրացնելու:

Մտայ կասսան պատճառը իմանալու: Ասասիրը ինձ յայտնեց որ արգարե տոմսակներ շատ կան ցրուած, բայց պայմանաւոր վճարելի 150 ռ. գումարը չէ լրացած: Եւ շուտօրէն և դառնալով Ամերիկեանցին բացատրութիւն պահանջելի: Նա պատասխանեց որ ճշմարիտ է, տոմսակները ցրուած են, բայց շատերը չեն վճարած:

Ժողովուրդը սկսել էր հաւաքուել:

Եւ խնդրեցի կասսիրին հաւատալ ինձ որ ես վաղը կը լրացնեմ պակաս գումարը: Ասասիրը մերժեց, եւ վերաւորուեցի և յուսահատութիւնիցս ընկայ մնւտքի քարէ սանդուխների վերայ, արտասուելով երեսացի պէս:

Վերջապէս ուշկի եկայ, վճարեցի ինձ մօտ գտնուած երկրաչափութեան միջոցով վաստակած փողերս և ապա, առանց արգելքի, տուինք մեր ներկայացումն ահագին բազմութեամբ ժողովուած հասարակութեան առաջ:

Այդ զիշերուայ մնւտքի մասին, որը մօտաւորապէս պիտի հասնէր 600 բոլբոլ, Ամերիկեանցը մեզ չը կարողացաւ ուղիղ հաշիւ ներկայացնել:

ԽԷ.

Ամերիկեանցի հեռանալուց յետոյ երևան եկան երկու նշանաւոր ոյժեր, այն է Աւալեանցը, որը, եթէ ոչ լիովին, զոնեա մասամբ փոխարինեց նորան և Ամիրան Մանգլինեանցը, որ իբրև լաւ կրթուած երիտասարդ և շնորհալի կոմիկական դերասան յայտնուեցաւ մեր փոքրիկ խմբի մէջ:

Ինձ մնում էր հիմայ կազմակերպել խումբը, որոշել ըէպէրատուարը համեմատ մեր ոյժերին և գտնել մի յարմարաւոր դահլիճ ներկայացումների համար:

Քաղաքային թատրոնը այդ ժամանակ կապալով վերցրած ունէին Նաբլօչկին անունով ամուսինները, որոնք շատ հակալրական ձևով էին վերաբերուում դէպի հայ թատրոնական

ներկայացումները, ուստի ես ստիպուեցայ, դիմել գերմանական ակումբի վարչութեան, որը գտնվում էր Վօլօվինսկի պողոտայի վերայ Չիթախովի տներում և որը ունէր բաւականին լաւ յարմարացրած փոքրիկ բեմ և ընդարձակ դահլիճ:

Ակսեցինք այդտեղ մեր ներկայացումները հոկտեմբերի մէկից, վճարելով ամեն անգամի համար յիսուական լուրջի դահլիճի վարձ:

Վանացի ղոթերը կազմում էին տ. Սաթինիկ, օր. օր. քոյրեր, Շամիրամ (յետոյ Աւալեանցի ամուսինը) և Սանդուխտ, իսկ տղամարդիկներից զլիաւոր ղոթերն էինք՝ Մանտինեանց, Աւալեանց և ես:

Այդտեղ, այդ փոքրիկ բեմի վերայ մենք տուինք առաջին անգամ «Վանանց Արթարան» Մօլեթի կօմեդիայի իմ թարգմանութիւնս, կրկնեցինք մեծ յաջողութեամբ՝ «Թուղթ Խաղացողի Անանքը», «Պէպօ», «Բանտած Օջախ», «Վննետիկի Վաճառական» ևն: Այնպէս որ, այդ սէզօնի ընթացքում, մենք կարողացանք տալ տասներկու ներկայացում, ստանալով միշտ բաւարար մուտք:

Այդ ժամանակամիջոցին երևան եկաւ Տէր Վալթեանցի դերասանական ընդունակութիւնը, որի խաղից ես յախշտակուելով, զուշակում էի նորա համար ապագայում տաղանտաւոր դերասանի ձիրք, այն ինչ, նա չը մշակելով իւր այդ ձիրքը, քնաց մինչև այսօրս էլ այն կէտի վերայ, ինչ կէտից և սկսեց իւր դերասանական գործունէութիւնը:

Մի անգամ, այդ մեր ներկայացումների ժամանակ մի ծաղրաշարժ դէպք պատահեց, որը ես աւելորդ չեմ համարում մտցնել իմ յիշատակարանիս մէջ, ցոյց տալու համար, թէ ինչքան խորթ էր թուում օտարական ազդութիւններին լսիլ բեմից հայերէն բառաւոր:

Մի երեկոյ, երբ ես ազատ էի դերակատարութիւնից, մտայ դահլիճը տեսնելու խաղի ընթացքը, որի անունը չեմ յիշում և այնպէս պատահեց որ ես կանդ առայ մի սիրուն խարտեաշ մտղելով դերմանուհու ետեւը, որի կողքին կանդնած էր և իմ ծանօթ երիտասարդ դերմանացիներից մէկը:

Խաղը ընթանում էր բաւականին լաւ: Յանկարծ տեսնում եմ իմ դերմանուհիս սկսում է սաստիկ ծիծաղել, հաղորդելով

ինչ որ մի բան իւր կողքին կանգնած երիտասարդ գերմանացուն, որը նմանապէս ծիծաղելով, ինչոր հաղորդում էր նորան իւր կողմից:

Գերմանահուս ծիծաղը հեռզհեռէ սկսեց սաստկանալ, այնպէս որ հասարակութիւնից շատերը սկսեցին ուշադրութիւն դարձնել:

Վերջապէս երիտասարդ գերմանացին, տեսնելով որ իւր բարեկամուհին չէ կարողանում իւր ծիծաղը պահել, առաջարկեց նորան դահլիճից դուրս գնալ միասին:

Ետ անցքը սաստիկ շարժեց իմ հեռաքրքրութիւնս, որովհետեւ ես չէի կարող ենթադրել որ Փատելլանդի սիրուն զաւակը կարող է հայերէն հասկանալու որ գերասանների խաղը գողտէին նորա ծիծաղը, ուրեմն այդտեղ մի ուրիշ պատճառ կար:

Միջարարում ես գիմեցի իմ ծանօթ երիտասարդ գերմանացուն, խնդրելով որ նա փարատէ իմ տարակուսանքս:

Ռուս եկաւ որ գերմանահուսն զուարճացրել էր այն հանգամանքը որ բեմի վերայ կարելի է հայերէն խօսալ և հայերէն ներկայացումներ տալ որովհետեւ, զարմացել էր գերմանուհին, միթէ հասարակութիւնը կարողանում է հասկանալ գերասանների խօսածը, որի հնչիւնները շատ ծաղրալի են նորա ականջի համար:

Ետ յիշեցրեց ինձ մի ուրիշ դէպք. երբ ես մի անգամ իմ մի ընկերոջս հետ «Աւրոպա» հիւրանոցում տաք տաք վիճում էինք, մեզ երկուսիս ծանօթ մի ֆրանսիացու ներկայութեամբ, որ մեծ ուշադրութեամբ լսում էր մեզ, յանկարծ սրկսեց սաստիկ ծիծաղել և դառնալով մեզ, շատ անվրդով ձևով հարցրեց՝

— Est ce que vous vous comprenez (Միթէ դուք միմեանց հասկանում էք)

Ետպէս հասկացայ գերմանահուս ծիծաղի պատճառը և ես ինքս սկսեցի ծիծաղել:

ԽԸ.

Ետ սեղօնով վերջացաւ թէ խմբի կանոնաւոր գոյութիւնը և թէ համերաշխ գործունէութիւնը: Մեծ պասից սխուռծ

խմբի անդամները սկսեցին ցրուել դէս ու դէն, և յետոյ, պատահում էր, որ մի քանի հոգի խմբվում էին Թիֆլիս, դարձեալ տալիս էին մի քանի ներկայացումներ իրանց անձնական կարիքը հոգալու համար:

Ահա թէ ինչպէս հայ թատրոնական խումբը սկսելով իւր գործունէութիւնը 1863 թուականից տասն ու չորս տարուայ ընթացքում, առանց որեւէ նիւթական միջոցի անընդհատ գործելով, մի քանի աննշան տեղական պիեսաներից սկսելով, կազմեց ապագայում մի համեստ, բայց նշանաւոր բեմերաւար, համեմատ իւր յոգիներին:

Հիմա, այս տողերը գրելիս ես շատ ցաւում եմ և նախատում ինձ, որ 1879 թուականից փոխանակ դարձեալ մեր յոգիերով սկսելու գործը, ես պատճառ գառայ Պօլսոյ եսա սէր զերասանուհի և զերասանների միջամտութեամբ վերանորոգել մեր խեղճ թատրոնի գոյութիւնը, որը նրանց շնորհիւ սպառեցրեց իւր վերջին ոյժը և ներկայումս սպասում է մի հաստատ կամքի տէր, թատրոնին անձնանուէր մարդու, որը կարողանայ մի կենսատու զարգ տալ նորա օգտուէտ գործունէութեանը:

Իսկ մինչև այդ մեսիայի երևալը, ի զուր ևն գոյութիւն չունեցող մեր հայ թատրոնի մասնաժողովի անձինքները դէս ու դէն ևն ընկնում, նորից կեանք տալու հայ թատրոնական բեմին, յուսալով որ ադամեանները և հրաչիաները, որոնք իրանց անձնական շահից դուրս ոչինչ չեն տեսնում, կարող են և ընդունակ են կեանք տալ իրանց շնորհիւ մեռացրած գործին:

Թէ որքան ուղիղ է այս իմ հայեացքս, ես կաշխատեմ ժամանակով երևան հանել իմ մի ուրիշ թատրոնական յիշողութիւններին մէջ, որ սկսել եմ գրել 1879 թուականից, իմ Պօլսից Ազամեան և Ասողկի, Սիրանուշ քոյրերը Թիֆլիս բերկրուց: Առայժմ ես պիտի շարունակ եմ իմ յիշողութիւններս վրայ թատրոնի վերանորոգման վերաբերեալ Թիֆլիսում, որ սերա կապ ունի իմ թատրոնական գործունէութեանս հետ և կը վերջացնեմ Ամերիկեանցի վերադարձով Թիֆլիս:

Պէտքի վրայ բէժ հասելը:

ԽԹ.

Փոխարքայ իշխան Վօրօնցովի հեռանալուց յետոյ Սովկասից, վրաց թատրոնը ննջում էր հանգիստ քնով, մինչև որ 1863 թուականից օրէց օր սկսեց զարգանալ հայոց թատրոնի բեմը:

Մի քանի զարդացած երիտասարդներ, որոնց պարագլուխը պիտի համարել այն ժամանակուայ «Ռօէթա» տնօրէնուած վրաց լրագրի խմբագիր Պէորգի Տէրէթելուն և բանաստեղծ Ակակի Տէրէթելուն, օրինակ առնելով մեղանից սկսեցին զբաղուիլ վրաց թատրոնի վերանորոգութիւնով: Դայց որովհետև Վօրօնցովի ժամանակով վրաց կանոնաւորուած խումբը արդէն ցրուել էր, նաև չը կար և ոչ մի հատ դերասանուհի, ուստի վրաց երիտասարդները կազմելով իրանց միջի աղնուական երիտասարդներից խումբ, և սակայն չ'զանելով դերասանուհիք զիմեցին մեր խմբի դերասանուհիներին՝ այն է. Նուարդ (Սոփիա) Սելէք Նաղարեանցին, հանգուցեալ Քէթևան Արամեանցին և Սաթինիկին: Ահա այս ոյժերով մի քանի կցիտուէր ներկայացումներ տալուց յետոյ, զարձեալ վրաց թատրոնը դադարեց գործելուց: 1876 թուականին, երբ մեր թատրոնի գործն էլ դադարել էր կանոնաւոր ընթացք ունենալուց՝ կազմուեց Թիֆլիսում դարձեալ մի նոր խումբ, որոնց պարագլուխներն էին վրաց յայտնի գործունեայ և եռանդոտ ազգասէր, բարձր գիրք ունեցող ռուսաց աստիճանաւոր Պիմիարի Ղալիանու աղջիկը և տղան, որոնց հօր սպանումը Ստավրօպօլում մնաց գաղտնիքով պատած մի եղելութիւն:

Դրանք զիմեւ էին Սուրբուկեանցին խնդրելով, որ նա թոյլ տայ թարգմանելու «Պէպօն» վրացերէն իւրեանց բեմի համար:

Սուրբուկեանցը յանձն էր առել թարգմանելու ինքը իւր հեղինակութիւնը, օգնութեամբ վրաց գրականութեան յայտնի մի գործիչ իշխան Լըրիսաովի:

Երբ թարգմանութիւնը պատրաստ է լինում, նրանք «Պէպօն» երկրորդական գերերը բաժանելուց յետոյ իրանց մէջ,

խնդրում են Սունդուկեանցին դիմել ինձ, որ ես յանձն առնեմ Պէպօի դերախտարութիւնը:

Պէտք է ասած, որ այդ ժամանակ ես մեծ համակրանքով էի վերաբերվում առհասարակ դէպի բոլոր վրաց դործունէութիւնը, մինչև որ ես իմ կաշուս վերայ չղգացի նրանց կեղծ անկեղծութիւնը դէպի մեր հայ երիտասարդութիւնը, որի թէ համակրութիւնը, թէ օգնութիւնը վրաց մաքին նրանք գնահատում էին միայն հայոհայնքով և վերին աստիճանի արհամարանքով: Ահա ես պատմեմ իրողութիւնը, իսկ այս մասին թող դատէ ինքը ընթերցողը:

Սունդուկեանցի և Վիպլանու որդիքը մի անգամ դիմեցին ինձ, խնդրելով որ ես յանձն առնեմ Պէպօի դերը վրացերէն լեզուով կատարելու:

Թէև վրացերէն լեզուի մէջ ես սաստիկ բոբիկ էի, մինչև անգամ այսօր հազիւ թէ կարողանում եմ վրաց զրութեան տառերը կապել միմեանց հետ, բայց և այնպէս, յանձն առայ նոցա առաջարկութիւնը և վերցնելով դերը տուի արաագրելու հայերէն տառերով: Երբ հաւաքուեցինք առաջին փորձին ընթերցումն անելու համար, վրացիք յայանեցին, որ նրանք մտադիր են մի բանի ներկայացումներ տալու, բացառապէս Սունդուկեանցի թարգմանութիւններից **Քաթեգորթական** նպատակով և որ միևնոյն ժամանակ խնդրում էին ինձ մասնակցելու ամեն մէկի մէջ իմ հայերէն կատարած դերերումս և յանձն առնել ըէմիօրի պաշտօնը: Աս պատասխանեցի որ թէև շատ աղատ ժամանակ չունեմ դերասանութիւն անելու և չը նայելով որ ուրիշ շատ դործնական պարապմունքներիցս այսպիսով կարող եմ զրկուիլ, այնուամենայնիւ, երբ նպատակը **Քաթեգորթական** է, ես պատրաստ եմ ձրիաբար յանձն առնել մասնակցելու նրանց խաղերին, միայն այն պայմանաւ որ իրանց խաղերը վերջացնելուց յետոյ, նրանք էլ պարտաւորուեն մասնակցելու ինձ համար «Պէպօ» կրկնութեանը, որը ես յանուն նպատակի մտադիր եմ տալ հայ և վրաց լեզուով, որպէս ղի և բեմից ցոյց տանք մեզ հայերիս և վրաց միմեանց հետ ունեցած համերաշխութիւնը և որ այդ խաղից մնացած օգուտը թող նրանք համարեն ինձ վարձատրութիւն:

— Օ, յայտնի բան է, յայտնի բան է, գոչեցին բոլորը, դուք

մեզ պարտաւորում էք, ձեր մտադրութիւնը գեղեցիկ է, պէտք է որ մենք գործենք միասին: Ակսեցինք փորձելը:

Ինչ անտանելի տանջանք էր ինձ համար անգիր անել վրացերէն, հայերէն տառերով, Պէպօի դերը և ինչքան դժուար անփորձ գերասաններին հասկացնել դերերի միոքը, կարգադրել *misen scen*'ը, փողոց է փողոց ընկնելով հաղուստներ յարմարացնել նրանց, գրիմները շինել տալ և վերջապէս մի քանի տասնական լուբլիներ ծախսել իմ սեփական սուղ միջոցներէցս:

Հասաւ ներկայացման օրը: Մի շաբաթ առաջ տոմսակները արդէն սպառուել էին: Վաճիճում ասեղ ձգելու ասեղ չը կար:

Ամբողջ Թիֆլիսի վրաց և հայ ընտիր հասարակութիւնը ներկայ էր: Առաջին կարգի բաղկաթոռներում վրաց բարձր արիստոկրատան էր նստած, կազմուած ժէնէրալներէից և գընդապետներէից, զանազան բարձր աստիճանաւոր վրացիներէից ևն:

Իւմ դուրս դալուս պէս ամբողջ դաճիւճը գըրտաց ծափահարութիւնէից: Ես փոքր ինչ շուարուեցի, բայց խիղջն ուշքի եկայ: Ախուեց խողս: Պէտք է ասած որ ես շատ լաւ էի արամադրուած և այդ պատճառով այդ անդամ ևս վրացած Պէպօն, չը նայելով իմ անախորժ արտասանութեանս վրացու ախանջի համար, շատ փառաւոր դուրս եկաւ: Ամեն իմ մէկ բեմ մտնելս և դուրս դալս կատարեալ օվացիայ էր:

Միւս օրը «Վրօէբան», որի այդ ժամանակուայ խմբադիրն էր Մէսիս աղգանոունով մի երիտասարդ, մի ողևորուած յօգուածով ինձ երկինք էր հասցրել, իմ գերակատարութեանս համար:

Այդ երեկոյ վրաց նորակազմ «բարեգործական» խումբը հազար լուբլուց աւելի մուտք ունեցաւ:

Խնդրեցին կրկնել Պէպօն, որը այս անգամ ևս ունեցաւ մի և նոյն յաջողութիւնը: Իսկ ինձ միայն դովում էին և փառաբանում թէ վրաց լրագրութիւնը և թէ վրաց հասարակութեան շըջաններում:

Երրորդ ներկայացումն տուին «Լէլ Մէկ Ջոհ»-ի թարգմանութիւնը, որի մէջ ես յանձն առայ Բրիլիանտով հարուստ վաճառականի գերակատարութիւնը:

Այդ պիեսայի խողը ևս ունեցաւ միևնոյն յաջողութիւնը

Թէ խաղի և Թէ մոռաքի կողմից: Այնպէս որ վրացիք երեք ներկայացուցողի, Հաստատ կարելի է ասել, զուտ գումար գանձեցին երկու Հազարից ասել, ծախսը զուրս եկած, և այդ փողը դրին իրենց դրսւանը յ'օգուտ Բարեգործական նպատակի:

Երբ ինձ յայտնեցին Թէ իւրեանց ներկայացումները նրանք վերջացրած են Համարում, ես յիշեցրի իմ պայմանս:

— Մեծ ուրախութեամբ, մեծ ուրախութեամբ, կրկնեցին ամէնքը:

Վերցրի Թատրոնի օրը, ապել տուի Պէպօի աֆիշանները՝ կէսը վրացերէն, կէս Հայերէն, և նշանակեցի փորձը որոշեալ ժամին:

Յանկարծ լսում եմ, որ օր. Վիպլիանին Հիւանդէ, օր. Վազբէզը, Ախլցիսայ է գնացել և երրորդ գերասանուհին չի կարող մասնակցել, միւս գերասաններից շատերը ցրուել են զանազան դիւղեր, այնպէս որ ամբողջ Բարեգործական խմբից միայն Համաձայնեցին մասնակցել երեք երկրորդական գերասաններ:

Թէև այդպիսի հանգամանքում պէտք էր որ ես թքել էի ամէն բանի վերայ և հրաժարուէի ներկայացումից, բայց կամենալով խմանալ Թէ վրաց Հասարակութիւնը ինչպէս կը վերաբերուի դէպի իմ ներկայացումս, վճռեցի տալ:

Այնս վերցրեց երկու կանացի դեր, մէկը Աէկէլի, միւսը Եփէմիայի, առաջինը վրացերէն լեզուով, երկրորդը Հայերէն և մի ուրիշ Հայ գերասանուհի, որը չեմ յիշում հիմայ, վերցրեց Շուշանի դերը նմանապէս երկու լեզուով:

Եւ ինչ զուրս եկաւ... Հազիւ, Հազ կարողացայ ծախսը ծածկել: Ո՞ւր էին այն ժէներալները, գնդապետները, սիվիլ շրջով վրաց ազնուականները... Անգամ վրաց դրահակութեան ներկայացուցիչներից և ոչ մէկը չը կար:

Այդպէս վարուեց ինձ հետ վրաց զարգացած Հասարակութիւնը, որը իրանց Բարեգործական խմբի ներկայացումներին իրարու զլուկ էին կոտորում տոմսակ ձեռք բերելու համար, իսկ ինձ վարձատրեցին միայն նորանով, որ ամեն շարժուածքիս համար բեմի վերայ ծափահարում էին և զմայլում իմ խաղովս ինչպէս իրանք էին, ասում:

Այդ գեռ քիչ է... Բանից զուրս եկաւ որ ոչինչ բարեգործական նպատակ չէ եղել մէջ տեղը, այլ բոլոր երեք ներկա-

յացումներն պատկառելի դուժարը մտել էր դերասանուհիներին և դերասանների մի քանիսի դրպանը և որ ես կատարեալ իշի մշակ հանդիսացայ, զըկուելով մի քանի շահաբեր նշանաւոր պարապմունքներին և ծախսելով իմ ծակ դրպանից մի քանի տասնական բուբլիներ պատուելի վրաց հասարակութեանը պատուելու համար:

Ի վերջոյ մի քանի շաբաթից յետոյ, երբ ես «Պէպո» պիւստն ծամեցի և վրաց դերասանների բերանը զրի, նրանք դնացին Վութայիս և կրկնեցին այդ խաղը, յանձնելով Պէպոի դերակատարութիւնը մի անվորձ պատանու՝ դարձեալ Վիպիանի աղղանունով:

Եւ այդ ներկայացումից յետոյ «Վրօէբայի» խմբագրութիւնը, որը մի քանի շաբաթ առաջ ինձ մինչև երկինք գովաբանել էր, ինչպէս ասացի, յայտնում է վրաց հասարակութեան, որ Վութայիսում այնպէս են կատարել Պէպոի դերը, որ Չմէկեանը այդ դերակատարի չէրայի (հագուստի) ասպարէն չափէր են, և այն աստիճան նսեմացրել էր յօգուածագիրը իմ դերասանական նշանակութիւնս, որ ես ապշած մնացի:

Այդ յօգուածը երեւոյց յետոյ, ես մի օր փողոցում պատահեցի «Վրօէբայի» խմբագիր Մէսիսուն և յայտնելով նրան իմ զարմանքս, հարցրի, թէ արդեօք նորա խմբագրութեան որ քննադատութեանը պիտի հաւատալ, նորա խմբագրի յափշտակողական գովասանքին, թէ վերջին հայհոյանքին իմ մասին, զեանդուած նորա թերթիկի մէջ:

Մէսիսին շատ սառնասրտութեամբ ինձ պատասխանեց, թէ երկու յօգուածն էլ իրանց նշանակութիւնը ունին:

Եւ այդ մարդիկը, այդ վրաց լուսաւորուած երիտասարդութեան ներկայացուցիչները, դեռ համարձակութիւն ունեն, մեղադրելու մեղ խարդախութեան դուփել-գժլելու և առելութեան մէջ դէպի վրացիները. թող ներուի ինձ այստեղ հետաքրքրողներին առաջարկել կարգաւր ի միջի պլոց և մի շարք յօգուածներ այժմ դադարեալ ոռոսաց լրագիր «Обзоръ» թերթում, երեւելի վրաց բանաստեղծ Աիսկի Օէրէթելու և ուրիշների, որոնք համարեա խաչակրական պատերազմ էին քարոզում հայերի դէմ և վերջերումս վրաց լրագիր «Վրօէբայի» մէջ մի քանի մայեանդական յօգուածներ ուղղուած

իմ և Սունդուկեանցի գէմ, իմ զրած Սունդուկեանցի կենսագրութեան առիթով «Մուրճի» առաջին համարում, խմբագրուած մի ուրիշ առաւել նշանաւոր բանաստեղծ և վրաց զարգացած դասակարգի զլուխ համարուող իշխան Ելիօ Ճավճավաճէից: Թողնենք այս տխուր յիշողութիւնները և դառնանք մեր դրածին:

Ամբիկեանցի դասաւարդ Պօլեից:

Ժ.

Ամբիկեանցը Պօլիս գնաց մեծ յոյսերով, նա չէր ճանաչում պօլսեցիներին և կարծում էր որ կարող է այնտեղ պատել, թատրոնի զլուխը անցնել և մի կոկիկ խումբ կազմելուց յետոյ, հայաբնակ քաղաքներում ներկայացումներ տալու:

Մեր ունեցած բէպէրառարը նա ամբողջապէս օրինակել տուեց և վերցրեց հետը:

Սկզբում, ինչպէս պատմում էր հանգուցեալը, նա ունեցել էր մեծ յաջողութիւն, այնպէս որ շատերը բարձրաստիճան էֆէնտիներից հետաքրքրուել էին նորանով, անգամ երեւելի Օտեան էֆէնտին, այն աստիճան մակրմացել էր նորա հետ, որ ընկերաբար էր վարուելիս եղել նորա հետ:

Այնտեղ նա յաջողութեամբ տուել էր Պէպօն, Շիլլէրի Աւագակները, Սէր և Նախապաշարմունքը ևն, բայց մի կողմից Պօլսոյ գերասանների ծայրագոյն շահասիրութիւնը և խնտրիզաները, միւս կողմից հանգուցեալի թոյլութիւնը, փող ունեցած ժամանակին փառթամ ապրելու սովորութիւնն և շէկեր տալը՝ նորան վհատացրել էին այն աստիճան, որ նա հիւանդացել էր թոքախտով և շտապել էր դառնալ Թիֆլիս:

Թէև նա Պօլիս գնալիս ինձ մնաս բարեւ անգամ չ'ասաւ, բայց դառնալուն պէս եկաւ ինձ տեսութեան: Արկու տարուայ ընթացքում նա սաստիկ փոխուել էր, ներհարացել էր և հիւանդի կերպարանք տուեց:

Մեր տեսակցութիւնը սրտաշարժ էր, մենք համբուրուե-

ցինք, նա ինձ խնդրեց չը յիշել անցեալը և մի կերպ հնարք մտածել փոքր ինչ ապահովելու նորա վիճակը:

Անոջս հետ խորհրդակցելուց յետոյ, վաւերացինք մի երաժշտական երեկոյթ տալ նորա համար, որ և մէկ քանի օրում յաջողեցրինք Ներսիսեան Հին ուսումնարանի դահլիճում: Այդ երեկոյթից Ամերիկեանցը ստացաւ մօտաւորապէս 500 ռուբլի և փոքր ինչ կարգի բերեց իւր գործերը և սկսեց բժշկուել:

Բայց բժշկութիւնը ինչ կարող էր անել այն սարսափելի ախտի դէմ, որ բուն էր զրել խեղճի կուրծքի մէջ, նաև որ նա բացի իւր զլիի հոգս քաշելուց՝ պէտք է և մտածէր իւր քրոջ վերայ, որի պահանջները ողորմելուն հասցնում էին յուսահատութեան, և որը այդպիսի րօպէնէրում, պատրաստ էր անձնասպանութիւն գործել, ինչպէս և գործեց մի քանի ժամանակից յետոյ:

Բժշկները, ի պատիւ որոնց (բժշկ. Քուչարեանց և Բաբեանց) պիտի ասել, մեծ հոգս էին տանում հիւանդի մասին առանց որևէ ակնկալութեան, անգամ դեղօրայքը շատ անգամ իրանց հաշուով էին բերել տալի տեղատունից: Տեսնելով հիւանդի անելք զրութիւնը, խորհուրդ տուին նորան զնալ հիւանդանոց, որտեղ նա մի առանձին սենեակ վերցնելով, կարող էր առաւել հանգիստ կեանք վարել և պատշաճին հսկողութիւն ունենալ:

Ամերիկեանցը լսեց բժշկների խորհուրդը և երեկոյթից մնացած փողից վարձեց Միխայիլովեան հիւանդանոցում մի լուսաւոր լաւ սենեակ ուր և տեղափոխուեց շուտով:

Հիւանդանոց մտնելուց առաջ մի անգը պատահեց Ամերիկեանցի հետ, որը պատճառ դառաւ մի անիրաւացի լրագրական բանակրօւի և որի հետեանքը շտապեցրեց խեղճ դերասանի վախճանը:

Ամերիկեանցը կամենալով ազատուել տուն վարձելու ծախսից, դիմեց Մշակի խմբագրին, որ նա իւր քարվանսարայի մէջ, դատարկ խանութներից մէկը նորան յատկացնի բնակութեան համար: Արժրունին, աւելի լաւ է ասել, այն ժամանակուայ Մշակի աշխատակից, թերուս, բայց Արժրունու խորամանկ արբանեակը, որը միևնոյն ժամանակ կառավարում էր և Արժրունու

անձնական տնտեսական մասը, մերժեց Ամերիկեանցի խնդիրը, բացատրելով որ քարվանսարացում ընդունուած չէ որեւէ ընտանիքի, անգամ անհատի, զիշեր ցերեկ կեցութեան համար խանութները որեւէ համարից մէկը տալ:

Այդ մերժումը սաստիկ վերաւորեց Ամերիկեանցին և նա մի սաստիկ մտղձոտ յօդուած գրեց Արծրունու դէմ, կարծեմ, «Մեղու» ում:

Այդ յօդուածը նիւթ դառաւ և զանազան բացատրութիւնների առարկայ եղաւ տեղական ուսաց մամուլի համար:

Մշակի վերոյիշեալ արբանեակը մի ստոր և քարշ յանդուրն ոճով պատասխան գրեց Ամերիկեանցին, հայհոյելով նորա անգամ անձնաւորութիւնը:

Այս բանը վերջին հարուածն էր. նորա հիւանդութիւնը աւելի սաստկացաւ և նա մտաւ հիւանդանոց, ինչպէս ասացին:

Այդ անցքը սաստիկ տարւորութիւն արաւ նաև Միքայէլ Բէհբուդեանցի վերայ, որը շարունակում էր մի կարճ ժամանակ խռով մնալուց յետոյ ինձ հետ միշտ բարեկամ ընելի. նա ևս մտաւ բանակուռի մէջ և ուսաց լրագիրներից մէկում սաստիկ պատասխան գրեց «Մշակի» անխիղճ արբանեակին, մասնացոյց անելով Ամերիկեանցի հիւանդ և յուսահատ դրութիւնը: Կեչ ասել կուզի որ ես ամեն օր այցելում էի խեղճ ընկերոջս հիւանդանոցում և կատարում էի նորա որեւիցէ յանձնարարութիւնը:

Մէկ օր, ճաշից յետոյ ըստ սովորականին ես մտայ Ամերիկեանցի մօտ և նկատեցի որ յուզուած էր և իմ հարցիս թէ ինչպէս է նա իւրեան զգում, նա մի տեսակ վճռողական ձևով պատասխանեց՝

— Գէորգ, ես մէկ քանի օրից յետոյ կը մեռնեմ...

Ես սաստիկ ցնցուեցայ. նա նկատեց...

— Այո՛, շարունակեց, ես զգում եմ, ես գիտեմ հաստատը, որ մի քանի օրից մեռնելու եմ...

— Լռի՛ր, խնդրեմ, պատասխանեցի ես, նմանապէս յուզուած: Թող այդ մօայլ մտածմունքը, դու կ'առողջանաս և մենք դարձեալ կը սկսենք գործել միասին...

— Ո՛չ, ո՛չ, մի խափի՛ր քեզ սնտաի յոյսերով. վճռուած է, ասաւ խեղճը և լռեց: Յետոյ նկատելով, որ արտասուէնքները թափում են աչքերիցս՝ ժպտալով դիմեց ինձ:

— Գէորգ ջան, մոռացիր բոլորը իմ արածներս, որոնք քեզ վերաւորել են երբեկոցէ, այժմ դու ես իմ միակ այն ընկերը, որը պիտի տաս հասարակութեան իմ կենսադրութիւնս...

Եւ արդէն սկսեցի լալ այնպէս, որ քիչ էր մնում հեկեկայի, բայց զսպեցի ինձ և ասի...

— Խնդրեմ, Միհրդատ, թող քո տխուր մտածմունքներդ, դու չես մեռնի, ինձ բժշկները յոյս են տալի որ դու գեռ երկար կ'ապրես:

Եւ, յայտնի բան է, ստեցի, որովհետեւ ինձ ասել էին բժշկները, որ նա երկար ապրելու չէ:

— Ասիր, ընդհատեց նա. թող այդ քո բժշկներիդ կարծիքը և լսիր ինձ ուշադրութեամբ որ կարողանաս ճշտութեամբ նկարագրել իմ կեանքի...

Եւ վերկացայ տեղեցի և վճռապէս յայտնեցի, որ եթէ նա կը շարունակի այդ անսակ տխուր խոսակցութիւնը, ես կը հեռանամ:

— Ա՛ւա, լսւ նստիր, ծիծաղելով ասաց նա, դու դիտես, բայց յետոյ կը փոշմանես որ չուզեցար լսել ինձ. խօսենք ուրիշ բանի վերայ:

Քիչ ժամանակից յետոյ ես մնաս բարեաւ տաի և սաստիկ յուզուած կարմրած աչքերով հեռացայ բարեկամիս մօտիցը:

Անցաւ մի քանի օր, Ամերիկեանցը ուզեցաւ անդամոտուել իւր քրոջ մօտ, որը կենում էր Սուրիայի Ալէքսէյվսի անուանուած փողոցում, մէկ փոքրիկ սենեակում:

Յանկարծ մէկ օր երբ մեր տանը, ուր կային և մի քանի հիւրեր, մենք նոր նստել էինք ճաշի, քոյրս, որը բնակուում էր մօրս տանը, միեւնոյն Ամերիկեանցի կացած փողոցում, ներս մտաւ գունատ թափուած:

— Եղբայր, բացականչեց նա, Ամերիկեանցը սպանեց իւրան, բայց գուցէ բժշկները օգնեն մի անսակ, դեռ հոգին չէ աւանդել:

Իսկոյն ես վազեցի դէպի Քուշարեանցը, ճանապարհին պատահեցի նորան, որը գնում էր իւր կառքով այցելելու տաւրադո ընկերոջս:

— Օգնիր բժիշկի, երեկոյի պէս բացականչեցի և նստելով նորա հետ կառքը, պատմեցի լսածս:

— Շտապելէ, պատասխանեց նա ինձ, նա երեք օրից յետոյ պիտի մեռնէր:

Մտանք սննեակը: Չարհուրելի և անմոռանալի տեսարան:

Ինքը պարկած էր մէջքի վերայ մահճակալում, կուրծքի ձախ կողմը մերկացած և կողքին յատակի վերայ ընկած էր մի մեծ զինուորական, ամերիկական սիստեմի բէվօլվէր: Ոչինչ փոփոխութիւն կերպարանքում, այնպէս որ կարելի էր կարծել թէ քնի մէջ է:

— Բժիշկը վերցրեց ձեռքը, լսեց կուրծքը և դառնալով ինձ ասած, ամէն բան վերջացած է. զնդակը ուղիղ սրտին է դիպել:


Ահա՛ ինչպէս վերջացրեց իւր կեանքը երեւելի տաղանտաւոր հայ դերասանը, որ դեռ շատ օգտաւէտ կարող էր զտնուիլ թէ հայ թատրոնին և թէ մեր նորածին դրականութեանը, որի մէջ նա նմանապէս մեծ ընդունակութիւն էր ցոյց տուած իւր «Չաքուճ» ստորագրութեամբ ֆիլէտօններով «Մշակի» մէջ:

Պէտք էր մտածել թաղման համար: Հանդուցեալի տանը չը կար և ոչ մի կոպէկ:

Այգպիսի ժամանակ դիմել մեր հարուստներին անհասկանալի է, որովհետեւ նրանց ոչ ամերիկեանցների կեանքն է հետաքրքրում և ոչ մահը, մնում էր մեր, ինչպէս ասում են, *լապր-պինգնէրի* մէջ հանգանակութիւն բանալ, որ և այգպիսութիւնով հաւաքեցինք մօտաւորապէս, լաւ չեմ յիշում հիմայ, կարծեմ, երկու հարիւրի չափ բուբլի, որից ծախսը համեստօրէն անելուց յետոյ, մնացածը յանձնեցինք նորա քրոջը:

Հաւաքուեցինք քառասնաչափ հողիք թէ դերասաններից և թէ հայ թատրոնի բեմին համակրող անձինքներից, և վերցնելով դադաղը ուսերիս վերայ, տարանք Հաւաքարու գերեզմանատունը, ուր և յանձնեցինք հողին մի քանի դամբանականներ արտասանելուց յետոյ:

Գ. ՉԳԼԵԱՆ





ՈՉԽԱՐՆԵՐԸ ՓՈԹՈՐԻԿԻՑ ԺՈՎՆԵՆ ԹԱՓՎՈՒՄ. ՆԿԱՐ ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ

Հրատ. «Արար» Հանգիսի:



ԱՍՎՈՒՍԷ ԽՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ *)

Արդէն շատերին յայտնի կ'լինի որ մենք ճշմարիտ և անխառ-
դախ սրտով սիրելով մեր ազգը, ցոյց տուեցինք որ ազգային
մատենագրութիւնը պիտոյ է լինէր նոր և կենդանի լեզուով, որ
կարողանար կամուրջ բանալ ազգի բանականութեան և գի-
տութեան գաղափարներին մէջ: Բայց խոստովանում ենք ցաւե-
լով, որ մեր կողմից ճշմարտութեան դրօշակ բարձրացնելը
շարժառիթ եղաւ մեր վերայ քանի մի կամակոր մարդերից
բամբասանք հաւաքելու, սորանով երևում է, որ այդ պարոն-
ները դեռ ևս իւրեանց ազէտ և անտեղի դատողութեամբ
ստրկացած չեն կարողացել հասկանալ այն հիմնալի խորհուրդը,
որ ծածկած կայ այս գործի մէջ: Այդ պարոնները փչում են
իւրեանց փողը թէ կայ չկայ հին լեզուն էր որ պիտոյ է լու-
սաւորութեան սերմունքը հայոց ազգի անդաստանի մէջ ցա-
նելու գործիք դառնար, պատճառ որ մշակած լեզու էր. այս
ազէտ և միանգամայն խաւար դատողութիւնը այնքան մի ծի-
ծաղելի բան էր որ եթէ մի եւրոպացի բանագէտ մարդ հան-
դիպէր այն զրուածին, որ այն մոլորական կարծիքն հերքում
էր, պիտոյ է չափէր և կռէր ազգի խորին տգիտութեան վի-
ճակը, մինչև, որ նորա անունով միայն ուսումնականներին մի
պարզ և յայտնի ճշմարտութիւն ապացուցանելու համար պի-
տոյ էին այդքան խօսք, վկայութիւնք և օրինակներ: Շատ և
շատ զարմանալի է, որ այդ հնամուլ պարոնները խօսելու ժա-
մանակին թէև ազաւաղ, այնուամենայնիւ նոր լեզուով յայտ-
նում էին իւրեանց միտքը, սորանով իրանք իրանց ապացու-
ցանում են որ նոր լեզուն ունէր կեանք և գործածութիւն ըն-
կերութեան մէջ. եթէ պատահում էր հարցանել դոցա, թէ ին-
չո՞ւ համար հին լեզուով չեն խօսում ընդհանրապէս, այլ նոր

*) Դնում ենք այստեղ Սիքայէլ Նալբանդեանցի հետեւեալ
յօդուածը, որ, իբրև նորա գրուածք, անշուշտ, գրականական մեծ
նշանակութիւն և հետաքրքրութիւն ունի:

լեզուով՝ կը լսէիր պատասխան. թէ սովորական լեզուն ազգի բերանում այս է, և եթէ կամենային հին լեզուով խօսել այդ անհասկանալի էր ժողովրդին: Այս պատասխանը արդար էր և ճշմարիտ. բայց արի քննենք թէ ի՞նչ է պատճառը որ այդ պատուելի պարոնները ինչ ժամանակ կամենում էին իւրեանց միտքը գրի միջնորդութիւնով յայտնել իսկոյն այն մի ժամ յառաջ սովորական խոստովանութեան լեզուն կը պղծվէր, և նոր ժողովրդին անհասկանալի հին լեզուն հանդէս կ'գար, մինչդեռ կամենում էին մինչև յետին շունչը պատերազմել և ճշմարտութիւնը չխոստովանել:

Սորա պատճառը մեզ քաջ յայտնի է և այդ պարոնները իրանք ևս գիտէին որ զիտենք, բայց որովհետև մինչև այժմ հանդէս չէինք բերած՝ այժմ պիտոյ էր հանդէսով ցոյց տալ որ հաստատվէին իւրեանց կարծիքի միջում՝ թէ իւրեանց կամակորութեան ազբիւրը մեզ քաջ յայտնի է:

Այդ պարոնները անուսուս մնալով և ամենեւին ծանօթութիւն չունենալով եւրոպական բաղմաճիւղ լուսաւորութեան մասին իւրեանց անունը մի անուսուս մտաւոր մէջ, ինչպէս հայոցն է, հանդէս հանելու համար խռկել էին իւրեանց ուղղիղ մէջ հին լեզուի մի քանի մեռեալ բառեր և այս դարձել էր նոցա համար մի սիւն, թէ և շատ խախտու, որից թիկն տալով կամենում են իւրեանց կանգնելու շէնքն լինի հաստատուն և տևողական. այժմ այդ պարոնները եթէ խոստովանէին ճշմարտութիւնը, և համաձայնէին որ հին լեզուն մեռեալ լինելով ազգի լուսաւորութեան ճանապարհ չէր, այլ պիտոյ էր նոր լեզուով զործ կատարել, անտարակոյս այն սիւնը ցած կը գլորվէր. իւրեանց կանգնելը սիւնի նման կ'լինէր գետնի երեսին թաւալ դալ: Ահա այս անձնապահութիւնն էր, որ հարկադրում էր սոցա պարիսպ քաշել ճշմարտութեան ջրի ընթացքի հանդէպը, ապա թէ ոչ ամենեւին հակառակելու տեղք չկար այն բանի միջում, որ պիտոյ էր ազգի հետ մտածել և խօսել այն լեզուաւ, որ նորան հասկանալի էր: Մենք երկար ժամանակ փորձելով ճանաչեցինք այդ հիամոլների ցանկութիւնը, որ կամենում են թէ մենք նորանց արհամարհենք: Ահա սորանով հասած թող ճանաչեն իւրեանց այդ ցանկութեանը, և եթէ ազբիւրը պիտի էր մեր աչքումը ո՞րչափ ևս այն ջուրը, որ նո-

րանից բղխում էր. ուրեմն նոյն արհամարանքը ամենայն բոլոր հասնում է և Լալիտոյէ հասանի և զէպինոցա անհիմն բամբասանքը և Երեմիայական դատաստանը: Իսկ մենք անխորդախ սրտով սիրելով ազգը երբէք յետ չենք կենայ, որչափ Ամենակալ Տէրը կը շնորհէ մեզ կարողութիւն նոր լեզուով աւանդել ազգին ինչ որ վայելում էին և յարմարէին ժամանակի հարկաւորութիւններին:

Առաջին անգամ պատշաճ համարեցանք փոքր ի շատ է հանդէս հանել հայոց մանուկների առաջ և Յունաստանի հին կրօնադիտութիւնը. սրանով կարող էին նոքա ճանաչել ամբողջ յունաց ազգի հոգին, ինչ որ կար նոցա մէջ այն ժամանակ, և այս շատ ուղիղ մի բան էր, պատճառ. որ կրօնը մի այնպիսի պատկերացոյց էր այն ազգին, որին նա պատկանում էր, որ ազգի հոգին, լուսաւորութեան մի խօսքով նորա բոլոր արժանաւորութեան հանդէսը կարելի էր քննել նորա կրօնից, պատճառ որ որքան լուսաւոր էր ազգը, այնքան մաքուր էր և նորա կրօնը, այնքան ճշտած էին չափով և քանոնով կրօնի վերաբերեալները, ընդհակառակն մէք տեսնում ենք, որ մին անպիտան և խաւար ազգի կրօն լցուած է լինում աղօտ և խաւարային խորհուրդներով ևս և ...վաճ աւելորդապաշտութիւններով. կրօնի ներդրածութիւնը ազգի վերայ շատ անչափելի մեծ է, համարեա թէ ամբողջ ազգի հոգին կրթվում է և դաստիարակվում է նորա կրօնի ուսման առաջնորդութեամբը. բայց կրօնի վարդապետութիւնը տարածելու մասին ժողովրդին մէջ անպատճառ պիտոյ էր ազգային մատենադրութիւն, սա էր առաջին և վերջին հնարը որ կարող էր անկել իւրաքանչիւր մարդի մէջ կրօնի արժանաւորութիւնը և յատկութիւնը. մենք տեսնում ենք զոնէ Յունաստանի կրօնի մէջ որ նա ինչ ժամանակ իւր ազգային աւանդութիւնով ստացած կրօնը ունէր՝ շատ անծուծ և տղեղ բաներ էին՝ այս տգիտութիւնը գեղեցկացաւ և միանգամայն նոր կերպ ստացաւ ինչ ժամանակ յոյները փոխ առին կրօնական գիտութիւններ Եգիպտոսից և Փիւնիկացից, մինչև Տրոյացւոց պատերազմը կամ 300 տարի նորանից յետոյ, մինչև Հոմերոսի ժամանակը, կրօնը բաւական միջակ ճանապարհով յառաջ էր խաղում. իսկ երբ ընկաւ սա Հոմերոսի բանաստեղծական ճարտար մտքերի տակ, այն ժամանակ հոգեւորվեցաւ նոր ի նորոյ իմաստասիրական գաղափարներով. սրանում կարելի էր տեսա-

նել վարդապետարան բարոյականութեան: Ահա թէ մատենադրութիւնը ինչ ներգործութիւն ունի կրօնի վերայ: Ուրեմն կրօնի ուսումը պիտոյ էր սերմանել ազգի մէջ մատենադրութեան միջնորդութենով և այս երկուսը ձեռքէ ձեռք բռնած պիտոյ է մշակելին ազգի բանականութիւնը, բայց այն մատենադրութիւնը որ անհասկանալի էր ժողովրդին, ոչինչ մի բան էր. սա այն մատենադրութիւն չէ որ թեակից էր կրօնի և այլ լուսաւորութեանց ազգի մէջ տարածվելուն, սա մեռեալ և անպիտանացանութեան մի լեզու է բոլորովին անհասկանալի. նոր և կենդանի ազգի մատենադրութիւնը ամեն ազգերի մէջ միշտ համեմատվելի է նոցա դրութեանը և նորա իւրաքանչիւր դարու լեզուին, խօսուածքին. այս միայն հայոց խելօք պարոններին որ 19 երրորդ դարու մարդերը կամենում են լուսաւորել 5-դ դարու լեզուով, ուրեմն մատենադրութիւն ասելով պիտոյ էր իմանալ այն մարդը նոր հայախօսութիւնը, որ ծանօթ էր և հասկանալի համարեա թէ մեր ամբողջ ազգին ուր և գտանվէին սոքա, ապա թէ ոչ զուր էր ամենայն ջանք և մտածութիւնք ազգի լուսաւորութեան մասին:

Եթէ հին լեզուով մատենադրութիւնը անհասկանալի լինելով միանգամայն նոր ժողովրդին կարող էր կամուրջ լինել լուսաւորութեան, ապա ուրեմն մեր ժողովուրդը շատ ժամանակ է որ լուսաւորված է և մենք սխալ կարծիքի մէջ ենք, պատճառ որ եւրոպացի լեզուներով, որ հայոց հին լեզուի նման անհասկանալի էր մեր ժողովրդին, կան աւանդված այնքան տեսութիւնք և նոր նոր գաղափարներ որ հին լեզուն կարծեմ գեռ նոցա ստուերի մին քառորդն ևս չունի իւր մէջ. ուրեմն ամեն հայ այն դրերիցը հանելով և իւր տանը պահելով (ինչպէս պիտոյ է անէ հին լեզուով հայ մատենները) կարող էր լուսաւորվել: Այսպիսի խեղացնոր պատասխան այն հետմով մարդերի գլխումը մենք չենք գովել և այլ իմաստուն և բանալէտ մարդերի և ամբողջ եւրոպայի համաձայն ասում ենք, թէ շատ հեշտ է գերեզմանից մեռեալները հանել կենդանացնել, քան այդ ժանդոտեալ լեզուով նոր ժողովուրդ լուսաւորել: Խնդրում էինք եթէ միայն կը պատասխանէին մեզ այդ պարոնները, ճրտեղ է տեսնված որ մի սառած մարդ ջերմացնելու համար նորան դնէին սառուցի մէջ. այն ողոր-

մէլին ի՞նչ ջերմութիւն կարող էր ունենալ սառուցից: Հայոց ողորմելի ազգը երկար ժամանակ անուսումն մնալով բոլորովին սառած մարդու է նմանում այժմուս, և Հին լեզուն 1300 տարվայ ցրտերով արգէն սառուց է դարձել, պատճառ որ նախ և յառաջ կեանք և զործագրութիւն չունի ընկերութեան մէջ. երկրորդ իւր մէջ չունի այն ջերմացուցիչ և անունդ տուող հիւթը, որ եթէ դնէին այն սառուցեալ մարդին, նորան կենդանութիւն հաղորդէր, մէք այսքան ժամանակ քննելով այդ լեզուի ուղը և ծուծը ոչինչ չգտանք բացի քանի մի պատմական տեղեկութիւններէր. երանի՜ թէ և այս բաները գրուած լինէին ինչպէս տեսնում ենք օտար լեզուներէ մէջ:

Նոր լեզուի միջում կայ Հիանալի խորհուրդ. երանի՜ թէ հնար լինէր ասել այդ հնամուլ պարօններին. Հին լեզուի միջում ևս կայ խորհուրդ, բայց կորստական և շատ տարբեր այն խորհուրդից և միանգամայն հակառակ ինչ որ կայ նոր լեզուի մէջ. այդ պատուելի պարօնները եթէ փոքր ի շատ է ուղիղ տեսութիւն ստացած լինէին կ'տեսանէին այդ խորհուրդները բայց ափսոս որ միմիայն հայոց Հին և մեռեալ լեզուն ուսանելով մնացել են դէպի ուրիշ գաղափարները անդգայ:

Մին օրինակ դեռ չենք տեսած որ հացը, թէ և միայն նիւթական բան էր, մի մարդ ունենալով երկու տեսակ՝ մինն Հին քանի մի շաբաթուան արգէն չորացած, իսկ միւսն թարմ և տաք, բայց թողնէր այն թարմ և նոր եփած հացը որ աւել աննշարար էր և ձեռքը պարզէր դէպի քարացած հացը որ յառաջ քան ստամբսը գնալը բոլոր անգամները ևս կը փշրէր. հայոց Հին լեզուն հնացած հաց է արգէն, և 1300 տարի է որ թիված է, իսկ նոր լեզուն ամեն օր եփվում է ջերմէ և անդադար. ուստի սորանով շատ հեշտ կլինէր կերակրել հայոց ազգի սոված հոգին և սա աւելի հիւթ և արիւն կգտնար նորս մէջ, քան թէ այն չորացածը և քարացածը որ չունի իւր մէջ այն կենդանական մասերը. ով որ ականջ ունի լսելու, թող լսէ, պատճառ որ ասվումէ լսվելու համար:

Մինչև հայոց Ազգի հեղինակքը իւրեանց նպատակը չգնէին ազգի օգուտը, մինչև նոքա չմոռանան անպարծութիւնները և Հին հեղինակի անունով փառաւորվիլը, մինչև նոցա մատենագրութիւնը չլինի նոր լեզուով, սուտ է և զուր *

ամեն ջանք և վաստակ ազգը լուսաւորելու. Հին լեզուով ոչինչ չի յառաջանայ եթէ յառաջանող էր, մինչև Հիմայ կը յառաջանար. կարծեմ 200 տարից աւելի է որ Վենետիկում հազարաւոր գրքեր տպւեցան, բայց ազգը միայն արտաքին աչքով տեսաւ. այսպէս կ'լինէ և 200 տարի յետոյ և 1000 տարի յետոյ, և ինչպէս մինչև այժմ, այնպէս և միշտ հայոց մանուկը կ'լինի օտարի հացի մուրացկան. ամեն օր դռնէդուռ ման դաւով թէ յագեցուցանէ սորանից և նորանից իւր իմացական ստամոքսը և այս կերպով սնունդ ստանալով նորա ազգութիւնը կ'լինի մին խայտաճամուկ բան, անարմատ ծառ...

Ամեն մարդ պիտոյ է իւր սեպհական կերակուրն ունենայ, իւր սեպհական կենդանութիւնն ունենայ. ինձ ինչ օգուտ է, եթէ ես տեսնում եմ մի հարուստ մարդ և մասնակից չեմ նորա հարստութեանը, այսպէս ի՞նչ օգուտ է օտարի առողջութիւնը և կենդանութիւնը, եթէ ես Հիւանդ այսօր կամ վաղը սպասում եմ մահին. հայոց ազգի անբաղձ զաւակները մինչև այսօր օտարի հացով են իւրեանց ստամոքսը յագեցուցանում և օտարի կենդանութիւնով ապրում են, և սորանով հետ զհետէ օտարանում են, այսուամենայնիւ նոքա չեն մեղաւոր. ժամանակի հարկաւորութիւնքը անխնայ պահանջում են, նա իւր սեպհականը չունելով օտարի հացի և կեանքի միջնորդութեամբ դործ է կատարում:

Հայոց ազգի մեծատունքը առաւել մեր կարծիքով պիտոյ է նախանձաւոր լինէին ազգի լուսաւորութեանը և պատշաճաւոր խրախոյս և քաջալերութիւն տային այն մարդերին, որոնք անդադար աշխատում են ինչպէս յարմար էր ժամանակի հարկաւորութեանցը, ապա եթէ այս չլինի հեղինակը աշխատելով տիւ և գիշեր և վաստակելով չունի կարողութիւն իւր ազքատ քսակից բաշխել ազգի մանուկներին պարգև, հեղինակը իւր աշխատութեամբը, իսկ ազգի մեծատունքը իւրեանց տուրքովը պիտոյ է դործ կատարեն, մինը առանց միւսին ոչինչ չեն կարող առնել, և եթէ այսպիսի պատշաճաւոր միաբանութիւններ չկային. եթէ ամենի նպատակը ազգի լուսաւորութիւնը չէր ուղիղ ճանապարհով, եթէ Հին լեզուն կենդանի աշխարհիցը տարագիր չէր, սուտ է ամեն լուսաւորութիւն դուր ջանք և անօգուտ վաստակ:

Մենք զօնէ լսում ենք բանազէտ մարդերի բերանից որոնք փորձ առած լինելով կարող էին փորձանքի մէջ կողոնկերի օգնական գտանվիլ, թէ ոչինչ ազգ չի կորչի, եթէ նորա լեզուն պատշաճաւոր կերպով ճոխանայ արմատանայ և հաստատովի ազգի հոգու և սրտի մէջ. այսպէս ոչինչ ազգ կարող չէ իւր գոյութիւնը և կիանքը յարատեւէ՝ կորուսանելով իւր պատշաճաւոր մատենադրութիւնը և լեզուն. ազգ ինքն ըստ ինքան ազգ չէ, եթէ չունի լեզու. մեք տեսնում ենք մարդու մտքի պարզացում թիւն երկու իրից, առանց որոց և չէր մարդ, այսինքն հոգին և մարմինն երկուսը լծուրդութիւն լինելով, կառուցանում են այն արարածների մէջ չքնաղ և վսեմ ստեղծութեամբ որ միայն իւր արարչի պատկերն էր. այսպէս ազգութիւնը ունի իւր հոգին, և այս հոգին լեզուն է. առանց այս լեզուին չկայ ազգ, սուտ բան է և առասպել առակ. ոչինչ բան չէ կարող բնութեան մէջ լինել կենդանի, եթէ չկային նորանում հոգի, այս հոգին լեզուն էր:

Բայց հայոց ազգը իւր լեզուն թողել է անմշակ և նորա մատենագիրքը և հեղինակքը մինչև այսօր ասիացի դաստիարակութիւնով անուշտ առած լինելով աւելի նախընտիր են համարել որ իւրեանք փառաւոր մարդերի յարգումը երեւէին հին լեզուով գրողների միջին, քան թէ նոցա գրածիցը ազգի անբարդ զաւակները օգուտ ստանային, թէև ցաւելով հարկ է խոստովանել, ի՞նչ էր դոցա գրածը բաղդատելով եւրոպական բազմաձիւղ և բազմօրինակ լուսաւորութեան հետ. քանի մի աբեղայական մտքեր կամ ոտանաւորների անօգուտ էին ազգին. թող այդ պարոնները իմանան որ հայոց ազգը հինգերորդ դարուց մինչև հիմա իւր մատենադրութեան մէջ մնացել է միշտ ոտանաւոր և դորանից է որ հասել է այս ողորմելի վիճակին. այժմ հարկաւոր էր ձիււրովել, ոտանաւորով ոչինչ չի յառաջնայ. երանի թէ գրողներն կենդանի և առողջ ականջ ունենային այս խօսքերը լսելու,—պատճառ որ ասվումէ լսվելու համար:

Ազգը լուսաւորելու համար հարկաւոր չէր ոտանաւորներ և ոչ խրթին և հին հայախօսութիւն որ 19-դ դարու ազէտ մարդերի միմիայն պարծանքն էր, այլ պիտոյ է տալ ազգի մանուկներին և ընդհանրապէս բովանդակ ազգին այնպիսի ուղիղ գաղափարներ գիտութիւնների վերայ, որպիսի տեսողու-

Թիւնով լուսաւոր էին եւրոպացի բարեբաղդ բնակիչքը. միտքը, բանականութիւնը տեսութիւնով և կենդանի գաղափարներով կը լուսաւորվի. այս էր նորա ներքին օգուտը, իսկ այդ մեքենապաշտութիւնը որ յառաջանում էին ազէտ մարդերի մէջ կապիկի նման աղքատ լինելով նմանեցնել իւրեանց զրաժը Նոյն շէին կամ Նորենացիին, այդ մի այնպիսի խելակարութիւն էր որ եթէ իւրեանցից ևս հարցանէին չունէին պատասխան. Թող որ մինչև հիմա իսկ այն հեղինակների զրաժը ոչինչ արդիւնք չունին յառաջացուցած ազգի մէջ, այդպիսի ճգնողութիւնը ոչ այլ ինչ էին, բայց եթէ մօլեռանդ Թուլչք երեակայութեան որ զիտէ ոչնչեց զոյացնել հոյակապ ամբարտաւնելը մինչ իրողապէս հորի միջում էր ինքը:

Թող հայոց մանուկը սովորի իւր մայրենի լեզուովը ազատական զիտութիւնները, Թող նա այդ աշխատութիւնը ինչ որ դործ է դնում հին և մեռեալ լեզուն սովորելու համար դործածէ հարկաւոր գաղափարներ ստանալու մասին. չէ պիտոյ նորա հինգ դարու հայախօսութիւնը, այդ նորան հաց ու ջուր չի ապ, նորան հարկաւոր է զիտութիւնը, որը կարող է ստանալ նոր լեզուի միջնորդութենով որ կեանք և կիրառութիւն ունենալով ընկերութեան մէջ, այլ և ուղ և ծուծ ու նկնալով կարող էր հիւթ և արիւն դառնալ և սնունդ տալ հայոց տկար զաւակունքներին:

Այս բաները խօսելուց յետոյ եթէ պատահելու լինի մեզ տեսնել այդ հնամուլ պարոնների կողմից անդարձ կամակորութիւն ոչ այլ կարող ենք եզրափակել, այլ այս միայն որ այդ մարդիքը մեռուցանելով իւրեանց խիղճը կամենում են պատճառ դառնալ որ հայոց մանուկների տարաբաղդ վիճակը, որ սկսած 1300 տարից տեւումէ մինչև այսօր շարունակվի հազարաւոր տարիներ և սորանից յետոյ, սորա համար որ միայն այս պարոնները իւրեանց աննշան կեանքի մէջ իւրեանց տնունը հին և մեռեալ լեզուի արձանի վերայ կարողանան դրոշմել. Թէև այս ողորմելիքը չը զիտեն Թէ Ուռանոսի փոքր որդին Տիտանիցը երգում է կերած ոչնչացնել այսպիսի անպիտան որդիները, բայց ... այս որդիքը փրկելու ջանք դնելով նախ և յառաջ այդպիսի յիշատակաց արձանները կտայ կուլ տալու, բացի սորանից յոյս ունինք որ աղղը ինքը ևս այժմ ինչպէս

մինչև այսօր բնական ուղիղ դատողութենով բաց է թողել մեռածը և պահել է իւր մէջ կենդանի լեզուն, թէև անուսում լինելով աղճատել է խանդարել, այսուամենայնիւ շատ հաւանական է որ այսուհետեւ ևս միշտ աշխատութիւն գործ դնի գտանել և ընթեռնուել այն մատեանները որ զբլում էին նոր հայախօսութենով այլ և ջանք անէ փոքր աս. փոքր մաքրել իւր խօսուածքը դուրս ձգելով այն բառերը, որոնք օտար աղբերից մտած էին. այսպէս և դաւառական մասնիկները կամ կոշտ ու կոպիտ ոճերը, որքան որչափ կարելի էր:

Մէք որչափ կարողացել ենք քննել և ճանաչել, հասկացել ենք որ մարդումն լեզուն այն ժամանակ կարող է խօսել, ինչ ժամանակ միտքը արդէն խօսելի բանը դասաւորում է, պատճառ որ խօսքը որ ձայնաւորված լսվում էր օգի մէջ մեր բերանից մեր իսկ մաքի ծնունդն էր. լեզուի պաշտօնը այստեղ այս էր որ մեր մաքով հասկացածը նա լսելի կլինի օգի միջնորդութենով ուրիշներին. շատ զարմանալի է որ այդ պարոնները որ հին լեզուի պոչը բռնած քշում են իւրեանց էշերը յառաջ, չեն կարողացել մինչև հիմա ճանաչել թէ լեզուն եթէ չունի իւր մէջ այն սննդարար ուղը և ծուծը, եթէ և մշակած չէ, ինչպէս պահանջում էր հարկը, ոչ այլ ինչ է բայց եթէ միայն թարգման որ մտքի ծնուցածը դուրս է հաղորդում ուրիշներին, տարակոյս չկայ հին լեզուի մէջ ուղ և ծուծ և սնունդ չլինելուն, արդէն ցոյց տուել ենք նորան միմիայն իբրեւ պահարան հայոց հինդերուդ դարու լեզուախօսութեան և քանի մի անցքերի, ուրեմն եթէ և շատ քաջ սովորէր հայոց մանուկը այլ և լեզուն այնուամենայնիւ տգէտ էր և ոչինչ չգիտէր. միմիայն մի չոր լեզու գիտենալը փոր չի կշտացնի եթէ նորա հետ կապակից չէին այն յագեցուցիչ և սննդարար հիւթերը որ կարող էին արիւն դառնալ և հաստատել սիրտը, բացի սորանից հայոց մանուկի հանդէսը կամ ասպարէզը ո՞րն էր, արդեօք իւր հին լեզուն հանդէս հանելու ոտանաւոր զրեւն եթէ քանի մի հատ ու կոտոր տղայական ճատեր, և ո՞րոնք էին այդ հանդէսը բողբոջող, նա որ հանդիսում երևում էր իւր հին լեզուովը արդեօք կարո՞ղ էր իւր համար դատաւոր դռանել հասարակութեան մէջ, արդեօք նորա զրածը հասկանալի էր ժողովրդին, այն ձայները ինչ որ նա հանում էր արդեօք

լսողները ուղեղին կհասնէր իբրեւ նշանական ձայներ թէ մի-
այն ականջի թմբուկի արձագանքը կլսէր այն. հասարակ մարդը
առանց ոչինչ հասկանալու, ինչպէս կարելի է խօսիլ մի մարդի
հետ այնպիսի մի լեզուով որ նա չէր ուսել, որ նորան ան-
ծանօթ էր. այսքան պարզ և լուսապայծառ ճշմարտութիւնը
չէն կարողանում այդ պարոնները դեռ իստակ աչքով տեսա-
նել, ուստի և ասում են որ պիտոյ է մարդ այնպիսի լեզուով
խօսի որ դիմացի մարդը նորան չ'հասկանայ, և որչափ խրթին
և մութը կը խօսէր որչափ արժանաւոր և քանքարաւոր էր
հեղինակը. սորա բնութեան կանոնին չհաւանելով որ դրիկ է
մարդուս մէջ լեզու և բանականութիւն սրտի զգացմունքը
ընկերին յայտնելու մասին, իւրեանցից կանոն են հաստատել,
թէ պիտոյ էր խօսել այնպէս որ զժուար լինէր հասկանալը,
ուրեմն եթէ զժուար հասկանալի խօսելը գովելի մի բան էր,
բնաւ չխօսելը ռըչափ ևս սոցա մօտ այսքան իրաւունք ունի
ճշմարտութիւնը կամաւ և յօժարութեամբ միմիայն իւրեանց
թքածը չկամենալով լեզել յանձներն են առնում համբանալ և
ճշմարտութիւնը չխոստովանել:

Վանի մի խօսք ևս պատշաճ համարում եմ ասել այն մար-
դերին որոնք այնուամենայնիւ իւրեանց ողբալի ազիտութեամբ
համարձակվում են բերան առնուլ գերապատիւ Ստեփանոս
վարդապետի գրվածքը, թէ նորա լեզուն ոչինչ քաղաքի սեպ-
հական չէ, թէ զրոյց բառերով խառնված էր, և թէ ազգը չի
հասկանայ:

Մեք խօսելով մի աշխարհաբառ. և նորախօս լեզուի վերայ՝
երբէք չենք մոռածել որ այդ լինի մի քաղաքի մասնաւոր կամ
մի երկրի յատկացեալ բարբառ. այդ պատճառ. որ մեր նպատակին
առաջին արդելքը կլինէր այդ. այն միշտ իմացել ենք այն խտակ
հայախօսութիւնը որ կարելի էր հասկացվիլ և ամեն տեղ
գտնված հայերից եթէ նոքա ծանօթ էին միայն մայրենի լեզ-
վին, այսինքն եթէ և նոր լեզուն չէին կորուսել, ինչպէս Տաճ-
կաստանումը կամ Ռուսաստանում կան շատ օրինակներ, այն
գաւառական լեզուներին մէջ ամենեւին անպիտան է պատճառ
որ այն կոշտ ու կոպիտ լեզուովը ոչինչ մարդավայել աղնիւ
միաք մանաւանդ ուսումնական խնդիրների վերայ չէ կարելի
բացայայտել, իսկ թէ ինչո՞ւ համար խառն եղել է գերապատիւ

Նազարեանցի խօսուածքը գրոց լեզուի հետ պատճառը շատ հեշտ էր ճանաչել որ նոր լեզուն չունէր այնպիսի բառեր որ կարողանային յայտարար լինել այն միտքերին ինչ որ հեղինակը կամենում էր ասել և գրել և սորա պատճառն այն էր, որ իւրաքանչիւր այգպիսի բառի փոխանակ հայոց հասարակ մարդը գործ է ածում զանազան օտար ազգերի բառեր կամ ուսաց և կամ տաճկաց:

Ուստի բնական ուղիղ դատողութենով քան թէ օտարի լեզուով յայտնել այն միտքը, նա գրել է հին լեզուի բառերով. այս բանը մէք միշտ տեսնում ենք եւրոպացւոց մէջ մանաւանդ գաղղիացւոց, որոնց բառերի շատը դեռ պահում է իւր մէջ բնական շարին ձայնը, լեզուն մի այնպիսի բան չէ որ ով կամենայ և երբ ուզածին պէս լինէ կերպաւորէ, դորան հարկաւոր է ժամանակի, շատ անգամ հարկաւոր տարիներ չին թողուլ փոփոխութեան կնիք, թող որ մի մարդ, իսկ թէ կային աշխարհաբաս լեզուի մէջ այն բառերը, որոց փոխանակ պատուելի Նազարեանցը գործ է դրել հին բառերը թող այդ պարոնները իրանք զրին աւելի մաքուր և յատուկ և օրինակ լինին մեզ իւրեանց մաքուր հայախօսութենովը, այնպէս որ եթէ դերապատիւ Նազարեանցի գրածը կարող էր լինել 10000 մարդի անհասկանալի, իրանցը թող 1000 մարդի լինի միայն, բայց չլինի այնպէս ինչպէս եղել է մինչև հիմայ որ չորս ու կէս միլիօն ժողովրդից հասկացել են հինգ հարիւր կամ հազար մարդ:

Ազգը երբէք չի կարող ստանայ գերապատիւ Նազարեանցի աշխատութիւնը և անխարդախ գէպի ինքը սէրը. նա ուղիղ և պարզ մտքով կոեսանէ այս չնաշխարհիկ և իմաստուն հեղինակի քնքուշ սիրտը, թող և մեր սիրելի բարեկամ պարոնները ևս անհոգս մնան որ նոցա փառասիրութիւնը և հեղինակի անուն ժառանգելով յիմար ձգտողութիւնը ևս անծանօթ չի մնայ ազգին զոնէ այսուհետև եթէ Ամենակալ Տէրը կը բաղկէր մեզ կարողութիւնն:

Ազնիւ մարդուն ցանկալի է ընդհանուրի օգուտը, բայցառութիւնը ընդհանուրի անպիտան անդամն է, ասվումէ լսվելու համար:

Սիփայէլ Նալբանդեանց

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՆԴՈՒԽՏԻ ԵՐԳԵՐ

I.

ՍՈՒՍԱԿԻՆ

Ուզճում ես դու, սիրուն սոխակ,
Տեսնել եզեմ ծաղկավառ,
Հնչել վարդի բոյրն անուշակ—
Թո՛ւի՛ր դէպի հայ աշխարհ:

* * *

Ուզճում ես դու հնչել անվախ
Նրգրդ գողարիկ, զգայուն,
Նրգել սիրոյ ժամեր խաղաղ—
Թո՛ւի՛ր դէպի հայաստուն:

* * *

Ե՛յնտեղ պայծառ, այնտեղ անոյշ
Քեզ կը ժպտայ ճոխ դարուն,
Ե՛յնտեղ վարդի ծոցում քնքոյշ
Դու կը դանես սէր անհուն:

* * *

Ե՛յնտեղ երկինքն է կապուտակ,
Պայծառ արեւ, վառ աստղեր,
Ե՛յնտեղ ծիծաղ, ժպիտ, բերկրանք,
Ե՛յնտեղ կեանքն է անվերջ սէր:

* * *

Թո՛ւի՛ր սոխակ, դու հարազատ
Նրգիչ սիրոյ զգացման,
Թո՛ղ բիրտ երկրում ազուան ազատ
Հնչէ սիրով իւր զաղան...

II.

ՄԱՏԻՍԻ ՄԷԿԲ

Աքանչելի զարնան այս քաղցր ժամին,
Երբ բընութիւնը, չքնաղ հարսի պէս,
Չուգուած ու կոկուած, վառ ժպիտ դէմքին,
Աարծես հարսանեաց տօնում է հանդէս.
Եւ լուսոյ աղբիւր—արեւ պայծառ.
Անամպ երկնքից անուշ ժպտալով,
Առատ ցոլում է շիթեր ոսկեվառ,
Այդ ճոխ հանդիսին վսեմ փայլ տալով,
Եւ իմ չորս բոլոր բուռն հրճուանօք
Մոռում է կեանքը բընութեան ծոցում.
Տեսնում եմ մարդիկ երջանիկ, անհոգ
Երգ ու զինիով դարուն են օրհնում...

* * *


Այդ քաղցր ժամին, Հայրենիք անգին,
Ինձ պաշարում է մի այլ զգացում
Անյագ տենչանքով իմ մատաղ հոգին
Գէպի կենսատու քո ծոցն է թռչում.
Եւ ըստական քաղցրիկ երազներ
Իսկոյն գալիս են ինձ այցելութիւն.
Ահա տեսնում եմ ոսկեշող արտեր,
Ազգիք ծաղկաւէտ, աղբիւրք կարկաջիւն...
Ես քո զրկումն եմ... երկիր անուշիկ,
Եւ ողեղնաւած քո սէրն եմ երգում...
Իայց, ո՛հ, ցնգում են երազներ գողտրիկ,
Եւ նորից ինձ քո կարօտն է տանջում...

ԺԱՂԻԿ

(Ա. ՊԼԵՇՁԷՆՎԻՑ)

Ուրախ փթթում են ծաղիկները դաշտում,
Վիշերը նոցա ցոյն է զովացնում:
Իսկ ցերեկները պայծառ, անուշիկ
Ժպտում են ծաղկանց արևն ու երկինք:
Եւ զեփիւռն անոյշ, թիթեռն ու մեղուն
Ծաղկանց հետ քաղցր զըրոյց են անում:
Իսկ հայրենի դաշտն ազատ, ընդարձակ
Շնչում է նոցա նոր ոյժ ու նոր կեանք:
Բայց ահա նոքա տեսնում են հեծում
Խուլ, խաւար բանախ նեղ պատուհանում
Մեղմ օրօրվում է մի գունատ ծաղիկ
Տխուր, միայնակ, որպէս խեղճ որբիկ:
Տխրում են ծաղիկներն և աղերսազին
Սանչում են կըբօրն. «Եղբայր մեր անդին,
Երբ դու մեզ մօտ, ի՞նչ ես մոլթ բանտում,
Որպէս խեղճ գերի հալվում ու մաշվում»:

— Ո՛չ, ո՛չ կըբայրներ անդին, պատուական,—
Գերին տալիս է նոցա պատասխան.
Թէպէտ ուրախ էք դուք ազատ դաշտում
Եւ վայելում էք գարնան սէր, խնդում,
Բայց չեմ նախանձում ես ձեր վիճակին,
Ձեմ թողնիլ ես իմ այս բանտը մթին:
Ծաղկեցէք զուարթ. ձեր չքնաղ տեսքով
Խնդացրէք սրտեր անհոգ, անխոռով...
Ես պիտի ծաղկեմ բազդազուրկ, անձար,
Վառն արցունք թափող թշուառի համար.
Ես պիտի ժպտամ այն տառապեալին,
Որ կարօտում է հայրենի երկրին.
Ես սփոփանք եմ այս խաւար բանտում
Խեղճ բանտարկեալի, որ լոյս է խնդրում.
Թող նա ինձ վերայ նայելով—յիշէ
Սանաչ հովիտներն իւր հայրենիքի:





ՔԱՄԻՆ ՍԱՍՏԿԱՆՈՒՄ Է. ՆԿԱՐ ՍԵՐԳԵԵՎԻ

Հրատ. «Արար» Հանդիսի:



Rocky shore, Lake Superior, 1900

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

Ն Յ Ա Ն

(ԳԱՐՇԻՆԻՑ)

Սեմեօն Իվանովը պահապանի պաշտօն էր կատարում երկաթուղու վերայ: Նրա տնակից մինչև մի կայարանը տասներկու վերստ էր, իսկ մինչև միւսը—տասը վերստ: Նրեք—չորս վերստաչափ տնակից հեռու անցեալ տարուանից բացուել էր թիւ մանկու մի մեծ գործարան, որի բարձր ծխնկոյզը անտառի հուեից սւեին էր տալիս: Իսկ մօտակայքում, բացի հարեան տնակներից, էլ ուրիշ բնակութիւն չկար:

Սեմեօն Իվանովը հիւանդոտ և մաշուած մարդ էր: Իննը տարի առաջ նա եղել էր պատերազմում, սպաներից մէկի մօտ սպասաւորի պաշտօն էր վարել և ամբողջ պատերազմի ժամանակը նրա հետ էր անցկացրել: Սա իւր կեանքում սև օրեր շատ էր տեսել: Շատ անգամ և՛ քաղցած էր մնացել, և՛ ցրտից փետացել էր, և՛ այրուել խաշուել էր արևի տակ, և՛ օրական քառասունից—յիսուն վերստ ոտով թիւ էր եկել տարուայ ամենացուրտ և ամենատաք եղանակներին: Նրան շատ անգամ վիճակուել էր և՛ կրակ ու գնտակի բերանն ընկնել, բայց, փառք Աստուծոյ, միշտ ողջ առողջ ազատուել էր. ոչ մի գնտակ չէր զիպել: Միանգամ մեր զօրագունտը կանգնած էր առաջին կարգում և մի ամբողջ շաբաթ պատերազմում էր տաճիկների հետ: Մեզ թշնամիներից բաժանում էր մի խրամ, որի այն կողմը բռնած էր տաճկաց զօրքը. իսկ այս կողմը — մեր: Առաւօտից մինչև երեկոյ շարունակվում էր զնտակակոծութիւնը: Այդ զօրքի մէջն էր և Սեմեօնի իշխանաւոր սպան: Ամեն օր Սեմեօնը նրա համար օրական երեք անգամ տաք ինքնահո. և ճաշ էր բերում հեռաւոր ձորից, ուր տեղաւորուած էր զօրադնտի խոհանոցը: Ահա՛ նա ինքնահոը

ձեռքին գնում է բաց դաշավայրով: Գնտախները վզընձում են, զիպչելով քարերին՝ սոսկալի շրխից են բարձրացնում: Սեմեօնը սարսափում է, լալիս է, բայց էլի առաջ է գնում: Բոլոր սպաները զոհ էին նրանից, որովհետև Սեմեօնի շնորհիվ նրանց տաք թէյը միշտ անպակաս էր:—Վերջ ի վերջոյ Սեմեօնը ողջ առողջ վերադարձաւ պատերազմից, միայն թէ նրա ձեռքն ու ոտքը սկսեցին ցաւել՝ մի տեսակ մրմնջալ և այդ բանը քիչ դառնութիւններ չպատճառեց խեղճին: Տուն վերադառնալով նա հօրն արդէն գերեզմանում գտաւ: Չորս տարեկան մի տղայ ունէր—նա էլ մեռել էր բիացաւից. մնացել էր միայն կինը—և ահա նա սկսեց կնոջ հետ քաշել կեանքի լուծը: Բայց նրան չյաջողուեց բարւոքել իր ընտանեկան դրութիւնը և ինչպէս բարւոքէր, մի թէ հեշտ էր այդ, ինչպէս նա իւր ուռած ձեռք ու ոտքով աշխատէր, երկիրը հերկէր: Հայրենի դիւրում նրանց ապրուստի ճամբան բոլորովին փափուկ էր. նրանք էլ դիմանալ չկարողացան և զնացին ուրիշ կողմեր բազդ որոնելու: Սեմեօնը կնոջ հետ շատ տեղեր ման եկաւ, նա եղաւ և՛ Լինիայում, և՛ Խերսոնում և՛ Գոնչչինում: Բայց բազդը ամեն տեղ էլ նրանից երես դարձրեց: Աինը ճարահատուած աղախին մտաւ, իսկ Սեմեօնն սկսեց առաջուպ նման էլի թափառել: Միանգամ նա երկաթուղիով մի տեղ էր գնում: Այցարաններից մէկում նրան թուալ թէ կայարանապետը ծանօթ մարդ է, նա բոլոր ժամանակ աչք չարկեց նրանից: Այցարանապետն էլ սկսեց անդադար Սեմեօնի երեսին նայել: Նրանք ճանաչեցին մէկ մէկու. Բանից երեւաց, որ կայարանապետն այն զօրադնտի սպաներիցն էր, ուր ծառայել էր Սեմեօնը:

— Գու Իվանովը չե՞ս,—հարցրեց կայարանապետը:

— Այո՛, ձերդ ազնուութիւն, հէնց ինքս եմ:

— Բայց ճրտեղից որտեղ:

Սեմեօնը մէկ-մէկ պատմեց բոլորը:

— Այժմ հարկ ես գնում:

— Ինքս էլ չգիտեմ, ձերդ ազնուութիւն:

— Ինչպէս թէ ինքդ էլ չգիտես, յիմար:

— Այո՛, ձերդ ազնուութիւն, ինքս էլ չգիտեմ, որովհետև գնալու տեղ չունիմ: Անգործ եմ, տեղի եմ մանդալիս: Այցարանապետը նայեց Սեմեօնի երեսին, մտածեց ու ասաց. «զի-

տես ի՞նչ կայ. դու առժամանակ մնացիր այս կայարանում: Պարծեմ ամուսնացած ես, չէ՞. ուր է կինդ»:

— Այո՛, ձերդ ազնուութիւն, ամուսնացած եմ: Ախնս Սուրակ քաղաքումն է, վաճառականի տան աղախին է:— Ուրեմն զրի՛ր կնոջդ, թող նա էլ գայ: Նս նրա համար ձրի տոմսակ կձարեմ: Այստեղ երկաթուղիի վրայ պահապանի տեղ է բացուելու. զխաւորին կինդդեմ, որ այդ տեղը քեզ տան»:

— Շատ շնորհակալ եմ, ձերդ ազնուութիւն, — պատասխանեց Սեմեօնը.

Սեմեօնը մնաց կայարանում: ‘Նա աշխատում էր կայարանապետի խոհանոցում. փայտ էր կտրատում. բախն էր սրբում, տախտակամածն էր աւելում: Երկու շաբաթ չքաշեց, կինն էլ եկաւ և Սեմեօնը կնոջ հետ զնաց իւր նոր բնակատեղին: Տնակը նոր էր, առք, փայտն էլ առատ: Տնակի կողքին կպած էր առաջուայ ծառայողներից մնացած և՛ մի փոքրիկ բանջարանոց. իսկ երկաթագծի երկու կողմերումն էլ կէս զեսեառինաչափ հող կար հերկելու համար: Սեմեօնը շատ ուրախացաւ և սկսեց միտք անել, թէ ի՞նչպէս սու՛ն և տեղ կ’սարքի, կով կառնի, ձի կառնի...: Սեմեօնին տուին բոլոր հարկաւոր իրերը. կանաչ ու կարմիր զրոշակներ, լապտեր, փող, մուրձ, բանալի՝ երկաթագծերի պտուտակներն ամրացնելու, լինգ, թիակ, ցախաւել, մեխեր և երկու փոքրիկ դրքոյկներ, որոնց մէջ զրուած էին երկաթուղոյին կանոնները և գնացքների երթևեկութեան ժամերը: Սկզբներում Սեմեօնը ողջ զիշկունք էր քնում, հէնց մի զլուխ այդ դրքոյկներն էր կարդում և անդիւր էր անում: ‘Նա միշտ զնացքի անցնելուց մի քանի ժամ առաջ զնում — աչքի էր անցնում իւր մասը և ապա նստում էր անակի մօտ դռնուող փոքրիկ նստարանի վերայ և շարունակ նայում ու ականջ էր դնում, թէ չի՞ շուացնում արդե՞օք զնացքը, ձայն չի՞ն հանում երկաթագծերը: Աւրջապէս Սեմեօնը բոլոր կանոններն անգիր սովորեց, իրաւ է, թէ և վարժ կարգալ չէր իմանում այլ վանկ-վանկ էր կարդում, բայց էլ սովորեց:

Այսպէս էր հասել ամառը: Պործի թեթեւ ժամանակն էր, էլ ձիւն սրբելու, ճանապարհներն խտակելու կարիք չկար: Բացի դրանից ամառ ժամանակ այդ ճանապարհով գնացքների

երթևեկութիւնն էլ նուազում էր: Ամբողջ օրուայ մէջ Ամեօնը մի երկու անգամ շրջում էր իւր մասը, տնտղում էր երկաթագծերը, տեղ տեղ ամրացնում էր պտուտակները, աչքի էր անցնում ջրի խողովակները և ապա վերադառնում իւր բնակարանը ու տնային գործերով զբաղվում: Բայց ի՞նչ արած, որ տան գործերումն էլ մի բան միշտ նրա առաջը կապում էր: Ի՞նչ անէր—չանէր, պէտք է առաջ երկաթագծի վարպետին հարցնէր, պէտք է նրանից իրաւունք խնդրէր, խսկ նա էլ պէտք է իւր կողմից կայարանապետին հարցնէր, նրա իրաւունքն ստանար: Այդպիսով մինչև խնդրի տեղ հասնելն ու յետ գալը ժամանակն էլ անցնում գնում էր: Այնպէս որ Ամեօնն ու կինը հետզհետէ սկսեցին ձանձրանալ:

Անցաւ երկու ամսաչափ ժամանակ: Ամեօնն սկսեց ծանօթութիւն կապել զրացի պահապանների հետ: Նրանց մէջ մի ծերունի Հին ծառայող կար, տնից ոտ դուրս զնեւ հաղիւ էր կարողանում, ուղղում էին նրան փոխել, նրա պաշտօնը կիներ էր կատարում: Միւս պահապանն, որը աւելի մօտ էր ապրում կայարանին, մի երիտասարդ մարդ էր չոր-չոր ու ջրոտ: Ամեօնն ու նա առաջին անգամ իրար պատահեցան ճանապարհի հէնց մէջ տեղում, երկաթագծերի վրայ շրջան աւելիս: Ամեօնը զիտարկը վերցրեց և զլուխ տուաւ:

— Բարի աջողում, հարեան, —ասաց նա:

Հարեանը խեթ նայեց Ամեօնին: — Բարի աջողում, — պատասխանեց նա, երեսը շուռ տուաւ ու գնաց: Յետոյ նրանց կանայքը պատահեցան միմեանց: Ամեօնի կինն առաջինը բարեկեց իւր զրացուհուն. բայց նա էլ երկար չխօսեց, շուռ եկաւ գնաց: Մի անգամ էլ Ամեօնը պատահեց նրան:

— Եդ ի՞նչ չխօսկան մարդ ես ունեցել, քոյրիկ, —ասաց նա:

Սինը փոքր ինչ սուս կացաւ, յետոյ ասաց.

— Ետար քեզ հետ ի՞նչ խօսելու բան ունի: Ամեն մարդ իր գործի տէրն է... գնա՛ քո բանին: Մակայն մի ամսաչափ էլ այդպէս շարունակուեց, յետոյ նրանք բարեկամացան: Աւայնուհետև Ամեօնն ու Վասիլին միշտ դուրս էին գալիս, նստում էին ճանապարհի ափին, կպցնում էին «չիբուխները» և սկսում էին մէկ—մէկու պատմել իրար «հալն ու ափալը»:

Վասիլին շատ քիչ էր խօսում. իսկ Սեմեօնը մանրամասն պատմում էր համ իրանց զիւղի մասին, համ իւր պատերազմ գնալը, համ այնտեղ քաշած կեանքը:—Ի՜հ, քիչ դարդ ու ցաւ չեմ քաշել ես իմ կեանքում,—ասում էր Սեմեօնը,—բայց ի՞նչ ստացայ ես կեանքից—ոչինչ: Ի՜հ, եղբայր, որ Աստուած մի մարդուն անբաղդ կստեղծի, հէնց անբաղդ էլ կանցնի նրա կեանքը: Այսպէս է, Վասիլի Ստեպանիչ, բաղդի բանը:

Վասիլի Ստեպանիչը չեբուխը դարտակեց երկաթաղծի վերայ և ոտքի կանգնելով՝ ասաց.

— Բաղդն ու անբաղդութիւնը չեն մեր կեանքը մաշողը, այլ—մարդիկ: Մարդս որ կայ՝ ամենաչար և ամենակատաղի դաղանն է աշխարհիս երեսին: Պայլը գայլին չի ուտիլ, համա մարդը մարդուն սաղ—սաղ ուտում է:

— Զէ, եղբայր, էդ մէկը սխալ ես՝ գայլը գայլին կուտի:

— Ես օրինակի համար ասացի: Բայց էլի մարդու նման քարասիրտ արարած չկայ: Եթէ մարդկանց չարութիւնն ու ագահութիւնը չլինէր, ապրուստն էլ էպքան դժուար չէր լինիլ: Բայց ո՞ւր է, ո՞վ ասես՝ սիրտդ չի դաղում է, բերանիդ հացը չի կտրում, կաշիդ չի պլոկում:

Սեմեօնը մտածմունքի մէջ ընկաւ:

— Զգիտեմ, եղբայր, կարելի է հէնց քո ասածիդ պէս է. եթէ այդպէս էլ լինի, էլի Աստուածանից է:

— Ի՜հ, դէ որ այդպէս է,—պատասխանեց Վասիլին,—էլ մեր խօսելն աւելորդ է: Եթէ ամեն վատ բան Աստուծ վերայ գցենք, իսկ ինքներս ձեռներս ծալած նստենք ու համբերենք, — էլ ի՞նչ մարդիկ ենք. ի՞նչու ենք հաց ուտում, դնանք խոտ արածենք էլի: Ահա քեզ իմ վերջին խօսքս:

Եւ Վասիլին, առանց միաս բարեւ ասելու, թողեց հարեանին ու գնաց: Սեմեօնն էլ վերկացաւ տեղից. «Հարեան, հարեան, էլ ի՞նչի ես նեղանում», սկսեց յետեւից կանչել Սեմեօնը: Բայց հարեանը ետ չնայեց ու գնաց: Սեմեօնն անշարժ կանգնած՝ երկար նայում էր, մինչև որ հարեանը ծածկուեցաւ նրա աչքից: Վասիլին տուն եկաւ ու պատմեց կնոջը. «Համա ի՞նչ հարեան ունենք մենք էլ, ա կնիկ: Իսկ փալաս է—ո՛չ թէ մարդ»:

Սակայն հարեանները չխռովեցին մէկ մէկուց: Պատահե-

ցին իրար, առաջուայ պէս էլի նստեցին միասին և սկսեցին էլի միեւնոյն նիւթի մասին խօսել:

— Ե՛հ, եղբայր, մարդկանց արարմունքը որ չլինէր—խօսմենք էլ քեզ հետ այս տնակներում չէինք փախլ,—ասաց Վասիլին:

— Ի՞նչ կայ որ... տնակներն այնքան էլ վատ չեն. ապրել կարելի է:

— Ապրել կարելի է, ապրել կարելի է... էհ տեսնում եմ շատ ես ապրել՝ քիչ ես օգտուել, շատ ես նայել՝ քիչ ես տեսել: Եթար աղքատ մարդու համար ի՞նչ կեանք, տնակում լինի թէ պալատում. էդ մարդակիրներն ամեն տեղ էլ միտք ուտում են: Վանի ջանումդ ջան կայ տանջում են, ոսկրիդ ծուծը քամում են. իսկ երբ ծերանում ես, անպէտք փախսի նման զէն են գցում: Վաւ ամիսն ի՞նչքան ես ստանում:

— Շատ քիչ, Վասիլիյ Ստեպանիչ, տասն ու երկու մանէթ:

— Իսկ ես տասնուերեք մանէթ ու կէս: Վե՛հ, հիմա քեզ եմ հարցնում, ի՞նչու ես այդքան պէտք է ստանամ: Ասնոնով մենք պէտք է ամենքս էլ հաւասար ստանանք—ամիսը տասն ու հինգ մանէթ ռոճիկ, վառելիք և լուսաւորութիւն: Եթար ասա՛ տեսնեմ, ո՞վ է կարգադրել, որ ինձ ու քեզ տասն ու երկու կամ տասնուերեք մանէթ տան... իսկ դու ասում ես. ապրել կարելի է: Պէտք է իմանաս, որ այստեղ բանը մանէթուկէտում կամ երեք մանէթում չէ, ասենք թէ հէնց տասնուհինգ են տալիս. բայց ի՞նչ փող է տասնուհինգ մանէթը, երբ ուրիշների համար դա 15 կոպէկ էլ չէ:

— Ի՞նչպէս:

— Լսի՛ր ասեմ: Տեսուչն էլ խօ՞ մեզ պէս մարդ է. բայց անցեալ ամիս զնացել էի կայարան: Եյդ օրն ուզատում էին տեսչի գալուն. ես էլ պատահմամբ պէտք է պատիւ ունենայի նրան տեսնելու և պատիւ ունեցայ: Ահա տեսուչն առօք— փառօք առանձին վազոնում նստած հասաւ կայարան. դուրս եկաւ վագոնից կանգնեց տախտակամածի վերայ, և այնպիսի աչքով նայեց չորս կողմը, որ կարծես թէ այնտեղ եղողները մարդիկ չէին... Բայց է՛հ. ի՞նչ եմ երկարաշնորհում... միեւնոյն է ես այստեղ երկար մնացողը չեմ, կգնամ, կհեռանամ այստեղից:

— Ի՞նչ ես ասում, եղբայր, ո՛ւր պէտք է գնաս: Ի՞նչու Ասածու տուածից փախչում ես. եղածը ձեռքից թողնում ես: Իս տեղ, ինչ որ է, փառք Երէն, քեզ համար տուն ունես, չես միտում, քիչ—միչ էլ հող կայ ձեռքիդ, կինդ էլ աշխատաւոր կին է...

— Հող կայ ձեռքիս. պէտք է տեսնես թէ ինչ հող է: Չոր ու ցամաք անապատ:

Մի կանաչի երես չես տեսնիլ այնտեղ: Պարնան կազամբ ցանեցի: Բայց էն էլ երկաթագծի վարպետը տախահան արաւ: Տեսաւ որ կազամբ եմ ցանել սկսեց դռալ. «Այս ի՞նչ բան է, ի՞նչ իրաւունքով, ի՞նչու առանց յայտնելու, առանց իրաւունք խնդրելու: Այս բոպէիս դուրս տալ բոլորը, ոչ մի հատ չթողնել զեանի մէջ: Հարբած էր, եղբայր, երեսից արաղի դառնութիւն էր թափուում: Մի ուրիշ օր կարելի է խկի ոչինչ էլ չասէր. բայց այս անգամ Աստուած գլխին խռով էր կացել: Վատաղած դռաց, «երեք մանէթ էլ տուգանք»:

Վասիլին յանկարծ լռեց, չեբուխը դրաւ բերանը խոր քաշեց ու կամացուկ ձայնով ասաց. — Հէնց էսա արիւնն աչքս էր կոխել մի ծպտուն էլ, որ հանէր, պէտք է տեղն ու տեղը շանսատակ անէի:

— Ի՞, հարւան, ի՞նչ տաք բնաւորութիւն ունես:

— Չէ, եղբայր, այստեղ տաքութեան բան չկայ. ինչ ասում եմ՝ ճշմարիտ եմ ասում, արդարացի եմ ասում: Բայց միւսնոյն է այդ կարմրուէին իմ ձեռքից չի պրծնիլ. դժուարն ընկնի հէնց իրան կայարանապետին կգանգատուիմ, տեսնե՞ք էն ժամանակ ի՞նչ կանի:

Եւ արդարեւ Վասիլին իւր ասածը կատարեց. զանգատուեց:

Մի անգամ Պետերբուրգից բարձրաստիճան հիւրեր պէտք է անցնէին այդ ճանապարհով. կայարանապետը դեռ երեք օր առաջ սկսեց ճանապարհն աչքի անցնել. ամեն տեղ ման գալ, նայել, կարգադրութիւններ անել, որպէս զի մինչև հիւրերի զաւն ամեն ինչ կարգի բերուած լինի: Երկաթագծերի ոլորակներն ամրացրին, զերանները մէկ-մէկ անդղեցին, արանքներում աւաղ ածեցին, հաւասարեցրին ճանապարհի երկաթասիւնները ներկեցին, երկաթագծերը կտրոյ ճանապարհները

դեղին աւազով ծածկեցին Լայլն: Վրացի ծեր պահապանի կինը իւր պառաւ մարդուն անգամ դուրս քաշեց տնակից և ստիպեց, որ ճանապարհի խոտն ու մացառները պոկոտի: Սեմեօնն ամբողջ շաբաթ բանում էր. ամեն ինչ կարգի բերեց, իրեն էլ շնորհքի զցեց. հագի բաձկոնը մաքրեց կարկատեց. խիկ կրծքին կպցրած պղնձէ կտորը աղիւսի մանրունքով այնքան սրբեց, որ ոսկու պէս պլպլացրեց: Ենդադար աշխատում էր և Վասիլին: Այսարանապետը դրեպնայով էր ման գալիս ճանապարհը տնդղելու: Չորս բանուորներ կոթն էին պտտում, անիւները վզողում էին և դրեղինան թռչում էր նետի պէս: Մի ժամուայ մէջ քսան վերստաչափ ճանապարհ էր գնում: Եւհօ նա վզվալով եկաւ Սեմեօնի տնակի մօտ կանգնեց. Սեմեօնն իսկոյն մօտ վազեց և կայարանապետի հարց ու փորձին մէկ-մէկ պատասխան տուաւ: Այսարանապետն ամեն բան կարգի դտաւ:

— Վու Վաղուց է այստեղ ես. հարցրեց կայարանապետը:

— Մայիսի երկուսից, ձերդ աղնուութիւն:

— Շատ լաւ, ապրես: Իսկ հարիւր վաթսուն ու չորս համարում ո՞վ է:

Երկաթադծի վարպետը, (որ նոյնպէս կայարանապետի հետ էր) պատասխանեց.

— Վախիլի Սպիրիդով:

— Սպիրիդով, Սպիրիդով... Ը՞րբ դա այն Սպիրիդովն է, որ անցեալ տարի ձեր նկատողութեան տակ էր ընկել:

— Եյո, հէնց նա ինքն է:

— Լաւ, տեսնենք այժմ Վասիլի Սպիրիդովին: Վէհ, առանջ:

Բանուորները ձեռք առան կոթն ու սկսեցին պտտել դրեղինան առաջ սլացաւ: Սեմեօնը նայեց նրանց ետևից և մտածեց: «Հիմա էլ հարեանիս ջանին կընկնեն»: Երկու ժամ անցած Սեմեօնը գնաց իւր սովորական շրջան անելու, յանկարծ տեսնում է մէկն հեռուից կարծես գլուխն սպիտակ շորով փաթաթած, փոսից դուրս դալով ճանապարհով առանջ է գալիս: «Նայեց, նայեց» տեսաւ դա Վասիլին էր, ձեռքին փայտ բռնած, ուսին մի փոքրիկ կապոց, թուշն էլ թաշկինակով կապած:

— Հարեան, էդ ուր, ձայն տուաւ Սեմեօնը:

— Վասիլին բոլորովին մօտ եկաւ: Նրեանք գոյն չկար պատի պէս սպիտակելէր, աչքերը վայրենի արտայայտութիւն էր ստացել: Խօսել սկսեց— ձայնը դողում էր:

— Պհում հմ քաղաք՝ Մոսկուա... վարչատուն...

— Վարչատուն... Այ թէ բանն ինչումն է: Ուրեմն դանգատի ես գնում: Եւ, Վասիլի Ստեպանիչ, դադար տուր, մոռացիր...

— Մոռանամ, ոչ կըլայր, չեմ կարող. այժմ էլ ուշ է մոռանալ: Տեսնում ես նա ուղղակի երեսիս խփեց արիւն-լուսւոյ արաւ: Զէ քանի կենդանի եմ չեմ մոռանալ, էգպէս չեմ թողնիլ:

Սեմեօնը բռնեց նրա ձեռքից ու ասաց.

— Լսի՛ր խօսքիս, կըլայր, թող դու այդ դանգատը հաւատացնում եմ, որ ոչինչ օգուտ չես ստանալ:

— Օգուտս ո՞րն է, ինքս էլ զիտեմ, որ ոչինչ օգուտ չեմ ստանալ, բայց պէտք է, կըլայր, ձգմարտութիւնն աշկարայ անել. թող ոչինչ օգուտ չունենամ:

— Բայց մի պատմիր ի՞նչպէս կըլաւ, ի՞նչեց սկսեց:

— Ինչեց պէտք է սկսուէր... Այսարանապետը վայր եկաւ իմ տնակի մօտ, նայեց— տնդդեց, ներս մտաւ և խրճիթը ամեն բան կարգին դրաւ: Նստաւ զիտէի, որ ինձ ամենից խիստ պէտք է քննէր, դրա համար էլ ամեն բան կարգի էի բերել, ոչինչ աչքից չէի թողել: Հէնց որ կայսարանապետը պատրաստուեց ճանապարհուելու եւ իմ գանգատով առաջ անցայ: Եգ գանգատը լսելն ու նրա կրակ կտրելը մին եղաւ, սկսեց գոռալ, գոռոռալ, «Այստեղ կառավարութեան կողմից քննութիւն է նշանակուած. այս պէտք է անեն, այն պէտք է տնեն. իսկ դու քո բանջարանոցի մասին ես գանգատ տալիս: Եգուց միւս օր այստեղ գաղտնի խորհրդականներ են գալու, իսկ դու քո կաղամբի գարդոնմն ես»: Նստաւ չկարողացայ համբերել, կըլայր, խօսքին պատասխան տուի, ոչ թէ մի անպատիւ խօսք ասացի, ոչ, բայց իմ ձէն հանելը նրան անպատիւ թուաց և շուտ եկաւ էնպէս կայրեց, որ աշխարհն աչքիս մթնեցաւ... Բայց ես քար կտրած կանգնած էի. կարծես հէնց այդպէս էլ պէտք է լինէր, հէնց դրան էլ արժանի էի: Նրբ գնացին

նրանք, ես նոր ուշքի եկայ, երես լուացի և ճանապարհ
ընկայ:

— Հապա քո տնակը:

— Կինս մնաց այնտեղ: Ոչինչ հաղայի՛ն կ'կենայ... Բայց
է՛հ, նրանց էլ նրանց ճանապարհն է՛լ... Վասիլին վերկա-
յաւ գնալու:

— Մնաս բարով, Բվանի՞ց: Չեմ խմանում վարչատուներ
կրգանեմ թէ չէ:

— Միթէ՞ ոտով պէտք է գնաս:

— Կայարանում կը խնդրեմ, որ ապրանքակիր գնացք
նստեցնեն: Լգուց Մոսկուա կ'լինիմ: Հարեւանները մնաս բարե-
ասացին-իրար: Վասիլին գնաց և այդ օրից երկար ժամանակ
էլ չերևաց: Կինն էր նրա տեղ աշխատում: զիշեր ցերեկ չէր
քնում: Խեղճը հալումաշ եղաւ մարդուն սպասելով. բայց
Վասիլին չկար ու չկար: Երեք օրից յետ բարձրաստիճան
հիւրերն անցան, սակայն Վասիլին էլ չերևաց: Վրայ չոր-
րորդ օրը Սեմեօնը պատահեց նրա կնոջը, տեսաւ խեղճի աչ-
քերն արտասուքից կարմրել, ուռել են:

— Մարդդ չեկաւ. հարցրեց նա:

Կինը ձայն չհանեց. ձեռքը յուսահատ շարժեց և քայլերն
ուղղեց դէպի անակը:

Սեմեօնը դեռ մանուկ ժամանակից սովորել էր եղեգներից
շուէիներ շինել: Բստակում էր եղեգնի միջուկը, ուր հարկաւոր
էր ծակեր էր բաց անում, ծայրին էլ լիզուակ էր դնում ու
այնպիսի մի կարգին բան էր դուրս բերում, որ ինչ ուղենայիր
վերան կարող էիր ածել: Ազատ ժամերին նա ահագին քա-
նակութեամբ շինոտում էր այդ շուէիներից և ապրանքակիր
գնացքների վերայ ծառայող ծանօթ կոնդուկտորների ձեռքով ու-
ղարկում էր քաղաք ծախելու: Հաար կրկու կոպէկով ամենքն
էլ առնում էին: Բննութիւնից (ревизия) երեք օր յետոյ՝ Սե-
մեօնը կնոջը թողեց տանը, որ վեց ժամին անցնող գնացքին
դիմաւորէ. իսկ ինքը դանակն առնելով գնաց անտառն, որ
շուխայուններ կտրտի: Սա հասաւ իւր մասի վերջը, այնտեղ
ճանապարհն ուղղակի ծռուում էր դէպի անտառը: Յաճ գա-
լով կրթագծերից սարի տակով դիմեց դէպի անտառ: Ահա

վերստի վերայ կար մի մեծ ճահճի՞, որի մօտ բնեում էին նրա շուխացունների համար ամենալաւ թփեր: Սեմեօնը բաւականին կարատեղ իւր ուզած շուխացուններից, խուրձ կապեց և կոնա-տակն առած վերադարձաւ տուն: Անցնում էր անտառով, ա-րեւն արդէն խոնարհուել էր, չորս բոլորը մեռելութիւն էր տի-րում, միայն լսուում էին թռչունների կամացուք ճլլոցը և ոսնների սակ կոտրատուող ցախերի ճրթճրթոցը: Սեմեօնը մի քիչ էլ առաջ գնաց և ահա հեռուից նրա աչքովն ընկաւ երկաթագիծը: Սակայն նրան թուաց թէ էլի մի ինչ որ ձայն է լսում, կարծես թէ մի տեղ երկաթը երկաթի էին խփում: Սե-մեօնը քայլերը շտապեցրեց: Այդ միջոցներում նրա մասում նորոգելու ոչինչ չկար: «Ի՞նչ պէտք է լինի այս», մտածում էր նա: Ահա նա դուրս եկաւ անտառից, նրա առջև բարձրանում էր երկաթուղու զառիվայրը: Ուշի ուշով նայեց-տեսաւ վե-րեւում երկաթագծի վերայ նստած է մի մարդ և ինչ որ ա-նում է: Սեմեօնն սկսեց կամաց կամաց բարձրանալ դէպի նա. նա մտածում էր. «Երևի պտուտակները գողանալու է եկել: Ահա մարդը վերկացաւ իւր տեղեց, Սեմեօնը տեսնում է, մարդու ձեռքին լինդ կայ: Ահա նա լինգը ըէլսի տակովը տուաւ և ամենայն ուժով հրեց մի կողմ: Սեմեօնի աչքերը սևացան, ուզեց գոռալ չկարողացաւ: Սեմեօնը պարզ տեսաւ, որ դա Վասիլին էր, վազեց վերեւ, իսկ նա լինգն ու բալանիքը ձեռ-քին գլորուելով գնաց ցած:— Սեմեօնը սարսափած սկսեց կանչել:

— Վասիլիյ Ստեպանիչ, Աստուածդ սիրես վերադար-ձի՛ր, բեր այստեղ լինգը, ըէլսը իւր տեղը դնենք, ոչ ոք չի խմա-մանալ: Վերադարձի՛ր աղաչում եմ, մեղքի տակ մի՛ ընկնիլ:

Սակայն Վասիլին չվերադարձաւ, գնաց անտառ: Սեմեօնը քար կտրած միտց կանգնած տեղահասն արած ըէլսի մօտ: Չեւքն ու ոտքը թուլացան, իւր շուխացիների կապոցը վայր դրեց ձեռքից: Շուտով պէտք է անցնէր գնացքը և այն էլ ոչ թէ տպրանքակիր գնացքը, այլ մարդակիրը: Ի՞նչ անէր, ի՞նչ-չով կանգնեցնել նրան, ոչ զրօշակ կար, ոչ էլ ըէլսը իւր տեղը դրելու հնար: Մերկ ձեռքով հո՞ չէր կարելի պտուտակներն ամրացնել: Պէտք էր վազել անտիր, անպատճառ պէտք էր վա-զել որևէ գործիք բերելու: Ո՛հ Աստուած, դու օղնական ե-ղի՛ր:

Սեմեօնը վազում է դէպի տնակ. նրա շունը կտրուում է. ոտները ծալվում են, քիչ է մնում վայր ընկնի. բայց, էլի վազում է: Մինչև տնակը շատ քիչ էր մնացել, ընդամենը հարիւր սաժէն. բայց ահա նա յանկարծ լսում է դործարանի սուլիչի ձայնը: Ուրեմն վեց ժամն է: Իսկ վեցից երկու րոպէ անց պէտք է անցնի գնացքը: Ո՛հ Արարիչ, դու աղափր անմեղների կեանքն այդ անբաղդութիւնից: Սեմեօնի աչքին պարզ նկատուում է դժբաղդութեան սոսկալի տեսարանը: Ահա՛ շոգեշարժի ձախ անիւը կաշտում է բէլսի կտորին, ցընցում է, սկսում է ցրիւ տալ գերանները, փշրել-ջարդ ու կտոր անել: Ահա վագոնները երկաթադժերից դուրս գալով իրար են դիպչում. տասնումէկ սաժէնաչափ բարձրութիւնից ներքեւ են թափում. իսկ վագոններում, երրորդ կարգում լցուած են մարդիկ. կին, երեխայ, ծեր, ջահիլ... բայց նրանք այս րոպէիս հանդարտ նստած ի՞նչ դիտեն թէ ի՞նչ թշուառութիւն է սպասում իրանց: Ո՛, Աստուած, դու ինձ մի միտք շնորհիր, մի ճանապարհ ցոյց տուր... Ոչ անկարելի է անտէն հասնել և ժամանակին դարձեալ վերադառնալ, անկարելի է...

Եւ Սեմեօնը անակիւն չհասած շուռ եկաւ ու աւելի ևս արագ վազեց դէպի տեղահան արած բէլսը: 'Նա վազում էր գժուածի պէս, ինքն էլ չիմանալով թէ ի՞նչ պէտք է լինի: Ահա նա հասաւ տեղահան արուած բէլսին: Այնտեղ թափուած են շուփացու ոստերը: 'Նա կռացաւ վերցրեց մէկ հատ նրանցից, ինքն էլ չիմանալով թէ ի՞նչու համար: 'Նա առաջ վազեց: 'Նրան թուում էր թէ գնացքը մօտենում է. հեռուից լսում է սուլոցի ձայնը. լսում է թէ ինչպէս բէլսերը կամացուկ և մեղմ դժգոթում են. էլ առաջ վազելու ոյժ չկայ. նա թուլացած կանգնեց սոսկալի տեղից հարիւր սաժէնաչափ հեռաւորութեան վերայ և խելագարի պէս սկսեց դէս ու դէն նայել: Յանկարծ մի միտք լոյսի պէս փայլեց նրա ուղեղում: 'Նա վերցրեց զխտրիկը, հանեց նրա միջից չթէ թաշկինակը, կոշիկ ճիւղիցն էլ դանակը հանեց, ապա աչքը երկինք գցելով խաչակիցեց երեսը. «Տէր, դու օդնական եղիր ինձ»:

Եւ նա դանակը խփեց ձախ թեւի արմունքից բարձր ամենափափուկ տեղին: Տաք արիւնը սկսեց շշռալով թափուել: 'Նա թաշկինակը թրջեց իւր արիւնի մէջ, փռեց, կա-

պէց փայտի ծայրին և իբրև կարմիր դրօշակ առաջ պարզեց:

Ամեօնը գունաթափ կանգնած է և շարժում է իւր դրօշակը: Ահա գնացքը երևաց: Ո՛հ, Տէր Աստուած, եթէ յանկարծ մեքենայետը չտեսնի նրան, ի՞նչ կլինի ճանապարհորդների հալը... Իսկ արիւնը շարունակ հոսում է Ամեօնի թևից: Նա վէրքը սեղմում է կողքին, ուղղում է կապել վէրքի բերանը. բայց ի վեր՝ արիւնը չի դադարում. երևում է, որ շատ խորն է վերաւորել: Իսկ ճ՛ Ամեօնը արիւնաքամ է լինում. ահա նրա գլուխն սկսում է պտտուել. աչքերը պղտորվում են, յետոյ բոլորովին մթնում են, տկանջները սարսափելի թշնամ են, նա էլ չի տեսնում գնացքը, էլ չի լսում նրա ձայնը: Նա միայն մի բան է մտածում. «ոտքիս վրայ չեմ դիմանալ—վայր կընկնեմ, դրօշակը կընկնի գետին, գնացքը կանցնի մօտովս... Ո՛հ, Աստուած, ողորմած եղի՛ր, ազատիր այս փորձանքից»...

Եւ խեղճն իսկ որ չգիմացաւ ոտքի վերայ, նրա աչքերը մթնեցին, սիրտը նուազեց և դրօշակը ձեռքից բաց թողեց: Սակայն արիւնաթաթախ դրօշակը չընկաւ գետին. մէկի ձեռքն իսկոյն բռնեց նրան և վեր բարձրացրեց, որպէս զի շուտով աչքի ընկնի: Մեքենայետետը նկատեց կարմիր նշանը և ամենայն միջոցներով մեղմացրեց գնացքի ընթացքը: Պնացքը կանգ առաւ:

Ճանապարհորդները վախեցած դուրս թափուեցան վազոններից և խոնուեցին մի տեղ. տեսնում են երկաթագծի մօտ ուշաթափ և արիւնշուտայ ընկած է մի մարդ. իսկ մի ուրիշը կանգնած է նրա կողքին արիւնաներկ փալատը ձեռքին:—Վասիլլին մի հայեացք ձգեց ճանապարհորդների վերայ ու գլուխը կոխեց, Սապեյէք ինձ, շննջաց նա, ընչոր ևս տեղահան արի:

Ե. ՆՈՒՍՅԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Ահանքի դառնութեան տանջանքի ժամին
Երբ իմ ընկեր սփոփեմ ես քեզ,
Վանի յուսահատ տանջուող քո հոգին
Չէ բեկուած մաշող թախծից դառնապէս:

* * *

Ես արտասուքիս շիթերով ցօղեմ
Վո ճնշուած սրտին տամ մի թարմութիւն,
Եւ քեզի ճնշող շղթան կործանեմ,
Նորից պատճառեմ եւ սէր եւ աւիւն:

* * *

Եւ թող քեզանից վիշտը հեռանայ,
Ստացիր նոր կեանք ցնծայ խնդաղին,
Յոյսդ խորտակուած թող կենդան մնայ,
Մատնուածն անմիտ կեանքի տանջանքին...

Յովհաննէս Մալխասեանց:

27-ն հոկ. 1889 թ.

Եւսեփայ:



Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՆԱՍՐ-ԷԴԴԻՆ ՇԱՀ ՊԱՐՍԻՑ

Անցեալ դարերում պարսից յայտնի շահերից մինը, Հայերին իր հպատակների մէջ որոշելով իբրեւ խաղաղ և օգտաւէտ տարր և կամենալով նորան պաշտպանել պարսիկ ժողովրդի մոլեռանդ մասի յարձակումների դէմ՝ այս հրամանը հանեց.

«Որ այսուհետեւ իմ հպատակներից ամեն մինը մնայ իր դաւանած կրօնի վարդապետութեան մէջ և ոչ ոք չհամարձակի հալածել Հայերին, որովհետեւ նոքա բոլորն էլ մեր հպատակներն են. թող նոցա մարմինը ծառայէ մեզ, իսկ հոգին կառավարի նա, ով հոգիներն է դատում»:

Շահի այս իմաստուն հրամանը, որ պարսից Հայերին երկար ժամանակ ազատեց պարսկական ամբոխի մոլեռանդ հալածանքներից, միանգամայն իր ընդարձակ գործադրութիւնը դառաւ Իրանի ներկայ լուսաւոր իշխողի օրով, որը միշտ մասնաւոր ուշադրութիւն է դարձնում իր հպատակ Հայերի վերայ և նոցա վեհանձնօրէն հովանաւորում:

Նորա բարձրաստիճան պետական անձինքներից շատերը Հայեր են, և պարսկական դիպլոմատիկական կարեւոր պաշտօններում Նւրոպիոյ մէջ մեծ մասամբ դարձեալ Հայերն են գտնվում:

Նասր-Էդդին Շահը ծնունդ է ապրիլի 24-ին, 1831 թուին, հեռեւագէտ նա այժմ 59 տարու հասակում է:

Վեռ ևս 6 տարեկան հասակում, 1837 թ. նա իր հօր կողմից ուղարկուեց Նրեան դիմաւորելու Նիկողայոս I կայսեր, որը փաղաքէց նորան և շնորհեց «Անդրէյ Պրովովաննի» ռուսական բարձրագոյն շքանշանը:

1848 թ. նա իշխանութեան ղեկը ձեռքը առաւ իրեն ազգականներին յաղթելուց յետոյ, որոնք ուզում էին յափշտակել նորա ձեռքից պարսից գահը:

Շահը ունի ուժեղ բնաւորութիւն, գովկել վճռողականութիւն և զարմանալի հաստատ կամք, որոնք նա մասամբ

զարգացրել է սրտորդութեան շնորհիւ, որ անչափ նա սիրում է:

Մեծ խելքի և հասակացողութեան տէր լինելով, նա գեոմանկական հասակից ըմբռնել է իր տէրութեան մէջ եւրոպական քաղաքակրթութեան բարիքները մացնելու անհրաժեշտութիւնը և այս նպատակով, արհամարելով շիտի հոգեւորականութեան ընդդիմադրութիւնը, 1873 թ. առաջին անգամ մի ճանապարհորդութիւն արեց Նւրոպա, որը կրկնեց և 1878 թ: Այս ճանապարհորդութիւնների արդիւնքը եղաւ բարենորոգումների մի քանի ներմուծումն Պարսկաստանում, օրինակի համար հարկերի վարձու տալու սովորութիւնը վերջացրեց, զօրքի մի մասին սկսեց եւրոպական զինուորական կրթութիւն տալ, մայրաքաղաքը զարդարեց եւրոպական նւրագոյն շինութիւններով, գաղի և մինչև անգամ էլէքարական լուսաւորութիւն մտցրեց և այսպէս շատ բարենորոգումներ:

Շահնշահի վերջին ճանապարհորդութիւնը Նւրոպայում, 1889 թիւին, անշուշտ, մի կարգ բարենորոգումների գոլ է բանալու, որոնք զգալի կերպիւ կբարձրացնեն ժողովրդի նիւթական և բարոյական վիճակը: Սոցա բարերար ազդեցութիւնից կօղտուին անտարակոյս և Շահնշահի հպատակ հայերը, որոնք ապրում են Ատրպատականում, Սալմաստում, Ուրմի, Սպահանում և Պարսկաստանի այլ և այլ կողմերում:

Թէև Շահնշահ ստացել եւրոպական կանոնաւոր կրթութիւն, բայց շնորհիւ իր բնական մեծ ընդունակութիւնների, հետամուտ ուսումնասիրութեան և ճանապարհորդութիւններին, բաւականաչափ ուսումնասիրել է Նւրոպիոյ պետութիւնների պետական կազմակերպութիւնները, նոցա օրէնքները և հաստատութիւնները, որոնցից և նա ընտրում է այն, որը նորա տեսակէտով օգտակար է իր հպատակների զարգացման համար: Ահա շատ բաներ կարելի է սպասել այս լուսաւոր արևելեան Կայսեր իմաստուն կառավարութիւնից, որի նպատակն է իր հպատակ ժողովրդի բարօրութիւնը:

Նասր-Ազդինը յայտնի է, որպէս լաւ պարսկադէտ և միևնոյն ժամանակ բանաստեղծ: Նորա զրականական աշխատութիւնների մէջ, յայտնին մասնաւորապէս նորա յիշատակաբանները, որոնք հրաաւարակած է Նւրոպայում կատարած իւրաքանչիւր ճանապարհորդութիւններից յետոյ: Այս յիշա-

տակարաններում աչքի է զարնում նորա դիւրաթեք խելքը և
հերոսական ժողովրդների կեանքի ու հաստատութիւնների
էութիւնը ըմբռնելու ընդունակութիւնը:

Եւելորդ չենք զանում այստեղ քաղուածք անել «Արարատում»
տպուած 'Նորին Ս'եծութեան, 'Նասր-Էգգինի Էջմիածնայ հռչա-
կաւոր մենաստանը և 'Օսյրադոյն Պատրիարք և ամենայն Հայ-
ոց Կաթողիկոս, Մակար Ե-ի այցելութեան նկարագրութիւնից:

() գոտոսի՝ 28-ին հեռագիրը լուր բերեց, որ 'Նորին Ս'ե-
ծութիւն 'Նասրէգգին Ըշահ Պարսից 29-ին ժամանելու է Լըւան
և 30-ին այցելելու է Ս. Ըթուր: Ս'եհափառ Հայրապետն իսկոյն
Վեր. 'Ներսէս և Ս'ամբէ սրբազան եպիսկոպոսներին Պ. Պ.
պրօկուրօր Կ. Իւզբաշեանցին և Ուուբէն Ս'ելիք Ըդամեանցին
ուղարկեց ընդառաջ Լըւան, սր շնորհաւորեն 'Նորին ()ծութեան
կողմից 'Նորա շնորհաբեր և յաջող դարձն Լըւորպայից և հրաւի-
րեն ի Ս. Ըթուր: 29-ին երեկոյեան 7 ժամին 'Նորին Ս'եծու-
թիւնը ժամանելով Լըւան բարեհաճում է ընդունելու Ս'եհա-
փառ Հայրապետի պատգամաւորներին: 'Ներսէս սրբազանը հետե-
ւալ խօսքերով է ողջունում 'Նորին Ս'եծութեան. «Ս'եր Ս'ե-
հափառ Հայրապետը, Հայոց ազգի Ընդհանրական Կաթողիկոսը
լսելով և ի սրտէ ուրախանալով Ձերդ Ս'եծութեան առողջու-
թեամբ և յաջողութեամբ վերադարձն Լըւորպայից՝ շտապեց ու-
ղարկել մեզ օր առաջ շնորհաւորել Ձեր Ս'եծութեան բարի վե-
րադարձն և ընդ նմին խոնարհաբար խնդրել ի կողմանէ 'Նորին
()ծութեան, որ Ձեր շնորհաբեր այցելութեամբը պատուէք մեր
հնազարեան Ս'այր Ըթուր և 'Նորին Ս'եհափառութիւնը»: 'Նո-
րին Ս'եծութիւնը բարեհաճել էր պատասխանելու, «Ըսացէք
Ս'եհափառ Կաթողիկոսին. վաղը Ըստուծոյ շնորհիւ կտեսնուենք»:

Ըռաւօտեանից թէ Ս'այր Ըթուրում և թէ Ս'աղարշապատի
փողոցներում մեծ կենդանութիւն էր նկատվում: Ս'երձակայ դիւ-
ղերից մեծ բազմութիւն ժողովուել էր հանդիպելու Պարսից Ըշա-
հին, ցանկալով յայտնելու իրանց շնորհակալութիւնն, որ 'Նորին
Ս'եծութիւնը բարեհաճել էր յարգել իւր այցելութեամբ թէ Ս'այր
Ըթուր և թէ Ս'եհ Հայրապետին ազգիս: Եկեղեցւոյ զանգակ-
ների հնչումն աւետեցին Ըշահի մերձենալը: Ճ'իշտ կէս օրից
կէս ժամ առաջ 'Նորին Ս'եծութեան կառքը կանգնեցաւ հիւսի-
սային դրան առաջ:

Լստեղ Լթուիս միաբանք շուրջառազգեստ, երգիչները շապիկ հագած և ճ'եմարանի աշակերտք վերարկուններով սպասուով էին Բարձր հիւրին: Կորին Սեծուծիւնը իջաւ կառքից և մտաւ ամպհովանու տակ, որ կրում էին չորս աշակերտք ճ'եմարանի ժամաշապիկ հագած և երկուսն էլ առաջը խնկամանները ձեռներին կնդրուկ էին ծխում: Բարձր Սրբաղան Սկրտիչ Լքքեպիսկոպոսը առաջարկելով արծաթեայ ափսէի վերայ աղ ու հաց ողջունեց Կորին Սեծուծեան գալուստը հետեւեալ խօսքերով. «Լստ երկրորդ անգամն է որ Ձեր Սեծուծիւնը բաղդաւորուով է մեր Լթուը իւր այցելութեամբ. միաբանութիւնս ուրախ է Ձեր յաջող վերադարձին երկար ճանապարհորդութիւնից և աղօթող է վասն երկար և առողջ կենաց Ձերոց»:

Ճանապարհը մինչև վանքի գուռը ծածկած էր կանաչ ճիւղերով և ծաղիկներով, իսկ վանքի Տրդատայ զոնից մինչև եկեղեցին և այն տեղից մինչև Սեհարան կարմիր մահուդով և աշակերտք երկշարք առաջնորդեցին Կորին Սեծուծեան դէպի եկեղեցին: Երգիչ խումբը երգում էր այդ հանդիսաւոր օրուան համար մեծ. Պ. Պաւլեանի շարադրած առանձին երգը ի շնորհաբեր գալուստ Կասրէդդին Շահն Շահին Պարսից:

Սեհափառ Հայրապետը Ս. Տաճարի դրան հանդիպեցաւ Կորին Սեծուծեան. Շահն մտերմաբար սեղմեց Կորին (Ծուծեան ձեռքը: Հանդիպումն յոյժ սիրալիր էր: Սեհափառ Հայրապետը շուրջառ գցած և հովուական գաւազանը ձեռին ողջունեց Կորին Սեծուծեան հետեւեալ խօսքերով.

«Փառք Լմենագօրին Լստուծոյ, փառք երկնաւոր Թագաւորին Թագաւորաց, որ ի ձեռն հրեշտակի խաղաղութեան առաջնորդեաց Ձերդ Լքքայական Սեծուծեան ողջամբ վերադառնալ ի կողմանցն Եւրոպիոյ և մեծարել զՍայր Լթուս Հայաստան աշխարհի Ձերով շնորհաբեր գալստեամբ համաձայն անսուտ խոստման Ձերոյ, որ յԵրևան»:

«Եւշանաւոր է օրս այս վասն մեր և մեծ է ուրախութիւնն, որ սփռեալ ծաւալի Ձերով շնորհաբեր գալստեամբ ի հոգիս համայն եկեղեցականաց և աշխարհականաց Հայոց»

«Ի տրիտուր այսպիսի մեծարանաց, զոր ցուցիք մեզ այսօր, զե՞նչ ունիմք փոխարինել, բայց միայն խնդրել յԼմենաբարձրելոյն Լստուծոյ, որպէս զի յաջողեսցէ Ձերդ Լքքայական Սե-

ծուծեան ողջամբ ժամանել ի մայրաքաղաքն ընդհանուր Պարսկաստանի»։ 'Կորին Սեծուծիւնը պատասխանեց, «հոգեպէս ուրախ եմ, որ յաջողեցաւ Լստուծով կատարելով իմ խոստումս տեսնել Իջմիածինն ու Ձեր Վեհափառութիւնը»։ Եւ այս 'Կորին ()ծուծիւնը պատասխանեց, «յոյս եմ տածում, այն մեծ շնորհն, որ այսօր ցոյց տուիք զէպի Ս. Լ. թողս և իմ անձն, կտարածուի Ձերդ Սեծուծեան հպատակ հայերի վերայ ինչպէս մինչև այժմ»։ Պատասխանն եղաւ «Պարսկահայք միշտ Լստուծուծեանց և խնամոց առարկայ եղած են և կլինին»։ Եւ արդմանն էր պ. Վ. Սադատեանցն, որ շապիկ հագած կանգնած էր 'Կորին ()ծուծեան մօտ։

Եւս Եւսը մտաւ 'Կորին ()ծուծեան հետ եկեղեցին, ուր Իջման սեղանի դասի երկու կողմում դրած էին բազկաթոռներ։ Սկսուեցաւ մաղթանքը։ Եւսը յոտընկալս մնաց մինչև մաղթանքի վերջը։ Հանգիստդիրն էր Ս. Լ. թողոյ աւագ լուսարար Երեմիա եպիսկոպոսը։ Սաղթանքից յետ 'Կորին Սեծուծիւնը բարեհաճեցաւ տեսնելու Տաճարի թանգարանը, որից յետ դուրս գալով տաճարից մտաւ ամպհովանու տակ հետն առնելով և 'Կորին ()ծուծեան։ Երգեցիկ խումբը նոյն երգով առաջնորդեց Սեծ հիւրին իւր ուղեկիցներով զէպի վեհարանը։ Բոլորեքեան մօտն ընդունարանն, որտեղից Վեհափառ Հայրապետը 'Կորին Սեծուծեան առաջնորդեց ծաղկեայ դահլիճը, ուր Պարսից արքայից արքայն բարեհաճեցաւ կարճատե խօսակցութիւն ունենալու 'Կորին ()ծուծեան հետ։ Ճոխ նախաճաշ էր պատրաստած թէ Սեծ հիւրի և թէ նորա ուղեկիցների համար։ 'Կորին Սեծուծեան առանձին սեղան էր պատրաստած ծաղկեայ դահլիճում։ 'Կախաճաշից յետ Վեհափառ Հայրապետը գնաց ընդունարան, ուր դուրս եկաւ և 'Կորին Սեծուծիւնն, որ սեղմելով Վեհափառ Հայրապետի աջը 'Կորին շնորհակալութիւն յայտնեց հիւրասիրութեան համար և որովհետեւ որոշեալ ժամը հասած էր, կրկին շնորհակալութիւն առնելով տուեց իւր հրաժարականն, ամենքի վերայ ախորժ տպաւորութիւն թողնելով։ Վեհափառ Հայրապետը ուղեկցեց 'Կորին Սեծուծեան մինչև Տրդատայ դուռն, ուր Վեհափայլ Եւսը կրկին շնորհակալութիւն անելով ինզրեց 'Կորին ()ծուծեան վերադառնալ իւր վեհարան և հանգիստ առնել։ Եւսը մէկ և կիսին 'Կորին Սեծուծիւն նստաւ կառքն և վերադարձաւ իւր բոլոր ուղեկիցներով Երևան։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Ե Ր Ա Ձ.

ԼԵՐՄՕՆՏՕՎԻՑ

Այս օրուայ տօթին Պաղստանի հովտում,
Բնիած էի անշարժ գնդակն իմ կրծքում,
Պեռ բերանաբաց—ծըխող խոր վերքից
Առթ, կաթ հոսում էր արիւն ինձանից:

* * *

Հովտի աւազում միայնակ ընկած,
Լիւրկ ժայռերն էին ինձ շրջապատած,
Ելում էր արեւն և ինձ և ժայռեր
Իսկ ևս քնած էի քնով մահաբեր:

* * *

Երազում տեսի ճրագներ բազում
Հայրենի երկրի ուրախ խնձոյքում,
Օաղկապսակ մատաղ կանայք նստոտած,
Ուրախ զրոյցով ինձանով զբաղուած,


* * *


Բայց ուրախ զրոյցին բնաւ չէր մասնակցում,
Միայնակ մի կին տխուր ու արտում,
Նրա մատաղ հոգին խոր քնում ընկղմուած,
Ինչ էր մտածում՝ զիտէր միայն Աստուած:

* * *

Եւ տեսնում էր նա Պաղստանի հովիտը,
Իւր ծանօթ դիակն ընկած է հովտում,
Նրա կրծքից, ծխում, խանձուում է վերքը,
Սառն արեան կայլակ այնտեղից հոսում:

Մ. Վարդիկեան:







ՓՈԹՈՐԻԿ ԱՋՈՎԵԱՆ ԹՈՎՈՒՄ. ՆԿԱՐ ԱՅՎԱՋՈՎՍԿՈՒ

Հրատ. «Արարա» Հանդիսի:



Fig. 1. A person sitting on a bench.

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Մովսէս Խորենացու հայկական պատմութիւն: Աշխարհաբար
թարգմանեց և լուսաբանեց Խորէն ծայրագոյն վարդապետ
Ստեփանէ: Ս. Պետերբուրգ, տպարան Ի. Սիրօստօգովի. 1889.

8°. երես մը+351+328: Պիւնն է 1 ո. 50 կպ.

Այս աշխատասիրութիւնը մեր ներկայ գրականութեան
մէջ, անշուշտ, ուրախալի երևոյթ է կազմում, որպէս առաջին
փորձ, երևելի պատմահօր հեղինակութիւնը հասարակու-
թեանը մատչելի անելու:

Բարեկից իղձ կազմուած յառաջաբան, հարուստ և մինչև
անգամ չափազանց առատ ծանօթութիւններ, պարզ և դիւրի-
մաց ոճ, առհասարակ ուղիղ թարգմանութիւն. թէև պէտք
է ասել և այն, որ երբեմն սպասածից աւելի բառ առ բառ
արտագրուած է բնագրից. անտարակոյս սորա բնական հե-
տեանքն են, նոր գրականութեան մէջ անգործածելի Հին ձևերը,
զարձուածները և երբեմն իմաստի ցաւալի մթութիւնն:

Յառաջաբանը և ծանօթութիւնները գլխաւորապէս քա-
ղուածներ են աղգային և օտար հայադէաների երկասիրութիւն-
ներից, երբեմն պատահում է և նոյն թարգմանչի ինքնուրոյն
ուսումնասիրութեան արդիւնքը: Յառաջաբանի բովանդակու-
թիւնն է. Ա. Հայեացքներ Հին Հայաստանի արտաքին և
ներքին քաղաքական դրութեան վերայ. այս հայեացքները,
որ արդէն մեծ ընդունելութիւն են գտած պատմական դրա-
կանութեան մէջ, գլխաւորապէս հանուած են հանգուցեալ Ք.
Պատկանեանի գրուածներից. Բ. Մովսէս Խորենացու կեանքը,
դործերը և զանազան հետազօտութիւններ:

Յառաջաբանի ԼՂ-ԽԳ երեսներում թարգմանիչը մի հե-
տաքերբական միտք է յայտնում Մովսէս Խորենացու չորրորդ
գլքի վերաբերեալ. նա ևս զգուշութեամբ հերքում է յի-
շեալ գլքի գոյութիւնը:—Թէև վեղարակիր թարգմանիչը յի-
շում է (եր. ՀԵ), թէ գերմանացի հայագէտ Լատէր Մով-

սէս Խորենացու պատմութեան ճիշտ ու բարեխիղճ թարգմանութիւնն արեւ է, սակայն ինքը, ինչպէս երևում է, ոչ զերմաներէն փոխադրութիւնն է ուսումնասիրել և ոչ պրօֆ. Բաուամբարանէրի անաչառ քննադատական յօդուածը տեսել. Dr. M. Lauer und das zweite Buch des Mōses Chorenazi. Leipzig. 1885. Մովսէս Խորենացու պատմութեան հրատարակութիւնների մէջ, որ թուում է Հայր Խորէն, պակասում են մի քանիսը, զոնեա որոշ կերպիւ չեն յիշուած, ոչ Վ. Խատոն եղբայրներինը, Լօնդօն 1736, ոչ Վ. Կենտրիկանը 1752, ոչ Ս. Պօլսականը, դարձեալ 1752, դարձեալ ոչ Վ. Կենտրիկում 1827 թ. հրատարակուած պատմութեան երկրորդ տպագրութիւնը (էջ 2), թէև Հայր Խորէնին ծանօթ պիտի լինի (էջ 2Բ) Ուխտոնների հրատարակութիւնը, Լօնդօն 1736:

Խօսելով Մովսէս Խորենացու աշխարհագրութեան մասին, թարգմանիչը սխալվում է ասելով, որ նա նախ հրատարակուեցաւ 1683 թ. Մարտէյում, ըստ որում Խորենացու Աշխարհացոյցը առաջին անգամ տպուել է Կոնստանդնուպոլսում 1668-ին:

Ծանօթութիւնների մէջ Հայր Ստեփանէն մի որեւէ մութ հատուած կամ բառ մեկնելու նպատակով առաջ է բերում այլ և այլ հայագէտների տեսակէտները և նոցանից ընտրում է ընտրելագոյնները. նոյն միջոցին է դիմում նա և այն ժամանակ, երբ կատարում է իր բուն և գլխաւոր գործը, այսինքն երբ Մովսէս Խորենացու պատմութիւնը փոխադրում է աշխարհաբար, համեմատելով ռուսերէն, զաղրիերէն, իտալիերէն և այլ փոխադրութիւնները, նա իրեն առաջնորդ է ընտրում աւելի յաջողակ թարգմանութիւնները և երբեմն շնորհիւ Լամբրոնացու ծանօթ ձեռագրի և ինքնուրոյն ուսումնասիրութեան յաջողում է պարզապէս փոխադրել այն, ինչ որ ուրիշից մեկնութեամբ մութն էր երևում: Օրինակի համար մատնացոյց ենք անում հետևեալ զրուցները. Ա. (ծան. 18). ԺԲ (ծան. 57 և 58). նոյնտեղ (ծան. 70). ԺԵ (ծան. 52). ԺԶ (ծան. 98). ԺԷ (ծան. 100), ԻԲ (ծան. 122), ԻՎ (ծան. 134), Բ, ՊԹ (ծան. 393^ա) և այլ եղծեալ և մութը տեղերի ընդունելի մեկնութիւններ:

Սակայն մենք չենք հասկանում, թէ ի՞նչու երբեմն Հայր Խորէնն աւելորդ պարզաբանութիւններ է առաջ բերում և դո-

ցանով ամբողջ երեսներ լցնում, երբ նորա ոչինչ չեն պարզում և պարզելու էլ կարիք չկայ, քանի որ առանց այդ պարզաբանութիւնների էլ բոլոր պարզ ու հասկանալի է:

Մասիսի յատկացուցիչ ապա քառը մեկնելով (եր. 39—45 ծան. 68), Թարգմանիչը մի քանի հայագէտների ընդարձակ առասպելաբանական և ուրիշ տեսակէտներն է առաջ բերում, որոնց վերայ հիմնուելով կամենում է մի կըրակացութիւն անելու, սակայն վերջ ի վերջոյ այն սխալ հետեւանքին է դալիս, որ իբր թէ Վ. Նանգլուայի և Նաուէրի Թարգմանութիւնների մէջ, առաջին՝ libre և միւսի՝ frei մեկնութիւնները ձիշտ չեն: Ապա իսկ և իսկ այն դերն է կատարում Մասիս բառի մօտ, ինչ դեր որ խաղում է Հոմերոսի երկերում Ժովբառի հետ յաճախ գործածելի—Ժերանի բառը, այսինքն ապա բառը—epitheton ornans-է (մշտական և զարդարող ածականն է) Մասիս պէս բարձր և ընդարձակ լերան: Այս իմաստով և այժմ հասկացվում է գերմաներէն der freie Berg. Պարսիկների հին զրադաշտական գրութիւններում (Վենդիգադ XIX, 90—93) լերան հետ գործածուած asha—qâthra բառն, կրթ աշխի կամ ապա բառով են փոխադրում, միայն այն ժամանակի լեզուագէտների ասելով, իսկական և բուն իմաստն է յայտնում: Նոյն ապա բառը գործ են ածում և պարսիկ բանաստեղծները ու նոցա հեռուողները օտար ազգերի մէջ, որպէս մշտական յատկացուցիչ կիպարիս բառին, կրթ նկարագրում են այդ ծառի փառահեղ, ազատ ու անարգել աճումը, նոյն ինքն երևելի քերթողահայրն Մասիս լերանը նրա հսկայաձև բարձրութեան համար, որ իր կատարով անխափան և արձակօրէն նայում է վեր, ապա կոչեց:—

Եւ գգեցոյցանողս եւր զյեւէս ի զաւանայ Բանանայոց (Բ, Լ), Հայր Խորէնը փոխադրում է՝ երան յեւանայեւ հագցնող նշանակո՞ւ է Քանանայիների տերւոյնից: Ուրեմն Քառմագարանէրի տուած ընդարձակ պարզաբանութիւնը, որ նորա վերոյիշեալ յօդուածի 11—15 երեսներն է բռնում՝ միանգամայն անտես է առնուած մեր Թարգմանիչի կողմից: Բազմազգի հայագէտը հիմնաւոր կերպով ապացուցանում է, որ յեւէի տակ, եթէ միայն ընդօրինակողն վրիպակը չէ, պէտք է հասկանալ յատուկ անուն և երբէք ձեռնոց:

Մէկ ուրիշ գծուարին հատուածի (Առ. Բ. ծան. 8) մեկ-նութիւնները առաջ բերելով, Հայր Խորէնը խորին լուսթեամբ է անցնում Ալիշանի ամենից աւելի հաւանական բացատրութիւնները, թէպէտ նոյն Բառամգարտէր նրան յիշում է թարգմանչին ծանօթ մէկ այլ յօդուածում (Ueber das Buch. «die Chrie», 1886. եր. 489).

Գրքի վերջում (223—338 եր.) ղետեղուած են. Յաւելուած ներ. ա) Մովսէս Խորենացու Հայկական Պատմութեան Զորրորդ կարծված զրքից նոր գտնված հատուած, ի. Ալիշանի հրատարակութիւնից արտատպուած բ) ին Հայաստանի համառօտ աշխարհացոյց գ) ժամանակագրական ցուցակ. դ) Վսե-նոփոնտի Աիւրոպէգիայից հատուած Տիւրքան Ա-ի 'և ե) քաղուածք Բիսութունի բեւեռագիր արձանագրութիւններից.

Առաջին զիրքը և նորա վերաբերեալ ծանօթութիւնները քննելուց յետոյ՝ մենք մնացեալ մասերը միայն տեղ տեղ թերթեցինք. Մենք շարունակում ենք ուղղութեամբ կարգալ Հայր Խորէնի հրատարակութիւնը և եթէ հանդիպենք թերի կամ արժանի տեսակէաների, մեր նկատողութիւնը կ'շարունակենք «Արաքսի» յառաջիկայ գրքում *):

Ignazio Guidi. La cronica siriana di Michele I (Note Miscelanee, Roma 1889. 8° էջ 6—8).

Ինչպէս յայտնի է, դարերից ի վեր պատմական գրականութեանը մեծ ծառայութիւն են մատուցել ասորական լեզուից թարգմանուած հայերէն թարգմանութիւնները, որոնք մինչև այսօր բնագիրների անյայտութեան պատճառաւ առաջին և միակ

*) Նշան. Հայր Խորէնը Խորենացու պատմութիւնը երկրորդ աւետարան է անուանում (յառ. ին), ուստի և այսպիսի մի նուիրական գրքում, թէ ո՞րքան աննպատակ է («Յովնանեանի յիշատակին») նուիրած տողերի մէջ անձնական հաշիւների տեղ տալ, պարզ է ինքն ըստ ինքեան: Վոյնպէս չենք հասկանում, ի՞նչու Յովնանեանի նկատմամբ գործ է ածուած մի ածական—Երջանկայիշատակ, որը միայն բարձրաստիճան հոգևոր գլուխների յիշատակին են սահմանուած:

աղբիւրն էին համարվում: սակայն այժմ ըստ երևոյթին հասել է անաչառ քննութեան ժամը ասորական լեզուից արած հայերէն թարգմանութիւնների համար, ըստ որում ներկայումս արդէն երեան են գալիս ասորական բնագիրները, որոնց լոյս աշխարհ դառնալը հայերէն թարգմանութիւնները անշուշտ պիտի ենթարկուին անաչառ դատավճռի:

Մինչև այժմ ոչ ոք չէր ուրանում հայերէն թարգմանութիւնների արժանիքը, բայց Միքայէլ Հայրապետի օրինակի դանուկելուց յետոյ, Բնացիօ Գլիլիի կարծիքներին հետևելով, պէտք է ենթադրել, որ նորա հայ թարգմանիչը եթէ անբարևտրիք չէր, գոնէ անպատրաստ էր թարգմանելի ծանրակշիռ դործին և մինչև անգամ պատմական գիտելիքներից զուրկ մի անձն էր:

Այստեղ ահա մէջ ենք բերում և Բտալացի արևելագէտի խօսքերը ասորական սկզբնագրի դանուկելու մասին: «Առհայեցի հռոմէագաւան ասորիների եպիսկոպոս՝ գիտնական վարդապետ Նփրիմ Ռաբուլա Ռիհմանի, երկարամեայ անդադար խուզարկութիւններ անելուց յետոյ, վերջապէս յաջողեցաւ դանել Արևելքում Միքայէլ Ասորու բնագիրը և, որ աւելի կարևորն է, նորանից մի ճիշտ օրինակ ձեռք բերել:

«Մօնախնօր Ռիհմանիի ձեռքով արած գիւտը մեծ ուշադրութեան արժանի է, որովհետև թէև նախ կարծում էին, որ թերևս Միքայէլ Ասորու ամբողջ դործը պարունակում է հայերէն թարգմանութիւնը, բայց Անգղլան (յէջ 11) իր ժամանակին նկատել էր, որ յիշեալ թարգմանութեան մէջ մի քանի եղծեալ և պակաս տեղեր կան. այժմ բնագիրը միանգամայն հաստատում է Անգղլայի նկատողութիւնը: Իսկապէս հայերէն թարգմանութիւնը կազմում է բուն դործի թերևս չորրորդ թէ հինգերորդ մասը և այն էլ յաճախ անձիշտ և վրիպական լինելով, դիւրաւ կարող է առաջադրել ծանրագոյն սխալներ»:

Հայ թարգմանիչի արժանաւորութիւնը կշռելու նպատակով՝ ասորական օրինակը համեմատելու էր բուն հայերէն թարգմանութեան հետ, բայց ոչ Անգղլայից հայերէն Ֆրանսէիքի վերածած թարգմանութեան հետ, ինչպէս անում է Գլիլի, որ գայթակղական մի ընթացք է:

Ախոսս, որ ասորի պատմագրի Հայերէն թարգմանութեան ընտրելագոյն լաւ օրինակը մինչև այժմ չէ հրատարակուած, որը կարող լինէր գոհացնել քննադատական պահանջներին: Մենք չենք կարող բաւականանալ նաև Նրուսաղէմի 1869 թուականի տպագրութեամբ, քանի որ գտնվում են նոյն հեղինակի և այլ ձեռագիրները, թերևս լաւագոյններ, որոնցից լոյս ընծայողները չեն կարողացել օգտուել:

Նրուսաղէմի հրատարակութիւնը բովանդակում է նմանապէս յետնագոյն ներմուծութիւններ, նա հարազատ ու ճիշտ թարգմանութիւններիցը չէ երևում (տես Բառագարանէր, Ueber das Buch «die Chrie» էջ 570, ծան. 1), թէև Պիլին ցոյց է տալիս միայն մի քանի սխալներ, բայց և նոցա մէջ կարելի է նկատել այնպիսիքը, որոնց պատասխանատուն կարող են ներկայանալ զանազան արտագրողներ, կամ թէ Փրանսիական թարգմանիչը, բայց ոչ երբէք Հին Հայ թարգմանիչը, օրինակի համար, Պետրբուրգի ասիական մուզէում Միքայէլ Ասորու ձեռագիրը զանազան հայրապետների թուում յիշում է մի յայտնի Նոնայ Արկիսոնի (Nonno di Circesio) և ոչ Նոնայ Արիսոնի (Nonas de Crison), որ մենք Պիլիի հետ գտնում ենք միանգամայն սխալ ընթերցումն:

Միևս տեղ Իտալացի արևելագէտը (էջ 7) նոյնպէս իրաւունք ունի զարմանալու, երբ նա Արիլիիոյ եպիսկոպոսների թուում տեսնում է ըստ Հայկական թարգմանութեան (ճիշտն ասած Լանգլուայի Հայերէնից փոխադրած թարգմանութեան մէջ) Paul d'Ibérie, մինչդեռ ասորական բնագրում յիշուած է Paolo di Epifania, բայց Հայ թարգմանչին տգիտութեան մէջ մեղադրելու համար պէտք է նորա աշխատանքը աւելի մանրամասն վերատուգման ենթարկել և գլխաւորապէս Հայերէն թարգմանութեան մէջ:

Մենք համոզուած ենք, որ Հայ թարգմանիչը գրելով «Իբերիոյ» հասկանում էր ոչ «Ibérie» այսինքն Վրաստանի եպիսկոպոս, այլ Արիլիիոյ մի առաջնորդ, որը նստում էր ի Բերիայ վեճակում: Յամենայն դէպս ցանկալի է շուտով հրատարակուած տեսնել Միքայէլ Ասորու բուն ասորական մատենագիրը, այն ժամանակ միայն ճիշտ և արդար դատաստան կարելի է անել Հայերէն փոխադրութեան մասին:

Փաւստոս Բուզանդ. Ե. Մ. Վ իննա. տպարան Մի-
թարեան. 1890. 8°. Երես VIII+52. Պիւնն է 50 կպ.

Այս երկասիրութեան գլխաւոր գաղափարը արժանապէս
մշակուած չէ, ուստի այն տեսութիւնը, որ իբր թէ Հինգեր-
որդ դարում Հայաստանում մի առանձին ժողովրդական
գրական (ոչ բերանացի) մատենադրութիւն կար, քննադատի
երեւակացութեան և կանխակալ կարծիքների արգասիքն է:

Առաջին գլխում (էջ 1—12) Ե. Մ. հետաքոտում է, թէ
վէր Փաւստոս. նա ևս մերժում է Փաւստոս Բուզանդացու
Հայկական ծագումը և ապացուցանում է, որ Փաւստոս պատ-
միչը յոյն էր. և ենթադրում է, որ այն Ժերոնի Փաւստոս Եպի-
սոպոսը որ 'Ներսիսն ասրիւսագ յեռնադրեց և որ Ներսիսը նրա
յապարհաւոր-Նեան հանդիսին' որիչ ոչ ոք չէր Բայց մայն մեր
պարսին էր, հեռնագար նա է գրել իւր պարսն-Նեան խորին Ժերո-
նեան ժամանակ:

Միակ նոր և ուշադրութեան արժանի ապացոյց է առաջ
բերում քննադատիչը, երբ հաստատում է Փաւստոսի յոյն ծա-
ղումն: Բուզանդարան պատմութեանց վեցերորդ դարութեան
ցանկի վերջը հետեւեալ նախադասութիւնը կայ, ասորոս ամե-
նայն պարսն-Նեանց յապարհս ի՞մ պեղելո-Նեան, որք միանգամ զմա-
րեանս ընՆեռնոյք, արոնք արան՝ համարական ըն-օք:

Մինչև այսօր այս կտորը հասկանում էին այնպէս, իբր
թէ պատմիչի վերաբերեալ տեղեկութիւններ լինելու էին ամբողջ
պարսն-Նեան վերջում, և չգտնելով, եղրակացնում էին, որ
պատմութեան վերջին դրոշմները և ուրեմն Փաւստոս Բու-
զանդացու ինքնակենսագրութիւնը կորած են, այն ինչ Ե. Մ-ի
թարգմանութեան համեմատ այդ հատուածի միտքը հետեւեալն
է. «իմ մասին տեղեկութիւններ բովանդակող բոլոր գրութիւն-
ներից յետոյ՝ տաւում է պատմիչը, ընթերցողներդ կը գտնէք թուով
տասը գրութիւն. «և յիշաւ» նկատում է Պ. Ե. Մ.—Հինգերորդ
և վեցերորդ դրոշմներից յետոյ, որանց պատմիչը խօսում է
Փաւստոս եպիսկոպոսի և նրա եղբայր Առոստոմի մասին, հի-

աւելումն ուղիղ տասը դրուս» իսկ վեցերորդ գլխում Փաւստոսի մասին ընդ այլս հազորովում է և այն, որ նա հռոմ, այսինքն յոյն էր: Այս յաջող մեկնութիւնը, խոստովանում ենք, որ աւելի յարմարն է և պարզ և միեւնոյն ժամանակ աւելի հասաքըքրական կողմն է կազմում զլքի մէջ:

Մնացեալ մասերը բազկանում են հետեւեալ չորս գլուխներէ (բ) ի՞նչ լեզուով է պատմագրել Փաւստոս (էջ 12—22), գ) Բուզանդի բնագիրը (էջ 22—32), դ) Փաւստոս, որպէս պատմիչ (էջ 32—45) և ե) Փաւստոսի երկասիրութեան նշանակութիւնը: Պլուտիների վերնագրերը, անշուշտ, լաւ բաներ են խոստանում, սակայն պարունակութիւնքը նոցա համապատասխան չեն. երկասիրողը հարեանցօրէն շոշափում է շատ ծանրակշիռ հարցեր և շուտ է հասնում, կամ որ աւելի լաւ է ասել կարծում է հասնել որ և էեղրակացութեան:

Ուրիշների կարծիքը մերժելու մէջ նա չէ դանտաղում և ծանրանում, թէ նրանք անհերքելի փաստեր և յայտնի վկայութիւններ առաջ չեն բերում: միւս կողմից սեփական կարծիք յայտնելու համար փոքրով է բաւականանում և որ աւելի ցաւալին է, այդ էլ այն է, որ Ն. Մ. հայոց հին գրականութեան հետ լաւ ծանօթ չէ: Մեր խօսքը չերկարացնելու համար, բաւականանում ենք մի քանի նմուշներով:

«Այդ տեսակ ենթադրութեան, այսինքն, իբր թէ չորրորդ դարում հայերէն գրում էին յունաց, պարսից և ասորոց տառերով հակասում են—հաւատացնում է Պ. Ն. Մ. (էջ 14) մեր բոլոր հնագոյն մատենագիրների վկայութիւնները, որոնք երբէք չեն ափսոսում, որ 406 թուականից առաջ կարելի չէր գրել հայերէն, մինչդեռ Վիկտօր Լանգլուան ցոյց է տալիս (Discours préliminaire, p. XII, note 5, Collect. etc) մի շար ազդային և օտար պատմագիրներ, որոնք ընդհակառակը վկայում են, որ օտար տառերով հայերէն գրելու սովորութիւն կար ապաստանում հայկական նշանագիրները հնարելուց առաջ: Միւս տեղ (էջ 19) Պ. Ն. Մ. ընդարձակ է խօսում, իբր թէ «սկեդարեան գրականութեան լեզուն մի ակրալի հաստատութիւն է տալիս այն կարծիքին, որ սկզբից ահազին վեհ կար մեր գրականութեան ներկայացուցիչների և հայ ժողովրդի մէջ... ժողովուրդը (հինուց) կարող չէր հասկանալ ոչ միայն

նոցա բովանդակութիւնը, այլ և այն լեզուն, որ զործ էին անում հեղինակները», շարունակելով յայտնել այսպիսի հիմար-
տութիւններ, քննադատը հասնում է Հերակլիայ արձանին.
նա յառաջ է բերում այնպիսի ծայրայեղ կարծիք, իբր թէ
մեսրոփներ, մամբրէներ և մովսէսներ մտաւիր չէին ծառայե-
լու հասարակ մահկանացուների մասւոր կամ զործնական
պահանջներին, այլ նոցա նպատակն էր ծառայել միայն փոքրա-
թիւ լուսաւոր դասին. այսպիսի համարձակ և նորագիւտ դա-
դափարը միայն սա չէ Պ. Ն. Մ-ի աշխատասիրութեան մէջ.
այսպիսի զաղափարների ընդունելութեանը խանգարում են
ապացոյցների պակասութիւն կամ թէ նոցա բոլորովին բա-
ցակայութիւնը: Մեր քննադատը ապացոյցները ճշտօրէն մատ-
նանիշ անելու և մանրամասնօրէն հետազօտելու փոխարէն
բաւականանում է հասարակ խօսքերով. մանաւանդ, Պ. Ն. Մ-ը
սիրում է յաճախ համարեա բառը զործածել (էջ 15, 31, 32)
այսպէս. «Նորորդ դարում հայերէն գրելու (օտար տառերով)
հնարաւորութիւն համարեա թէ չկար» (էջ 15) կամ «որոշել
թէ ի՞նչ է սկզբնական օրինակին համաձայն և ի՞նչ պէտք է
ջնջել, որպէս յետագայ դարերի կօմմենտար,— համարեա հնար
չը կայ» (էջ 31) կամ «աւելի քան յիսնամեայ շրջանի պատ-
մութիւնը Բուզանդ գրել է համարեա թէ առանց զրաւոր
ազգիւնների օժանդակութեան» (էջ 32) և այլն և այլն:

Մենք ևս մեր կողմից նկատում ենք, որ Պ. Ն. Մ. նոյնպէս
համարեա թէ առանց աւելի հարկաւոր գրքեր կարդալու յանձն
է առել Փաւստոս Բուզանդացուն քննադատել. հակառակ դէպ-
քում չէր համարձակի ի միջի այլոց Փ. Բուզանդացու և
Ազանթադեղոսի պատմութիւնների մէջ նմանութիւն կըրա-
կեցնել այնպիսի հատուածներից (էջ 34), որոնք կարող էին
յիշեալ պատմութիւնների մէջ սպրդուել Ս գրքից, օրինակի
համար. «Ո՞վ չափեաց զերկինս» և այլն հանուած է Նսայիի
գրքից, գլ. Խ. 12.:

Վերջացնելով մեր երկու խօսքը, պէտք է ասել, որ Ն.
Մ-ի աշխատասիրութեան մէջ պատահում են մի քանի յաջո-
ղակ նկատողութիւններ, որոնցից կարելի էր մի փոքրիկ, բայց
աւելի լրջամիտ յօդուած յօրինել:

Այս գրքից, թէև Վիեննայ Մխիթարեանների տպա-

բանումն է տպուած, սակայն նա գրուած է արեւելեան բարբառով: Մարդ զարմանում է այս գրքի մէջ տեսնելով առատութիւն այնպիսի օտար բառերի, որոնք արդէն գործ են ածվում հայերէնում կամ կարելի էր հայացնել. օրինակի համար. լաբիւրէնթ, ալփաբետ, պերեօդ, օրիգինալ, թէօրիա, կօմմենտար, զոկումենտ, ինտրիզ, ինտերես, ռեալիզմ, անախրօնիզմ, կօմպիլացիա, եթնօգրաֆիա, լօգիկական հայն հայն:

Նոյն

Le Mal d'Orient, Paris. Հեղինակութիւն Վեանի-Վէյի:

Այս վերնագրով լոյս տեսաւ անցեալ տարի Ֆրանսիերէն լեզուով մի գիրք, որը ամբողջապէս նուիրուած է Ս. Պոլսոյ ուսումնասիրութեան:

Թէև մեզ անյայտ է հեղինակի իսկական անունը, և ուրեմն անկարելի է մեզ ասել, թէ որչափ նա հեղինակութեան դեր է ու թէ որքան հաւատարմութիւն կարելի է ընծայել նրա տեղեկութիւններին հայերի վերաբերութեամբ՝ բայց այնուամենայնիւ կարծում ենք, որ հետաքրքիր է ընթերցողին ծանօթանալ այն գաղափարների հետ, որոնք երբեմն մինչև դեռ այժմ յայտնվում են Նւրոպայում մեր մասին:

Այն տեղեկութիւնները, որոնք մենք գտնում ենք գրքի XI գլխում, ամբողջապէս հայերին նուիրուած, շատ սակաւ պիտի փաղաքեն մեր ազգի ինքնասիրութիւնը:

Մենք որոնում էինք իհարկէ ճիշտ տեղեկութիւններ պուստինակ զանազան ազգութիւնների վերայ, նոցա լուսաւորութեան աստիճանի, արուեստների, առևտրի, նոցա ձրգտումների, բաղձանքների մասին. ոչինչ. ընդհանուր հայեացք, հին յաճախ կրկնուած խօսքեր, թէ հրէան կեղտոտ է, հայը վախկոտ է հայն, այսպիսի թուեցիկ հայեացքներ, լի երբեմն անվայել ածականներով, որոնք հեղինակը յանգգնում է տալ տաճիկաբնակ ամբողջ ազգութիւններին: Գրքի մեծ մասը նուիրուած է Պոլսի նկարագրութեանը, իբրև քաղաքի, և զլիա-

ւորապէս փողոցային կիսներ իր սատակած շներով և անե-
րեակայելի աղտոտութիւններով...

Թողնենք այս և դառնանք այն կիսերին, որոնք մեզ հե-
տաքրքրում են:

Պ. Վեսնի-Ռէյը գտել է, որ տաճիկը ամենաբարոյական
արարածն է աշխարհիս երեսին՝ «եթէ վերցնենք այն տաճիկ
հասարակութիւնը, որը ապրում է հեռու քրիստոնէական
հասարակութիւնից»: Այս տեղերը երևի շատ սակաւ են և
հեղինակը մոռացել է նոցա անունները: Բայց այս իգէալական
ազգը անբարոյականում է, երբ յարաբերութիւններ է սկսում
քրիստոնէաների հետ: Այսպէս եղել է օրինակ Պոլսոյ մէջ:
Եւ գիտէ՞ք, ո՞վ է այն անբարոյականացնող ազգը, որը հանում
է տաճիկին բարոյականութեան և առաքինութեան շաւղից:
Այդ հայն է, բայց ի՞նչպէս, զարմացքով հարցնում է ընթեր-
ցողը... Այս հարցին պատասխան չկայ, ինչպէս հարիւրաւոր
միւս հարցերին, որոնք ընթերցողը անկարող է լուծել Պ. Վես-
նի-Ռէյի զերբը կարգալով: Մնում է ընթերցողին հաւատալ
հեղինակի խօսքին, ինչպէս Աւետարանի ճշմարտութիւններին:
Մի քանի թերթ շուռ տալով, մենք գտնում ենք, որ հայը
լուսաւորութիւնով բարձր է իր տիրապետող ազգից, որ նա
աւելի հաշուատես է, որ նա խաբեբայ է, այսինքն կարողանում
է իրան հըռ ծառայ և հաւատարիմ բարեկամ ձեռացնել թէև
արիւնհարբու թշնամիդ լինէր: Վերջը ծռած նա տանում է
թուրքի հայհոյանքները և անարգութիւնները, խորամանկ
ժպիտը միշտ երեսին: Այս ստրկական ոգին այնպիսի մի հան-
րածանօթ յատկանիշ է հային, որ երբ մի տաճիկ անպատվում
է եւրոպացուն, սա բարկացած բացականչում է. «Հայ ե՞ս գտել
ի՞նչ է»:

Բայց այս փարիսէական ժպիտի ներքոյ, հայի սրտում
վառվում է վրէժխնդրութեան կրակը, և նա ամեն ստոր միջոց
գործ է գնում իր բռնաբարողին... Այսպէս հայը իր վրէժը
դուռուշէ վեր ածում, որովհետև նա վախկոտ է և վաղուց
արդէն կորցրած է անկախութեան ոգին: Չէ՞ք հաւատում,
որ հայը նապաստակի պէս վախկոտ է: Շրջեցէք մի քիչ Պոլսոյ
փողոցներում (ինչպէս Պ. Վեսնի-Ռէյն արել է, որ իր զերբը
գրէ) և տեսէք թէ ի՞նչ է հայի կամ հրէայի, յոյնի, թուրքի

կուրբ: Հայն ու հրէան փողոցի մէջ սկսում են իրար հայհոյել, մօտենում են միմեանց և Պ. Վեսնի-Վէյը սպասում է, որ այս սարսափելի յիշոցներից յետոյ հակառակորդները միմեանց զլուխ ջարդեն... Բայց խեղճ հեղինակը յուսահատվում է շուտով, որովհետև հայհոյողները մի քիչ միմեանց անպատուելոց յետոյ, յանկարծ շուռ են գալիս և ամեն մարդ իր ճանապարհն է շարունակում: Այն ինչ երբ մի քաջ յոյն կամ թուրք բարկացած է, հանում է խիոյն իր խէնչալը և փորդ խրում, կամ ոտիցդ մի քար կապում և Բօսֆօրը նետում քեզ:

Ահա հեղինակի «հաստատութիւններից» մի օրինակ. շատերը սոցա նման են: Ահներև է, որ հեղինակը զարմանալի հեշտութիւնով և առանց ստուգելու ընդունել է ընդհանրապէս հայերի մասին տարածուած գաղափարները և չէ հետաքրքրուել զոնէ ստուգել իր լսածները և փոքր ուսումնասիրէր մեր անցեալ և ներկայն, որտեղ, անշուշտ կգտնէր ուրիշ աւելի լուրջ փաստեր...

Պ. Վեսնի-Վէյը սարսափում է, որ տաճիկ կառավարութիւնը ընդունել է իբրև պաշտօնեաներ այս անբարոյական ժողովրդի անպամներին: Սոքա են կործանում տաճկաց պետութիւնը: Հայը բնականաբար վաշխառու է, և հայ պաշտօնեան է պատճառ, որ այժմ կարելի է ամբողջ թուրք կառավարութիւնը գնել: «Շատ կողմերով հայը մօտենում է հրէային», կրկնում է հեղինակը, յուզուած, ճոցա վերջինի նման նա անյապ է, տոկուն և հլու»:

Ուզում էք հաստատութիւն, որ հայ պաշտօնեան քանդել է թուրքի տունը: Ահա մի քանի օրինակներ.

Յակոբ-Փաշա, որը Սուլթանի աջ ձեռն է, երևելի կառավարիչ և առաջնակարգ ֆինանսիստ է: Սա աններկի բաներ է անում, որովհետև շրջապատած է խառնակիչ հայերով: Ինչ աններկի բաներ է արել Յակոբ փաշան, կամ ռմբեր են նրան շրջապատողները—յայտնի չէ: Նրկորդ օրինակ. Երրահամ-Րէյ, «այս արևելեան Բաշկըր»։ Սա, ինչպէս երևում է, իր միլիոնները ժողովել է նրանով, որ Երզուլ-Ազիզի հետ պաշտական թաարոնում նստած ծիծաղում էր, երբ Սուլթանի հրամանով բեմի վրայ կատաղած շներ էին արձակում

խեղճ՝ ճորտերի վրայ: Նրբորդ օրինակ. Նուբար-Փաշան, Աբրահամ-Բէյի փեսան, Նզիպտոսի երեւելի նախարարը: Սա մասնեց իրան յանձնած երկիրը անգլիացիներին «Նւ այս երեքը, բացառանջում է հեղինակը, ամենաերևելիներն են:

Այսպէս զիւրութիւնով որոշում է հեղինակը, որ հայ պաշտօնեան անհաւատարիմ է իր կառավարութեանը, որովհետեւ նա պաշտօնէ ընդունում ոչ թէ տէրութեան ծառայելու համար, այլ իր անձնական շահերի համար: Բանը նրանումն է, որ այս բարձրատիճան հայերը մասնադէտներ չեն և երբեմն բոլորովին անտեղեակ են այն գործին, որի զուլն են անցնում, այնպէս որ, Պ. Քեանի-Բէյի կարծիքով տաճիկ կառավարութիւնը կ'փրկուէր, եթէ ճաշէք իր նախարարութիւնները այս կործանիչ անբարոյական տարրից: Նա զարմանում է այնուհետեւ, որ տաճիկ տէրութիւնը չէ աշխատում ձուլել իր հեռ հպատակ ազգութիւնները, որ այն... բազմադոյն տարրերից մի զօրեղ ազգ կազմէ, այլ ընդհակառակը թոյլ է տալիս յոյներին և հայերին պատգամաւորներ ընտրել, ազգային ժողով կազմել, ատեւական զանազան հիմնարկութիւններ բանալ և այլն: Այս է պատճառը, որ յոյները և հայերը տիրապետել են առևտուրը, հարստացել են ի ֆրաս տաճիկի և յեա են թողել իրանց տիրապետողներին լուսաւորութեան և բարգաւաճութեան տեսակէտից:

Տեսնենք, թէ հայը ինչպէս է վերաբերվում դէպի իր ազգակիցները: Նոյնպէս, ինչպէս դէպի ուրիշ ազգերը, այսինքն նա առանց երկմտելու պատրաստ է վաճառել իր մօտիկ բարեկամին, իր ազգականին, իր ընտանիքը: Շատերը ծախում են իրանց կնոջ գեղեցկութիւնը: Փոքր Ասիայի խեղճ հայը աւելի տանջվում է իր պոլսաբնակ ազգակիցների ձեռքից, քան թէ Թիւրքիոյ լծի տակ: Նւ այս բոլորը ստակ շահելու համար: Փողատիրութիւնը Պոլսոյ հայոց միակ կիրքն է, ստակ աշխատելը նոցա միակ իդէալն: Ուսունարաններում ուսանում են մի քիչ կարգաւ — գրիկ և աւելի շատ թուաբանութիւն (Յ), այս ստակի զիտութիւնը: Ուսումը նշանաւոր է հայի աչքին այնքան, որքան նրա պտուղը աւելի շահաւոր է:

Այնուամենայնիւ հեղինակը գտնում է, որ Ազգային ժողովը սկսել է ուշք դարձնել ազգային լուսաւորութեան վրայ և

պէտք է ասել որ կարգալ—դրելը շատ տարածուած է նոցա մէջ։ Այսպէս համալները ազատ միջոցներին լրագիր են կարգում փողոցներին անկիւններում նստած։

Պ. Հեղինակը այսպէս իր մաղձը թափելով պոլսաբնակ հայերի վրայ, մեղմացնում է նա յանկարծ, կրք խօսում է Փոքր Ասիոյ հայերի նկատմամբ։ Արծես խղճահարկում է նա և վերջացնում է իր խօսքը հայերի մասին հետեւեալ տողերով.

«Հայ ազգը արժանի է մեր համակրութեանը։ Չարմաքքի արժանի է այն ազգը, որը դարեւոր բռնաբարութեան ներքոյ կարողացել է անխախտ պահպանել իր լեզուն, ազգութիւնը, հաւատը։

... Թող հայը ձեռք բերէ զարգացման ազատութիւն և նա կդառնայ լուսաւոր և ծաղկած մի ազգ, իր խելքով, իր ընդունակութիւնով արուեստի և առեւտրի մէջ, իր կանոնաւորութեան և պահպանողութեան ոգով։ Աւելացնենք, որ հայերն ունեն հեղինակներ, նկարիչներ, երաժիշտներ, որոնք հռչակվել են Նւրոպայի մէջ։

Հայ ազգը այս կիսաւայրկնի երկրներում առաջադիմութեան գլուխն է անցել և կարող է լուսաւորող աարբի դեր խաղալ։

Չարմառալի հակասութիւններ ենք գտնում պ. Վեսիր-Բէյի յայտնած գաղափարների մէջ հայերի մասին։ Եթէ հայ ազգը այսպիսի ընդունակութիւնները դեր է և լուսաւոր ու ծաղկած մի ազգ դառնալու համար նրան միայն զարգանալու ազատութիւն է հարկաւոր, ի՞նչի հեղինակը ընդգէմ է տաճկահայերի վերածնութեան գիմելուն։

Եթէ մենք քննէինք այն բոլոր հակասութիւնները, որոնց հանդիպում ենք այս գրքի մէջ, դեռ շատ էջեր կլցնէինք, ուստի թողնենք քննական հայեացքը և զարմանանք միայն հեղինակի սառնասրտութեան վրայ, որով նա յանդգնել է այսպիսի հեշտութիւնով դատապարտել մի ամբողջ ազգ յաւիտենական դերութեան։

Այս մի տխուր երևոյթ է, ի նկատի առնելով այն հանգամանքը, որ այդպիսի հեշտ ընթերցանակի գրքերը ստատիկ տարածվում են Պրանսիայում և կարողանում են ծնեց-

նել հասարակութեան մէջ սխալ գաղափարներ: Որքան էլ կրթ-
քով զրաժ լինէին Պ. Վեհեր-Վէյի առաջ բերած էջերը,
մենք դուցէ պատճառ չունենայինք վրդովուելու, եթէ միայն
գրքից պարզ երևար, որ այդ անվայել ածականները վերա-
բերում են միայն Պոլսոյ հայերին, աւելի ճիշտ ասելով Պոլ-
սոյ որոշեալ կարգի հայերին: Ամեն հասկացող և խորհող
մարդ գիտէ, որ պիտի բաժանուի ազգը մի քանի անհատնե-
րից, որ ազգը այն խումն ամբողջ է, որ չարաչար աշխատում
և չարաչար տանջվում է: Աւստի առաւել հայ ազգը... Բայց ցա-
ւակցաբար շատ յաճախ անկարելի է որոշել, թէ որոնց են վե-
րաբերում հեղինակի գաղափարները «հայ» մասին—Պոլսոյ
հայ հասարակութեանը, թէ ամբողջ հայ ազգին: Պարզ է,
որ հեղինակը իր գաղափարը հայերի մասին կազմել է մի տասն-
եակ հայ պաշտօնեաների հետ յարաբերութիւն ունենալով և
մի տասնեակ էլ դատարկաշըիկ պերայի երիտասարդներ աչքի
առաջ ունենալով: Այս շատ քիչ է և սա չի կարող մի խոհեմ
հեղինակի իրաւունք տալ ամբողջ ազգի մասին այսպիսի կծու,
թէև անմիտ գաղափար յայտնել:

Մենք նրանցից չենք, որոնք վրդովվում են, երբ վատ գա-
ղափարներ են լսում հայի մասին օտարի բերանից: Մենք առա-
ջիններիցը կլինէինք այն մտրակողների հետ, որոնք հայ ազգի
որոշեալ դասերը ճշմարտապէս քարկոծէին: Մենք դուցէ Պ.
Վեհեր-Վէյից աւելի վրդովուած ենք և ամեն օր աւելի և
աւելի զայրանում ենք այն անհատների դէմ, որոնք խղճմտանք-
ները թողած «վաճառում են իրանց ազնուութիւնը, իրաւունք
տալիս օտարներին այսպիսի անվայել գաղափարներ յայտնել
մեր ազգի մասին:

Ո՞վ է մեղաւոր, եթէ ոչ մենք, որ այսքան ժամանակ
անտարբեր նստած մեր տեղում՝ չենք աշխատել օտար մա-
մուլի մէջ շարունակ մշակուած մանրամասնօրէն տեղեկու-
թիւններ հաղորդել մեր ազգի մասին, որ Վեհեր-Վէյի նման-
ներին առիթ չտայինք այսպիսի անմիտ և յիմար բաներ
ղրելու:

Վ. Ար.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Ա.

Մեր ազգին մէջ անոնք, որ փոքր ի շատէ ուսեալ կը համարուին, փոխանակ օգտակարն կամ անհրաժեշտն ուշադրութեան առարկայ ընելու, ընդհանրապէս կ'ըբաղուին երեակայական ցնորքներով և մոլար վարդապետութիւններով: Առքա հեռադիտակով կը զննեն հեռուն գտնուող առարկայներն, իսկ պարզ աչօք չ'են տեսներ և կամ չ'են զիջանիր տեսնել իրենց շուրջը զիջուած շատ մը բաներ, որք սերտ կապերով առնչութիւն ունին իրենց կենաց հետ և այն ընկերականութեան հետ, յորում կ'ապրին: Տաճկահայաստանի կեդրոնն է Պոլիս. ամեն ոք իր աչքերը կը դարձնէ դէպի այդ լուսաւորութեան կեդրոնը, ամեն գաւառ կը դառնայ այդ արեգակին շուրջ՝ լոյս և ջերմութիւն ստանալու համար: Բայց ինչ կ'ընեն մեր պոլսեցի ամենագէտ երիտասարդները, ոմանք ցնորեալ կ'աղաղակեն, «*ախ Վիդուէ*», այլք յափշտակեալ կը մրմնջեն «*ո՛հ Վիկտօր շիւկօ*» — «կը սխալիս եղբայր, Վամառտինն ամենավսեմ, ամենասքանչելի անձնաւորութիւնն է, հոգւոյ բանաստեղծ էնա» — «բայց ես նախամեծար կը համարիմ բրէնս Պիղմարքի քաղաքականութիւն»: Անգամ մը հարցուր այդ երիտասարդներուն, բարեկամ, Տաճկաստան քանի՞ կուսակալութիւն ունի, Հայաստանն այժմ քանի՞ կուսակալութեանց կը բաժնուի, որչափ ժողովուրդ ունի, ի՞նչ տեղական արհեստներ կան գաւառաց մէջ, ի՞նչ է երկրագործութեան վիճակը, ի՞նչ է ժողովրդի առտնին բարոյական վիճակն, ի՞նչ միջոցներ պէտք է ձեռք առնելու նոցա վիճակն ըստ կարելոյն բարւոքելու համար — պէտք է գիտնաս, յարգելի ընթերցող, այդ բանգէտներու կաճառէն շատ քիչեր — բացառութիւններ — կարեւորութիւն կուտան այս հարցմանց և բարեբաղդ համարէ ինքզինքդ եթէ փոքր ի շատէ գոհացուցիչ պատասխաններ կտրենաս

ընդունել: Արեւելք ո՛ր է կերպով պոլսեցւոց ուշադրութիւնը չ'է գրաւած, նոքա կը խորհին միշտ լուսաւորեալ Աւրոպային, թէպէտ չ'են կրնար իրենց երկրին մէջ դիզ մը հող չափել, բայց ապահով եղիւր որ սանդիմէթրօով և միլիմէթրօով կրնան ճշտիւ հաշուել այս ինչ կամ այն ինչ եւրոպացի բանաստեղծին բնական տան տարածութիւնը, անօթիներ են, որ փոխանակ իրենց մօտը գտնուող առատ հացէն կշտանալու ժամու մը հեռաւորութեամբ եփուած կերակուրի հոտով իրենց ստամոքսը կը պարարտեն, ամեն մարդ գրականութիւնը կը յարգէ, ամեն ոք հանճարեղ բանաստեղծները կը սիրէ, բայց բանաստեղծէն կարեւոր բան մը կայ, այն է *Ժողովուրդը*, հոգւոյ ցնորքներուն գգուանքէն աւելի բան մը կայ, այն է *Բարեկամ Գրական Տնօրէնը*, ո՛վ որ այս կենսական կէտերն առ ոչինչ գրելով, ինքզինքն կը զոհէ տարաբաղդ երեւակայութեան, զոր ամենայն ճշտութեամբ տիրացութիւն կարելի է կոչել, կը նմանի այն մարդուն, որ իր մերկ մարմինն կը ծածկէ ադամանդներով:

Տաճկահայաստան տակաւին մինչև հիմայ կը պարունակէ հայերու ամենէն ստուար մասը, որոց կեանքն ըստ արժանւոյն գնահատելու համար պէտք է աչք դարձնել գաւառներուն վրայ, ես, պոլսեցի ըլլալովս, կրնամ վկայել թէ պոլսեցիք տակաւին ո՛ր է որոշ գաղափար չ'ունին գաւառական կենաց վրայ և չ'են ալ մտածեր թէ ինչե՛ր կրնան պատահել ի գաւառս: Բայց անգամ մը պէտք է Ասիոյ հողին վրայ ոտք կոխել հանդիսատես լինելու համար շատ մը թատերական ներկայացմանց, որոնք միշտ տխուր տպաւորութեան ներքեւ կը թողուն այցելուն: Այստարուած դերը ամենուրեք նոյնն է, ժամանակն, տեղը և դերասանք կը փոխուին միայն: Շրջմարտութիւնը չը ստելու համար պէտք է խոստովանել թէ գաւառի հայք, ընդհանրապէս խօսելով, զերծ չեն շատ խոշոր և աչք զարնող պակասութիւններէ շնորհիւ տեղական պայմաններին և նոցա ղեկավարիչների, որոնք իրենք բոլորիկ լինելով բարոյականութեան մէջ, հանգէս են գալիս իբր թէ ժողովրդի բարոյականութիւնը կըրթի: Զարկ կայ արդեօք *Բարոյական* բառի նշանակութիւնը բացատրել որ տակաւին մեզմէ շատերուն անծանօթ է: Այնք անբարոյական կը կոչենք այն անձը, որ տուփական կրքերով կը մոլորի և կամ այն որոյ սիրտը կը բաբախէ ամեն մի գեղուհւոյ սիրոյն համար, այս սահմանը, զոր կարծես նուիրագործած է մեր հասարակ ժողովուրդը,

աւելորդ է ըսել թէ շատ կիսկատար կամ ծուռ կերպով կը մեկնէ անբարոյական բառի իսկական իմաստը: Ո՛չ, չ'է սա սահմանն անբարոյականութեան. նա մի շատ լայնածաւալ նշանակութիւն կ'ամփոփէ իր մէջ. անբարոյական է այն անձը, որ ստախոս, գող, մարդասպան, կեղծաւոր, բանսարկու, ղրպատիչ և մատնիչ է: Այսպէս կ'ըմբռնեմ ես ահա այս բառին իմաստը և կարծեմ թէ այս և է փիլիսոփայական աշխարհի ընդունած սահմանն. իսկ ընդհակառակը բարոյականի տէր կ'անուանեմ այն, որ ունի մտքի մշակումն, իսկական դաստիարակութիւն: Ղաստիարակութիւն բառն ևս սխալ ըմբռնուած է մեր մէջ, մի գուցէ չարաչար մեկնուի միտքս. դաստիարակեալ անձն այն մարդն է՝ որոյ միտքը գործուած է իսկական մարդկութեան կաղապարին վրայ, որոյ միտքը սնած և աճած է բնական կրօնի դրական սկզբանց վրայ, պէտք չ'է կարծել երբեք որ այս ինչ կամ այն ինչ ուսման մասնագէտ եղողն, անպատճառ դաստիարակեալ է. կը հետեւի ուրեմն մեր տուած սահմաններէն թէ, տգէտն՝ չը լինելով դաստիարակեալ, չ'է կարող նաև լինել անպայման բարոյականի տէր: Ս'եր Տաճկահայաստանի դաւառներուն մէջ, ժողովուրդն լինելով տգէտ, է նաև մասամբ անբարոյական. արդարև տգէտն, առանց վարժարանի մէջ դաստիարակուելու, կրնայ պարագայներէն ազդեցութիւն կրելով, լինել փոքր ի շատ է դրական մարդ. բայց Տաճկաստանի մէջ, պարագայները տգէտին միտքը չբարւոյեցէլ զատ, շատ անգամներ զանի ամբողջովին կ'ապականեն: Ասիոյ մէջ ընդհանրապէս, պարագայներ միշտ ծախող գործունէութիւն ունին, և խեղճ տգէտն յաճախ կը քնասուի անոնցմէ. ուստի, ցաւալի է տեսնել թէ, ժողովրդի բնաւորութիւնն միշտ յեղյեղուք է, չ'ունի ո՛ւրեք գոյն և չ'կրնար ալ ունենալ մինչև ամենամեծ զոհողութիւններ չը լինին մեծ մղում մը տալու կրթական գործին՝ հեռացնելով նորան այն արտաքին պայմաններէն, որ նրան ձգած են այս վիճակի մէջ:

Տաճկահայաստանի վարժարաններ գոհացուցիչ չեն և այս ընթացքով չ'են կրնար ըլլար. դպրոցական կատարեալ յեղաշրջում մը պէտք է. շատ տեղեր վարժարանաց ներկայութիւնը փոխանակ ո՛ւրեք օգուտ մատակարարելու, գայթակղելի իսկ դարձած է ժողովրդեան, և խեղճ տգէտն բոլոր ոյժովն կ'աղաղակէ թէ դպրոցն և դաստիարակութիւնն իր տունը պիտի քանդեն թէ ինք բնաւ պէտք չունի անոնց. մի՞թէ իրաւունք չ'ունի

պարզամիտ ժողովուրդն այսպէս պոռալու, քանի որ, մենք, փոխանակ հասկանալու վարժարանի իսկական ոգին, մեր մոլար գործունէութեամբ հասարակութեան վնաս կը հասցնենք: Ասինք թէ Տաճկահայաստանի վարժարանաց մէթոտն սխալ հիման վրայ հաստատեալ է, բացատրենք:—Վախ և առաջ մենք չ'ենք գիտեր վարժարաններու գոյութեան բուն նպատակն. մենք կարծենք թէ մեր պարտականութիւնը կատարած կ'ըլլանք, երբ աշակերտին միտքն կը բեռնաւորենք միմիայն լեզուներով և գիտութիւններով, երբեմն իսկ անամօթաբար լրագրած ասպարէզն իջնելով, ի լուր աշխարհի կը քարոզենք որ վարժարանի մէջ աշակերտ մը միայն ստակ շահելու ջամբայն սորվելու է. այս կերպով, մենք ուսեալքս, արձագանգ կուտանք անուս ծնողաց անտեղի պահանջմանց, կը խոստովանիմ թէ վարժարանն պարտականութիւն ունի աշակերտին հմուտութիւններ տալ կենդանի լեզուաց և դրական գիտութեանց վրայ. բայց եթէ այդ է միայն վարժարանի ըրած գործն, դա ինքն ըստ ինքեան այնչափ մեծ բան մը չըթուիր լինել. հոս է ճիշտ մեր սխալը, հոս է որ չ'ենք ըմբռներ վարժարանաց բուն ոգին, նոքա մի շատ աւելի վսեմ, շատ աւելի հանրագուտ նպատակի կը ծառայեն. այդ է կրթել աշակերտին միտքն, զայն ~~հասարակել~~ ^{պայնքն} պայնքն բարի և ազնիւ հայ մարդ ընել. աշակերտին միտքը կակուղ մեղրամոմ է, ճարտար դաստիարակին ազդեցութեան ներքեւ նա կ'առնէ որոշ, դրական ձև: Չկայ անհատ մը, որ եթէ իր տղայ հասակէն զօրաւոր բարոյական ազդեցութեան ներքեւ ապրի՝ չարագործ լինի ապագային. վարժարանն ուրեմն կաղապար մ'է, ուր խառնակ մտքերն թափուելով, կը զտուին, կը մաքրուին և կը լինեն փայլուն ու տոկուն մետաղ. մետաղագէտն է դաստիարակն. առ ինչ գիտուններն այժմ կ'աշխատին մանկավարժանոցներ հիմնել, եթէ այս չէ վարժարանի նպատակն. բայց ուր է մանկավարժ Տաճկաստանի մէջ, ուր է մանկավարժանոց. կան ընդհակառակը դպրոցներ, ուր տիմար ուսուցիչը ազատամտութիւն և լուսաւորութիւն ծախելով, վարժարանի պաշտօնական լեզուն ֆրանսերէն կ'ընէ և մինչև իրիկուն ֆրանսերէն կը դասէ, կարծելով թէ ֆրանսերէն գիտցողն և հայերէն ուրացողը գերբնական մարդ կ'ըլլայ. նկարագրածիս օրինակը տեսանք Ռոտոսթոյի մէջ, ազգային վարժարանաց նախորդ տեսչին ժամանակ: Վան ուրիշ տեղուանք վարժարաններ ալ, որոց ուսուցիչք նմանապէս ազատամտութիւն

կեղծելով, աշակերտաց կասկածոտ և անպատրաստ միտքն կը պղտորեն առ ոչինչ համարելով, ծնողական յարգանք, եկեղեցական ծէսեր, մեծերու պատկառանք և այլն. և իրաւամբ ծնողք իրենց բարկութիւնը կը ժայթքեն այդ դպրոցաց և ուսուցչաց վրայ: Վաւառաց, ինչպէս նաև Պոլսոյ վարժարանաց մէջ պատմութեան և կրօնի դասերուն երբէք կարեւորութիւն չ'են տար, մինչդեռ ամենէն աւելի կարևոր առարկայները ատոնք են, զի անոնցմով միայն դաստիարակն պիտի կրնայ աշակերտի դրական յատկութիւնները պատրաստել: Արքայիշեալ երկու առարկայներն կամ բնաւ չ'են աւանդուիր և կամ նոցա դասախօսութիւնը կը յանձնուի վարժարանի ամենէն յետնեալ պաշտօնէին, որ բոլորովին անկարող է այդ դասերն աւանդելու, քանի որ ինքն նախ և առաջ պէտք ունի բարոյական մարդ պատրաստուելու: Վաստադրքերն ալ զուրկ են մանկավարժական մէթոտէ, ութ տարեկան աշակերտի համար պատրաստուած դասագիրքն կը պարունակէ այնպիսի հարցեր, զորս քսան տարեկան եղողն հազիւ կրնայ ըմբռնել: () Իրենակի համար, Տաճկահայոց վարժարանաց մէջ ընդհանրապէս գործածուած մի Քրիստոնէական, մի քանի վերացական բառերով կ'ողգէ աշակերտին հասկցնել Լստուծոյ գոյութեան ապացոյցներն և Նշրորդութեան խորհրդի բացատրութիւնն. աշակերտն ատոնք թուծակաբար դոց կը սորվի, առանց ո՛րէ բան հասկնալու: Եյսպէս ահա կը տեսնուի որ Տաճկահայաստանի վարժարանք, աշակերտին բարոյականը չ'են կարող բարեփոխել իրենց այժմեան մէթոտներով, ուստի և օգտակար չ'են ժողովրդի անկեալ վիճակը վերականգնելու. հասարակութիւնն, մէկ կողմանէ աղքատութեան հարկին ներքեւ, միւս կողմանէ ալ տգիտութեան խաւարին մէջ, օր քան զօր կը յետադիմեն անբարոյականութեան շաւղով. չ'կայ ազգային—կրօնական զգացումն, չ'կայ ուղիղ քրիստոնէական զգացումն, ձեւակերպութիւններն անհատնում են, եկեղեցի յաճախողներ շատ, բայց սրտերն զտուած մաքրուած չ'են, փարիսեցութիւն կամ մոլեռանդութիւն և յաճախ իմաստակութիւն, զրպարտութիւն, մատնութիւն և բամբասանք, անխիղճ խարդախութիւններ, և այլ բազմաթիւ մոլութիւններ ապականում են ժողովրդի անհատական և հանրային կեանքն. ահա այս պատճառներով էր որ ըսի վերը թէ գաւառի հայերը խիստ խոշոր պակասութիւնների և մոլութիւնների ենթակայ են, կարեկցութեան արժանի: Աւստի մի մեծ, նուիրական

պարտականութիւն ունի ամեն հայ անհատ, այդ է, խորին ուշադրութիւն դարձնել գաւառի հայոց վրայ, եթէ այժմ շատ էլ սիրելի չեն նոքա, պէտք է ամեն կարելի եղած միջոց ի գործ դնել զանոնք սիրելի ընելու մօտիկ ներկային և ապագային, այս կը պահանջէ ոչ թէ միայն հայութիւնը, այլ և մարդասիրութիւնը, այդ խեղճերու բոլոր սխալն և յանցանքն իրենց տգիտութիւնն է, և տգիտութեան պատճառն ալ պարագայներն եղած են, եթէ տգիտութեան տեղը բռնի բարւոք և կատարեալ դաստիարակութիւնն, յայնժամ և գաւառի հայերն ամենայն իրաւամբ ճիշտ այնչափ բարի և առաքինի կը լինեն՝ որքան ուրիշ ո՛ր է երկրի ժողովուրդ, ուստի, յարգելի ընթերցող, դու որ այս տողերն կարդացիր, խորհէ որ եթէ չը մեղքանաս գաւառի հայն և չ'ողորմիս նորա դաստիարակութեան, յայնժամ նա օր քան զօր պիտի իյնայ անգունդ, և իրմով քու ազգդ ամբողջ պիտի մնասուի, արգահատէ ուրեմն, այդ տարաբաղդ ազգի զաւակներուն, և պարտականութիւն համարէ քեզ, կարելի եղած ձեռնտուութիւն ընել ազատելու համար զինքն իւր դառն և անմխիթար բարոյական անկումէն:

Բ.

Այժմ թուրք կառավարութիւնն վերջին ծայր կասկածանօք կը դիտէ Տաճկահայաստանի ամբողջ հայերը, սորա պատճառն անշուշտ մատնիչ և զրպատիչ հայերն են, չ'եմ գիտեր իմացած էք, *** բանտը կը հեծէ մի հայ ամբաստանեալ քաղաքական յանցանօք, և այսպէս շատերը այլ և այլ կենդրոններում, սոցա մէջ կան նաև քահանայք, որք բոլորն ալ իրենց հայրենակիցներէն են մատնուած, այս օրերս քաղաքէս անցուցին մի խեղճ քահանայ երկու հարիւրապետներով և 5 ոստիկաններով, խեղճը մատնուեր կամ աւելի շիտակը զրպարտուեր է իր հայրենակիցներէն: Այսպէս ահա Հայաստանի վիճակը շատ դառն է, ես կկարծէի թէ միայն * ի հայերը վատթարացած են, բայց որչափ կը սխալէի, Վան, Սուշ, եղբայր, ասոնք Հայաստանի հոգին կը կաղմեն, ասոնք ևս օտարացած են, սոցա ժողովուրդն ևս անբարոյական է և չ'էք կրնար երևակայել թէ ինչ սինքլոր պատճառներէ շարժեալ կը կատարուին այս մատնութիւններ: Ս'ի չորպաճի աղա կուզէ էֆէնտի կոչուել, դուն զինքը պարոն ես կոչել, այդ չափը բաւ է իր ա-

տելուծիւնը գրգռել քեզ դէմ, կ'ուզէ զքեզ պատժել և եթէ չ'է կարող օրինօք բան մ'ընել, մատնութեան կը դիմէ. ամենահեշտ միջոց կիրք յագեցնելու: Կամ դու աղքատ լինելովդ գաւառական ժողովոյ անդամ ես և կամ վարժարանի հոգաբարձու, ինքն իր ապիկարութեամբ ազգային ունէ պաշտօն չ'ունի, պէտք է տեղի տաս նմա, եթէ չ'ես ուզեր ապստամբ հռչակուիլ: Կառավարութեան բարձրագոյն ժողովոյն մէջ որ մէծընտր իտարէ կը կոչուի՝ Հայոց Առաջնորդը ձայն ունի (երանի՛ր թէ չ'ունենար), այս ժողովոյն մէջ կը գտնուի նաև հայ անդամ մը, փառասէր գաւառացի հայու մը սրտին բաղձանքն է այդ ժողովոյն անդամ ընտրուիլ, թէպէտ ոչինչ ամսական չ'առնէր՝ բայց 100 ոսկի ամսականէ աւելի նախամեծար կը համարի այդ պաշտօնն. ընտրութեան ժամանակ է. երկու ազգեցիկ հայեր կ'ուզեն իտարէի անդամ ընտրուիլ, երկուքն ալ կը դիմեն տեղւոյն առաջնորդին որպէս զի իր ազգեցութիւնը բանեցնելով կառավարութեան մօտ, ղերենք անդամ կարգել տայ. բայց ժողովոյ համար միմիայն մէկ անդամ պէտք է, առաջնորդն ի՞նչ ընէ, ո՞րն ընտրէ, կը շուարի. վերջապէս մէկին որոշում կը տայ և այն կ'ընտրուի, յայնժամ միւսն իր գլուխը կը ժողովէ 2—300 հոգի (ստակի՛ր զօրութեամբ) և կը գոչէ, Առաջնորդն չ'ենք ուզեր, Պատրիարքարան կը տեղան բողոքներ բողոքներու վրայ, ամբաստանութիւններ ամբաստանութեանց վրայ: Պատրիարքարան կարեւորութիւն չ'տար. այն ատեն չորպաճի էֆէնտին կը դիմէ կառավարութեան իւր համախոհներով և կը գոչէ «Պատրիարքարանը չ'ենք ճանչնար», «Առաջնորդը չ'ենք ընդունիր», «Պատրիարքը դիտմամբ այս առաջնորդը հոս զրկեց, որպէս զի ապստամբութիւն հանէ, մենք տէրութեան հաւատարիմ ծառայներն լինելով, կուզենք որ ապստամբներն և կասկածելի մարդիկը օրինօք պատժուին» և ասոր ի՞նչ կը հետևի, գիտէ՞ք, կառավարիչն կամ կուսակալն հաւատ կ'ընծայէ կամ թէ իր գործին կուգայ հաւատ ընծայել և կեդրոնը կը գրէ, կեդրոնէն լուր կուգայ խիստ քննութիւն բանալ և ապստամբութիւնը երևան հանել (ի՞նչ կայ, որ ի՞նչ հանեն): Կուսակալը կամ կառավարիչը քննութեան կը ձեռնարկեն. խուզարկութիւններ կ'ընեն, վարժապետի մը տունէն երգարան մը կամ հայոց պատմութիւն մը կը գտնեն, մեծ հաճոյք կառավարութեան, մեծ ուրախութիւն մատնիչներուն, հայ զրպարտիչներու մասնախումբ մը Վամառօթաթիպայի կամ Կարպէյի երգերն թարգմանելու (այսինքն սպանելու) կը նկրտի. հա՛, հա՛, մուզիր (վնասակար) բան գտանք. քննութիւնը կատարեալ չ'է, գնացէ՛ք բանտ անպիտաններ, գնացէ՛ք Պոլիս ոստիկաններով, գնացէ՛ք յաքսոր եթէ կուզէք: Ահօն չորպաճին յայն-

ժամ մը յոխորտանայ, ո՞վ կարող է այլ ևս քիթին մօտենալ, պատիւը երկու կանգուն կը մեծնայ և կառավարութեան առջև ալ մեծ համարում կ'ստանայ, այսինքն երբ կուսակալին կամ կառավարչին քով երթայ, նոքա կը հրամայեն նմա անմիջապէս նստել, առանց ոտից վրայ կեցնելու: Մի զարմանաք, այս է Վանայ, Սշոյ, Լազոկիոյ կռիւը. թէպէտ գաւառներն տարբեր՝ այլ միշտ նոյն դերն և նոյն դերասանք:

Պէտք է գիտնալ որ Կիլիկեան ամբողջ Հայաստանը չը կազմէր, բոլոր մնացեալ գաւառներն ունին ազգային-բարոյական անկեալ վիճակ. Կիլիկիա ևս բարոյապէս խիստ անկեալ է. նիւթական քաջութիւնը վստահելի չ'է, երբ հաստատուն հիման վրայ չ'է հաստատուած, այլ աշխարհագրական դիրքէ է կախեալ: Տաճկահայաստանի գաւառաց մէջ ընդհանուր առմամբ խօսելով, շատ ազգային ուսոյն և դրամական յարկոյն, բացառութիւններ հաղուաբուստ են և յարգելի, մէք այդ դրամական յարկոյն-ներէն ճշմարիտ և կարգաւոր դրամական-ներէն միայն կրնանք աւանդել հայ մանկոցն. սորա վրայ դարձուցէք, ջեր ուշադրութիւնը, պ. Գուլամիրիանց, հայուն ապագայն հիմնաւոր դրամական-ներէն է, մենք զմեզ կը ճանչնանք (մասնաւորելով տաճկահայոցս վրայ), մեր ազգային դրական յատկութիւններ որպէս, ի Պոլիս՝ նոյնպէս ի գաւառս ծաղրելի են. մենք ունենալով ձեռք չ'ունինք, շատ լոյծ վիճակի մէջ խմոր մենք, պէտք է կաղապարի մէջ թափուինք, պէտք է խտանանք: Եթէ կարող էք, համոզեցէք զուսահայս որ մի մեծ կրթական ընկերութիւն կազմեն և Հայաստանի մէջ ուսում տարածեն հիմնաւոր մեթոտներով. թող չը խորհին թէ դրանք գաւառացւոց կամ պոլսեցւոց պարտականութիւն են, թէ գաւառացիք ունին հարուստներ և թէ վերջապէս թող նրանք ինքնօգնութեամբ գործեն. այն որ սերին ճաշակը չ'է առած՝ ստակ չ'տար և սեր չ'գնեց. մանաւանդ որ տեղական դրամով գործ տեսնելը ամեն ժամանակ նպաստաւոր չը լինիր. ճշգրտութիւն և բողոքականք ամեն տեղ վարժատուն կը բանան օտար լինելով հանդերձ, իրենց շահուն համար է. բայց մի թէ մեր շահն ևս ալ աւելի չը պահանջեր անոնցմէ աւելի գործունէութիւն ցոյց տալու ամենուրեք:

Լ. Բ.

ԱԶԳԱՅԻՆ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Նամակներ, որոնք վերաբերում են «Արաքսին»:

Յարգելի Բարեկամ

«Արաքս» հետևելիք ուղղութիւն մէջ վեհապանծ անձանց նկարագիրներին մեծ տեղ էք յատկացրած. իրաւունք ունէք. ապիկար է այն զօրապետը, որը կ'ճգնի չոր խրատներով ամրապնդել իր զօրաց հոգին. վհատեալ զօրաց և մեզ պէս ժողովրդոց համար վսեմ ներշնչումներ պէտք են և վեհ օրինակներ:

Որքան էլ այժմ ազգային հանգամանքները փոխուած լինեն, բայց և այնպէս ոգևորելու նիւթեր միշտ անպակաս են. ո՛չ մարդ, ո՛չ ժողովուրդ չեն կարող գոհանալ սոսկ սառը դատողութիւններով. հոգին ևս իր պահանջը ունէ, որը գուցէ աւելի զօրաւոր է: Մարդու առողջութիւնը կազդուրելու համար պաղ ~~դուր~~ միայն հերիք չէ, արեգակի տաք ճառագայթներ ևս պէտք են. մտքի բարձր արտայայտութիւնները պէտք է զուգորդել սրտի վսեմ պահանջների հետ, որպէս զի արդեանց ընդհանրութիւնը լիակատար լինի և ո՛չ կիսամասնեայ...

() Գտակար բան կ'անէիք եթէ յանձնարարէիք կովկասում մասնաւոր թղթակիցների, այնտեղի լեռնացիների վրայ առանձին ուշ դարձնելու. նոցա անցեալը դիւցազնական է, ապագան խոստացող, նոցա վարք ու բարքերը գեռ անաղարտ են և սովորութիւնները համակրելի. ունեն այնպիսի բարեմասնութիւններ, որոնք կարող են հրահանգիչ լինել մեզ, չ'նայելով մեր («կուտուրական») բարձր յաւակնութիւններին... (Նացի այդ, մէկ երկրի զաւակներ ենք, պէտք է որ մենք նոցա արժանիքը ճանաչենք, իսկ նոքա էլ մեր բարեացակամութիւնը...

«Արատի» միտումը և ուղղութիւնը խիստ ակներև է, լինի նա գիրք, ամսագիրք, թէ շաբաթագիրք... Շատ լաւ էք անում որ արհամարում էք խճրճանքները և խոյս տալիս զուր բանակութիւներից:

Եթէ հայ գրագէտները իրանց ստանձնած պաշտօնի վերայ հէնց մի փոքր գիտակցութիւն ունեն, թող տարբեր եղանակաւ միենդոյն նպատակին դիմեն, այլ ո՛չ թէ մէկ զմէկու աչքը փորեն... Ուրիշ բան է բանաւոր քննադատութիւնը, որն դժբաղտաբար մեծ պակաս է կազմում մեր մէջ:

Գր. Նիկողոսեանց

Կ. Պօլիս, 1889 թ.

Սեպտ. 10

Աղէկ- Բարեկամ

... Ապաքէն գովելի աշխատութիւն (Արատի), որ նպատակն է ի միջի այլոց ի վեր հանել մեր տաղանդաւոր մշակաց արժանաւորութիւնն և բազմաքերտն կեանս:

Ժողովրդեան յառաջդիմութիւն կախում ունի յայսպիսի ոգևորիչ անձանց: Ընտէ՞ր չճանաչէ աղբ մի իւր մեծանուն բարերարաց յիշատակն և չպատուէ: Դուք այդ նուիրական յիշատակներն ի մեզ զարթուցիք և վառեցիք զմեզ նոցա սրտառուչ կենսագրութեամբ: Խտալացին և յոյն՝ իւր Տանթէին և Վեթրակէն, Վսենոփոնտն և Պլատօնն ի թունդ կիջնէ, և ահա հրաշակերտներ կստեղծէ: «Արատի» նկարած մեծ բարերար անձեր՝ մեր սրտից թարչամած ծաղկանց քաղցրասիւք պայծառ առաւօտն են:

Գ. Ժ. Աբջ.



ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Այվազովսկու պատկերը «Ուխարները Բուխեն Բախեն» նորա նշանաւոր գործերից մինն է: Այս պատկերը նկարել է նա 1861 թուին գարնանը, այն ժամանակամիջոցներից մինում, երբ նկարիչը ստեղծում էր իր հանձարեղ գործերը ներշնչումից զրգուած: Այս նկարի ծագման մասին հետեւեալն են պատմում:

Այվազովսկին Ղլրիմում ունի դաշտային մեծ կալուածներ, որտեղ նա պահում էր 3000 զլուխ ոչխար: 1861 թուականին ձմեռը, այս ամբողջ հօտը սարսափելի փոթորիկից հալածուած ծովն է թափվում: Այս դէպքի ազդեցութեան ներքոյ, նկարիչը չ'ցաւեց նիւթական կորուստի վերայ, այլ ընդհակառակը, նա ներշնչուեց կատաղած փոթորիկի սարսափելի ուժից և նկարեց մի այնպիսի պատկեր, որի մէջ զարմանալի կենդանութեամբ արտայայտեց օդի, ձիւնալեց մրրիկի և մի խումբ ոչխարների շարժումն, որոնք տեղացող երկիւղի սարսափից դիմում են դէպի վտանգ: Ոչ շների հաչոցը, ոչ հովիւների դռում-գոչիւնը, անկարող են լինում դիմատրելու արկածին: Այս պատկերը նկարիչը ուղարկեց Լժնդօն, որտեղ նա ծախուեց շատ շահաւոր գնով, որը և միանգամայն վարձատրեց նորան աւելի, քան արժէին ոչխարները:

«Փոթորիկը Ազովեան Զովում» Այվազովսկու ամենամեծ պատկերներիցն է: Այս պատկերը ներկայացնում է «Նաստրեք» շոգենաւի վտանգի սարսափեցուցիչ մի տեսարանը 1885 թ., որի կայմի վերայ ազատուեց բոլոր նաւաստիներից միայն մէկը, որը վեր է բերած բոլորովին սառած միայն հինգերորդ օրը

օգնութիւն հասնող շողենաւր: Ալիքների ուժեղութիւնը, որոնք բարձրանում են սարսափելի քամուց, նկարիչը նկարագրել է զարմանալի տաղանդով, միւսնոյն ժամանակ միանգամայն պահպանուած է միշտ խռովող Ազովեան ծովի պղտոր ջրի գոյնը և ալիքների ամեն կողմ անկանոն շարժումը: Այս պատկերը գնել է ռումինացոյց Սարլ թագաւորը: Սորա յաջողութիւնը այնչափ մեծ էր որ Ալվազովսկին, իր սովորութեան հակառակ, այս միւսնոյն պատկերը նկարեց երկրորդ անգամ հինգ օրում: Այս երկրորդ պատկերը, որի օրինակը մենք դնում ենք «Երաքսում», Պետերբուրգի մեծատունների միոյն դահլիճն է զարգարում:

«Պարեալան կերճը»*)—Ալվազովսկու Սովկասեան նկարների շարքիցն է: 1868 թուին մեր տաղանդաւոր նկարիչը ճանապարհորդեց Սովկաս, եղաւ Վլադիկավկազ, Հիւսիսային Պաղստան, Չէչէների մէջ, Պուշիք, Պարեալ և այլն: Չմեռը ապաստանեց Թիֆլիսում, որտեղ և նկարեց 12 պատկերներ, որոնց մէջ առանձնապէս յաջող են. Թիֆլիսի տեսարանը, Չիւհ-հիւս լեռների մէջ, Պարեալեան կիրճը և ուրիշները:

Այստեղ կարեւոր ենք գտնում և մի քանի խօսք ասել ծերունի նկարչի գործունէութեան մասին**): Չնայելով նորա 73 ամեայ տարիքին, նա դեռ ևս աշխատում է պատանեկական աշխոյժով ու սիրով դէպի իր արուեստը: Այս ձմեռ նա արդէն նկարել է մօտ 20 մեծ պատկերներ, որոնց թուումն է եօթ արշին մեծութեամբ մի փոթորիկ: Այս բոլոր պատկերներից Ալվազովսկին մտաւիր է Փարիզում, այս դարնանը, ցուցահանդէս բանալ, որտեղ նրա աշխատութիւնները արդէն եղած են 1848 և 1858-ի ցուցահանդէսներում և որոնք մեծ տպաւորութիւն են թողել ամեն անգամ Ֆրանսիացիների վերայ, որոնք ինչպէս յայտնի է չունեն լաւ ծովանկարներ:

*) Վերձ բառի փոխարէն նկարի տակ սխալմամբ նշուող է գրուած:

**) Յովհաննէս Ալվազովսկու կենսագրութիւնը տես «Երաքսի» առաջին տարուայ երկրորդ գրքում 98-105 երեսներում:

Բաթում քաղաքի նկարը օրինակուած է Ղազօրիօ անուանի ծովանկարի պատկերից: Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ Ղազօրիօն ծնուած է նոյն քաղաքում— Թէոդոսիա—որտեղ ծնուած է և մեր հռչակաւոր նկարիչ Այվազովսկին: Ղազօրիօն ընդունւում է Պետերբուրգի գեղարուեստական ճեմարանը Այվազովսկու միջնորդութեամբ, այստեղ մեծ ընդունակութիւն ցոյց տալով, ճեմարանի հաշուով դնում է արտասահման և այնտեղ կատարելագործւում իր արուեստին մէջ: Առաջին աշխատութիւնների մէջ, նա բոլորովին հետեւում էր Այվազովսկու ուղղութեանը և համարեա օրինակում էր նորա պատկերները: Հետոյ հետէ սկսեց ինքնուրոյն ճանապարհով ընթանալ և այժմ թէպէտ չէ կարող մեծ տաղանդների կարգն անցնել, այնուամենայնիւ Ռուսաստանի առաջնակարգ նկարիչներից մինը կարող է համարուել: Սորա տաղանդի յատկութիւնն է ուշադրութիւն դարձնել բնութեան երևոյթների մանրամասնութիւնների վերայ և զարմանալի նրբութեամբ արտայայտել: Ղազօրիօն երկար ժամանակ նախորդ Սովկասեան փոխարքայ, Միքայէլ Միկոլայեւիչի նկարիչը լինելով, Սովկասի բնութիւնից շատ նշանաւոր պատկերներ է ստեղծել, իսկ վերջին տարիները Խրիմի ծովային տեսարաններն է նկարում: Սորա յաջող գործերի մինն է «Բատումի» տեսարանը, որի օրինակը դնում ենք «Արաքսում»:

Սերգէեւ նկարիչը միայն հինգ վեց տարի առաջ յայտնի եղաւ իրեն տաղանդաւոր աշխատութիւններով: Սորա մասնագիտութիւնը նկարչութեան մէջ բնութեան զանազան տեսարաններն են: Առաջին պատկերների պակասութիւնն այն էր, որ առհասարակ արեգակի և լոյսի արտայայտումը չափազանց դունաւոր էին, վերջին պատկերներում նկարիչը հետզհետէ կատարելագործուեց: Այն նկարը, որի օրինակը մենք տպում ենք «Արաքսում», ձևացնում է բնութեան խռովութիւնը սարսափելի քամուց, որը մեծ ուժգնութեամբ պարկեցնում է ծառերը, շարժում է ջրի մակերևոյթը, որի վերայ ծովային թռչունը ուրախութեամբ բացելով իր թևերը որսում է ձկներ:



ԲԱՏՈՒՄ. ՆԿԱՐ ԼՍԳՈՐԻՑԻ

Հրատ. «Արարատ» Հանդիսի:



U. S. S. Albatross

ԼՈՒՐԵՐ

Լնցեալ տարուայ դեկտեմբերի 30-ին տեղի ունեցաւ տեղւոյս հայ ուսանողների սովորական երեկոյթը: Եւս տարի ներկայացրին «Այս իմ կորած յիսուն ոսկին» վողիվիլը, որից յետոյ սկսուեց երաժշտական մասը: Արդիվիլը միջակ անցաւ: Տիկին Ռաստամեան Սալումէի դերում, և Պ. Լ. Ղ. Վալանթար Սիքէլեանի դերում յաջող էին:

Երաժշտական բաժնում մասնակցում էին բացի մի քանի անձերից և երկու հայուհիներ. օր. Սաղթադինէ Վանջեանց և օր. Պապայեանց, որոնք այս տարի աւարտելու են իրենց ուսումը տեղւոյս երաժշտանոցում: Հասարակութեան բուռն ծափահարութիւնների պատճառով թէ օր. Վանջեանց, որը գրաւիչ ձայնով երգեց «Ո՛հ ինչ անոյշ» և «Վա երազ էր» բոմանսները և թէ օր. Պապայեանց ստիպուած էին կրկնել միևնոյնը երկու երեք անգամ:

Երաժշտական բաժնում պ. Լ. Զամալեանցի առաջնորդութեամբ մասնակցեց և ուսու երգիչների մի խումբ, որ շատ անյաջող երգեց հայերէն եօթ ութ խմբերգեր: Երգեցողութիւնների միջադարձերում տրուեցին կենդանի պատկերներ: Սորանից յետոյ, մօտաւորոպէս դիշերուայ ժամի մէկին կովկասեան պարերից յետոյ, սկսուեց եւրոպական պարերգութիւնը, որը վերջացաւ առաւօտեան ժամի 3-ին: Եւս տարի հասարակութիւն շատ կար և աւելի ընտիր էր, քան անցեալ տարի:

Եւս մենք մեզ թոյլ ենք տալիս մի քանի նկատողութիւններ անել այս երեկոյկի վերայ ընդհանրապէս:

Վախ դիտելու է, որ այս երեկոյթները տրուում են բարեգործական նպատակով, այսինքն տեղւոյս չքաւոր հայ ուսանողների օգտին. ուստի և բնական է, որ այս երեկոյթների կարգադրիչները մեծ զգուշութեամբ և առհասարակ հեռատեսութեամբ վերաբերուեն դէպի ուսանողական երեկոյթների զանազան ծախսերը, սակայն, դժբաղդաբար, ինչպէս փորձերը ցոյց են տալիս, բարեգործական նպատակով տրուող այս երեկոյթները բնաւ չեն արգարացնում իրենց գլխաւոր նպատակը, այն է բարեգործական անունով ժողովուրդած դրամների մեծ մասը ոչ թէ չէ ծառայում չքաւոր հայ ուսանողների օգտին, այլ թէ միանգամայն ապարդիւն կերպով է միսւլում:

Ի նկատի առնելով, որ երեկոյթը բարեգործական էր, անշուշտ, մի առանձին կարիք էլ չկար երկրորդ բաժանմունքը այնքան հարուստ դարձնել, որ հանդիսականների մեծ մասի դժգոհութեան

առիթ էլ դառնար. հասանալով, եթէ ուշադրութեան տակ առնենք, որ ասիւն յի մասնակցողին երեկոյթի անթիւ կառավարիչները մեծ եռանդով, չնայած անգամ հասարակութեան սառնասրտութեան, բռն և անվերջ ծափահարութիւններով ստիպում էին բոլորովին անտեղի կրկնել ու երրորդել...

Երիտասարդ ուսանողները, որոնք երեկոյթի կառավարիչներն էին հանդիսանում, թող ներեն մեզ, որ մենք ի դէպս դիտենք, թէ նոքա իրենք, այսպէս ասած, երեկոյթի տէրերն են ներկայանում, իսկ հանդիսականները նոցա հիւրերը. այս տեսակէտով, խիստ բնական և միեւնոյն ժամանակ քաղաքավարի կլինէր, եթէ հանդիսականներին իրենց թողնէին գնահատելու այն բոլորը, ինչ որ տեղի էր ունենում բեմի վերայ. կարծում ենք, այս տարրական ճշմարտութիւնը հասկանալի է ինքն ըստ ինքեան: () Իննակի համար, նախ ի՞նչ կարիք կար օտար մի խումբ հրաւիրել հայերէն խմբերգեր երգելու, թէև Պ. Մ. Լքմալեանցի առաջնորդութեամբ, սակայն որոնց աւելի քան միւսներին սաստիկ ծափահարում էին նոյն իրենք երիտասարդ կառավարիչները: Ենչուհետ, եթէ չլինէր այդ խմբի մասնակցութիւնը, երեկոյթը աւելի շնորհալի տպաւորութիւն կ'ընդունէր հանդիսականների վերայ, այն ինչ այդ իսկ անտեղի և աւելորդ մի խմբի վերայ, բարեգործական նպատակով ժողովուրդ գումարից զոհուեց 150—200 ուրբի: Այնպէս ի՞նչ կարիք կար մի որեւէ երկու կենդանի պատկերի համար, այն էլ ոչ հայկական կեանքից, 100 ուրբի վճարել. կարծում ենք, որ առանց օտար խմբի մասնակցութեան և առանց կենդանի պատկերի էլ կարելի էր սարքել երեկոյթը և հանդիսականներից ոչ ոք դժգոհ չէր մնար, ըստ որում առանց դոցա էլ երեկոյթի ծրագիրը ընդարձակ էր, որի պատճառով և պարերգութիւնը փոխանակ որոշուած ժամին, 12-ին, սկսուելու, սկսուեց համարեա մէկին, որ դարձեալ շատ շատերի կողմից դժգոհութիւնների առարկայ եղաւ:

Յուսանք, որ յառաջիկայ տարին ուսանողութեան կարգադրիչները օգտուին ներկայ տարուայ փորձից, որով և աւելի մեծ ծառայութիւն մատուցած կ'լինեն իրենց չքաւոր ընկերներին:

«Երաքսի» առաջին գրքում մոռացմամբ չէինք յիշած տեղւոյս կայսերական համալսարանում ներկայ տարուայ մէջ աւարտած հայ երիտասարդների թուում երեք հայ ուսանողների անուններ.

Սոքա են. Պետրոս Քալանթարեանց, երևանցի, Յովհաննէս Միրիմանեանց, թիֆլիսիցի, որոնք աւարտեցին իրենց ուսման ընթացքը իրաւաբանական բաժնում, և Կարապետ Լլթոնջեանց, զրիմեցի, մաթէմատիկական բաժնում:

Այստեղ գնում ենք «Արաքսի» բաժանորդների թիւը, թէ առաջին և թէ երկրորդ տարւոյն ընթացքում:

«Արաքսի» զրքերը առաջին տարին, 1888 թուին, թուով 491՝ տարածուեցան հետևեալ քաղաքներում և աւաններում:

Ալեքսանդրով—1, Ախալքալաք—3, Աքքերման—1, Աղէքսանդրով—7, Աստրախան—13, Արգաշան—1, Բագու—70, Բատալիա—1, Բատում—1, Գանձակ—11, Գերբէնդ—1, Գիւլիժան—7, Եալտա—2, Երևան—13, Եգիպտոս—1, Եդիմնով—1, Եւպատորիա—1, Եր—մ—1, Օւքաթալա—1, Լճմիածին—5, Թիֆլիս—25, Թաւրիզ—1, Լօնդօն—1, Խարկով—1, Կադլուան—2, Կարասուբազար—1, Գարս—5, Գուբայ—3, Գաղախ—2, Գլաւար—10, Գլամարլու—2, Սոդդոկ—14, Սոսկուլայ—10, Մախիջեան—12, Մօլօ-Ալեքսանդրիա—1, Մօլօքերկասկ—1, Շուշի—10, Շամախի—1, Ուզուն-Աղա—2, Պետերբուրգ—62, Պետրիգորսկ—1, Ուշտ—1, Սընախ—3, Սուլինովկա—1, Սլավեանկա—1, Սիմֆերոպոլ—1, Սլաւալ—1, Սլաւոկիւկալազ—3, Քիչնե—1, Քիոս կղզի—1, Փոթի—10, Ֆոքչան—2, Փարիզ—2, Սիբիրկ—1, (Դեսսա—7, արտասահման—55, այլ և այլ տեղեր—46, նուէրներ, լրագրներին, աշխատակիցներին—46, ընդամենը 491 օր. այսքան օրինակ էլ տպուած էր. ուրեմն բոլոր օրինակները սպառուած են:

Երկրորդ տարին, 1889 թուին, մինչև այժմ մեր բաժանորդների թիւը հասնում է 602-ի հետևեալ քաղաքներում:

Աղէքսանդրով—12, Արմաւիր—6, Արտուին—4, Աքքերման—1, Աստրախան—26, Աստրիա—1, Բագու—47, Բատում—19, Բաշնորաշէն—1, Գանձակ—13, Գիւլիժան—4, Գերբէնդ—3, Երևան—12, Օւմ—14, Թաւրիզ—4, Թէոդոսիա—19, Թիֆլիս—20, Խարկով—1, Խասգիւղ (Բուլղարիա)—1, Կարաբանով—1, Կոդալ—2, Կիւրիւլի—1, Կադլուան—5, Գլաւար—13, Գարասուբազար—1, Գարս—11, Գուբա—6, Գաղախ—2, Սոդդոկ—22, Սեզրի—1, Սոսկուլայ—19, Սեօ-Գարաքիլիսա—4, Սուկուլանսկայա—1, Մոր-Մախիջեան—49, Մուխի—1, Մոր-Բայազէթ—1, Մախիջեան—1, Շամախի—12, Պետերբուրգ—40, Պետրովսկ—2, Պետրիգորսկ—4, Սընախ—1, Սիմֆերոպոլ—1, Սլաւան—1, Սերասխ—1, Ստ, Բիւիով—1, Սլավեանսկ—1, Սարաղամիշ—2, Սոստով—5, Ուշտ—1,

Ունեցուն—1 (Իրմանիա), Սուլին—2, Սլադոկովկա—6, Սլադարչապատ—4, Փոթի—14, Քիշնև—6, Քարվանսարայ—1, Քուլթայիս—2, Շախտնայեա—1 արտասահման—70, (Օրդուբադ—1, (Օրեստ—14, աշխատակիցներին—15, նուէր—40, խմբագրութիւններին—4, ընդամենը 602: Տպագրած ենք 710 օրինակ, հետևապէս 1889 թուի գրքերից դեռ մնում է անվաճառ թէ առաջինից և թէ երկրորդից 108 օրինակ:

Վեկտեմբեր ամսի վերջում Պետերբուրգում բացուած են երկու մեծ համառուսական ժողովներ. մէկն է բնագէտների և բժիշկների ժողովը, միւսը—արհեստագիտական ժողովը, որի հետ բացուած է և մի ընդարձակ ցուցահանդէս: Եւս երկու ժողովների մասին կ'աշխատենք («Երաքսի») հետևեալ համարում մի քանի տեղեկութիւններ հաղորդել: Բնագէտների ժողովը շատ բազմամարդ է, անդամների թիւը 2000-ից, իսկ ղեկուցումների թիւը 300-ից աւելի են: Ս'եր հայրենակիցներից 3 հոգի նաև ղեկուցումներ պէտք է անեն երկու ժողովներումն էլ: Եւդ պարոններն են՝ պ. Ե. Վալանթար, պ. Ե. Վալանթար և պ. Ս. Թայիրեանց:

«ԱՐԱՔՍԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Նոր-Նախիջևան. Ու. Բ. Ձեր բանաստեղծութիւնները չեն տպուիլ:

Սլադոկովկա. Ս. Խ. Շնորհակալ ենք Ձեր համակրութեան համար: Յարգելով Ձեր խնդիրը, դնում ենք այստեղ Ձեր «Նուէրը».

«Երաքս» թող հոսէ, անմռունչ ձայնով,
ձմեռուան հետքեր ողողէ դէպի ծով,
ոռոգէ հանգք, անդաստան հայոց,
ղարդարէ եզերք հոտաւէտ ծաղկով:

Բուլղարիա, Խասգիւղ. Յ. Փ. Ստանալով Ձեր երկրորդ նամակը, դժբաղդաբար, կրկնելու ենք միևնոյնը. այժմեան հայ գրականութեան մէջ գոհացուցիչ ողոսահայ բառարան չկայ:

Օդեսսա. Ս. Կ. Գոհացուցիչ ողոսահայ բառարանի և պատկերազարդ հայոց պատմութեան վերայ մատնացոյց անել չենք կարող: Ուրախութեամբ կուղարկէինք Ձեզ Ս. Լուսաւորչու մեծագիր պատկերը, եթէ կարողանայինք ձեռք բերել, սակայն մեզ յայտնի չէ, արդեօք այժմ ծախու կայ այդ պատկերը, թէ ոչ:



ԲԵԼԱ

(ԼԵՐՄՕՆՏՕՎԻՑ):

Թիֆլիսից եւ դուրս եկաց սուրհանդակի սայլակով. նորա բոլոր բեռը կազմում էր մի պայուսակ, որի կէսը լեքն էր իմ ճանապարհորդական նկատողութիւններովս Վրաստանի մասին: Ձեր բաղդից նրանց մեծ մասը կորսուած է, իսկ պայուսակը միւս շորերիս հետ տարաբաղդաբար մնացել է անկորուստ:

Երևը արդէն սկսել էր ձիւնապատ սարի հոտեր մայր մրտնել, երբ ես մտայ Սոյշաուրեան հովիտը: Օս կառավարս բարձր կրգելով, անխոնջ քշում էր ձիերը, որ մոլթը չ'ընկած կարողանար բարձրանալ Սոյշաուրեան սարը: Հիանալի տեղ է այս հովիտը: Նա չորս կողմից պատած է կարմրին զարկող անմերձենալի ժայռերով, որոնք զարդարուած են չինարի ծառերով, և կանաչ պատուտակներով, դեղնորակ դահլաձէժներով, որոց վերայ այստեղ և այնտեղ ախօս են բացել հեղեղները, իսկ սոցանից վեր, շատ վեր երևում է ձիւնի ոսկեդոյն ժապաւէնը. իսկ ներքեւում իւր հայելանման երեսով երևում է Երազվայ գետը, որը զրկախառնուած սև ու մոլթ կիրճից հոսող մի գետի հետ՝ հալուած արծաթի նման առաջ է բնթանում:

Երբ մօտեցանք Սոյշաուրեան լեռան ստորոտին՝ դինետան մօտ կանգ առանք: Այստեղ հաւաքուած էին քսանի չափ վրացիներ և լեռնականներ, իսկ մօտակայքում իջևանել էր ուղտերի կարաւանը: Որովհետև աշուն էր և սառսռոց՝ ուստի ես պէտք է վարձէի եղներ, որ կարողանայի սայլակս հանել այդ անիծուած սարը, որ մօտ երկու վերստ երկայնութիւն ունի:

Ինչ արած, ես վարձեցի վեց եղ և մի քանի օս: Նորանցից մէկը շալակեց իմ պայուսակս, իսկ միւսները սկսեցին միայն դռալով օգնել եղներին:

Իմ սայլակի հոռից դալիս էր թափէթափ բարձուած մի ուրիշ սայլակ, որին լծուած էին չորս եղներ, և խաղալով տանում էին: Նս զարմացած մնացի: Սայլակի հոռից դնում էր նորա աէրը, որ ծխում էր կաբարդական փոքրիկ արծթած չիբուխը: Նա հագել էր սպայի զգեստ, որի վերայ չ'կային ուսադիրներ, և գլուխը դրել էր չէքէզի բրդոտ փափաղ: Նա կ'լինէր մօտ յիսուն տարեկան, նորա թուև երեսը ցոյց էր տալիս, որ նորան արդէն ծանօթ էր Աովկասի տաք արևը, բայց կանուխ ճերմկած բեկերը չէին համապատասխանում նորա ժիր քայլուածքին և կայտառ տեսքին: Նս մօտենալով նորան բարևեցի: Նա առանց ձայն հանելու ընդունեց իմ բարևս և բերանից դուրս թողեց ծխի թանձր քուլան:

— Ինչպէս երևում է, մենք միմեանց ճանապարհորդակից ենք:

Նա լռութեամբ դիտով համաձայնութեան նշան արեց:

— Նրևի դուք, Ստավրոպոլ՝ էք գնում:

— Այո՛... արքունական իրեր եմ տանում:

— Ասացէ՛ք, խնդրեմ, ինչո՞ւ ձեր ծանր սայլակը չորս եղներ այդպէս դիւրութեամբ են տանում, իսկ իմս, որը դադարի է՝ վեց եղ հազիւ են քաշում, չ'նայելով, որ օսերն էլ օգնում են:

Նա խորամանկութեամբ երեսիս նայելով հեգնական կերպով ժպտաց:

— Ինչպէս երևում է, դուք, վաղուց չէ, որ Աովկասումն էք:

— Մի տարի կ'լինի, պատասխանեցի ես:

Նա նորից ժպտաց:

— Ինչո՞ւ համար էք հարցնում:

— Այնպէս, այս կովկասցիները կատարեալ անասուններ են: Դուք կարծում էք, թէ նորանք որ բղաւում են՝ օգնում են, ո՞վ զիտէ, թէ ի՛նչ են բղաւում: Նզնիրը նորանց ասածը հասկանում են, ուզում էք քսան եղ լծեցէք, բայց եթէ նորանք իրենց սովորցրածի պէս ճուսն՝ կաները տեղից չեն էլ շարժուի... Սարսափելի խարդախ մարդիկ են: Բայց ճարն

ինչ—նորանք սիրում են անցորդներից փող պոկել... Պուք այդ խաբեբաներին երես էք տուել: Այ, կ'տեսնէք, նորանք ձեզանից օղու փող էլ կ'ստանան: Աս նորանց լաւ եմ ճանաչում. ինձ չեն կարող խաբել:

— Իսկ դուք վաղուց այստեղ ծառայում էք:

— Այո, ես այստեղ ծառայում էի դեռ Աղեքսանդր Պետրովիչի^{*)} ժամանակ, պատասխանեց նա հպարտ կերպով: Նրբ նա եկաւ ամրոցների դիժը տեսնելու՝ ես պօղպօրուչի էի, աւելացրեց նա, նորա ժամանակ լեռնականների դէմ եղած կռուի ժամանակ ստացայ երկու աստիճան:

— Իսկ այժմ ինչ էք:

— Այժմ հաշվում եմ սահմանադրի երրորդ վաշտում: Իսկ դուք, եթէ անքաղաքավարութիւն չի լինի հարցնելա:

Աս նորան պատմեցի:

Սորանով էլ մեր խօսակցութիւնը վերջացաւ, և մենք միմեանց կողքին շարունակեցինք մեր ճանապարհը լուռութեամբ: Ներան զաղաթում մենք պատահեցանք ձիւնի: Նրեւ մայր մտաւ, օրը անմիջապէս տեղի տուեց զիշերին, ինչպէս սովորաբար պատահում է հարաւային երկրներում. բայց ձիւնի փայլունից մենք հեշտութեամբ որոշում էինք մեր ճանապարհը, որ դեռ սարն էր բարձրանում, սակայն ոչ այնքան թեք, ինչպէս առաջ: Աս հրամայեցի, որ պայուսակը դնեն սայլակի վերայ, եզների տեղ ձի լծեն, և վերջին անգամ վար նայեցի դէպի հովիտը: Բայց թանձր մառախուղը կոհակներով դուրս գալով կիրճից նորան բոլորովին ծածկել էր, և ոչ մի ձայն չէր հասնում այնտեղից մեր ականջին: Օսէրը աղմուկով հաւաքուեցան իմ չորս կողմն և սկսեցին ինձանից օղու փող պահանջել. բայց շտաբս—կապիտանը այնպիսի սպառնալիքով դուռաց նոբանց վերայ, որ նորանք իսկոյն հեռացան: Այ, ժողովուրդ, ասաց նա, ուստերէն հացի անուէր չէ իմանում՝ բայց սովորիչ է. «սպայ, օղու փող տուր»: Իմ կարծիքով թաթարները սորանցից լաւ են, նորանք զոնէ խմել չ'զիտեն...

Մինչև կայարանը հասնելը դեռ մի վերստի չափ կար: Չորս կողմերս այնպիսի մի լուռութիւն էր տիրում, որ մոծակի

*) Երմօլովի ժամանակ:

բզզոցից կարելի էր հասկանալ նորա թռչելու ուղղութիւնը: Չախ կողմում—բացուած էր անդնդախոր կիրճը: Նորա ետեւը և մեր առջև տեսնվում էին սարերի մուք—կապտադոյն գագաթները, ծածկուած զանազան ճեղքուածքներով և ձիւնի շերտերով՝ երևում էին դժգոյն հորիզոնում, որ դեռ փայլում էր վերջնալոյսի շողերով: Մութ երկնքում սկսեցին պլպլալ աստղեր, և, զարմանք, նորանք ինձ այստեղ աւելի բարձր էին թուում՝ քան հիւսիսում: Պողոտայի երկու կողմը ձիւնի տակից դուրս էին ցցուած սևադոյն լերի սպառաժներ, տեղ-տեղ ձիւնի տակից երևում էին թուփեր, բայց ոչ մի չոր դերև չէր շնկում: և հաճելի էր բնութեան այսպիսի մի անկենդան ժամանակ լսել լծուած ձիերի ֆռկալը, և անհաւասար զննկ-զննկոցը ռուսական զանկակի:

— Լզուց հիանալի եղանակ է լինելու, ասացի ես: Շրտաբս-կապիտանը ինձ ոչինչ չ'պատասխանեց, և ցոյց տուեց մեր դէմուդէմի բարձր սարը:

— Եյդ ի՞նչ է, հարցրի ես:

— Եյդ Պուտ լիառն է:

— Ե, ի՞նչ:

— Նայեցէք, ի՞նչպէս ծուխ է ելնում:

Եւ յիրաւի, Պուտ սարից ծուխ էր բարձրանում: Նորա կողքերով շարժվում էին ամպերի բարակ շերտերը, իսկ լերան գագաթի վերայ երևում էր մի սև ամպ, այնքան սև, որ մութ երկնքում նմանում էր մի բծի:

Արդէն մեզ երևում էր սուրհանդակի կայարանը իրեն շրջապատող տների կտուրներով, և մեր առջև մլմլում էին հրապուրիչ ճրագները՝ երբ փչեց ցուրտ ու խոնաւ քամի, կիրճը դղրտաց և տեղաց բարակ անձրև: Տառատուկ հաղել կարողացայ վերաս առնել որ արդէն ձիւնը կոխեց: Աս հիացմամբ նայում էի շտաբս-կապիտանի վերայ:

— Մենք ստիպուած ենք այստեղ գիշերել, ասաց նա ահա՛՛ կերպով. այսպիսի բքին այս սարերը անցնել չի լինի:

Խաչի գագաթում (Крестовая гора) ձիւնի հիւսեր կան, հարցրեց նա սայլապանին: Ո՛չ, պարոն, փլած հիւսեր չ'կան. իսկ կախ ընկած հիւսեր շատ-շատ կան, պատասխանեց օս սայլապանը:

Այսպարանում ճանապարհորդների համար սենեակ չ'լինելու պատճառով՝ մեզ տարան զիշերելու մի մոտա խրճիթ: Ուղեկցիս հրաւիրեցի միասին մի բաժակ թէյ խմելու, որ պատրաստելու էի իմ արդյւնեայ թէյնոցով, որը Աովկասում ճանապարհորդութեանս ժամանակ իմ միակ մսիթարանքս էր:

Խրճիթի մի պատը կաած էր ժայռին, սանդուխի երեք լպիւծ աստիճանները տանում էին դէպի ներս: Աս ածամծելով մտայ ներս և ընդհարուեցայ կովին. (Սորանց դռը միւնոյն ժամանակ և ծառաների սենեակ է): Աս չէի իմանում, թէ ո՛ւր գնամ, մի կողմում բացում են ոչխարները, միւս կողմում դռմստում է շուներ: Քարեբաղդաբար մի կողմում նկատեցի աղօտ լոյս, որը ինձ օգնեց դրան նմանող մի ուրիշ բացուածք գտնել: Այստեղ բաւականին հետաքրքրական տեսարան բացուեցաւ. երկայն խրճիթը, որի կտուրը հանդուում էր երկու մրոտած սխւների վերայ՝ լեցուած էր մարդիկներով: Մէջ տեղում գեանի վերայ կ'չրտում էր խարոյկը, որի ծուխը քամին ներս էր մղում կտուրի երդիկից և այնպիսի հաստ քօղ էր ձեւացնում, որ ես երկար ժամանակ աչերս չէի կարողանում բանալ. կրակի շուրջը պատառոտած շորերով նստած էին երկու պառաւ, մի քանի երեխաներ և մի լղար վրացի: Ուրիշ ճար չ'կար, մենք մօտեցանք կրակին և ծխեցինք մեր չիբուխները. թէյնոցն էլ շուտով եփ եկաւ:

— Ողորմելի՛ մարդիկ, ասացի ես շաբա-կապխտանին, ցոյց տալով մեր աղտոտ տանուակներին, որոնք լուծթեամբ և զարմանքով նայում էին մեր վերայ:

— Ամենայիմար ժողովուրդ է, պատասխանեց նա: Հաւատում էք: Ոչինչ չեն իմանում և անընդունակ են կրթութուելու: Ափսոս չ'են մեր կարարգացիները կամ չէ՛նները. նորանք թէև տկլոր աւաղակներ են, բայց դոնէ շատ ձիւքով մարդիկ են. իսկ սորանք մինչև անգամ զէնք դործածելու սէր չունին. ոչ մէկի վերայ մի կանոնաւոր դաշոյն չեա դանի: Յիւրաւի որ օտեր են:

— Իսկ դուք շոտ էք կեցել չէ՛նների մէջ:

— Այո՛, տաւր տարի ես այնտեղ բերդումն էի զինուորների հետ, Քարէ Հունի մօտ. (Каменный Бродь)—լսել էք:

— Լսած եմ:

— Այդ, այդ ճիտ կտրողները մեր հողին հանեցին: Հիմա, դոհուծիւն Աստուծոյ, հանգիստ են, իսկ առաջ այնպէս էր, որ եթէ հողապատնէշեց հարիւր քայլ հեռանայիր՝ մէկ էլ տեսար բրդոտ սատանէն նստած սպասում է, մի վայրկեան խելքդ վերագ չտահէիր՝ իսկոյն կամ պարանը (арканъ) վիզդ է կձգէր կամ գնտակը կհասցնէր ճակատիդ: Այ՛ քաջեր...

— Պուք անշուշտ շատ բաներ տեսած կ'լինէք, հարցրի ես հետաքրքրութիւնից շարժուած:

— Ո՛նց չէ, պատահել է:

Այդ ժամանակ նա սկսեց փետել աջ բեկը, և դուրսը կախ ձգելով սկսեց մտածել: Աս շատ ցանկանում էի լսել նորանից որեւէ պատմութիւն — ցանկութիւն, որը յատուկ է բոլոր նկարագրող ճանապարհորդներին: Մինչ այս, մինչ այն թէյը եղաւ, ևս պայուսակիցս հանեցի երկու ճանապարհորդական բաժակ, լիցրի, և մէկը դրի նորա առջև: «Նա մօտեցրեց շրթունքներին և կարծես ինքն իրեն ասաց, «այո, պատահել է»: Այդ շշուկը ինձ մեծ յոյս տուեց: Աս դիտեմ, որ հին կովկասեցիները սիրում են ասել — խօսի՛ր, նորանց շատ հազիւ է յաջողվում այս բանը, լինում է, որ մէկը հինգ տարի ապրում է զինուորային խմբով մի խուլ յետ ընկած տեղում, և բոլոր հինգ տարին մէկը չի լինի, որ նորան ասէ «բարեւ ձեզ» (որովհետեւ ենթաստան նորան ասում է ոչ թէ «բարեւ ձեզ», այլ՝ «ցանկանում եմ ձեզ աջողութիւն»): Իսկ խօսելու նիւթ շատ և շատ է լինում — չորս կողմը վայրենի և հետաքրքրական ժողովուրդներ են ապրում, ամեն օր վտանգներ են պատահում, լինում են շատ տարօրինակ դէպքեր, այնպէս որ մտադ ցաւում է, որ այդ անցքերը նկարագրողներ քիչ են պատահում:

— Յուրա է, արդեօք չէ՞իք կամենայ ձեր բաժակին փոքր ուժով ածել, ասացի ես խօսակցիս, ևս Թիֆլիսից հետո ունեւմ ճերմակը:

— Ո՛չ շատ շնորհակալ եմ, չեմ խմում:

— Ինչո՞ւ:

— Այնպէս: Ուխտել եմ: Նրբ ես դեռ պօղպօրուչիկ էի՝ ընկերներով մի անգամ քէֆ արինք և յանկարծ, հէնց այդ զիշերը, մի շփոթմունք եղաւ: Մենք դուրս եկանք, ճակատ կաղ-

մեցինք հարբած դրուժեան մէջ: Այս Ելեկէյ Պետրովիչը այս իմացաւ՝ ձիւնը գլիններին տուեց, Աստուած հեռու տանի այնպէս բարկութիւնը. քիչ էր մնացել, որ մեզ դատի մասնէր. և յերաւի, երբեմն ամբողջ տարի ապրում ես—մարդի երես չես տեսնում, և օղին էլ պատահած ժամանակ՝ տունդ քանդվում է:

Այդ լսելով ես յոյսս կտրեցի:

— Ահա օրինակ, չէրքէզները, շարունակեց նա, երբ հարսանիքի կամ թաղման ժամանակ խմում են իրենց «բուզան» սկսում են իրար կոտորել: Աս միանգամ հազիւ կարողացայ նորանցից ազատուել, չ'նայելով դեռ, որ խաղաղասէր իշխանի մօտ էի հրաւիրուած:

— Այդ ի՞նչպէս պատահեցաւ:

— Այ ինչպէս... (նա չեբուխը լեցրեց, ծուխը ներս քաշեց և սկսեց պատմել), ես սորանից մօտ հինգ տարի առաջ Տերեկի միւս ափին բերդումն էի զօրքերի հետ: Մի անգամ, աշնանը, կարաւանով զօրքերի համար պաշար եկաւ. կարաւանի հետ կար մօտ քսան և հինգ տարեկան մի դեռահաս սպայ: Նա ձեւազգեստով ինձ ներկայացաւ և յայտնեց, որ իրեն հրամայուած է, որ մնայ իմ մօտ ամբողջում: Նա այնպէս բառելի էր, դէմքը այնպէս ճերմակ, հագած զգեստը այնքան նոր, որ ես իսկոյն գուշակեցի, թէ նա Աովկաս նոր էր եկել: «Ռուք, ինչպէս երևի, տեղափոխուած էք այստեղ Ռուսաստանից», հարցրի ես: Շճմարիտ է, պարոն շտաբ-կապիտան, պատասխանեց նա: Աս նորա ձեռից բռնելով ասացի, «շատ և շատ ուրախ եմ: Թէեւ մի քիչ ձանձրալի կ'լինի այստեղ, բայց միմեանց հետ կ'ապրենք իբրեւ բարեկամներ: Աւ ինդրում եմ, որ ինձ Մակսիմ Մակսիմիչ գոչէք. և բացի այդ, ինչ՞ու էք հագել այդ ձեւազգեստը. ինձ մօտ այսուհետեւ եկէք հասարակ գլխարկով»: Նորան բնակարան տուինք, և նա սկսեց ամբողջում ապրել:

— Նորա անունը ի՞նչ էր, հարցրի ես Մակսիմ Մակսիմիչին:

— Նորա անունը... հա, Պրիզորիյ Ելեկսանդրովիչ Պեչօրին էր:

Հաւատացնում եմ, մի լաւ տղայ էր, միայն մի քիչ տարօրինակ: Օրինակ, ցուրտ ու անձրեւ օր է, նա բոլոր ժամա-

նակ որսի հետ է. բոլորը մրսում են, յողնում են, բայց նորա փոյթն էլ չէ: Իսկ ուրիշ անգամ, սենեակում նստած է, մի քիչ քամին շնկաց, և նա հաւատացնում է, թէ մրսում է. պատուհանի փեղքը շարժուի՝ նա վեր է թռչում երկիւղից զոյնը նետում. իսկ իմ այնտեղ եղած ժամանակ մեն—մենակ դնում էր կինճ որսալու. երբեմն այնպէս է պատահում, որ ամբողջ ժամերով մի խօսք բերանից չես կարող դուրս քաշել, իսկ երբեմն էլ այնպիսի բաներ է պատմում, որ մարդ խնդալով մեռնում է: Այո, տարօրինակ մարդ էր. կարծեմ նա հարուստ էլ էր, նորա մօտ ինքան թանկագին նիւթեր կային...

— Ի՛նչ, նա ձեզ հետ երկա՞ր ապրից, նորից հարցրի ես:

— Այո, մի տարի: Եւ հէնց դորա համար այդ տարին անմոռանալի է մնացել ինձ: Նա ինձ բաւական փորձանքների մէջ ձգեց,—Աստուած բանն յաջող է...

Յիրաւի, կան մարդիկ, որոնց կարծես սկզբից վիճակուած է զանազան օտարօտի արկածների հանդիպել:

— Օտարօտի արկածներ, ճշացի ես հետաքրքիր ձեռով, նորա համար թէյ լեցնելով:

— Այո, ձեզ պատմեմ: Ամբողջ վեց վերստ հեռաւորութեամբ ապրում էր մի խաղաղասէր իշխան. նորա որդին, որը կ'ընէր մօտ տասն և հինգ տարեկան՝ սովորել էր ձիով ամեն օր մեզ մօտ գալու այս կամ այն բանի համար: Նս և Գրիգորի Արեւսանդրովիչը նորան կատարեալ երես տուինք. բայց ի՛նչ չար և ճարպիկն էր. ձին վազած ժամանակ էլ զետնից զլիարկ վերցնել ես ասում, էլ ձիու վերայ հրացան արձակել ես ասում: Մի վատ կողմ ունէր, որ սաստիկ փողպապաշտ էր: Մի անգամ Գրիգորի Արեւսանդրովիչը կատակի համար խոստացաւ նորան տալ մի ոսկի, եթէ նա իւր հօր հօտից գողանար ամենալաւ այծը. և ի՛նչ էք կարծում. հէնց միւս գիշերը նա այծին եղջերներէն բռնած քարը տալով բերեց: Երբեմն էլ պատահում էր, որ մենք նորան ժիւթին էինք գալիս, նորա աչքերը արիւնով լեցվում էին, և իսկոյն դաշոյն էր քաշում: «Ե՛յ, Ազամատ, ես քո զլուխդ կաղնմ», ասում էի նորան «բանդ բուրդ է»:

— Մի անգամ ծեր իշխանը ինքը եկաւ մեզ հարսանիք հրաւիրելու. նա իւր մեծ աղջիկը տալիս էր կնուծեան, և

մենք միմեանց հետ երթ ու գալ ունէինք. թէ և նա թաթար է, սակայն զիտէք, չէ կարելի մերժել: Գնացինք: Գլխովում մեզ պիմուտորեց շների մեծ վռհմակ բարձր հաջողով: Սինիրը մեզ տեսնելու պէս թագ կացան, խակ նէրանք, որոց երեսը մենք կարողացանք տեսնել՝ շատ հեռու էին գեղեցիկ լինելուց: «Նս աւելի լաւ կարծիք ունէի չէրքէզուհիների մասին, ասաց ինձ Գրիգորիյ Ալեկսանդրովիչը»:—Սպասեցէք, ծաղրելով ասացի ես, մաքումս ես մի բան ունէի:—Իշխանի մօտ հաւաքուած էր մեծ բաղմութիւն: Ասիացիների մէջ սովորութիւն էր ամեն պատահածի հարսանիք հրաւիրել: Մեզ ընդունեցին մեծ յարգանքով, և տաւան հիւրերի սենեակը (օտան): Բայց և այնպէս ես չմոռացայ նկատել, թէ ո՛ւր կապեցին մեր ձիերը. ո՞վ զիտէ, ի՞նչ կարող էր պատահել:

— Նորանք ի՞նչպէս են կառարում հարսանիքը, հարցրի ես շաբա-կապիտանին:

— Ի՜հ, սովորական կերպով: Սկզբից մօլան մի բան կարգում է զօրանից, յետոյ շնորհաւորում են նորապատկերին և նորանց բոլոր ազգականներին: Ուտում են, խմում են քո-ղան՝ և ապա սկսում են մկունդ խաղալ, և միշտ մի որևէ կեղտոտ, ցնցոտի հազած մէկը քոտտ ձիով խեղկատակութիւններ է անում և զուարճացնում հիւրերին, յետոյ, երբ մութն ընկնում է հարսնետանն սկսում է, ինչպէս մենք ասում ենք, խնջոյքը: Իւեղճ ծերուկը արնկաքնկացնում է իւր եռաղի նուագարանը—չ'զիտեմ ինչպէս են ասում իրենք... Հա՛, մի քիչ մեր չօնդուրին է նման: Աղջկները և մանչերը կանգնում են երկու շարք, միմեանց հանդէպ, ծափ են տալիս և երգում են: Ահա դուրս են գալիս մի աղջիկ և մի երիտասարդ մէջ տեղը և սկսում են երգելով միմեանց ոտանաւորներ ասել ինչ որ մտքերին գալիս է, խակ միւսները «առնում են» խմբով: Նս և Պեչորինը նստած էինք պատուաւոր տեղում, և ահա մեզ մօտեցաւ տանախրոջ կրտսեր դուստրը, որը կ'լինէր մօտ տասն և վեց տարեկան և երգեց նորան... ի՞նչպէս ասեմ... գովասանական մի բան:

— Ի՞նչ երգեց նէ, չէք յիշում:

— Հա՛, կարծեմ այսպէս էր. «սիգահասակ են մեր գեռահաս պատանիները, նորանց վերայի արխաւուղը արծաթով է

բռնած, իսկ ոռւս դեռահաս սպան նորանից աւելի վայելչակազմ է, և հանդերձի զարգերը ոսկուց են: Նա նորանց մէջ նման է չինարի, բայց նա չի մեծանայ, չի ծաղկի մեր պարտիզումն: Պեջորինը վերկացաւ, նէրան գլուխ տուեց, ձեռքերեց կրծքին և ճակատին, և ինձ խնդրեց, որ նէրան պատասխանեմ: Նա նորանց լեզուն լաւ գիտեմ. թարգմանեցի նորա պատասխանը:

— Նրբ նէմեզանից հեռացաւ, ես Պրիգորիյ Ալեկսանդրովիչի ականջին ասացի, «ի՛նչպէս է»:

— Հրաշալի է, պատասխանեց նա. անձնն ինչ է:— Նէրան ասում են Ռէլա, պատասխանեցի ես:

— Նւ յիրաւի, նէ գեղեցիկ էր. բարձր հասակով, ճիւղն մէջքով, սև աչքերով, որոնք ինչպէս վայրի այծեամի աչքեր թափանցում էին մարդու հոգու մէջ: Պեջորինը մտածմունքի մէջ ընկաւ. և նէրանից ուշ չէր հեռացնում, իսկ նէ յաճախ աչքի տակով նայում էր նորա երեսին: Միայն Պեջորինը չէր, որ դրաւ ուռեցաւ գեղեցիկ իշխանուհուց, նէրա վերայ սնեակի անկիւնից նայում էին և ուրիշ երկու վառ աչքեր: Նա սկսեցի ուշադրութեամբ դիտել և ճանաչեցի իմ հին բարեկամ Սաղբիչին: Նա, ի՛նչպէս ասեմ, ոչ խաղաղներիցն էր, և ոչ անխաղաղներից: Նորա վերայ կասկածներ չատ կային, թէպէտ նա ոչ մի յանցանքի մէջ նկատուած չէր: Պատահում էր երբեմն, որ նա բերդը մեզ մօտ ոչխար էր բերում և ծախում աժան, միայն չէր սակարկում. ի՛նչ որ ուզում էր, այն էր, կուզես սպանիր, նա զնից մի կօպէկ չէր իջնում: Նորա մասին պատմում էին, իբր թէ նա սիրում է Սուբանի միւս կողմն անցնել աւազակների հետ թափառելու, և, ճշմարիտն ասած, նորա ունին իսկական աւազակի ունի էր. ինքը փոքր, չորցած և լայնաթիկունք մի բան էր: Բայց ի՛նչ ճարպկութիւն, ասես ստատանայ լինէր: Բաճկոնը միշտ պատառոտած էր և կարկատուն. իսկ զէնքերը արծթած: Իսկ նորա ձին գոփուած էր բոլոր Սաբարդայում. և յիրաւի, նորանից լաւ ձի երեւակայել անհնար էր: Չուր չէր, որ նորան նախանձում էին բոլոր ձի նստողները. և քանի-քանի անգամ փորձել էին նորա ձին փախցնել, բայց չէր յաջողուել: Հիմա կարծես թէ հէնց աչքես առջին է. ձիւթի պէս սև էր, օտները բարակ, իսկ աչքերը պակաս չէին

Բէլաի աչքերից, և ինչպիսի տոկոնութիւն, վռնալիւ թէկուզ յիտուն վերստ, պէ՛տքը չէ. լաւ էլ կրթուած էր—շան պէս վազում էր տիրոջ հոռից, նորա ձայնը մինչև անգամ ճանաչում էր: Պատահում էր, որ տէրը նորան արձակ առանց կապի էր թողնում: Ճիշտ որ աւաղակի ձի:

— Եյն երեկոյ Սաղբիչը աւելի դաժան էր երևում, քան ուրիշ անգամ, և նկատեցի, որ նա բաձկոնի տակից հագած էր զրահ: — «Ի զուր չէ՛ հագել այդ զրահը», մտածեցի ես: «Նորա գլխում անպատճառ մի չար միտք կայ»:

— Սենեակի օդը ծանրացաւ, և ես դուրս եկայ թարմ օդում զովանալու: Սարերում արդէն մոլթը ընկել էր, մառախուղը սկսել էր ձորերի մէջ շարժուել:

— Նսմտածեցի դնալ անասունների բակը, ուր կապած էին մեր ձիերը, որ նայեմ, թէ կեր ունի՞ն. բացի գորանից զգոյշ լինելը երբէք անօգուտ չէ. իմ ձիս լաւն էր, որին շատ կաբարդացիներ հաճոյքով նայելով ասում էին. ետխշի տըր, ջօխ ետխշի, (լաւն է, շատ լաւը):

— Յանկի տակով երբ ևս գնում էի՝ յանկարծ լսեցի մարկանց ձայներ, նորանցից մէկին ևս իսկոյն ճանաչեցի, դա չարաճճի Ազամատն էր, մեր տանտիրոջ որդին. միւսը խօսում էր աւելի ցածր և սակաւ: «Դորանք այգտեղ ի՛նչ բանի վերայ են խօսում», մտածեցի ես, «չլինի՞ թէ իմ ձիուս մասին»: Նս նստայ ցանկի տակ, և սկսեցի ականջ դնել, աշխատելով, որ ոչ մի խօսք բաց չթողնեմ: Խրճիթից եկող աղմկալի երգը և բարձր խօսակցութիւնները խանդարում էին ինձ լսել ինձ համար հետաքրքրական խօսակցութիւնը:

— Հիանալի ձի ունիս դու, Սաղբիչ, ասում էր Ազամատը, եթէ տան տէրը ևս լինէի և ունենայի երեք հարիւր գլուխ մատակ ձի՝ կէսը կ'տայի քո նժոյզիդ:

— Հա, Սաղբիչն է, մտածեցի ևս և յիշեցի նորա զրահը:

— «Եյո», քիչ լուռութիւնից յետոյ պատասխանեց Սաղբիչը. «Ըմբողջ Աբարդայի մէջ նորա ընկերը չես գտնի: Մի անգամ աւաղակների հետ Տերեկի միւս ափն էի անցել ուռսների ձիերի երամակները «ղարնելու». յաջողութիւն չունեցանք և ամեն մինս մի կողմ փախանք: Իմ հոռից ընկած էին չորս կողակ և ես արդէն լսում էի դեաւուրների աղաղակը: Իմ առջևս

բացուեցաւ խիտ անտառ: Այս տփկայ թամբին և ինձ յանձնեցի Ալլահին. առաջին անգամ էր, որ ձիուս անարգեցի մտրակ զարնելով: Թռչունի նման մտաւ նա ծառերի մէջ. սուր փշերը պատառոտում էին իմ շորերս, կնձնու չոր ոստերը զարնվում էին իմ երեսիս: Իմ ձիս ցատկում էր. կոճղերի վերայով և կրճքով ճեղքում էր մացառները: Աւելի յարմար էր նորան թողնել անտառի ծայրին և հետի ոտս պահ մանել անտառում, բայց ափսոսում էի նորանից բաժանուել. և մարգարէն ինձ օգնեց: Մի քանի դնտակներ զժժացին իմ ականջիս քովից և ես լսում էի, թէ ի՛նչպէս կօղակները ձիերից իջնելով ինձ հետապնդեցան... Յանկարծ իմ դէմն կլաւ մի խոր փոս. իմ նժոյգս մտածելն ու թռչելը մէկ արաւ: Փոսի միւս ափին նորա յետին ոտները սայթաքեցան և նա կախուեցաւ իւր առաջին ոտների վերայ: Այս երասանակը թողի և թռայ փոսի մէջ. այս փրկեց իմ ձիուն, որ դուրս թռաւ: Բոլոր կօղակները այս տեսան, բայց նոցանից ոչ մէկը չեկաւ ինձ փնտռելու. նորանք ինչպէս երևի մտածում էին, որ ես ջարդուփշուր եղայ, բայց ես լսում էի, թէ ի՛նչպէս նորանք վազեցին իմ ձիու հաւից, որ բռնեն: Սիրաս փորումս կտրտվում էր, ձորակի երկայնութեամբ խտտերի միջով սողալով սկսեցի նայել. անտառի վերջն էր, մի քանի կօղակներ նորա միջից դուրս էին դալիս զէպի անդը, և ահա իմ Ղարադեօզս վազում է զէպի նորանց. բոլորը աղմկով յորձակուեցան նորա վերայ. երկար ժամանակ նորանք վազում էին նորա հաւից, մանաւանդ նորանցից մէկը երկու անգամ քիչ մնաց պարանը ձգէր նորա վիզը. ես սողում էի, աչքերս խփեցի և սկսեցի աղօթք անել: Մի քանի րոպէից յետոյ աչքերս բացի—տեսնեմ, որ Ղարադեօզս պոչը փարելով զեփիւռի պէս ազատ թռչում է. իսկ զհաւուրները զաղրած ձիերով ցրուել են անապատի երեսին: Ղալլայ (Աստուած վկայ) ճշմարտութիւն է այս, խախտան ճշմարտութիւն: Մինչև կէս զիշեր ես նստած էի ձորակի մէջ: Յանկարծ, կարող ես երեւակայել, Ազամաս, մթութեան մէջ լսում եմ որ ձորի ափով վազում է ձիս, Ֆուկում է, խրինջում է և ոտներով տափում է գետինը. ես ճանաչեցի Ղարադեօզին ձայնը. նա էր եկողը, իմ բնիկըս. . Այն ժամանակին մենք միմեանցից չ'բաժանուեցանք:

— Այլ լսվում էր, թէ ի՛նչպէս նա ձեռով շփում էր իւր նոճոյդի հարթ վիզը, տալով նորան զանազան քնքոյշ անուաներ:

— «Եթէ ես ունենայի հաղար մատակ ձի, ասաց Աղամատը, բոլորը կ'տայի քո Ղարադեօղի համար:

— «Ո՛չ չեմ ուզում», պատասխանեց Սաղբիչը անտարբեր ձայնով:

— «Լսիր, Սաղբիչ», փաղաքշելով ասաց Աղամատը. «դու բարի տղամարդ ես, դու քաջ մկռնո՞ղ խաղացող ես, իսկ իմ հայրս վախենում է ուռաններից և չէ թողնում ինձ սարերը. տո՛ւր ինձ քո ձիդ, ինչ որ ուզում ես կ'անեմ. քեզ համար հօրս մօտից կ'զոզանամ նորա ամենալաւ հրացանը կամ թուրը, ի՛նչ որ միայն կամենաս, իսկ նորա թուրը իսկ չէրքէզի հին շէնք է (гундă)... 'Նորա սայրը զիր ձեռիդ վերայ' նա ինքը կմտնի մտիդ մէջ, իսկ զրահը՝ էլ պրծար. քուկդ ի՛նչ է որ նորա մօտ»:

— Սաղբիչը լսում էր:

— «Առաջին անգամ, երբ ես տեսայ քո ձիդ», շարունակեց Աղամատը, «երբ նա քո տակդ պնէրը բանալով պտոյտէր զալիս և ոտոտտում, և կայծաքարերը կարկառի նման թռուչում էին նորա ամբակների տակից՝ սիրտս մի տեսակ եղաւ. և այն ժամանակից ոչ մի բան աչքիս չէ երևում. այնուհետև հօրս ամենալաւ նոճոյդների վերայ ես նստում էի արհամարհանքով. ինձ ամօթ էի համարում նրանց վերայ նստել մանգալ. և տիրութիւնը ինձ պատում էր. ես տխուր տրտում նստում էի ժայռի վերայ և ամեն անգամ աչքիս առջևն էր զալիս սև նոճոյդ իւր սէդ քայլուածքով, իւր հարթ, նետի պէս ուղիղ թիկունքով. նա երեսս էր նայում իւր վառվառն աչքերով, և կարծես թէ մի բան էր ուզում ասել: Այս կմեռնեմ, Սաղբիչ, եթէ նորան ինձ չ'ծախես», ասաց Աղամատը դողողուն ձայնով:

— Այս նկատում էի, որ նա լաց եղաւ. պէտք է ձեզ ասեմ, որ նա ամենակամակոր տղայ էր, և ոչ մի բանով չէր կարելի նորան լացացնել. մինչև անգամ երբ նա աւելի փոքր էր:

— 'Նորա լացին պատասխան եղաւ ծիծաղի նման մի բան:

— «Լսիր», հտտատա ձայնով ասաց Աղամատը. «տե՛ս, ես ամեն բան կանեմ: Ուզո՞ւմ ես, քեզ համար փախցնեմ իմ

քրոջս: Ի՛նչպէս նէ կաքաւում է, ի՛նչպէս երգում է, ոսկեթելով բանում է, հրաշալի է: Այդպէս կնիկ թուրքի փառիշահն (թագաւոր) էլ չէ ունեցել... Ուզում ես: Եգուց դու ինձ սպասիր այնտեղ կիրճում, ուր հոսում է հեղեղը, ես ներս հետ կգամ մօտակայ գիւղը — և նէ քոնն է: Մի՞թէ Բէլան քո նժոյգին չարժէ»:

— Երկար, շատ երկար լսեց Աղբիւրը, վերջապէս պատասխանի փոխարէն նա ցածր ձայնով երգեց հին երգը*)

«Շատ գեղեցկուհիք կան մեր գիւղերում,
Ներանց սեւ աչում աստղեր են փայլում,
Վաղցր է նրանց սիրելի, բաղդ է ցանկալի,
Բայց կեանքը ազատ՝ աւել սիրելի:
Սկով կարելի է առնել չորս կին,
Սակայն աշխոյժ ձին մի գանձ է անգին,
Հողմի պէս արագ է անապատում,
Նա քեզ չէ խարում, չէ դաւաճանում):

— Օուր տեղը խնդրում էր նորան Աղամատը, լաց էր լինում, շողբորթում էր և աղերսում էր, վերջապէս Աղբիւրը համբերութիւնը հատած նորան ընդհատեց.

— «Աորիւր, յիմար տղայ, դու ինչ ես, որ կարողանաս իմ ձիս հեծնել: Երկու քայլ չդնացած նա քիզ գետին կ'փուռեցնէ, և դանդաղ ու գլուխդ քարերին ջարդ ու փշուր կանես»:

— Ի՛նձ, կատաղած զոռաց Աղամատը. և մանկական դաշտի չափերէն նորա զրահին: Բայց զօրաւոր ձեռից նա յետ մղուեցաւ և այնպէս ամուր գիպաւ ցանկին, որ ցանկը տատանուեցաւ: «Օուլարձալի բան կ'լինի», մտածեցի ես և մօտս դոմը, սանձեցի մեր ձիերին և դուրս քաշեցի ետեւի դաւիթը: Երկու լուսնից յետոյ խրճիթում սարսափելի աղմուկ էր բարձրանում: Այ, ինչ պատահեցաւ: Աղամատը ներս վազեց պատռոտած բաձկոնով և ասաց, որ Աղբիւրը կամենում էր նորան սպանել: Բոլորը տեղերից վեր թռան, հրացանները քաշեցին և սկսուեցաւ աղմուկը. զոռոց, աղաղակ, հրացանի

*) Ներողութիւն եմ խնդրում ընթերցողից, որ ես Աղբիւրի երգը դարձրի ոտանաւորի, թէպէտ հաղորդուած էր ինձ արձակ ձևով: Բայց սովորութիւնը մարդուս երկրորդ բնութիւնն է:

Ծան. Բնագր.

ձայն, միայն Սաղբիչը ձին հեծած փողոցով քշում էր այս ու այն կողմը ժողովրդի մէջ և սատանի նման շարժում էր սուրբ: «Եւ, ուրիշի հիւանդութեան համար մե՞նք ինչու տքանք», ասացի ես Գրիգորիյ Ալեկսանդրովիչին, նորա ձեռից բռնելով. «լաւ չէ՞ լինի, որ մենք այստեղից, որքան կարելի է, շուտով հեռանանք»:

— Սպասի՛ր տեսնենք ի՛նչպէս կ'վերջանայ:

— Հաւանականօրէն վատ, այս ասիացիները բոլորը այսպէս են («Ռուզան») այնքան կոնծեցին, որ սկսեցին միմեանց բռնել: Մենք նստանք ձիերս և գնացինք տուն:

— Իսկ Սաղբիչը, հարցրի ես անհամբեր կերպով շտաբ-կապիտանին:

— Այդ տեսակ մարդիկներին զրոգ չի դիպչի, պատասխանեց նա թէյի բաժակը վերջացնելով, նա իր գլուխը պրծցրեց:

— Առանց վէրք ստանալու, հարցրի ես:

— Ո՞վ գիտէ, աւաղակները փաստուող պտուղ չեն:

— Աս նորանց մի քանիսին տեսել եմ, բոլոր մարմինը մողի նման սուկնելով ծակծկուած է կռուի մէջ. բայց էլի թուր է քաշում: Շտաբ-կապիտանը մի քիչ լսելուց յետոյ ոտը գետին զարկելով շարունակեց:— Մի բան երբէք ինձ չեմ ների, որ քամին խելքիս փչեց չ'գիտեմ, որ ամբողջ աշուն Գրիգորիյ Ալեկսանդրովիչին ինչ որ ցանկի կտեւում պահուած լսել էի, նա խնդաց— ի՛նչ խորամանկն էր, և ինչ որ բան միտքը դրեց:

— Ի՞նչ, պատմեցէք խնդրում եմ:

— Ե՛հ, ճանն ինչ, որ սկսել եմ պատմել պէտք է վերջացնեմ:

— Չորս օրից յետոյ Աղամատը ամբողջ կիւաւ, իւր սովորութեան համեմատ նա գնաց Գրիգորիյ Ալեկսանդրովիչի մօտ, որը շարունակ տալիս էր նորան անուշեղէններ: Աս այնտեղ էի: Սկսեցին խօսել ձիերի մասին, և Պեչորինը սկսեց զովել Սաղբիչի ձին, թէ ինչպէս նա աշխոյժ և գեղեցիկ է, իսկ և իսկ վայրի այծեամ է— մի խօսքով, նորա ասելով, ամբողջ աշխարհումս այնպէս մի ձի չկայ:

— Փոքրիկ թաթարի մանր աչերը փայլեցին, իսկ Պեչորինը այնպէս էր ցոյց տալիս, իբր թէ այդ չէ նկատում, ես

խօսքի նիւթը փոխում եմ, բայց նա էլի խսկոյն խօսքը փոխում է
 Վաղբիչի ձիւս վերայ: Այս բանը կրկնվում էր ամեն անգամ, երբ
 գալիս էր Աղամատը մեզ մօտ: Նա նկատեցի, որ Աղամատը
 տալիանում է և նիհարում, ինչպէս պատահում է վէպերի
 մէջ սիրահարուածներին: Ինչ զարմանք...—Տեսնում էք, բո-
 լոր եղելութիւնը ես յետոյ իմացայ. Գրիգորիյ Ալեկսանդրովիչը
 նորան այն աստիճան զրդուեց, որ նա պատրաստ էր մինչև
 անգամ ջուրը ընկնել: Գու տես, որ նա միանգամ նորան ասէ՝
 Աղամատ, տեսնում եմ, որ այդ ձին քեզ չափից դուրս դուր
 եկաւ, և որին դու այլ ևս տեսնելու չես, որպէս տեսնելու
 չես քո ծոծրակի: Ասա՛, ի՛նչ կ'տայիր այն մարդուն, որը քեզ
 ընծայէր այդ ձին:

— Ամէ՛ն բան, ինչ որ նա կամենայ, պատասխանեց Աղա-
 մատը:

— Ուրեմն, ես նորան քեզ համար ձեռք կ'բերեմ, միայն
 մի պայմանով... Նրդուի՛ր, որ կ'կատարես...

— Նրդվում եմ... Նրդուի՛ր և դու:

— Ա՛յ: Նրդվում եմ, որ այդ ձին քոնը կ'լինի, միայն
 նորա փոխարէն դու ինձ պիտի տաս քո քոյր Բէլլին: Վա-
 րագիօզը կ'լինի նորա հարսանեկան ընծան: Յուսով եմ, որ
 այս ստիարկութիւնը քեզ համար ձեռնառու է:

— Աղամատը լսում էր:

— Ձե՛ս ուզում: Ե՛հ, քո կամքդ է: Նա կարծում էի, թէ
 դու տղամարդ ես, բայց դու դեռ ևս տղայ ես եղել. քեզ հա-
 մար ձի նստել դեռ վաղ է...

— Աղամատը բորբոքուեցաւ:

— Իսկ իմ հայրս, ասաց նա:

— Նա մի՞թէ ոչ մի տեղ չի դնում:

— Ճշմարիտ է, դնում է:

— Համաձայն ես՝

— Համաձայն եմ, շնկաց Աղամատը մեռելի գոյն առած:

— Բայց ե՛րբ:

— Հէնց առաջին անգամ, երբ Վաղբիչը պատեղ դայ. նա
 խօստացել է բերել տասը ոչխար. իսկ մնացածը իմ գործս է:
 Ուրեմն միտքդ պահիր Աղամատ:—Նւ այսպէս նորանք իրենց
 մէջ գործը կարգադրեցին . բայց ճշմարիտն ասած վատ գործ:

Վերջը ես այդ ասացի Պէշօրինին. նա ինձ այս պատասխանեց, թէ վայրենի չէրքէզուհին պէտք է երջանիկ լինի, որ նորա պէս լաւ էրիկ ունի, վասն զի նորանց հասկացողութեամբ նա այնուամենայնիւ ներա էրիկն է, այն ինչ Սաղբիչը—աւաղակ է, որին պէտք էր պատժել: Կըքներդ դատեցէք, թէ ես սորա դէմ ի՞նչ կարող էի պատասխանել: Բայց այն ժամանակ ես ոչինչ չ'գիտէի նորանց խօսակցութեան մասին: Ահա մի անգամ Սաղբիչը գալիս է և հարցնում, թէ հարկաւոր չէ՞ մեզ ոչխար և մեղը. ես հրամայեցի նորան միւս օրը բերել: «Ազամատ», ասաց Պրիգորիյ Ալեկսանդրովիչը, «էգուց Ղարադեօզը իմ ձեռիս տակ է. եթէ այս երեկոյ Բէլան այստեղ չ'լինի՝ դու ձի չես ստանայ»...

— Լաւ, ասաց Ազամատը և վազեց գիւղ: Նրեկոյեան Պրիգորիյ Ալեկսանդրովիչը սպառազինուեցաւ և դուրս եկաւ ամրոցից. թէ նորանք այդ դործը ի՞նչպէս յաջողեցրին—ես չ'գիտեմ, միայն գիտեմ, որ գիշերը նորանք երկուսը միասին վերադարձան, և գիշերապահը նկատել էր Ազամատի թամբի վերայ երկայնացրած մի կնիկմարդ, որի ձեռները և ոտները կապած են եղել, իսկ զլուսը փաթթած է եղել ճերմակ ծածկոցով:

— Իսկ ձիւն, հարցրի ես շտաբս-կապիտանին:

— Այս բոպէիս ասեմ: Միւս օր առաւօտեան Սաղբիչը վաղ եկաւ և բերեց տասը ոչխար ծախելու: Ձին ցանցին կապելով նա եկաւ իմ մօտ. ես նորան թէյով հիւրասիրեցի, վասն զի, թէեւ նա աւաղակ էր, սակայն իմ հիւրն էր:

— Մենք սկսեցինք զանազան բաների մասին խօսել... Մէկ էլ տեսնեմ, յանկարծ Սաղբիչը սոսկաց, գոյնը նևտեց և վազեց դէպի պատուհանը. բայց լուսամուտը տարաբաղդաբար նայում էր դէպի բակը:

— Ի՞նչ եղաւ, հարցրի ես:

— Ձիս, ձիս, ասաց նա բոլոր մարմնով դողալով:

Նիշա որ լսեցի ձիու տոփիւն. — երևի մի կօզակ եկաւ:

— Ո՛չ: Ո՛րւսը վա՞յ է, վայ (ուռուս կամա՞ն, կամա՞ն), գոչեց նա և հապճեպով դուրս թռաւ, ինչպէս վայրենի յովադ: Նրկու ոստիւնով նա արդէն դուրսն էր. ամրոցի դռների մօտ պա-

Հասարակ հրացանով նորա ճանապարհը արդեւեց, նա հրացանի վերայով թռաւ և ճանապարհովը վազ տուեց... Հետոն բարձրանում էր փոշին—Աղամատը սլանում էր աշխոյժ Աւարագիօղի վերայ, վաղելիս Աաղբիջը պատեանից հանեց հրացանը և արձակեց: Մի բոպէի չափ նա մնաց անշարժ, որ լաւ նկատէ, թէ նշանը տեղն առաւ. յետոյ ձչաց, հրացանը զարկեց քարին ջարդ ու փշուր արեց, ընկաւ գետնի վերայ և սկսեց երկխայի պէս հիկեկալ: Նորա չորս կողմը ամբողջ փալլիկ հաւաքուեցան—նա ոչ-ոքի չէր ճանաչում. նորանք կանգնեցան, խօսեցին—խօսեցին և հեռացան. ես հրամայեցի նորա մօտ դնել ոչխարների զինը—բայց նա փողին ձեռ չ'տուեց, և մեռելի պէս ընկել էր բերրնախփար: Հաւատում էք, նա այնպէս ընկած մնացել էր մինչև գիշեր և մինչև առաւօտ... Միայն միւս օր առաւօտեան նա ամբողջ եկաւ, և խնդրեց որ ասէինք, ո՞վ էր նորա գողը: Պահապանը, որ տեսել էր, թէ ինչպէս Աղամատ տնունը լսելուն պէս Աաղբիջի աչքերը փայլելին, և նա դնաց այն զիւղը, ուր բնակվում էր Աղամատի Հայրը:

— Հայրն ի՞նչ արաւ:

— Հէնց բանն էլ գորանումն է, որ Աաղբիջը նորան տանը չ'գտաւ. որովհետեւ նա ինչ որ տեղ գնալու հինգ-վեց օրով եթէ ոչ Աղամատն ի՞նչպէս կ'յաջողէր քրոջը փախցնել:

— Իսկ երբ Հայրը վերադարձաւ տուն, ո՞չ աղջիկը կար, ո՞չ մանչր: Աղամատը խորամանկ էր, նա հասկացաւ, որ եթէ ձեռ ընկնի՝ էլ չի աղատուի: Նա այն ժամանակից ի վեր կորաւ. շատ հաւանական է, որ միացաւ աւազակների մի խմբակի հետ և զլուխը կորցրեց Տերեկի կամ Աուբանի միւս կողմում բարի ճանապարհ...:

— Խոստովանվում եմ, որ այդ գործում իմ էլ գլուխս բաւական ջաւեցաւ. Հէնց որ ես տեղեկացայ, թէ փոքրիկ չէրքէզուհին Գրիգորի Ալեկսանդրովիչի մօտն է, թուրս կախած, պաշտօնական շորերով գնացի նորա մօտ:

— Նա առաջին սենեակում երկարացած էր անկողնի վերայ, մի ձեռը դրած գլխի տակին, իսկ միւսով բռնած մարտած «խրուլ»ը. երկրորդ սենեակի դուռը փակուած էր կողպէքով, և բանալին վերան չէր: Նստայդ բոլորը մէկէն նկատեցին... Նստ

սկսեցի հաղալ և ոտներով շեմին թըխիթըխացնել — միայն նա այնպէս էր ձեւացնում, թէ չէ լսում:

— Պարոն պրապօրչչիկ, ասացի ես, որքան կարելի է խիստ,—միթէ դուք չէք տեսնում, որ ես ձեզ մօտ եմ եկել:

— Եւ, բարով, Մակսիմ Մակսիմիչ, «չեբուխ» չէ՞ք կամենում, առանց վեր կենալու պատասխանեց նա:

— Ներէցէ՛ք, ես Մակսիմ Մակսիմիչ չեմ, ես շտաբսկապիտան եմ:

— Միւսնոյն բանն է: Թէ՛յ չէ՞ք ցանկանում: Նիթէ դիտե՛նայիք, թէ ի՛նչպէս հոգսերն ինձ նեղացնում են:

— Նս բոլորը դիտեմ, պատասխանեցի ես մօտենալով մահճակալին:

— Եւելի լաւ, ես պատմելու տրամադրուած էլ չեմ:

— Պարոն պրապօրչչիկ, դուք յանցանք էք դործել, որի համար ես լինելու եմ պատասխանատու:

— Թողէ՛ք, ի՞նչ փաստ: Զէ որ մենք վաղուց ամեն ինչ հաւատար բաժին ենք անում:

— Ե՛յդ ինչ կատակ է: Տուէ՛ք ձեր սուրը:

— Միակաց, սուրը բեր:

— Միտկան սուրը բերեց: Իմ պարտականութիւնս կատարելով՝ ես նստեցի նորա մօտ մահճակալի վերայ և ասացի, լսիր, Պրիգորիյ Ելիսանդրովիչ, խոստովանուիր, որ արածդ վատ բան է:

— Ի՛նչ է վատը:

— Եյն, որ դու փախցրել ես Բէլաին... Ե՛հ, այդ անասուն Ազամատը... Դէ՛հ, խոստովանուիր, ասացի ես նորան:

— Բայց երբ նէ ինձ դիւր է գալիս:

— Դորա դեմ ես ի՞նչ պատասխան պէտք է տայի... Նո՛շուարած մնացի: Սակայն, մի քիչ լուծիւնից յետոյ նորան ասացի, որ եթէ հայրը ներան պահանջէ՝ պէտք է տալ:

— Ամենեին պէտք չէ:

— Բայց նա կ'իմանայ:

— Ի՞նչպէս կ'իմանայ:

— Նս նորից շուարած մնացի: — Ասեցէ՛ք, Մակսիմ Մակսիմիչ, ասաց վեր կենալով Պեչօրինը, դուք մի բարի մարդ էք, եթէ տղիան վերադարձնենք այդ վայրենուն—նա ներան

կ'սպանէ կամ կ'ծախէ: Աղածը եղած է, էլ պէտք չէ քանդել: Նէրան թողէք իմ մօտ, իսկ սուրս ձեզ մօտ...:

— Նէրան ցոյց տուէք, ասացի ես:

— Նէ այս դրան ետէն է. բայց ես ինքս այսօր զուր տեղը աշխատեցի տեսնել, նէ ծածկոցում փաթաթուած նստած է անկիւնում, ոչ խօսում է և ոչ նայում. վախլուկ է որպէս վայրենի այծեամբ: Նս վարձեցի մեր զինեպանի կնոջը, նէ թաթարերէն գիտէ, նէրան պիտի սպասաւորէ և համոզէ, որ նէ իմն է. վասն զի նէ բացի ինձանից ոչ ոքի պատկանելու չէ—աւելացրեց նա բռունցքը սեղանին զարնելով:— Սորան էլ ես համաձայնեցայ... ի՞նչ էք հրամայում անել: Ան մարդիկ, որոց հետ պէտք է համաձայնել:

— Ի՞նչ, հարցրի ես Մակսիմ Մակսիմիչին. իրօք նա նէրան վարժեցրեց դէպի ինքը, թէ՞ նէ բռնութեան ներքեւ իւր տան ու տեղին կարօտովը մաշեցաւ:

— Ի՞նչ, ի՞նչ տան ու տեղի կարօտ: Ամրոցից երևում էին բոլոր լեռները, ինչպէս և գիւղեց—իսկ այդ վայրենիներին ուրիշ ոչինչ հարկաւոր չէ: Բացի դորանից Գրիգորիյ Ալեկսանդրովիչը ամեն օր նէրան մի բան էր նուիրում. սկիզբը նէ գոռողութեամբ դէն էր ձգում նուէրները, որոնք զինեպանի կնոջն էին անցնում և գրգռում էին նէրա ճարտարախօսութիւնը: Ա՛խ, ընծաներ, ի՞նչ չի անէ կինը մի ներկած կտորի համար... բայց սա մի կողմ մնայ: Նրկար ժամանակ չարչարվում էր Գրիգորիյ Ալեկսանդրովիչը, և նէրանից սովորում էր թաթարերէն, և նէ սկսեց սովորել մեր լեզուն (ռուսերէն): Վիշքիչ նէ սկսեց նայել նորա երեսին, սկզբից աչքերի տակով և ծուռ. և միշտ ավրում էր, ցածր երգում էր իւր երգերը, այնպէս որ ես ևս երբեմն սկսում էի տիրել, երբ լսում էի նէրա ձայնը մօտակայ սենեակից: Նրբէք չեմ մոռանայ մի տեսարան. ես անցնում էի լուսամտուի մօտով և նէրա նայեցի. Բէլան զլուխը կախ ձգած նստած էր բազմոցի վերայ, իսկ Գրիգորիյ Ալեկսանդրովիչը կանգնած էր նէրա հանդէպ: «Լսի՛ր, իմ պէրի», ասում էր նա. «դու գիտես, որ վաղ թէ ուշ իմն ես լինելու. էլ ինչո՞ւ ես ինձ չարչարում: Մի՞թէ դու սիրում ես մի չէչէնի: Սթէ այդպէս է, ես քեզ այս բոպէիս տուն կարծակեմ»: Նէ հազիւ նկատելի կերպով ցնցուեց և զլուխը շար-

ժեց:—«Թէ», շարունակեց նա, «ես քեզ բոլորովին ատելի եմ»: Նէ հառաչեց: «Թէ ձեր հաւատն արդեւում է քեզ ինձ սիրել:— Նէ գոյնը նետեց և լռեց:—«Հաւատա՛ ինձ, որ Ալլահը ամեն ազգի համար միեւնոյնն է. իսկ եթէ նա ինձ թոյլ է տալիս քեզ սիրել, ինչու քեզ պիտի արգելէ նոյնպէս ինձ սիրել: Նէ կարծես այս խօսքերից հիացած՝ նայեց նորա երեսին. նէրա աչքերը կարծես արտայայտում էին թերահաւատութիւն և համոզուելու ցանկութիւն. ի՛նչպիսի աչքեր. նորանք այնպէս վառվռում էին, ինչպէս երկու կտոր ածուխ:

— Ասի՛ր, իմ ազնիւ և բարի Վէլա, շարունակեց Պեչորինը. տեսնո՞ւմ ես, թէ ես ի՛նչպէս սիրում եմ քեզ. քեզ ուրախացնելու համար՝ ամեն ինչ պատրաստ եմ տալ. ես ուզում եմ, որ դու երջանիկ լինես, իսկ եթէ դու նորից պէտք է տխրես՝ ես կ'մեռնեմ... Ասա՛, դու ուրախ պիտի լինե՞ս: Նէ իւր սև աչքերը նորից չ'հեռացնելով մտածմունքի մէջ ընկաւ, յետոյ քաղցր ժպտաց և զլիով համաձայնութեան նշան արեց: Նա բռնեց նէրա ձեռից և խնդրեց, որ նէ իրեն համբուրէ. նէ թոյլ կերպով մերժում էր և կոտրտած ուսներէնով կրկնում էր՝ պէտք չէ, պէտք չէ»: Նա սկսեց ստիպել. նէ դողաց և լացեց: «Ա՜ս քո գերին եմ, ասում էր նէ, քո ստրուկն եմ, ի հարկէ, դու կարող ես ինձ ստիպել», և նորից հոսեցին արտասուքները:

— Պրիգորիյ Ալեկսանդրովիչը բռունցքով զարկեց իւր ճակատին և մտաւ միւս սենեակը: Նա գնացի նորա մօտ, նա ձեռները կրծքին ծալած, դաժան դէմքով ման էր գալիս: «Այդ ի՞նչ է, բարեկամ», ասացի նորան:—«Վե՛հ, հօ կին չէ», պատասխանեց նա. միայն ես ձեզ ազնիւ խօսք իմ տալիս, որ նէ իմն է լինելու... Նա գլուխ շարժեցի: «Աւգո՞ւմ էք զրազ դալ մի շաքաթից», ասաց նա:—«Համեցէ՛ք:—Մենք զրազ եկանք և հեռացանք:

— Միւս օրը նա յատուկ մարդ ուղարկեց Ղալար գանազան բաներ բերելու. բերել տուեց ահագին քանակութեամբ պարսկական կտորներ, բոլորը դժուար է հաշուել:

— Ի՛նչ էք կարծում, Մակսիմ Մակսիմիչ, նա ինձ ասաց ցոյց տալով նուէրները, — ասիացի գեղեցիկուհին այս բոլոր զէնքերին կ'զիմանայ:—Վուք չէրքէզներին չէք ճանաչում, ա-

սացի ես, սորանք այն չեն, ինչ որ վրացի կամ Անգրկովկասի թուրք կիները, բոլորովին այն չեն: Սորանք իրենց կանոններն ունեն. սորանք ուրիշ տեսակ են կրթուած:—Պրիգորիյ Ալեկսանդրովիչը ժպտաց, և մի մարշ շուայրեց:

— Բանից դուրս եկաւ, որ ես ճշմարիտ էի ասում: Նուէրները կիսով չափ միայն օգնեցին, նէ սկսեց աւելի մեղմանալ և հաւատալ ուրիշ ոչինչ, այնպէս որ նա վճռեց ամենավերջին միջոցը ձեռ առնել: Մէկ անգամ նա առաւօտեան հրամայեց ձին թամբել, հաղաւ չէրքէզի շորեր, սպառազնութեամբ և զնաց ներս մօտ: «Բէլա», ասաց նա, «դու զիտես, թէ ես քեզ ինչպէս եմ սիրում: Նո վճռեցի քեզ փախցնել, մոռնելով, որ դու երբ և իցէ ինձ կ'ճանաչես և կ'սիրես. ես սխալուեցայ, մնաս բարով, եղի՛ր ազատ տիրուհի իմ բոլոր ունեցածիս, եթէ ուզում ես, դարձիր հօրդ մօտ—դու ազատ ես: Անցի՛ր բարով, ես գնում եմ,—թէ ո՛ւր եմ գնում, և ինչո՛ւ» ես զիտեմ: Ասրելի է երկար չեմ սպասելու զնգալի կամ սրի հարուածին, այն ժամանակ յիշէր ինձ, և թողութիւն շնորհիւ:—Նա յետ դարձաւ և ձեռը մեկնեց դէպի ներսն մնաս բարով անելու: Նէ չ'բռնեց ձեռը և լռում էր: Միայն դրան ետե կանգնած ես կարողացայ ծեղքի միջով զիտել ներս երևալ, և իմ մեղքս տուեց, ներս սիրուն երեսի դոյնը բոլորովին մեռելի դոյն էր դարձել: Պատասխան չ'լսելով Պեչորինը մի քանի քայլ արեց դէպի դուռը, նա դողում էր—և ձեզ ասեմ, ես կարծում եմ, որ նա իսկապէս կ'անէր այն, որ ասում էր կատակով: Այնպիսի մի մարդ էր նա, Աստուած զիտէ: Բայց հաղիւ նա հասաւ դրան, որ նէ վեր թռաւ տեղից, լաց եղաւ և փաթաթուեցաւ նորա պարանոցը:—Հաւատում էք, ես դրան ետեը կանգնած նոյնպէս լացի, այսինքն, զիտէք, ո՛չ թէ լացի, այլ... յիմարութիւն էլի...

— Շատ քս-կապիտանը լռեց:

— Հա, ասաց նա յետոյ փետելով բեխերը, իմ բարկութիւնս եկաւ, որ ոչ մի—ժամանակ որէկ կին ինձ այնպէս չէր սիրել:

— Սորանց բաղդաւորութիւնը երկսր տուեց, հարցրի ես:

— Այո, նէ մեզ խոստովանուեցաւ, որ այն օրից ի վեր, երբ առաջին անգամ տեսաւ Պեչորինին, նորան յաճախ տես-

նում էր երազում, և ոչ մի աղամարդ ներս վերայ այնպէս տալաւորութիւն չէր թողիլ:—Այո նորանք բաղդաւոր էին: —Ինչպէս տխուր է, ահամայ բացահանչեցի ես: Ճշմարիտ, որ ես սպասում էի ողբերգական վերջի, բայց յանկարծ այդպէս անապատելի իմ յոյսս ի դերեւ հանել... «Մի՞թէ», շարունակեցի ես, հայրը չ'նկատեց, որ նէ ձեզ մօտ ամբողջումն էր:

— Այսինքն, կարծեմ նա կասկածում էր: Մի քանի օրից յետոյ մենք լսեցինք, որ ծերը սպանուած էր: Այ, ինչպէս պատահեցաւ սա...

— Իմ հեաաքրքրութիւնս նորից շարժուեցաւ:

— Պէտք է ձեզ ասեմ, որ Սաղբիչը կասկածում էր, իբր թէ Ազամատը՝ նորա ձին զողացել է իւր հօր համաձայնութեամբ, դռնէ, ես այդպէս իմ ենթադրումս Ահա նա մի անգամ գիւղից երեք վերստ հեռաւորութեամբ սպասում է ճանապարհին, ծերը վերադառնում էր իւր աղջկան զուր տեղը փնտռելուց, նորա ծառաները յետ են մնացած եղել, այս պատահել է զիշերը—նա հանգարտ դալիս է եղել մօտածելով, երբ յանկարծ Սաղբիչը կատուի նման դուրս է ոստում թփի տակից, թռչում է ձիու ետեւից, դաշունի հարուածով տապալում է նորան գետին, խլում է ձիուն երասանակը ու ծվում: Ծառաներից մի քանիսը տեսնում են բլուրի ետեւից, վազում են նորան բռնելու, բայց չեն հասնում:

— Սա ձիու կորուստի փոխարէն վարձատրեց իրեն և վրէժխնդիր է եղել ասացի ես, որպէս զի իմանամ խօսակցիս կարծիքը:

— Ի հարկէ, ասաց շտաբս-կապիտանը, իրենց օրէնքով նա բոլորովին արդարացի էր:

— Ինձ ահամայ ապշեցրեց ուսս մարդու այս բնորոնականութիւնը, որ նա վարժվում է այն ժողովուրդների սովորութիւններին, որոց միջին պատահում է նորան բնակել: Չ'զիտեմ, մաքի այս յատկութիւնը դովասանքի՞ է արժանի, թէ՞ պարսաւանքի. բայց դա ապացուցանում է ուսս մարդու անհաւատալի ճիշտութիւնը և ներկայութիւնը այն պարզ և առողջ դատողութեան, որը ամեն անգամ ներում է չարիքին, ուր տեսնում է սորա անհրաժեշտութիւնը, կամ նորան ոչնչացնելու անհնարութիւնը:

Մինչ այս, մինչ այն թէյը վերջացաւ: Վաղուց լծուած ձիերը ձիւնի վերայ մրսում էին, լուսինը դալկանում էր արեւմուտքում և արգէն պատրաստ էր անցնել սև ամպերի տակ, որոնք որպէս պատառոտած վարագոյրի կտորներ կախուած էին սարերի զազաթներին: Մենք զուրս եկանք խրճիթից: Իմ ուղեկցիս ասածին հակառակ եղանակը պարզուեցաւ և խոստանում էր խաղաղ առաւօտ, աստղերի հոյերը հրաշալի ճամուկներով (звѣзды) հեռուն հիւսուած էին երկնականաւորում և մէկը միւսի ետեւից հետզհետէ հանդգնում էին, երբ արևելքի շառագունած փայլը տարածվում էր մութ—մանուշակաւորն երկնականարի վերայով, լուսաւորելով բարձր սարերի կուսահան ձիւնով պատած զառիվայր կողքերը: Եջ և ձախ կողմերում սևացած նայում էին խորհրդաւոր վիհեր, և մէգերը կարծես վախենալուց օրի մօտենալուց օձի նման կրճկուելով սողում իջնում էին սարերի պատառուածքներով դէպի վար:

Ամեն ինչ հանդիստ էր երկնքում և երկրի վերայ, որպէս մարդու սիրտը առաւօտեան աղօթքի ժամանակ, միայն երբեմն շնչում էր արևելքից ցուրտ քամին, բարձրացնելով ձիւրի եղեամով ծածկուած բաշերը: Մենք ճանապարհ ընկանք: Հինգ յետ ընկած ձի հազիւ էին բարձրացնում մեր սայլակները Պուտ սարը օձապտոյտ ճանապարհներով: Մենք կտեղի գնում էինք ոտով, և երբ ձիերը ուժից ընկնում էին՝ անիւների տակ քարեր էինք գնում: Եյնպէս էր թուում, թէ ճանապարհը բարձրանում էր դէպի երկինք, որովհետև ինչքան որ աչքը կարող էր որոշել՝ նա շարունակ բարձրանում էր և վերջապէս կորչում էր ամպի մէջ, որը երեկոյից ի վեր հանդէպում էր Պուտ սարի զազաթում, նման մի անդղի, որ իւր որսին է սպասում: ձիւնը սռսուում էր մեր ոտների տակ, օդը այնպէս անօսրացաւ, որ գոռար էր շունչ քաշել արիւնս ամեն բոպէ գլուխս էր վազում, բայց, այնուամենայնիւ մի ինչ որ ուրախալի զգացմունք տարածուեցաւ բոլոր ջղերիս մէջ և ես մի տեսակ ուրախութիւն էի զգում, որ ես աշխարհից այդպէս բարձր եմ զանվում—երեխայական զգացմունք, խօսք չ'ունեմ ասելու, բայց հեռանալով մարդկան պայմաններից և մօտենալով բնութեան՝ մենք ակամայ դառնում ենք մանուկ-

ներս բոլոր սովորածը հոգուց բաժանվում հեռանում է և հոգին նորից դառնում է այն, ինչ որ էր երբեմն, և հաւանօրէն երբ և իցէ դարձեալ կ'ընի:

Նա, որին պատահել է ինձպէս թափառել սարերը, առապատները և երկար-երկար դիտել է նորանց հիանալի տեսարանները, ազահաբար ծծել է կենսատու օդը, լեցուած նորանց խորքերում՝ նա, ի հարկէ կհասկանայ եւ ցանկութիւնս հաղորդել, պատմել և նկատել այս դիւթական տեսարանները: Ահա վերջապէս մենք բարձրացանք Պուտ սարը, կանգ առանք և չորս կողմերս նայեցինք. նորա վերայ կախուած էր մի գորշ ամպ, և սորա ցուրտ շունչը սպառնում էր շուտով փոթորիկ բաց արևելքում ամեն ինչ այնպէս պայծառ էր և ոսկէգունուած, որ մենք, այսինքն հս և շտաբս-կապիտանը նորա մասին բռնրովին մոռացանք... Այո, շտաբս-կապիտանն ևս. հասարակ սրտերում բնութեան գեղեցկութեան և վսեմութեան զղացմունքը աւելի զօրեղ է, և հարիւր անգամ աւելի կենդանի, քան մեր մէջ, որ հիանում և պատմում ենք խօսքերով կամ գրով:

— Պուք, ես կարծում եմ սովորած էք այս հրաշալի տեսարաններին, նորան ասացի ես:

— Այո, հրացանի դնդակի վզղոցին էլ կարելի է սովորել, այսինքն, սովորել ծածկել սրտի ակամայ բաբախումը:

— Ես լսել եմ, ընդհակառակը, որ կան հին զինուորներ որոց համար այդ պատերազմական փողի ձայնը մինչև անգամ ախորժելի է:

— Այո, եթէ կամենում էք, ախորժելի է, միայն բոլորը նորա համար, որ սիրտը աւելի սաստիկ է բաբախում: Նայեցէք, աւելացրեց նա ցոյց տալով դէպի երկինքը. ինչ հիանալի աշխարհ է:

Եւ յիրաւի, այդպիսի մի տեսարան դժուար թէ ես ուրիշ տեղ կարողանայի տեսնել. մեր ներքերը գտնվում էր Պշաուրեան հովիտը, որը կարվում էր Արազվայ գետով և մի այլ գետակով—որպէս երկու արծաթեայ թելերով. երկնագոյն մէջը, առաւօտեան տաք ճառագայթներից դէպի մօտակայ կիրճերը փախչելով՝ սողում էր հովտի վերայով: Աջ և ձախ կողմից լեռների դադաթները մէկը միւսից բարձր՝ կտրում էին

միմեանց և երկար ձգվում էին, ձիւնով ու թփով ծածկուած. հեռուն նոյն առասկ լեռներ, հէնց ասես երկու միմեանց նման ժայռեր և նոցա վերայի ձիւնները վարդազոյն փայլով այնպէս ուրախ, այնպէս պայծառ էին փայլում, որ մարդ կցանկար ընդ միշտ այնտեղ մնալու և ապրելու. արեւը փոքր ինչ պսպղաց մուգ—կապտագոյն սարի ետեւից, որին միայն վարժ աչքը կարող էր զանազանել փոթորկալի ամպից, արեւի վերեւ մի շառագոյն բակ էր կապել, որի վերայ եւ ընկերս դարձրեց իմ ուշադրութիւնս: «Նս ասում էի ձեզ», բացազանչեց նա, «որ այսօր փոթորիկ կ'լինի. պէտք է շտապել, եթէ ոչ, գուցէ, նա մեզ վերայ հասնի Խաչակիր սարի մօտ»: «Քչեցէք», գոչեց նա սայլադաններին:

Սայլադանները զսպանակի փոխարէն շղթայ ձգեցին անիւների տակ, որ պտոյտ չ'դան. բռնեցին ձիւրի սանձերից և սկսեցին վար իջնել. աջ կողմում ապառաժ էր, ձախ կողմում այնպիսի մի անդունդ, որ նորա յատակում զանուած օտերի ամբողջ դիւղը ծիծեռնակի բոյն էր թուում: Նս սարսափեցայ մտածելով, որ այստեղ յաճախ մութ գիշերը, այս ճանապարհով, որի վերայով չեն կարող երկու սայլեր միմեանց կողքից անցնել՝ որեւիցէ սուրհանդակ տարին ասան անգամ գնում—դալիս է՝ դուրս չ'դալով իւր տատանուող կառքից: Մեր կառավարներից մէկը կարօտւոյցի ոռու գիւղացի էր, միւսը օս: Օսը մէջ տեղում լծուած ձիւն քաշում էր սանձից բռնած ամենայն նախազգուշութեամբ—քանկելով կողքերում լծուած ձիւրին, իսկ մեր անհոգ ոռուը մինչև անգամ չ'իջաւ կոպից (նստած տեղից): Նրբ ես նկատեցի, որ նա մի գուցէ քիչ նեղութիւն կարողանար քաշել զոնէ իմ պայուսակիս համար, որի ետեւից ես ամենեւին չէի ցանկաց իջնել այդ անդունդը՝ նա ինձ պատասխանեց. «է, պարոն, Աստուած կտայ մենք նորանցից լաւ կերթանք. այս առաջին անգամը չէ, որ մենք գնում ենք». և նա իրաւունք ունէր. իսկապէս մենք կարող էինք չհասնել, ստկայն, ինչպէս և իցէ, հասանք: Եթէ բոլոր մարդիկները աւելի շատ խորհէին՝ գուցէ համոզուէին, թէ կեանքը չարժէ, որ նորա մասին այնքան հոգս քաշենք...

Գուցէ դուք ուզում էք լսել Բէլաի պատմութեան վերջաւորութիւնը:

— Նախ, որ ես վէպ չեմ գրում, այլ ճանապարհորդական նկատողութիւններ, հետեւապէս ես չէի կարող ստիպել շտաբ-կապիտանին պատմելու, մինչեւ նա չ'սխէր խտրապէս պատմելուրեմն սպասեցէք, կամ, եթէ կամենում էք, մի քանի երես թերթեցէք, միայն ես ձեզ այդ խորհուրդ չէի տալ վասն զի անցը Խաչակիր սարի վերայով (կամ ինչպէս նորան անուանում է զիտնական Պամբան, le Mont St.-Christophe), արժանի է ձեր հատաբքբութեան: Այսպէս, մենք Պուտ սարից իջանք Սատանի հովիտը (Чертова яма)... Ահա վիպասանական մի անուն: Պուք արդէն սնմերձենալի ժայռերի մէջ տեսնում էք չար հոգու բոյնը—բայց այդպէս չէ. հովտի чертова անունը դուրս է եկել черта (զիծ), և ոչ чертъ (սատանայ) բառից, վասն զի այստեղ երբեմն եղել է Վրաստանի սահմանադրութիւնը: Այս հովիտը ծածկուած էր ձիւնի շերտերով, որոնք բաւականին կենդանի յիշեցնում են Սարատով, Տամբով և մեր հայրենիքի միւս սիրելի վայրերը:

«Ահա Խաչակիր սարը», ասաց ինձ շտաբ-կապիտանը, երբ մենք մտանք Սահմանի հովիտը, ցոյց տալով մի բլուր, որ ծածկուած էր ձիւնի խանձարութեամբ. նորա զլխին սեւ երեւում էր քարէ խաչը, և նորա մօտից գնում էր հաղիւ նշմարուող ճանապարհը, որի վերայով գնում են միայն այն ժամանակ, երբ կողքի ճանապարհը ծածկուած է լինում ձիւնով. մեր սայրապանները յայտնեցին, թէ ձիւնի փութեր դեռ եւս չ'կան, և ձիւրին պահպանելու նպատակով մեզ տարան լեռան չորս կողմից պտտցնելով: Օրուելու ժամանակ մենք պատահեցանք հինգ օսի, նորանք առաջարկեցին մեզ օգնելու ցանկութիւն, վաթաթուեցան անիւներին և աղմկով սխեցին քարշէլ և հոռից պահել մեր սայրակը: Նշ, յիշուի, ճանապարհը վտանգաւոր էր. աջ կողմում մեր զլխների վերեւ կախուած էին ձիւնի հիւսերը, որոնք կարծես պատրաստ էին հէնց հողմի առաջին փչելուն զլարուել կիրճը. նեղ ուղին մասամբ ծածկուած էր ձիւնով, որը տեղ-տեղ փուլ էր գալիս ոտի տակ, միւս տեղերում արեւի ճառագայթների ազդեցութիւնից և զիշերուայ սառնամանիքից դարձած էր սառոյց. այնպէս, որ մենք ինքներս դժուարութեամբ էինք բարձրանում. ձիւրը վայր էին ընկնում, ձախ կողմում բերանը բաց էր արել խոր ճեղքուածք,

որտեղից հոսում էր հեղեղը, երբեմն մտնելով սառցիցի կեղևի տակ, երբեմն գոչ գոչալով սև քարերի վերայից: Արևու ժամում մենք հաղիւ անցանք Խաչակիր սարը—երկու վերստը՝ երկու ժամում: Մինչ այս, մինչ այն՝ ամպերը կուտակուեցան, տեղաց կարկուտ և ձիւն, քամին կիրճից դուրս փչելով մրոնչում էր, շուաքնում էր ահուելի ձայնով. շուտով քարէ խաչը անյայտացաւ մառախուղի մէջ, որի ալիքները, մէկը միւսից խիտ և թանձր՝ արագ կերպով գալիս էին արևելքից: Ի դէպ, այս խաչի մասին կայ մի տարօրինակ, բայց ընդհանրացած աւանդութիւն, իբր թէ նորան տնկել է Մեծն Պետրոս կայսրը, Պովկասից անցներու ժամանակ. բայց նախ, որ Մեծն Պետրոս եղած է միայն Վաղատանում. երկրորդ, խաչի վերայ խոշոր տառերով գրուած է, որ նա կանգնեցրած է գններալ Արմօրօվի հրամանով, 1824 թ., բայց աւանդութիւնը, չնայելով արձանադրութեան, այնպէս արմատացած է, որ ճշմարիտ չղիտես, թէ զորին հաւատաս, մանաւանդ, որ մենք սովորած չենք արձանադրութիւնների հաւատալ:

Մենք դեռ ևս հինգ վերստ էլ պէտք է իջնէինք սառցապատ ժայռերի և խմած ձեան միջով, որ հասնէինք Պօբի կայարանը: Զիւրը սաստիկ յոգնած էին, մենք էլ տողում էինք. բուքը սաստկանում էր հետզհետէ մեր հայրենիքի, Ռուսաստանի նման. միայն նորա վայրենի եղանակը աւելի տխուր և մեղամաղձոտ էր: «Այլ դո՛ւ աքսորական», մտածում էի ևս, «ողբում ևս լայն և տափարակ հովիտները. այնտեղ կայ տեղ, ուր բաց անես քո սառ թեւերը, բայց այստեղ քեզ հեղձուցիչ է և նեղ, ինչպէս մի արծուի, որը աղաղակով զարնվում է իւր երկաթեայ վանդակի ցանցերին»:

— Պատ է, ասաց շաբա-կապիտանը. նայեցէք, չորս կողմը ոչինչ չէ տեսնվում, միայն մառախուղ և ձիւն. դիւրին կարող է պատահել, որ զլորուենք անդունդը, կամ մի փոս ընկնենք ու մնանք, իսկ այնտեղ վարը, կարելի է, Ռայդար դեռոր այնքան կատաղած է, որ չես էլ կարող անցնել: Այս Ասիան էլ որ, ինչ որ մարդիկն են, նոյնն են և գետերը. ամենեւին յոյս գնել չէ կարելի:

Սայլադանները ազմով և հայհոյանքով ծեծում էին ձիւրին, որոնք ֆսկում էին, դէմ էին գնում և ոչինչ կերպով չէին

ուղղում տեղերից շարժել, չ'նայելով մտրակների քաղցր յորդորանքներին: «Ձերդ մեծապատուութիւն», վերջապէս ասաց սայլորդներից մէկը, «մենք այսօր Աօբի չինք կարող հասնել, չէ՞ք կամենայ արդեօք քանի հնար է, ծռուել դէպի ձախ: Ահա այնտեղ զառիվայրի վերայ ինչ որ սև բան է երևում, երևի խրճիթ է, այնտեղ վատ եղանակին անցորդները միշտ մնում են. տրանք ասում են, թէ կ'անցկացնենք, եթէ օղու փող կ'տաք», ասաց նա ցոյց տալով օսին:

— Գիտեմ եղբայր, առանց քո ասելու ես զիտեմ, ասաց շտաբս-կապիտանը: Օհ, այս անասունները, որեւէ պատճառ են փնտռում փող պոկելու համար:

— Սակայն, խոստովանուեցէք, ասացի ես, որ առանց նորանց մեր բանը վատ կ'լինէր:

— Բայց և այնպէս, մութութաց նա, այս առաջնորդները հողի են հանում նորանք հոտառութեամբ են իմանում, թէ որտեղից կարելի է օգտուել, կարծես, թէ առանց նորանց չէ՛ կարելի ճանապարհ գտնել:

Ահա մենք ծռուեցանք դէպի ձախ, և ինչպէս և իցէ, երկար չարչարանքներից յետոյ, հասանք աղքատ ապաստարանը, որ բաղկանում էր սալերից և մանր քարերից շինուած երկու խրճիթից և շրջապատուած նոյնպիսի պատերով: Յնցոտի հազած տանուտէրները ընդունեցին մեզ ուրախութեամբ: Աս վերջը լսեցի, որ կառավարութիւնը նորանց վարձատրում և կերակրում է այն պայմանով, որ նորանք ընդունին բքից բռնուած ճանապարհորդներին:—Ամեն ինչ դէպի լաւն է գնում, ասացի ես, նստելով կրակի մօտ:—Այժմ դուք վերջացրէք ձեր պատմութիւնը Բէլաի մասին, ես հաւատացած եմ, որ նորանով դեռ ևս չ'վերջացաւ:

— Ինչո՞ւ համար դուք այդպէս հաւատացած էք, ասաց շտաբս-կապիտանը, աչքով և խորամանկութեամբ ժպտալով:

— Նորա համար, որ այդ չ'տեսնուած բանէ՛ ինչ որ սկսւում է տանորինակ կերպով՝ այնպէս էլ պէտք է վերջանայ:

— Այ, դուք հասկացաք...

— Շատ ուրախ եմ:

Դուք ձեզ համար ուրախանում էք, բայց ես յիրաւի տխրում եմ, քանի որ յիշում եմ: Բէլան մի չքնաղ աղջիկ էր:

Աս նէրան այնպէս սովորեցայ, ինչպէս իմ աղջկան, և նէ ինձ սիրում էր: Ձեզ պէտք է ասեմ, որ ես ընտանիք չ'ունեմ, հօրս և մօրս մասին տասներկու տարի է, որ տեղեկութիւն չունեմ, իսկ ամուսին ունենալ սկզբից չ'մտածեցի—իսկ այժմ յարմար էլ չէ գալիս. ես ուրախ էի, որ դոստ մէկը փայփայելու: Պատահում էր, որ նէ մեզ երգում էր երգեր, կամ կաքավում էր լիկղու պար... Բայց ինչպէս պարում էր: Աս տեսած եմ մեր նահանգական քաղաքների օրիորդներին, և մէկ անգամ էլ տորանից քսան տարի առաջ, Մօսկվայում Ազնուականաց Ժողովարանում էի—բայց ինչ համեմատութիւն. սէ ուրիշ բան էր: Պրիգորից Ալեկսանդրովիչը զարգարում էր նէրան ինչպէս մի պուրպիկի զուգում, խնամում էր առանձին խնամքով. և նէ նորա մօտ այնպէս զեղեցկացաւ, որ հիանալի բան դարձաւ. երեսի և ձեռների խորշակի սևութիւնը կորաւ, կարմրութիւնը փայլեց նէրա պտերի վերայ... Ինչպէս ուրախ էր լինում նէ, միշտ վերաս կատակներ էր անում: Աստուած նէրան ներէ:

— Պուք ե՞րբ յայտնեցիք նէրան իւր հօր մահը:

— Մենք երկար ժամանակ այդ նէրանից ծածկում էինք, մինչև նէ ընտելացաւ իւր դրութեան. իսկ երբ յայտնեցինք՝ նէ երկու օր լաց եղաւ և յետոյ մոռացաւ:

— Չորս ամիս դործը շատ լաւ էր առաջ գնում: Պրիգորից Ալեկսանդրովիչը, կարծեմ արդէն ասել եմ, շատ էր սիրում որսի գնալ, պատահում էր, որ նորա հօգին ես էր գալիս անտառ գնալու կինձեր և վայրենի այծեր որսալու—իսկ այժմ նա դոնէ ամրոցի ցանկապատից դուրս դար: Սակայն տեսում եմ, նա նորից մտածմունքի մէջ սկսաւ ընկնել. ձեռները թիկունքին ծալած ման է գալիս սենեակի մէջ. յետոյ, մի անգամ ոչ դի ոչինչ չ'ասած, գնաց որսի,—ողջ առաւօտը կորաւ, յետոյ մի անգամ էլ, ուրիշ անգամ, յաճախ ու յաճախ: «Ալաւ չէ, մտածեցի ես, երևի նորանց մէջ սև կատու է անցել:—Մէկ առաւօտ գնացի նորանց մօտ, կարծես թէ հէնց հիմա աչքիս առջև է, Բէլան սև մետաքսեայ բաճկոնով նստած էր մահճակալի վերայ, դունատուած, այնպէս տխուր, որ ես վախեցայ:

— Ո՞րտեղ է Պեչորինը հարցրի ես:

— Այսօր դնաց:—Նէ լռում էր, կարծես թէ ներսն դժուար էր յայտնել:

— Ոչ, երէկուանից, վերջապէս ասաց նա ծանր կերպով շունչ քաշելով:

— Նորան բան պատահած չ'լինի:

— Նոս երէկ ողջ օրը մտածում էի, պատասխանեց նէ արտասուելով, մաքիցս անցկացրի հազար ու մէկ անբաղդութիւններ, ևս մտածում էի, թէ նորան վերաւորեց վայրենի յովաղը, կամ մի չէջէն սարը տարաւ: Նսկ այսօր ինձ թուում է, որ նա ինձ չէ սիրում:

— Յիրաւի, սիրելիս, դորանից վատ բան չէիր կարող մաքիցդ անցկայնել:

— Նէ լաց եղաւ, յետոյ հպարտութեամբ դուրսը բարձրացրեց, արտասուքը սրբեց և շարունակեց.

— Նթէ նա ինձ չէ սիրում, նորան ո՞վ է արգելում ինձ տուն ուղարկել: Նոս նորան չեմ ստիպում: Նթէ այս այսպէս շարունակուի, ևս ինքս կ'երթամ. ևս նորա գերին չեմ, ևս իշխանի գլուտոր եմ...

— Նոս սկսեցի ներսն համոզել: Նսիւր, Բէլա, նա փեշը փեշիտ կարած չէ կարող միշտ այստեղ մնալ. նա երիտասարդ մարդ է, սիրում է զոտի գնալ—կ'որոտայ և կ'զայ, իսկ եթէ դու պէտք է տխրես, աւելի նորան կ'արամեցնես:

— Այո, ճշմարիտ է, պատասխանեց նէ, ևս ուրախ կ'լինեմ: Նւ քրքջելով առաւ դարիէն, սկսեց երգել պարել, ցատկել իմ չորս կողմն, բայց սա ևս երկար չտևեց, նէ նորից ընկաւ անկողնի վերայ և երեսը ծածկեց ձեռներով:

— Նոս ի՛նչ պիտի անէի ներս հետ: Նոս, գիտէք, երբեք կանանց հետ նիստ ու կաց արած չունեմ. շատ մոտեցի, թէ ինչո՞վ ներսն մխիթարեմ, բայց ոչինչ բան չգայ. բաւականին ժամանակ մենք երկուսս լռեցինք... Անախորժ դուրթիւն:

Վերջապէս ևս ներսն ասացի. «ուղի՞ւմ ևս գիտնք պատնէշին վերայ զբօսենք, հիանալի եղանակ է: Սեպտեմբեր ամսին էր դէպքը: Նւ, յիրաւի, հրաշալի, պայծառ, հով օր էր, բոլոր լեռները պարզ երևում էին: Մենք գնացինք, պատնէշի վերայ յառաջ և յետ ման եկանք լռութեամբ, վերջապէս նէ նստեցաւ կանաչի վերայ, իսկ ևս ներս մօտ: Ճշմարիտ, որ

Ծիծաղելի է ասել, ես ման էի դալիս ներս հտեւից, ինչպէս մէկ ծծմայր:—Մեր ամրոցը գտնվում էր բարձր տեղում: Եւ պատնէշից նորա տեսքը զեղեցիկ էր. մի կողմում ընդարձակ դաշտը, մի քանի դարձափոխներով, վերջանում էր անտառով, որը տարածվում էր մինչև լեռների շղթան. տեղ-տեղ նորա վերայ զիւղերի ծուխերն էին բարձրանում, և շրջում էին ձիւրի երամակները. միւս կողմից հոսում էր փոքրիկ գետակը, դէպի սա ընկած էր խիտ մացառուտը, որ ծածկում էր Աով-կասի գլխաւոր շղթային հետ միացող կայծքարեայ բարձրաւանդակները: Մենք նստած էինք մարտկոցի անկիւնում, որտեղից տեսնում էինք երկու կողմն էլ: Ահա տեսնում եմ, անտառից դուրս է դալիս մէկը գորշագոյն ձիով, քանի դընում մօտենում է, և վերջապէս մեզանից հարիւր սաժէն հեռաւորութեամբ կանգնեցաւ գետակի միւս կողմում, և սկսեց կատաղածի նման իւր ձին այս ու այն կողմը քշել: Ինչ զարմանք .. Նայիր, Բէլա, ասացի ես. քո աչքերդ սուր են, այդ ինչ ձիաւոր է. նա եկել է ում զուարճացնելու:

— Նէ նայեց, և ձգաց, «դա Աաղբիշն է»:

— Եւ ի, աւաղակ, մեզ վերայ ծիծաղելու եկաւ: Նայում եմ, յիշաւի, որ Աաղբիշն է. նորա սե բեխը, պատառոտած և կեղտոտ շորերը ինչպէս միշտ: «Այդ իմ հօրս ձին է», ասաց Բէլան, իմ ձեռից բռնելով. նէ տերեւի նման տողում էր և աչքերը փայլում էին: Ի՞նչ, մտածեցի ես, քո երանների մէջ էլ հոգեկա, հոսում է աւաղակի արիւն:

— Եւ այստեղ, ասացի ես պահապանին, քննիր հրացանդ և փռուեցրու այդ կտրիճին. քեզ մի լուրբի կայ:—«Ասում եմ, ձերդ մեծապատուութիւն, միայն նա հանդարդ չէ մնում»...

— Հրամայիր, որ մնայ, ասացի ես խնդալով:—Ի՞նչ, բարեկամ, գոչեց պահապանը ձեռը շարժելով, «մի քիչ սպասիր, ինչ պտուտակի նման շարժում եմ»:—Աաղբիշը ձիւտ որ կանգնեց և սկսեց լսել. երեւի նա մտածեց, թէ իրեն հետ կ'սկսեն պայմանախօսութիւններ. —ինչպէս չէ... Իմ զրեւադերը չոքեցաւ .. Թըրթիւ... մօտից—հէնց, որ վառօդի ծուխն երևեց՝ Աաղբիշը խթեց ձիուն, և ձին թռաւ մի կողմ: Նա կանգնեցաւ ասպանդանների վերայ, ինչ որ բան իրենց լեզուով խօսեց, մօրակով սպառնաց և ծուկեց:

— Լմօթ չէ՞ քեզ, ասացի ես պահապանին:

— Զերդ մեծապատուութիւն, մեռնելու գնաց, պատասխանեց նա, ինչպէս անիծած ժողովուրդ է, միանգամով չէ սպանվում:

— Քառորդ ժամ անցած Պեօրինը որսից վերադարձաւ. Բէլան փաթաթուեցաւ նորա պարանոցով՝ և ոչ մի զանգատ, ոչ մի յանդիմանութիւն ցոյց չ'տուեց երկար բացակայութեանը համար: Ես մինչև անգամ նորա վերայ բարկացայ: Չարմանալի մարդ էք, ասում էի ես, հէնց այս րոպէիս Սաղբիչը զետի միւս կողմումն էր, և մենք նորա վերայ հրացան արձակեցինք. որչափ գիւրաւ կարող էիր նորան հանդիպել: Եյս լեռնականները վռժխնդիր մարդիկ են. դուք կարծում էք, թէ նա չէ՞ հասկանում, որ դուք մասամբ օգնեցիք Ազամատին: Իսկ ես գրաւ կգամ, որ նա այսօր ճանաչեց Բէլին: Ես զիտեմ, որ մի տարի առաջ նէ նորան շատ զիւր էր գալիս— նա ինքն էր ինձ ասում, և եթէ կարողանար հաւաքել բաւականին փող՝ աղջկան գլխադին՝ դուցէ խնամախօսութիւն անէր... Եյս ժամանակ Պեօրինը գլխի ընկաւ: Եյո, պատասխանեց նա, պէտք է ղգոյշ լինել: Բէլա, այս օրից դու այլ ևս չպէտք է գնաս ամրոցի պատնէշը:

— Արեկոյեան ես նորան երկար խօսակցութիւն ունեցայ. ինձ ցաւալի էր, որ նա փոխուեցաւ գէպի խեղճ աղջկիւր. բացի դորանից, նա օրի կէսը անցէր կացնում որսորդութեամբ. նորա վարմունքը սկսեց սառնանալ. նա նէրան շատ քիչ էր դուրգութում, և նէ նկատելի կերպով սկսել էր նիհարել. նէրա փոքրիկ երեսը դուրս էր ցցուել, խոշոր աչքերը նուաղել էին: Պատահում էր, հարցնում ես. — ինչո՞ւ հառաչեցիր, Բէլա, դու տխուր ես:— «Ոչ»:— Սիրտդ բա՞ն է ուղում:— «Ոչ»:— Գուտխիւրում ես ազգականների՞դ համար:— «Ես ազգականներ չ'ունեմ»: Պատահում էր, որ ողջ օրերով բացի «այո» և «ոչ»-ից նէրա բերանից ոչինչ չես լսի: Ահա, սորա մասին ես սկսեցի նորա հետ խօսել: Ասեցէք, Մակսիմ Մակսիմիչ, պատասխանեց նա, «ես դժբաղդ բնաւորութիւն ունեմ, արդեօք կրթութութիւնն է ինձ այդպէս արել, թէ Աստուած է ինձ այդպէս ստեղծել՝ չ'զիտեմ. միայն զիտեմ, որ եթէ ես որեւէ մէկին անբաղդութեան պատճառ եմ դատնում՝ ես ինքս ոչ

ստիպաւ անբաղդ եւմ լինում: Եւ հարկէ, սա նորանց համար մի վատ մխիթարութիւն է, միայն բանը նորանումն է, որ սա այսպէս է: Եւմ վաղ մանկական հասակից, երբ ես ծնողներիս խնամատարութեան ներքեւից դուրս եկայ՝ ես սկսեցի կատաղի կերպով զուարճանալ ամեն մի տեսակ բաւականութեամբ, որոնք ձեռք էին բերվում փողով, և ի՞նչ ասել կուզէ, որ այդ բաւականութիւնները ինձ զրուեցրին: Յետոյ ես մտայ բարձր հասարակութեան մէջ, և շուտով հասարակութիւնն ևս ինձ ձանձրացրեց, սիրահարվում էի աշխարհային գեղեցկուհիներին, և սիրվում էի, բայց ներանց սէրը միայն վառում էր իմ երեւակայութիւնս և ինքնասիրութիւնս, իսկ սիրտս մնաց դադարի... Աս սկսեցի կարգաւ գրել—գիտութիւնները նոյնպէս ինձ ձանձրացրին, եւ տեսայ, որ ոչ փառք, ոչ բաղդաւորութիւն ամենեւին նորանցից կախուած չէն, որովհետեւ ամենաբաղդաւոր մարդիկները ագէտ են, իսկ փառքը—յաջողութիւն է, իսկ նորան հասնելու համար հարկաւոր է ճարպիկ լինել: Եւ ժամանակ եւս սկսեցի տխրել... Շուտով տեղափոխեցին ինձ Սովկաս, սա ամենաբաղդաւոր ժամանակն է իմ կեանքիս: Աս կարծում էի, թէ չէչէնների գնդակների տակ տիրութիւն չ'կայ—գնդ. մի ամիս յետոյ եւս այնպէս ընտելացայ նորանց վժժողին և մահի մերձաւորութեան, որ աւելի ուշագրութիւն էի դարձնում մոծակներին վերայ, եւ սկսեցի առաջուանից աւելի տխրել, վասն զի ես, գրեթէ, կորցրի վերջին յոյսս: Արբ եւ Բէլաին տեսայ իմ տանը, երբ առաջին անգամ, բռնելով ներան ծնկներին վերայ համբուրում էի ներա սե խոպոպները՝ եւ, տխմարս կարծեցի, թէ նէ հրեշտակ է, ուղարկուած կարեկից բաղդից... Աս նորից սխալուեցայ. վայրենու սէրը քիչ բանով աւելի է երեւել տիկնոջ սէրից, կոպտութիւնը և պարզսրտութիւնը մէկի նոյնպէս ձանձրալի են, ինչպէս միւսի հապտանքը: Աթէ դուք կամենում էք, եւ ներան դեռ ևս սիրում եմ, եւ ներանից շնորհակալ եմ ներա պատճառած մի քանի բաւական քաղցր ընդունելի համար. եւ ներա համար կամ կեանքս, միայն թէ ինձ ներա հետ մնալը տրտուր է: Յիմար եւմ ես, թէ չարամիտ՝ չ'գիտեմ, բայց այս ճրջ մարիտ է, որ եւս նոյնպէս արժանի եմ ցաւակցութեան, գուցէ և աւելի շատ, քան թէ նէ, իմ հոգիս ապականուած է աշ-

խարհով, երևակայութիւնս անհանգիստ է, սիրտս անյաղ է. ամեն ինչ ինձ քիչ է թուում. թախիծին նոյնպէս զիւրութեամբ եմ ընտելանում, որպէս և զուարճութեան. իսկ կեանքս օրէց օր ինձ թուում է աւելի դադարի. ինձ մնացել է մի միջոց, այն է ճանապարհորդել: Զէնց որ կարելի կլինի՝ կգնամ—միայն ոչ Եւրոպայ, Աստուած չանէ, կգնամ Ամերիկայ, Հնդկաստան, զուցէ և որևէ տեղ մեռնեմ ճանապարհին: Գոնէ, ես համոզուած եմ, որ այս վերջին մտիթարանքը բքիւրի և վատ ճանապարհների օգնութեամբ շուտով չի վերջանայ»: Այն պէս կար խօսեց, որ նորա խօսքերը զրոշմունցաւ իմ յիշողութեանս մէջ, վասն զի առաջին անգամն էի լսում այդպիսի բաներ քսան և հինգ տարեկան մի մարդուց, և Աստուած տայ, որ վերջինը լինի... Ինչ զարմանք, ասացէք ինչպիսի եմ, շարունակեց շտաբ-կապիտանը դառնալով ինձ, այ, կարծեմ դուք եղած էք մայրաքաղաքներում և վաղուց չէ—միթէ այնտեղի բոլոր երիտասարդութիւնը այդպէս է:

Եւս պատասխանեցի, թէ շատ մարդիկ կան, որոնք նոյնն են ասում. կան և պնդէսները, յիրաւի, որ ասում են ճշմարիտը. հիասթափումը, ինչպէս և բոլոր նորաձեւութիւնները, սկսուելով հասարակութեան բարձր դասակարգից իջաւ դէպի ստորինները, որոնք նորան ի վերջոյ գործածում են ինչպէս հին զգեստ. և այժմ նորանք, որոնք իսկապէս բոլորից աւելի են տիրում՝ աշխատում են ծածկել այդ անբաղդութիւնը, որպէս մի յանցանք: Շտաբ-կապիտանը չհասկացաւ այս նրբութիւնները, գլուխը շարժեց, և խորամանկութեամբ ժպտաց:

— Ինչ, ֆրանսիացիները չմտցրի՞ն տիրելու նորաձեւութիւնը:

— Ո՛չ, անգլիացիները:

— Ե՛ւ, այ ինչ... պատասխանեց նա. նորանք միշտ յայտնի հարբեցողներ են:

Եւս յիշեցի Մոսկուացի մի տիկնոջ, որ հաստատում էր, թէ Ռայրոնը ոչ այլ ինչ է եղել, եթէ ոչ մի հարբեցող: Ասկայն շտաբ-կապիտանի նկատողութիւնը ներկի էր, գինուց հեռու կենալու նպատակով՝ նա ի հարկէ աշխատում էր իրան

Հաւատացնել, որ բոլոր անբաղդութիւնները աշխարհիս երեսին առաջ են գալիս հարեցողութիւնից:

Սակայն նա իւր խօսակցութիւնը առաջ տարաւ այսպէս:

— Սաղբիչը այլ ևս չէր յայտնվում: Միայն չզիտեմ, թէ ինչու ևս չէի կարողանում ինձանից հեռացնել այն միտքը, որ նա զուր չէր եկել, և մտածում էր ինչ որ վատ բան:

— Ահա, մի անգամ համոզում է ինձ Պեօրինը, որ միասին ղնայինք կինձ՝ որսալու. ես երկար մերժում էի: Աինձը ինձ համար ի՞նչ մի հազուագիւտ բան է: Սակայն նա ինձ հար տարաւ: Մենք առանք Հինգ զինուորի և առաւօտեան վաղ ղնացինք: Մինչ ժամը տասը մենք թափառում էինք, ման էինք գալիս եղէգների և անտառի մէջ—գազան չկայ: «Է՛, չ'վերադառնանք», ասացի ես: «Էլ ինչո՞ւ կամակորութիւն անենք: Էլ երևում է, որ անյաջող օր պատահեցաւ»: Սակայն Գրիգորիյ Ալեկսանդրովիչը, չնայելով շոքին և յոգնածութեան՝ առանց որսի չէր ուզում վերադառնալ... Այդպիսի մի մարդ էր. ինչ որ միտքը ընկնում էր՝ կատարի՛ր. երևում էր, որ մանկութեան ժամանակ մայրիկը երես էր տուել... Աւերջապէս կէս օրին գտանք անիծած կնձին—երկու ղնդակ արձակեցինք, բայց օգուտն ինչ, մտաւ եղէգների մէջ... այդպիսի մի անբաղդ օր էր... Եւ մենք քիչ հանգստանալով մտանք տուն:

— Մենք գնում էինք միմեանց կողքից լուծեամբ, ձիերի սանձերը թողած, և համարեա, թէ հասած էինք ամրոցին. միայն թուփը նորան ծածկում էր մեղանից: Յանկարծ հրացանի ձայն... մենք միմեանց երես նայեցինք. մեզ սարսափեցրեց միևնոյն կասկածը... Իսկոյն ձիերս քշեցինք դէպի հրացան արձակուած տեղը—նայում ենք. պատնէշի վերայ հաւաքուած էին զինուորները և ցոյց էին տալիս դէպի դաշտը. իսկ այնտեղ նետի նման թռչում է մի ձիաւոր, մի ինչ որ ճերմակ բոն բռնած թամբի վերայ: Գրիգորիյ Ալեկսանդրովիչը ճշտց ինչպէս իսկական չէ՛էն. հանեց հրացանը պատեանից և հասաւ. ես՝ ետեւից:

— Անյաջող որսի պատճառով բարեբաղդաբար մեր ձիերը յոգնած չէին. նորանք մոլեղնաբար առաջ էին սլանում, և քանի գնում այնքան մօտիկանում էին... վերջապէս ևս ճանաչեցի Սաղբիչին, միայն չկարողացայ որոշել, թէ ինչ կար

նորա գիրկը: Այն ժամանակ ես հաւասարեցայ Պեչորինին և գոչում եմ նորան. դա Սաղբի՛ն է... Նա նայեց իմ երեսիս, զլուխով արեց և ձիուն հարուածեց մտրակով:

— Ահա վերջապէս մեր և նորա մէջ մնաց մի հրացանի գնդակի տարածութիւն: Սաղբիչի ձիւն յողնած էր, թէ՛ մեր ձիերից վատ էր՝ չգիտեմ, միայն, չնայելով նորա բոլոր ճիգին՝ այնքան արագ չէր ընթանում: Նա կարծում եմ, որ նա այդ ժամանակ յիշեց իւր Աւարագեօղին...

— Նայում եմ, Պեչորինը ձին վռնտած ժամանակ ուղղեց հրացանը... «Մի արձակէ՛ք», գոչեցի ես նորան, «ըտուածքը պահեցէք, մենք այնպէս էլ նորան կ'հասնենք»:— Այս մեր երիտասարդները, միշտ անյարմար տեղը բորբոքվում են: Բայց հրացանը գոռաց, և գնդակը դիպաւ ձիու կողմից. նա տաք տաք դեռ մօտ տասը ոսախէն արեց, սայթաքեց և ընկաւ ծնկների վերայ: Սաղբիչը ձիուց թռաւ, և այն ժամանակ մենք տեսանք, որ նա իւր ձիւների մէջ բռնած էր մի կին, որ փաթաթում էր ճերմակ ծածկոցով... Այս Բէլան էր... Խեղճ՝ Բէլան: Նա ինչ որ բան բարձր ասաց մեզ իրենց լեզուով և գաղղներ տարաւ դէպի նէ: Պէտք էր շտապել, ես իմ կողմից հրացանը արձակեցի ինչպէս պատահեցաւ. գնդակը երեւի ուսին դիպաւ, վասն զի յանկարծ նա ձեռք կտրեց: Նրբ որ ծուխը ցրուեցաւ՝ գետնի վերայ ընկած էր վերաւորում ձին, իսկ նորա մօտ—Բէլան. իսկ Սաղբիչը հրացանը վար ձգելով մացառների միջով որպէս կատու ճանկրտում էր ժայռերն ի վեր: Նա ուղրում էի նորան այնտեղից վար զըրել, բայց հրացանս լեքը չէր: Մենք ձիերից վար թռանք և վաղեցինք Բէլաի մօտ: Թշուառը ընկած էր անշարժ, և արիւնը վտակի պէս հոսում էր նորա վերքից: Չարագործը զոնէ սրտին զարնէր, և միանգամից ամեն բան կվերջացնէր, բայց կռնակին... Իսկական աւաղակի հարում: Նէ ուշաթափում էր: Մենք պատառեցինք ծածկոցը և կապեցինք վերքը, որքան կարելի է ամուր: Չուր Պեչորինը համբուրում էր ներս սասը շթուներէրը. ոչ մի բան ներսն չէր կարող ուշքի բերել:

— Պեչորինը հեծաւ ձին, և ես վերցրի ներսն գետնից և մի կերպով դրի նորա առջև թամբի վերայ. նա ներսն

բռնեց ձեռով և մենք դարձանք տուն: Մի քանի լուսնի լուսն յետոյ Պրիգորիյ Ալեկսանդրովիչը ասաց ինձ. «Լսեցէք, Մակսիմ Մակսիմիչ, մենք այս կերպով ներան կենդանի տեղ չենք հասցնիր»: «Ջմարիտ է», ասացի ես և մենք ձիերս քշեցինք բոլոր ուժով: Ամրոցի դրան առջև մեզ սպասում էր խուռն բաղմուժիւն: Չգուշալթեամբ վերաւորուածին տարանք Պեչորինի մօտ, և ուղարկեցինք բժշկի ետև: Թէև նա հարբած էր, սակայն հիւա նայեց վերքին, և յայտնեց որ նէ մի օրից աւել չի ապրի. սակայն նա սխալուեցաւ...

— Աւաւացաւ, հարցրի ես շտաբ-կապիտանին, խլելով նորա ձեռը և ահամայ ուրախանալով:

— Ոչ, պատասխանեց նա. իսկ բժիշկը սխալուեցաւ նորանով, որ նէ երկու օր աւելի ապրեց:

— Պէ՛ բացատրեցէք ինձ, թէ ի՞նչպէս ներան առեանդել էր Սաղբիչը:

— Այ, այսպէս. չ'նայելով Պեչորինի արգելելուն, նէ ամրոցից դուրս է դնում գետակը. եղանակը շոք է լինում. նէ նստում է քարի վերայ, և ոտները կախում է ջուրը: Ահա Սաղբիչը թաքուն մօտենում է և ներան յափշտակում, բռնում է բերանը և տանում թուփերի տակը. իսկ այնտեղ թռչում է ձիու վերայ և փախչում: Նէ, սակայն, կարողանում է ձուլալ. պահապանները իրար են անցնում, հրացան են արձակում, բայց չէ զիպչում, և մենք էլ հէնց այդ ժամանակ հասանք:

— Ի՛նչ Սաղբիչը ինչո՞ւ էր ուղղում ներան փախցնել:

— Ի՞նչ էք ասում, այս չէրքէզները յայտնի զող մարդիկներ են. ինչ բան որ լաւ չէ պահպանուած՝ չեն կարող չթրոցնել. կայ բան, որ հարկաւոր էլ չէ, սակայն էլի դողանում են... սա նորանց բնածին յատկութիւնն է: Բացի սորանից նէ նորան վաղուց զիւր էր գալիս:

— Աւ Բէլան մեռաւ:

— Մեռաւ, միայն երկար չարչարուեցաւ, և մենք էլ ներա հետ միասին բաւականին նեղութիւն քաշեցինք: Արեկոյեան, մօտ տասը ժամին ներա ուշքը վերան հիւա. մենք նստած էինք մահճի մօտ. հէնց որ նէ բացեց աչքերը սկսեց կանչել Պեչորինին:— «Նա այստեղ եմ, քո մօտդ, իմ ջանիկս, պա-

տասխանեց նա, բռնեց ներս ձեռից: — Աս կմեռնեմ ասաց նէ:

— Մենք սկսեցինք ներսն մտնել: ասում էինք, թէ բռնելը խօսք տուեց, որ անպատճառ կ'բռնէ: Նէ շարժեց գլուխը և երեսը դարձրեց դէպի պատին. նէ չէր ուղղում մեռնելը...

— Պիշերը նէ սկսեց տէլը տալ. գլուխը խիստ տաք էր, բոլոր մարմնի վերայով երբեմն անցնում էր ջերմի տող: Նէ ասում էր կցկառու խօսքեր հօր մասին, կըրօր մասին. նէ ուղղում էր դնալ լեռները, տուն... Յետոյ նէ նոյնպէս սկսեց խօսել Պեչորինի մասին. տալիս էր նորան զանազան փաղաքշական անուններ, կամ յանդիմանում էր նորան նորա համար, որ նա էլ չէր սիրում իւր ջանիկին:

— Նա գլուխը ձեռների վերայ դրած լռութեամբ լսում էր ներսն. միայն ևս բոլոր ժամանակը ջնկատեցի մի կաթիլ արտասուք նորա թերթիկների վերայ. խիսապէս նա չէր կարողանում լաց լինել, թէ զսպում էր իրեն՝ չզիտեմ. իսկ դառնով ինձ՝ ևս սորանից աւելի խղճալի բան չէի տեսած:

— Առաւօտեան դէմ զառանցանքը անցաւ. մի ժամի չափ նէ ընկած էր անշարժ, դժգոյն և այնպէս թոյլ, որ հազիւ կարելի էր նկատել, թէ նէ շունչ է քաշում. յետոյ քիչ լաւ եղաւ և նէ սկսեց խօսել, միայն ի՞նչ էք կարծում, ինչո՞ւ մասին... Այդպիսի միտք գալիս է միայն մեռնողին... Ախեց տրամել, որ ինքը քրիստոնէայ չէր, և որ իւր հոգին միւս աշխարհում պատահելու չէր Պրիգորիյ Ալեկսանդրովիչի հոգու հետ, որ զրախտի մէջ մի ուրիշ կին կ'լինի նորա ընկերուհին: Աս մտածեցի ներսն մեռնելուց առաջ մկրտել. ևս այս բանը ներսն առաջարկեցի. նէ նայեց եմ վերայ տարտամ զրուծեան մէջ, և երկար չէր կարողանում մի խօսք տսել. վերջապէս պատասխանեց, որ նէ կ'մեռնի այն հաւատով որ ծնունդ է: Այդպէս անցկացաւ ողջ օրը: Ինչպէս նէ փոխուեցաւ այդ օրը: Պունատուած պատերը ներս էին ընկել. աչքերը մեծացել էին, շրթունքները այրվում էին, նէ զգում էր ներքին տաքութիւն, կարծես ներս սրտում տրուած էր շիկացած կրկաթ:

— Հասաւ երկրորդ գիշերը. մենք աչք չէինք խփում և ներսնից չէինք հեռանում: Նէ սաստիկ չարչարվում էր, տընք-

նում էր, և հէնց որ սկսվում էր ցաւը նուազել՝ նէ աշխատում էր Գրիգորի Ալեկսանդրովիչին համոզել, թէ լաւ է համոզում էր նորան գնալ քնելու, համբուրում էր նորա ձեռք, և բաց չէր թողնում իւր ձեռներից: Առաւօտեան դէմ նէ սկսեց զգալ մահուան տքնութիւն. սկսեց կողքէ կողք ընկնել, քանդեց կապը և նորից հոսեց արիւնը: Արբ կապեցինք վէրքը, նէ կարճ ժամանակ հանդստացաւ և սկսեց խնդրել Պեչորինին, որ իրեն համբուրէր: Նա մահի՞ մօտ չօքեց, բարձրացրեց նէրա գլուխը և իւր շրթունքները սեղմեց նէրա սառչող շրթունքներին. նէ գողգոջուն ձեռներով ամուր բռնեց նորա վիզը, կարծես թէ այդ համբոյրով իւր հողին ուղւում էր տալ նորան... Ո՛չ, նէ լաւ արեց որ մեռաւ, ի՞նչ կանէր նէ, եթէ Գրիգորի Ալեկսանդրովիչը նէրան թողնէր: Իսկ այդ ուշ թէ շուտ պատահելու էր...

— Հեռեկալ օրը մինչ կէս օր նէ հանդարտ, լուռ և հլու էր, չնայելով, որ բժիշկը նէրան չարչարում էր իւր կապոցներով և դեղերով:

— Պարոն, ասում էի նորան, չէ՞ որ դուք ինքներդ էիք ասում, թէ նէ անպատճառ կմեռնի, էլ ինչու համար են ձեր բոլոր դարմանները: Այնուամենայնիւ լաւ է, Մախիմ Մախիմիչ, որ խիղճս հանդիսա լինի: Լաւ խիղճ:

— Յերեկից յետոյ նէ սկսեց ծարաւից պապակիլ: Մենք բացինք լուսամուտները, բայց դուրսը աւելի շոք էր, քան սենեակում. սառոյց դրինք մահճակալի մօտ, բայց ոչինչ չօքնեց: Աս հասկացայ, որ այդ անտանկի ծարաւութիւնը մահուան մօտենալու նշան էր, և յայտնեցի Պեչորինին:

— Զուր, ջուր... ասում էր նա կտրուած ձայնով տեղից վեր կենալով:

— Նորա հրեսի գոյնը ձերմակ թան կարաւ, շտապով առաւ բաժակը, լեցրեց և տուեց նէրան: Աս ձեռներով խփեցի աչքերս և սկսեցի աղօթք ասել չեմ յիշում, թէ ինչ աղօթք... Այո, բարեկամ, ես շատ անգամ տեսած էի, թէ ի՞նչպէս են մեռնում մարդիկ հիւանդանոցում, կամ պատերազմի դաշտում, բայց սա այնպէս չէր, բոլորովին այնպէս չէր... Մէկ էլ ճշմարիտն ասեմ, այ ի՞նչն է ինձ տխրեցնում, նէ մահուանից առաջ գէթ մի անգամ ինձ չ'յիշեց, իսկ ես կարծեմ նէ-

րան սիրում էի իբրև հայր... Եւ, Աստուած հոգին լուսաւոր է... Եւ ճշմարիտ, ես ինչ էի, որ ինձ յիշէր մահից առաջ...

— Հէնց որ նէ ջուրը խմեց՝ թեթեւացաւ և երեք րոպէից յետոյ հոգին աւանդեց: Հայելին զրինք շրթունքներին — բայց չնշառութիւն չկար...

— Ես Պեչորինին դուրս տարայ սենեակից և մենք դնացինք ամրոցի պատնէշը: Երկար ժամանակ մենք լռութեամբ, թեեւս մեջքերիս վերայ ծալած այս և այն կողմը ման էինք դալիս կողքէ կողք, նորա գէմքը ոչինչ չէր արտայայտում, ես յուզվում էի. ես նորա տեղը վշտից կ'մեռնէի: Վերջապէս նա նստաւ գետնի վերայ շուաքում, և սկսեց ինչ որ բան փայտով նկարել աւազի վերայ: Եւ, դիտէք, աւելի քաղաքավարութեան համար ուզում էի նորան մխիթարել, սկսեցի խօսել. նա գլուխը բարձրացրեց և խնդաց... Ես սառած մնացի այդ ծիծաղի պատճառով... Ես դնացի դադաղ պատուիրելու:

— Ճշմարիտն ասած, ես մոտամբ ինձ զբաղեցնելու համար այդ բանն յանձն առայ: Իմ մօտս մի կտոր տերմօլամայ կար: Ես նորանով շրջապատեցի դադաղը և զարդարեցի չէրքէզի արծաթեայ ժապաւեններով, որը Պրիգորիյ Ալեկսանդրովիչը գնել էր ներս համար:

— Միւս օր սռաւօտեան վաղ մենք ներսն թաղեցինք ամրոցի ետև գետակի ափին, այն տեղին մօտ, ուր նէ նստել էր վերջին անգամ. ներս գերեզմանի շուրջը այժմ բսած են սպիտակ սքացու և քոչանի թուփեր: Ես ուզում էի մի խաչ անկել, բայց զիտէք, անյարմար էր. ինչ էլ լինի նէ քրիստոնեայ չէր...

— Իսկ Պեչորինը, հարցրի ես:

— Պեչորինը երկար ժամանակ հիւանդ էր, խեղճը լղարեց, միայն այդ ժամանակից մենք չէինք խօսում Բէլաի մասին: Ես տեսնում էի, որ այդ նորան անհաճոյ էր, ուրեմն ինչո՞ւ համար խօսէի: Երեք ամիս յետոյ նորան նշանակեցին Ա...ան գունդը, և նա գնաց Վրաստան: Մենք այն ժամանակից միմեանց չհանդիպեցանք... Հա, յիշում եմ, ով որ ինձ ասաց, որ նա վերադարձել է Ռուսաստան, բայց զօրքերի հրաման-

ներում չ'կարգացի այդ: Սակայն, լուրերը մինչև մեզ ուշ են հասնում:

Այստեղ նա սկսեց երկար բանախօսութիւններ այն մասին, թէ ինչպէս անախորժ է նորութիւնները մի տարի յետոյ լսել, երեւի նորա համար, որ խեղաէ տխուր յիշողութիւններ:

Եւ նորան չէի ընդհատում և չէի լսում:


Մի ժամից կարելի եղաւ ճանապարհ ընկնել. բոլքը հանդարտել էր, երկինքը պարզուեց, և մենք դնացինք: Ճանապարհին ականաց ևս սկսեցի խօսել Բէլաի և Պէօրինի մասին:

— Զիմացա՞ք, թէ ի՞նչ եղաւ Սաղբիչը, հարցրի ես:

— Սաղբի՞չը: Ճշմարիտ չգիտեմ... Լսեցի, որ մեր աջ կողմերում շասպուգների մօտ կայ ինչ որ Սաղբիչ, կորիճ, որ կարմիր բաճկոնով ձիով հանդարտ ման է դալիս մեր հրացանների գնդակների տակ, և խիստ քաղաքավարութեամբ խոնարհութիւն է տալիս, երբ դնդակը վժժում է նորա մօտով. բայց դժուար թէ դա նա լինի...

Սորիում ես և Մակսիմ Մակսիմիչը միմեանցից բաժանուեցանք. ևս գնում էի սուրհանգակի սայլակով, իսկ նա ծանր բեռի պատճառով չէր կարող ինձ հետեւել: Մենք բոլորովին յոյս չունէինք այլ ևս միմեանց հանդիպելու. սակայն հանդիպեցանք, և եթէ ցանկանում էք ևս կ'պատմեմ, այս երկայն պատմութիւն է... Բայց և այնպէս խոստովանուեցէք, որ Մակսիմ Մակսիմիչը յարգանքի արժանի մարդ է: Եթէ դուք այս կ'խոստովանուէք, ևս լիովին վարձատրուած կ'լինիմ իմ, դուցէ և շատ երկայն պատմութեանս փոխարէն:

Յովհաննէս Մախառեանց.



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՀԱՅԱՍՏԱՆ», բերան Հայկական Հայրենասիրաց ընկերութեան, հրատարակվում է հայերէն և ֆրանսերէն լեզուներով. իւրաքանչիւր ամսի 1-ին և 15-ին: Տարեկան բաժանորդագինն է 5 ուռբլի: Խմբագրապետ Ս. Սըվազլեան, քաղաքական տնօրէն. Հ. Պրուսալեան: Հասցէն. Redaction du journal «Le Haïasdan» 9. Sutherland Place, Bayswates, W. Londres.

«L'Arménie», journal politique et littéraire, paraissant le 15 de chaque mois. Rédacteur en chef Minas Tscheraz. Prix de l'abonnement (payable d'avance), un an, 10 schellings. A la rédaction, 28 Bedford Place, Russell Square Londres S. W.

«L'Arménie» քաղաքական և գրականական ամսաթերթ: Հրատարակվում է ֆրանսերէն լեզուով 1, օնգոնում իւրաքանչիւր ամսի 15-ին, 1889 թ. նոյեմբերի 15-ից: Խմբագրութեամբ Ս. Չիւրազ: Տարեկան գինն է 10 շիլլինգ. հասցէն. A la rédaction, 28, Bedford Place, Russiel Square, Londres, S. W. .

«ԱՂԲԻԻԻ» միամսեայ պատկերազարդ հանդէս երեխաների և դաստիարակների համար: 1890 թուին տալիս է երեք պրեմեայ. տարեկան բաժանորդագինն է 3 ուռբլի և պրեմեաների համար ճանապարհածախս պէտք է ուղարկել 28 կ. փոստի մարկա, հասցէն՝ Тифлисъ. Въ редакцію «Агбуръ» իսկ արտասահման Tiflis (Caucase) Rédaction de la Revue «Agbur».

Խմբագիր-հրատարակիչ Տիգրան Նազարեանց:

«ՏԱՐԱԶ» գեղարուեստական - գրական-երգիծարանական պատկերազարդ հանդէս: Կը հրատարակուի թիֆլիսում առաջիկայ յունուարի մէկից մեր յայտնի հեղինակների, նկարիչների մասնակցութեամբ ամիսը մի անգամ:

«Տարազի» բաժանորդագինն է 3 ուռբլի:

Հասցէն՝ Тифлисъ. Въ редакцію иллюстрированного журнала «Таразъ», իսկ արտասահմանից Tiflis, (Caucase) Rédaction du journal illustré «Taraz».

Խմբագիր-հրատարակիչ Տիգրան Նազարեանց:

«Արաբական» տպում ենք զանազան յայտարարութիւններ.
Իւրաքանչիւր ջերկը արժէ մէկ ռուբլի, կէս երեսը 15 ռուբլի,
իսկ ամբողջ երեսը 25 ռուբլի իւրաքանչիւր անգամը:

«ԱՐԱՔՍԻ» խմբագրատանը վաճառվում են հետեւեալ գրքերը.
Историческій памятникъ состоянія Армянской области въ эпоху ея
присоединенія къ Россійской имперіи. И. Шопена. С.-Петербургъ.
1852 г. 4°. եր. 1237. գինն է 6 ռուբլի.

Սորա երկրորդ հատորը գինն է 3 ռուբլի.

Грузія и Армения. Три части. С.-Петербургъ, 8°. 1848 г. կաղ-
մած. գինն է 3 ռուբլի.

Всеобщая исторія Степана Таронскаго-Асохика. перев. Эминъ.
գինն է 4 ռուբլի.

Վօտարք հայոց հաւաքեալ և իրոյս ածեալ ձեռամբ Վ. Լոնդ վար-
դապետի փիրղալէմեան: Պոլիս, 1888. եր. 232. գինն է 1 ռ. 20 կ.

Վ. Էպեր և Պատկերներ. Վ. Էորդ Չուբար. Սոստոմ. 1889.
գինն է 1 ռ. 50 կ.

Ըրժանապատիւ Խորիմեան Հայրիկի հետեւեալ հրատարակութիւն-
ները.

Վրախտի ընտանիք. Պոլիս, 1887. երկ. տպ. գինն է 60 կ.

Սիրաք և Սամուէլ. բարի հօր կրթական դասեր. երկ. տպա-
գրութիւն Պոլիս, 1887. գինն է 60 կոպ.

Մարգարիտ արքայութեան երկնից. Պոլիս, 1887. գ. տպ.
գինն է 40 կ.

Յիսուսի վերջին շարաթ և խաչի ճառ. Պոլիս, երկ. տպ.
գինն է 40 կ.

Մ. Մսերեանց. Մանր Ուսմունք ազգային եկեղեցական պատ-
մութեան. Մոսկուայ, 1874. 8°. 56 եր. գինն է 30 կ.

«ԱՐԱՔՍԻ» մէջ դրուած պատկերները առանձին ծախվում են.
Իւրաքանչիւրի գինն է 20 կոպ. ճանապարհածախսով հանգերձ:

Պետերբուրգում հրատարակուած «Մանկավարժանոց» ամ-
սագրի մարտ գրքոյկը ծախվում է «Արաքսի» խմբագրատանը:
Վինն է 40 կոպէկ. Բովանդակութիւնն է, Վարդի ոգին,
Հնգկաստանի և Բիրմանիոյ հայեր, Լազիստանի հայեր, Տրապիզոնի
կրթական վիճակի առթիւ, () տարակրօն հաստատութիւններ Ալիւ-
կիայում, Թուրքիոյ և առանձինն Պոլսոյ հայ ժողովրդեան արդին
վիճակը, «Վզգարար» անդրանիկ հայ ամսագիրը և նրա խմբագիր
Յարութիւն քահանայ Ը մառնեան. Հայաստանի աշխարհագրական
և ժողովրդագրական մատենագրութիւն:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԳՈՐԾԱԳԻՐ-ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆՁՆԱԹՂՈՎՈՅ

Յ. ԻԶՄԻՐԵԱՆՑ ԿՏԱԿԻՆ.

Ըստ կտակի բարեյիշատակ Յովսէփայ Իզմիրեանց՝ Գործադիր-Սնայուն Յանձնաժողովս պատիւ ունի հրաւիրել այն հեղինակներն ու բանասէրներն՝ որ Լզգային Գպրութեան և պատմութեան վերաբերեալ ո՛ր և է աշխատութեամբ կը փափաքին մասնակցիլ Սահակ-Մեսրոպեան Գրական մրցանակաբաշխութեան, հաճին իրենց աշխատութիւններն յուղարկել մինչև յառաջիկայ 1890 տարւոյ Յունվարի վերջ, առ Լմեն. Սրբազան Պատրիարք Հայրն, Յանձնաժողովոյ հասցէին, 1 Յուլիս 1889. Ի Պատրիարքարանի Հայոց Կ. Պօլիս.

Въ книжномъ магазинѣ «Новаго Времени» (Спб., Невскій, 38), открыта подписка на новое художественное иллюстрированное издание

Ө. И. БУЛГАКОВА

„НАШИ ХУДОЖНИКИ“

(живописцы, скульпторы, мозаичисты, гравёры и медальеры) на академическихъ выставкахъ послѣдняго 25-лѣтїя, біографїи, портреты художниковъ и снимки съ ихъ произведенїй. Съ 750 фототипическими и автотипическими снимками. Вышелъ въ свѣтъ 1-й томъ, второй томъ выйдетъ въ теченїе первыхъ мѣсяцевъ 1890 г. Цѣна за оба тома только по подпискѣ 15 р., съ пересылкой 17 р. Роскошные экземпляры (напечатано всего 50 экз.) по 25 р. за оба тома. По выходѣ 2-го тома подписка прекратится и цѣна будетъ возвышена.

Վերմանական ազգային առակներ եղբարց Վրիմնայ: Թարգմանութիւն Եւայ Տէր Վրիգորեանցի: Ս. Պետերբուրգ. 1864 թ. գինն է իւրաքանչիւր գրքի 30 կոպէկ: Վիմել. Петербургъ. Художнику Христофору Гусикову. Васильевскій Островъ, 8 линия, д. № 21, кв. № 9.

Ծոցի օրացոյց 1890 թուականին Վրիտանի: Կազմեց Սահար Չմշկեան: Վինն է 15 կպ: Հասցէն: Тифлисъ Макару Чмишкян.

Վ. Շէկսպիրի. «Լիր Թագաւոր» ողբ. հինգ արարուածով, Թարգմ. Ստ. Սալիսեանց: Պետերբուրգ. 1888: Վինն է 1-ր= 2, 50 Փր: Վիմել. Թիֆլիս Կենդրոնական գրաղաճառանոց:

ФОТОГРАФІЯ

ВЕСТИ-СЫНЪ

снимаетъ фотографическіе портреты, карточки, группы и всевозможныя работы по умѣренной цѣнѣ. Адресъ: Владимірскій просп., д. № 6, кв. № 15.

ОБЩЕСТВО ВЗАИМНАГО СТРАХОВАНІЯ ЖИЗНИ

„НЬЮ-ІОРКЪ“

УЧРЕЖДЕННОЕ ВЪ 1845 Г.

Высочайше разрѣшенное для дѣйствій въ Россіи.

За 45-лѣтнее свое существованіе Общество «Нью-Іоркъ» успѣло пріобрѣсти себѣ всеобщее довѣріе и симпатію. Дѣйствуя на принципахъ полной взаимности, оно всегда стремилось сдѣлать страхованіе доступнымъ для всѣхъ классовъ. Благодаря разнообразію комбинацій, страхованія заключаемыя въ обществѣ одинаково выгодны какъ для обезпеченія семействъ на случай смерти, такъ и для собственнаго обезпеченія подѣ старость въ случаѣ дожитія.

Общество «Нью-Іоркъ» нашло возможнымъ значительно облегчить многія стѣснительныя условія, которыми страхованіе жизни до сихъ поръ было обставлено и для этой цѣли ввело систему

Свободныхъ полисовъ съ накопленіемъ прибылей, дающихъ страхователямъ почти неограниченную свободу относительно путешествія и занятій.

Общество «Нью-Іоркъ» находится подѣ постояннымъ фактическимъ контролемъ русскаго правительства и вноситъ ежемѣсячно въ Государственный Банкъ на имя Министерства Внутреннихъ Дѣлъ полныя резервы по всѣмъ заключеннымъ въ Россіи страхованіямъ, сверхъ постоянного залога въ 500,000 руб., хранящагося въ Государственномъ Казначействѣ.

Подробныя разъясненія находятся въ брошюрахъ Общества, высылаемыхъ бесплатно.

Главное Управленіе для Россіи С.-Петербургъ, Невскій пр., 26.

Отдѣленіе: въ Москвѣ, Большая Лубянка д. Трындиныхъ.

» » Одессѣ, Бульваръ, д. Ралли.

» » Кіевѣ, Институтская, д. Фабриціуса.

» » Харьковѣ, въ торговомъ домѣ Р. Рубинштейнъ и

сыновья.

Агентства: въ Тифлисѣ, Баку, Кутаисѣ, Батумѣ, Ростовѣ-на-Дону, Астрахани, Казани и во всѣхъ значительныхъ городахъ Имперіи.

ԱՐԱՐԱՍ

ՊԱՏԻՆԱԶԱՐԻ ՀԱՄԻՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հասարակական ինդիքներ

Սովխաստն արդիւնահանդէս. Ա.	Երև. 1
------------------------------------	--------

Տեղագրական

Տեղագրութիւն Ազիոյ. Նր. Հոգ.	17
Նմուշներ Մարաշու բաւրաթին. Սէլէյէ	21
Բանաստեղծութիւն.—Պատկեր. Աղ. Պապոյեան	28

Հայկական հաստատութիւններ

Պարթիայիւն աղջկանց որբանոց. Արշէն-Հէ Պալէայեան	29
--	----

Բանասիրական

Իմ յիշողութիւններից. Ա. իշխան Մովսէս Արղուն- թիւն —Նրկայնաբազուկ. Պր. Նիկողոսեան	43
Իմ թատրոնական յիշողութիւններից. Պ. Չէլլեան	62
Նափում է լսվելու համար. Միտայէլ Նալբանդեանց	79
Բանաստեղծութիւններ.—Սոխակին. Աղ. Պապոյեան	90
Մայիսի մէկը » » »	91
Պաղեկ » » »	92

Մատենագրական

Նշան, Պարչին. թարգ. Աղ. Պապոյեան.	93
Բանաստեղծութիւն.—* * *. Յով. Մալխասեանց	109

Վեցագրական

Նոսր-Էդգին Շահ Պարսից. Լ. Ս.	107
--------------------------------------	-----

Մատենախօսական

Մովսէս Խորենացու Հայկական պատմութիւն. Մոմ. 107	
Ignazio Guidi. La cronica siriaca di Michele I (Note Miscelanee, Roma). »	110
Փաւստոս Բուզանդ. Ե. Ս. Վիկննա. » »	113
Le Mal d'Orient, Paris. Հեղ. Վիկննա-Բէյի. Վ. Ար.	116
Բանաստեղծութիւն. — Երազ, Լեւոնտով. թարգ. Ս. Վալդիշեան	122

(Հարունակութիւնը տես երրորդ երեսում):

Թղթակցութիւններ

	Էջեր.
Նամակներ Հայաստանից.	128
Ազգային յիշատակարան	136
Պատկերների առիթով.	138
Լուրեր	141
Յաւելում.	
Բէլա, Լերմոնով. թարգ. Յովհաննէս Մալխասեանց .	1—42
Յայտարարութիւններ	143

Նկարներ

1. Նասր-Էֆէն Շահ Պարսից	1
2. Խաչատուր Աբովեանցի տունը	17
3. Արթուրի Պալֆայեան.	33
4. Իշխան Մովսէս Արզուման—Երկայնաբազուկ.	43
5. Պարիսկեան կիրճ. Այլալուի.	45
6. Յիսիս-Ձիրի. Սրահովի.	—
7. Ոչխարները փոթորիկից ծովն են թափվում. Այլա- լուի.	78
8. Քամին տատանում է. Սերգէյ.	92
9. Փոթորիկ Ազովեան ծովում. Այլալուի.	113
10. Բաթում. Լաֆօրթ.	140



Հետեւեալ անձինք «Լրաքսի» ներկայ տարուայ գրքերից նուիրած են ազգային զանազան հաստատութիւնների, այսպէս.

Գ. Պ. Լալայեանց նուիրած է մի մի օրինակ. Բագուրի Ս. Հռիփսիմեան օրիորդաց դպրոցին, Նուխուայ Սալթոնեան դպրոցին, Շամախու օրիորդաց դպրոցին և Սալեանի հայկական վանական դպրոցին. Պ. Սարգիս Յովսէփեանց մի օրինակ Սղեանի հայոց օրիորդական դպրոցին, Յովսէփ Ներսէսեանց մի օր. Սեղրի գիւղի հայոց դպրոցին. Պ. Սիմաս Լալայեանց մի օր. Լստրախանի հայոց օրիորդաց դպրոցին:

«ԱՐԱՔՍԻ» գրքերը ուղարկում ենք այն պարպերական հրատարակութիւններին, որոնք փոխանակում են մեր հանգիսի հետ:

«ԱՐԱՔՍ» պատկերազարդ վեցամսեայ,
Հանդիսի բաժանորդագիրնն է 3 ռուբլի:

Իւրաքանչիւր գիրքը արժէ 2 ռ. 50 կ.

«ԱՐԱՔՍԻ» բաժանորդագրութիւնը բա-
ցուած է միմիայն երկու գրքի համար:

Ամեն մի գիրքը բաղկանալու է 12 թեր-
թից ութածալ գիրքով:

Ապառիկ բաժանորդագրութիւն ամենեւին
չէ ընդունւում:

Առաջին տարուայ գրքերը սպա-
ռուած են:



Բացուած է «ԱՐԱՔՍԻ» 1890 թուականի
բաժանորդագրութիւնը:

1890 տարուայ ընթացքում կը հրատա-
րակուի դարձեալ երկու գիրք նոյն ուղղու-
թեամբ և նոյն գիրքով:

Առաջին գիրքը, որ արդէն մամուլի տակ է,
կը հրատարակուի մայիս ամսին, իսկ այ-
նուհետեւ երկրորդ գիրքը:

Բաժանորդագիրնն է երկու գրքի համար
ճանապարհածախսով 3 ռուբլի, իսկ իւրա-
քանչիւր գիրքը արժէ 2 ռուբլի 50 կոպ:

«ԱՐԱՔՍԻ» խմբագրութեան հետ զօրծ
ունեցողները գիմելու են Սիմէօն Գուլամի-
րեանցին այս հասցէով.

С.-Петербургъ. Симеону Гуламирянцу. Стремянная улица,
домъ № 1, кв. № 15. Կամ St. Pétersbourg. Simeon Goulami-
riantz. Rue Stremiannaja, m. № 1, log. № 15.

